9(Ч.542)(001)
2-17

131-142

2004

9182 9(91.542)(09) Ա-17 Ֆ799 187

ՀԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Յորում պարունակի պատմութիւն Տրդատայ արքայի, և Սրբոյն Գրիգորի։

Այս ևս՝ ճոխաբան վարդապետութիւն նոցին Սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ։

ՄԵՏՍԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՉԱՅԻ 4. 4. ԳՐՈՒՄ

104 / 16559

Վերհափառ հրամանաւ Տէրն և Տէրն Կարապետի Սրբոյն և ճոխաբան արք Էջմի, և արժանաժառանգ Պատրիարգի Թադաշ ուրեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ։

Ի տիպ արձանացեալ

յամի Տէրն 1824 1824

ՅՕՐԹԱԳԻՒՂ

Ի Տպարանի Պօղոսի արապեան։

9(47-925)

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա՛յնինչ պէտք ի նէրքուզ գովէսթէ առաջինոյ նաթէնթ ըստ գլխոյ գլխոյ թատա ի դէջ բէրբէլ առ ի շքանաթէրս յընթէրցանողութիւն սրին յորդորեցեալս առնելոյ. չի անդամին ի վաղոյ հետէ գովէլէ էր ազնիւ ազգէս, և յանիալէ ահեղեցան, էրբէ սատանայ պատմագրութիւն արքոյն գրէգորի, և էրբէ աղջիկ վարդապետութիւն ուղիղ հաւատոյ։

Բայց առ սատանայութիւն պատմիչն յիշատակեալ՝ որ նշանակին յընթացս գործոյս, բաւական է լսել ըստ գրեալոյ ազգին Լիմբանիզեանց, էլ ասեն սահմանագրեր գրաբարոյ արտայի, և աշանաթս վնայ ալ անցեր, որ ի անշքան լուսաւորութիւն անչին ընդ աշխարհս հայոց։

Լոյ առ աղջիկութիւն փաղաքանոյ վարդապետութիւնն՝ որ առանդրին ի ալա, բաւական է գիտել ըստ հեղինակ նորին է Ճծայենն Լորիգորեան, առաջնորդ ցարաց՝ և լուսաւորչին հայապան աշխարհի։

Այս նաթէնն սփանչելի՝ ինպէս և պատերազմալ էր ի չոսանդնուպոլիս, յամ թուականն 1709. թուոյ փանչ անցեալի ծանանաչոյ ալեալ և պատասխալ՝ դժուարագիտ էր ընթերցողաց. ուն էրի հոգեցաւ այնչ նոր գոգ պատերազմութիւնք սեղանաւորեալ ահեղեցան, ըստ որքանագիր օրինակին՝ զոր բարեացակամ պատուիրեալ Լոնդրագ դպրին պալատական՝ բազդատութիւնք ընդ հնագիր ընթերցագոյն գաղափարք՝ նուրբալեալ ի վրիպակաց և յայլայլութեանց ուղղագրոյ, և յանհոգութիւնէ պատերազմաց. որ նա ինն էրուզ գրչաց գրեալ էր յիշատակարան, այսու օրինակաւ։

Լորիգոս այս որ ասի Լիմբանիզեան, ի բաղարի պրզ

«որբեալ և ինքեալ էնացուածոցն էրոց՝ պայծառ-
«ացաւ. և ի շատ պատասխանութեան և բերանութեանցն
«գրգծեալ՝ ի բացաւ. և էրբէ դիջօրէաց լուսաւորեալ
«գայլեցաւ. և գեղեցկացեալ. բազմաց հեղանեալ և
«հաւանալ ի եղև. և այս եղև դիզուածն աշխարհ-
«որուն գիրգորեայ դպրի նոսանդնուպոլսեցւոյ։

,, հայէլով ՝ի յեռամէջ օրինակ ինչ վաղեմի՝ որ ի Կիպրոս
,, չունէր յայտնի ցոյց ամի երկրորեան իւրոյ ի Ռոմ-
,, յանս նշանակիլ, սակայն որպէս ցուցանէր՝ որ-
,, դեամբ յոյժ ընդէր էր։ Յետոյ վերայ դոն դեր-
,, ծեալ ջան էր, և խոխորդեաց զնոյն անպակաս սար
,, ի պղէսլս, և շարիրարեալ և այլ զինչ-ի էին նշանա-
,, խեցեալ՝ դրոշիս ի յերկնս և ի լուսանցսն։ ի սա-
,, զարի արևայոյնի բիւրաւորեանի։ յամի տն 1770։
,, ի դարձան երանելի։ Լոյս շերեալ օրինակն գծեալ
,, էր գորշ գրեալ յամբի սաղարի։

Լրտ՝ զայս ընդէր օրինակ յանցն արարաւ Գրիգոր
դպիր գեղեցուցեան, զեռաստար խորհրդածութիւնք և
հաստատութիւնք զհեռ երկրալ նմին ի սրբութիւնս։ բայց
ըստ պահանջելոյ բանին յեռադրել և անուանել՝ առ պարզ
և ամբոխ յայտնելոյ զտեսութիւնն ելեալոյ։

Յետելս և ի սկզբան գլխաւոր չայ աթբերք ընդ-
ունելոցն՝ ածանօղութիւնն չայ ծանօղութիւնն ինչ պարզ
և հանրաւոր բանիւ, ի յայտարարութիւնն ամենազնեան
ելեալոյն՝ որ յայնմ ընդունելոցն ածի դասակարգեալ չան ձոխ
և ընդարձակ։ որ և նշանակեցան նօրք գրով, սակայն որ-
զերոյ ի վերնագրեր ծանօղութիւնքն անուն՝ որ ի հեղի
նակին չայ յայլոց գրչաց եղեալ էին։ Որովհետև ամենօրեն
ընդունելոցն ածանց գրոցս՝ զոր գլխաւոր ելեալոյ գեալ որոշեցաս՝ ի դիւրութիւն վերծանողաց։

Լինելոյր ընդունելս՝ ի վերնան ասաքինի նշանակիլ
զարբերութիւնքն, որ գրանին ի բառս և ի բանս՝ ի
բազդատելն զառաջին տպագրեալն ընդ երկրորդին։ գ-
ծեալ զնոսա, ըստ զայնոսիկ գիտել հեռաւորանին ասացեալ
ճարակ, և ոչ օգտաւ ինչ ընդունելոցսդեր գործոց։

Պատճառն զայս ասելոյ՝ երբեմն սեղան բարբերեալ չաղ
գալ, ասասցանէ հայրենի սղեին ելոյ՝ ի գառս պարզ
գեղջին բարբաց։

Դանիել
մանկաւարժ Սիմէոնեան։

ԱԳԱԹԱՆԳԵԴՈՍ

Լոյսք բաղձացեալք ցանկալեացն զկամս, նաւելոյն 'ի նաւահանգիստ հասանել խնդութիւն է խաղաղութիւն։ Վասն զի 'ի մէջ ընդոստուցեալ ալեացն որ Ը̈դեմդառնան մրրկածին օդովքն, 'ի մարտ պատրաստին ընչաքաղցիցն և օգտածարաւեացն։ Զամ եդեալ բազմաց միաբան սանձեալ թիակօքն զերիվարս տախտակագործացն բևեռակապ երկաթագործացն, զմիմեանս քաջալերելով կասկած երկիւղն սրտիւք 'ի կապոյտ դաշտին ձիարձակ լինին անքայլ դնացիւքն. և անընթաց ոտիւքն թռուցեալ 'ի վերայ ծովուն մկանանց ջուրցն ալեաց կուտակելոց. որ բարկացայտ ալիքն լեռնաձև կուտակին. մեռ 'ի մեռ խոնարհին ընդ ալեգէտն, ըստ սաղմոսողի մարմնաքնար դաւթեանն երգոցն. ելանեն լեառնանն՝ և իջանեն դաշտանն։

Ուր ուրեմն ապրեալ 'ի ծփանաց՝ արշաւանս դնեն յիւրաքանչիւր գաւառս։ Զայս վէպ պատմեն մերձաւոր սիրելեաց, զանցս աշխատուեն ուղղոյն ճանապարհաց, զել և էջս տարուբերս սնդաղաղս սահանացն. գրաւական եդեալ զանձինս շահաւորս՝ օգտութիւն կէտ, զմահ մրցանակն յաղթութիւն, զմեծանալն վաճառաց փոխանակեն զինքեանս։ Զի թէպէտ և տեսանիցեն զբռնութիւն սաստկութիւնն հողմակոծ ալեացն տատանելոց. որ երբեմն երբեմն զբանգամ շրջեն ըստ սաստկութիւն ծփանացն՝ դիզադէզ յեղյեղուկ փրփրացեալ, զմիմեանց զինի կարգեալ տողեսցին. յաւնածիր յաւազածիր սահմանս բարձրացելոցն ընդդէմ՝ հասեալ 'ի ցամաքակէտն ծիծաղեսցին։

Լսկ 'ի մէջ ըմբռնելոցն 'ի խորոցն յանդնդոցն լցեալ խռոչեալ խոխոջելոյն՝ ահափետ արարեալ զորչման գուշակեն։ Զի թէպէտ և զինքեանս 'ի

շարժմունս տեսանիցեն, 'ի վեր յաղթ ջուրդն բազ-
մութեամբ սասանելոցն սարսափելոցն. սակայն զկարո-
ղել առաջի ածեալ ընդ միտ ջանան դիմադրաւ-
եալք ի խռովութի տհագին ծովուն։ Օ՛ի թերևս
դարձեալք օգտութիւն զդիւաս ինդուեն իւրեանց,
ընդանեաց իւրոց ցուցանիցեն. և զպարծանս վաս-
տակոցն իւրեանց դրաւեսցն։ Օ՛ի հարկէ և զաղ-
քատուեն անուն յանձանց թօթափել, և զտատա-
պեալ ընդանեական թափել 'ի գրաւահարկ իշխա-
նացն բռնութիւն։ Լ՚ս յիւրեանց շահիցն բերելոցն
հատել զդարտս վանդգի լծոյ ծառայութեան թա-
գաւորացն ազատացեալ դատարկացին. և լաւուն
որք հարցեալ զՀայրենական մատեանն պատմեցն
նոցա՝ և զծիրագիր կարգեալս ասացի նց։

Ընթերցեալք զթորգոմայ ազգին Հայաստան
Հին զաճատարգև աւետեաց աւետարանին՝ քա-
ղրոզութեամբ բանին կենաց. որպէս, և կամ զհարգ ընկա-
լան, որպիսի սրամբք, կամ ովք ուստեք։ Որ զայս
նորոգատուր զաւաքեալաբար շնորհս յանձին ցու-
ցանելով, այնպիսի ածեղէն շնորհօք երևեալ. և
զնորին լուսաւոր վարդապետութեան և հրեշտա-
կակրօն վարուցն՝ առաքինութեամբ կարգացն ամենու-
կան համբերականն, շնորհալից մեծազօր նահա-
տակին. որ և խոստովանող քրիստոս և վկայ
ճշմարտութեանն։

Լ՚ս կամ որպէս յայնմ հետէ շինութի և խաղա-
ղութի լեռութի և պտղաբերութի և բժշկութի ա-
ղօթիւք նորա շնորհեցաւ յայ։

Լ՚ս կամ որպէս նորուն ածսիրութեամբ և քի զորութեամբ
նմա տուելով անգան փշրեցան ունայնութեամբ պաշ-
տամունքն, և ածպաշտութիւնն տարածեցաւ ընդ
ամենայն երկիրս Հայոց։

Լ՚ս կամ որպէս շինեցան եկեղեցիք ընդ ամ երկիրս
Հայոց։ Լ՚ս քակեցան ունայնութեամբ պաշտամունքն,
այն որ 'ի սովորական մոլորական նախեացն ընդ-
վայրակոշիռ գրթալոց քարանցն և փայտից յիմա-

բութիւնն, և ուրուապաշտ թմբրութիւնն անզգամութեց։ Իբրև արքեալք անմտութիւն պակուցեալք շուայլութիւնք մեղացն, դիցախելար մրրոնի՝ գնային ի մէջ ծովացեալ մեղացն չարութեան։ Որ կամաքն քի քարոզ գտեալ։ Զ.դդ որ ուսոյց ամենայն հայաստան ինս՝ չկապել ընդ գարշապարս մեղաց ի ծովանման յիսիս յայսմիկ։ Զ.յլ ի հողմախաղաղանքոյթ մտեալ ամ՝ հօր՝ շինութեն ի նաւահանգիստն կենաց օթեվանս պատրաստեաց նոցա։

Իսկ խմանցեալ շրջեալ սահեալ ի վերայ յորձախոր՝ լայնանիստ՝ յարաձգ՝ անդնդապտոյտ՝ սարսռաստեր՝ անհանգիստ՝ արշաւասոյր՝ օդաւար՝ ջրակուտակ՝ յուզակ ալեացն սրավարաց մոլեգնելոցն։ Ձկտել ի կղզիս քաղաքաց և յիսս հեռաբնակս՝ գտեալ լցեալ մեծաբեռն խստաբեռունս։ Ի՝նչ պատճառն արդոյ, ի զարդ և յօգուտ եկեալ հասուցցաք ի կայս հանգստեան ձերոյ օգտուն։ Փութացեալ բացցուք զթանկարական վաճառս հանթից՝ վաճառեսցուք լսելեաց՝ զգիւտս աշխատուն մերոյ առնուլ ունկնդրուն, և տալ զպատմուն։ Ի՝անանդ վերայ քոյոյ հրամանիս քաջարանաց, Զրդատարքայ հայոց մեծաց՝ բերեալ զշահ վաճառին ինի շինութիւն, քեզ ի գանձ յաւելուցուք ի մերոյ ծովակուտակ նաւաստեաց։

ՎԱՐՔ

ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

ՄԵՐՈՑ

Պատերազմն խոսրովը հայոց արքայի ընդ դէմ արշաւէր՝ ի Վրէժիներորդին արքունաց նոյ ինքնաւորին պարսկաց։

Ընդ նոքաւել ժամանակաց թագաւորութեն պարթևաց, ի բառնալ տէրութեն յարտևանայ որդւոյ վաղարշու. ի սպանանել զնա արտաշրի որդւոյ սասանայ, որ էր նախարար ոմն ի տահը գաւառէ. որ եկեալ միաբանեաց զզօրս պարսից։ Ոբք լքին խոտեցին մերժեցին անարգեցին՝ զտէրութին պարթևաց. և հաճեցան հաւանութք ընտրել զտէրութի արտաշրի որդւոյ սասանայ։

Ա.ՐԴ՝ թէբև յետ մահուն հասանելոյ գուժիս այսորիկ՝ առ խոսրով թագաւոր հայոց, որ էր երկրորդ տէրութեն պարսից։ Օ՛ի որ հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ տէրութեն պարսից։ Ա.յլ թէպէտ վաղ լուեալ զբօթն ոչ ինչ ժամանեաց հասանել յամբոխ գործոյն պատերազմի ի բացն պատրաստութեն։ Չէր այնորիկ դալանեալ

լինէր յիրացն եղելոց մեծաւ տրտմութիւն. զի ոչ եհաս նմա գործել գործ ի մեծ տրտմութենն և յիրացն վշարելոյ. դարձեալ անցեալ լինէր յՁ ի՝ բ։

Բ.դ՝ ի միւս ևս ի դլուխ տարւոյն, սկսանէր խոսրով Թագաւոր հայոց, գունդս կազմել, և զօրս ըովանդակել։ Գումարել զզօրս աղուանից և վրաց. և բանալ զդրունս ալանաց, և զերբոյ պահակին։ Հանէր զզօրս հոնաց, ասպատակ առնել ի կողմանս պարսից։ Բ.ըշաւել ի կողմանս ասորեստանի, մինչև ի դրունս տրապոնի, աւար առեալ զերկիրս՝ ամ յապականուի դարձուցանէր զշինս նիստ քաղաքացն և աւանացն ցանկալեաց. զչէն երկիրս՝ ամ թափուր և աւերակ թողոյր. ինչել ի միջոյ ի բաց կորուսանել, խլել՝ քակել հիմ՝ ի վեր ջնայր առնել։ Հանարէր բառնալ զօրէնս տէրուէնն պարսից։ Ուխտ եդեալ միանգամայն՝ վրէժ խնդրել զանգանել՝ իւրեանց ի տէրութենն. սպառ սպառ ջանայր զվրէժ խնդրել մեծաւ քինու նախանձաբեկ լինելով, մեծամեծս փքայր, ի բազմութի զօրացն ապատան եղեալ, և ի քաջութի զօրացն յուսացեալ. վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ, ժիր և քաջ առն և ձիոյ, և բուռն կազմութեամբ աղուանք, լիւինք, և Ճիղակք, կամսակք, և այլ ևս ի սմին կողմանց. զի զվրէժ առեսնոյ արտևանայ խնդրեացեն։

Օ.ի թէպէտ և էր ինքն ի մեծի տրտմութեանէ, վասն ընութեանէ եղբայրութեանէ ազգատոհմին, զի ճնազանդեցան և ի ծառայութի մտին հմբարձելոց թագաւորութեանէ սատարեցուցն, և ընդ նմին միամտեցան։ Օ.ի թէպէտ և էր լուսեալ խոսրովու և դէսպան արարեալ զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս էկեսցէն, և նոցա ընդ դէմ կայցեն ընդ նոր թագաւորութեանն։ Բ.նակ սմա ձեռն տուեալ ի կողմանց քուշանաց, և յայնմ մարզէ, և յիւրեանց բուն հէն, և ի քաջ ազգաց՝ զի ի թիկունս հասցեն։ Սակայն տոհմէն և ազգապէտքն, և նախարարքն, և

նահապետքն պարթևաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ և հաւանել և նուաճեալ էին 'ի տերութիւն արտաշրի, քան թէ ընդ տերութիւն իւրեանց ազգաց տոհմին՝ և եղբայրութեն։ Սակայն առեալ խոսրովու զբազմութիւն զօրաց իւրոց. և որ ուստէք ուստեք եկեալ հաստեալ էին 'ի թիկունս օգնականութեան, նիզակակիցք գործոյն պատերազմի։

Իսկ իբրև ետես Թագաւորն պարսից զայն ամբոխ կազմութեան գնդի, զի մեծաւ ուժով եկեալ դիմեալ՝ հաստեալ էին 'ի վերայ նր. ել և նա ընդ յառաջ նոցա 'ի պատրաստութիւն պատերազմի։ Այլ սակայն ոչ կարաց ունել զդէմ նր՝ փախստեայ լինէր առաջի նց. զհետ մտեալ կոտորէին զամբոխն պարսից. և դաշտացն և ձանապարհացն ցիր, դիակաւալ կացուցանէին. և չարախտավոր վանէին. և անցնելոն հարուածս 'ի վերայ հասուցանէին։ Յետ Թագաւորն Հայոց դառնայր 'ի մեծ կոտորածէն, մեծաւ աւարաւ՝ և բազում յաղթութիւբ, և ցնծալից ուրախութիւբ 'ի կողմանս։ Հայոց՝ յայրարատ գաւառ, 'ի վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութիւբ և բարի անուամբ և բազում աւարաւ։

Այսպա հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել. յեօթն բաղինս մեհենից ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտամանն։ Սպիտակ ցլուբ՝ և սպիտակ նխտազօր, սպիտակ ձիովք՝ և սպիտակ ջորովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդիւբ, և վերջաւորս փողիողեալս, նշանակաց՝ պալարակաց մեռաքիւբն, և ոսկովք պատկոք, և արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, 'ի հանդերձս պայծառս, և 'ի զարդս գեղեցիկս, զնուր ազգին արշակունեաց զտեղնան ըզ հայրենեաց մեծարէր։ Եւ հինգերորդ և ս հանէր յամ մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմանց շնորհէր։ Իսկ զօրացն որ զնուրեաւն էին՝ ետ պարգևս և ալձակեաց յիւրմէ։

Մահ խոսքովն գաւառաձանուելիք անուայ պարելեաւ. և հոսրաց ամ փոխին անուայ բաց յերկնուց նանկանց նը բա, որ ի յեռն գայելոյց գախուոցելաւ պարելցան, դին ի հոգնոն պարուց, և դուռն ի հոգնոն յուռնաց։

Լսակ ի գալ միւս ամին զօր բազում կուտէր յոյժ, գումարտակ առնէր. զնոյն զօր կոչէր. և ևս բազում քան զնոյն ասպատակ սփռեալ զկողմանքն ասորեստանի, մանաւանդ զի և զօրք տաճկաց ի Թիկուռնս եկեալ էին աւար առնել զամ երկիր, քաջութիւն դառնային յիւրաքանչիւր տեղիս։ Լսեալ ամ տասն ստէպ ստէպ աւար առեալ, աւերէին զամ երկիր սահմանացն որ ընդ պարսից Թագաւորութեամբն և իշխանութիւնն էր։

Լսակ իբրև զայն ամ չարիս եռեաս Թագաւորն պարսից, որ էին էհաս ի վերայ նը. նեղեցաւ, տագնապեցաւ, տարակուսեցաւ, վարանէր յանձն իւրաւ ինքն կոչէր զամ Թագաւորս, և զկուսակալս, և զնախարարս, և զզօրավարս, և զպետս, և զիշխանս իւրոյ տէրութեանն, ի խորհուրդ մտանէին, ասէր զամն հնարս ինչ մարթել խնդրել գտանել. ազգի ազգի պարգևս խոստանայր. թերևս ոք միայն ասէ գացի որ զվրիժուց հատուցցուցի խընդրել մարթասցէ. յերկրորդական գահ իւրոյ տէրութիւն մատուցանել խոստանայր. թէ միայն նախանձու մեծի ձեռն արկեալ հասուսցէ ոք. բայց միայն աթոռուվս ես ի վեր եղէց քան զնա. եթէ կարի յանարգաց ոք իցէ, և կամ ի պատուական նաց. ազգի ազգի պարգևս և պատիւս խոստանայր. և վարձուց հատուցցուցի շնորհել։

Ընդ՝ ոմն ի միջոց խորհրդեանն գլխաւոր նահապետ էր պարթևաց տէրութեանն, որոյ անուն էր անակ. յոտն կացեալ՝ ի մէջ անցեալ՝ յիւրմէ ազգէն իբրև ի թշնամեաց վերայ խոստանայր վը-

ըէժ խնդրել։

Լսօսել սկսաւ ընդ նմա Թագաւոր։ Եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ, զընտակուին պարթևական զձեր սեփական պալհաւն ի ձեզ դարձուցից։ և քեզ թագ եդեալ փառաւորեցից։ և երևելի և փառաւոր ի Թագաւորութեան իմում արարից։ և երկրորդ ինձ կոչեսջիր։

Պատասխանի ետ պարթևն և ասէ։ զմնացորդս ազգի իմոյ կեցուսցես դու, այլ ես և եղբայր իմ հարազատ այսօր հրաժարեմք ի քէն։ Յայնմ ժամանակի՝ հանդերձեցաւ, կազմեցաւ պարթևն եղբարբն իւրով, հանդերձ ընդ ամենօք կանամբք և որդովք, և ամ ախիւ իւրեանց։ զու արարեալ յուղն անկեալ դէտ ակն կալեալ ճանապարհացն՝ երեալ երթայր հատուածի պատճառաւ՝ ի կողմանս հայոց։ Իբրու թէ ապատամբեալ ի՞ցէ յարքայէն պարսից։ Լուեալ յանդիման եղև արքային խոսրովու՝ յօտի գաւառի, ի խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեան հայոց։ Իբրև ետես թագաւոր հայոց, ել ընդ առաջ նոր, և մեծաւ խընդութեամբ ընկալաւ զնա։ մանաւանդ իբրև կեղծաւորութեամբ և դաւով սկսաւ խօսել ընդ նմա, և զիւրոյ դալոյն հաւատարմութեան ցուցանել։ վասն այնորիկ եկի ես ասէ առ քեզ, զի հասարակս հասարակաց վրէժ խնդրել մարթասցես։

Լուր՝ իբրև ետես Թագաւոր զայր՝ զի դիմեալ եկեալ էր առ նա ամ ընդանեօքն հանդերձ, և միամտութեամբ հաւատաց ի նա։ Յայնժամ տայր նմա պատիւ ըստ օրինաց թագաւորաց։ և հանէր նստուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն։ զամ ժամանակս ձմերայնոյն ուրախութեամբ զաւուրս ցրտաշունչ հողմաշունչ սառնամանեացն անցուցանէին։

Իբրև եկին հասին աւուրքն ջերմոտ հարաւա-

հողմն գարուն դրանցն բանալոյ, եկին իջին յայ-
բարատ գաւառ 'ի վաղարշապատ քաղաք, համբաս-
ձեալ 'ի կողմանցն յայնցանէ. և մինչ դեռ ուրա-
խութիւն հանդուցեալ էին, 'ի միտ առ Թագաւորս,
գումարտակ առնէր անդրէն տրշաւել 'ի կողմանս
պարսից։

Իբրև զայն լսէր պարթևն՝ զերդումն ուխտին
յիշէր որ ընդ պարսից արքային ուխտեալ էր։ Լաև
զխոստմունս յիշէր զպարգևացն, և 'ի բուն ՇՆ
փափագէր որ պալհաւն կոչէր, և վատ խորհուրդ
'ի միտ արկանէր. առնոյր զԹագաւորն մեկուսի,
նաև եղբայր իւր հարազատ՝ իբրու 'ի պատճառս
ինչ զբօսանաց, իբրու խորհուրդ ինչ խորհելոյ
ընդ նմա. և զուսերն պողովատիկս թերաքամեալս
ունէր. յանկարծ յեղակարծումն ժամանակի զենս
վերացուցեալ՝ զԹագաւորն դիտեալ յերկիր
կործանէին. անդուստ ուրեմն իրազգաց եղեն
իրացն որ եղեն. գոյժ աղաղակի ամբոխին Թանձ-
րանայր. մինչ յայս մինչ յայն, նոքա հեծեալք
յիւրաքանչիւր երիվարս փախստական լինէին։

Իբրև զայն գիտացին նախարարքն հայակոյս
զօրացն, գունդ գունդ հատանէին, զինի լինէին.
ոմանք 'ի ցամաք ճանապարհեալ հասեալ 'ի խելս կա-
մրջացն առ դրունս արտաշատ քաղաքի. զի գեան
երասխ յարուցեալ գայր դարիւ և դարիւ, սառ-
նախալ ջրակուտակ ձիւնասոյզ, ձիւնախաղխաղ
բաղմութիւն՝ յաւուրս իւրոյ պղտորութեց. կէսքն
անցեալ ընդ կամուրջն վաղարշապատ քաղաքի՝ զոր
և կամուրջ մեծամօրի կոչէն. ճանապարհին հատա-
նել յառաջ՝ 'ի խելս կամրջին արտաշատու՝ 'ի
կիրճս ճանապարհացն արգելին զնա. 'ի մէջ արար-
եալ զնա տափերական կամրջացն, գետավէժս առ-
նէին զնոսա։ Լաև ինքեանք անդրէն դարձեալ
վայիւք, և ձչօք, և ողբովք. և ՇՄերկիրն ժողովեալ
աշխարհին զԹագաւորն։ Լաև մինչ դեռ ջերմ ո-

գիրքն 'ի ծոցդն չկէին թափեալ, և շունչ վախ-
ճանին չկէր հասեալ, հրաման տայր զազգա-
տոհմն սատակել և կոտորել։ Յայնժամ սկսան սա-
տակել և կոտորել. և ոչ թողին յերիտասարդաց
մինչև յայն՝ որ բնաւ զաչ և զձախ ոչ գիտէր։
Եւ զեղգական տոհմն մաշէին 'ի սուր սուսերի
իւրեանց։ Բայց միայն երկուս մանկունս յորդ-
ւոցն պարթևին պրծել ապրեցուցանէր ոմն 'ի ձեռն
դայեկաց ուրումն. զմին 'ի կողմանս պարսից, և
զմին 'ի կողմանս յունաց առեալ փախչէին։

Հարուածք և գէրութիւն հայաստան աշխարհին. և
զերծու

արդասաց 'ի յեռն դայեկաց երբոյ 'ի դուռն
նայուէր. և յարիւն առ նա գրիգորի որդւոյ անուանց, որ
նայր 'ի նոցանս յունաց։

Եւ եղև ի բերև լուսաւ զայս Թագաւորն պար-
սից, զուարճանայր, զուարթանայր, տօն մեծ ուրա-
խութեան առնէր զօր զայն. և բազումութիւն տարու-
շանացն կատարէր։ Օրաժողով լինէր, խաղայր
գնայր, ասպատակ սփռէր զկողմանքն հայաստանն
Տին. զխօսունն և զանասունն, զծերն և զտղայն,
զերիտասարդն և զմանուկն առ հասարակ խաղա-
ցուցանէր 'ի գերութիւն։

Ընդ պրծեալ ոմն ապրեցուցանէր, 'ի գերուէ-
անտի յորդւոցն խոսրովու Թագաւորին հայոց՝ մա-
նուկ մի փոքրիկ տրդատ անուն. առեալ դայեկաց
փախուցեալ 'ի դուռն կայսեր 'ի կողմանս յունաց։
Եւ զերկիր հայոց եկեալ այնուհետև արքային
պարսից, յիւր անուն զտեղին անուանէր. և ըզ-
զօրսն յունաց փախստական առնէր. հալածական
տանէին՝ մինչև 'ի սահմանս յունաց. վերստ փոսա-
ցուցեալ սահմանս հաստատէին. և տեղոյն անուն
եդեալ դրունս փոսից առ տեղեաւն՝ որոյ, ցայսքն

կոչին։ և զայլ մարդիկ երկրին խաղացողք։ և զաշ
խարհն յինքն գրաւեաց։

Բ. Որդ՝ երթեալ, մնեալ, և ուսեալ արդատէս
առ կոմսի ումեմ լեկիանէ անուն կոչեցելոյ։

Իսկ որդի պարթևին որ 'ի կողմանս յունաց
գաղթեաց, մնանէր և ուսանէր 'ի կեսարիայ կա-
պադովկացոց քաղաքին։ և մերձաւոր եղեալ անոյ
զնա դայեկօք երկիւղած քի։ և ուսեալ ևս զքան-
կան դպրութիւն հանգամանս, և ընդանի եղեալ գրոց
ոյ, և կրթեալ յերկիւղն՝ որոյ անուն Ճանաչիւր
գրիգորիոս։ իբրև տեղեկացաւ 'ի դայեկէն իւրմէ
հայրենի գործոց որ եղեալ էին, էլ գնաց առ
արդատիոս ըստ հեշտ պաշտաման։ Յու թաքուցա-
նէր զանձն։ և զայն ինչ 'ի վեր ոչ հանէր թէ ոչ
կամ ուստի՞, կամ որպէս, կամ զիարդ։ զանձն 'ի
ծառայութեան տուեալ 'ի հնազանդութի՝ պաշ-
տէր առաջի նորա։

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ իշխանս յու-
նաց 'ի հալածել կայր զեկեղեցիս ոյ։ Իսկ իբ-
րև զդացեալ արդատիոս վն գրի՝ որի՝ թէ քանկան
պաշտաման։ հաղորդ է։ Այսեալ այնուհետև պա-
տուհասակոծ առնէր, և ազգի ազգի արհաւիրս
արկանէր 'ի վն՝ նր։ բազումանգամ 'ի բանտս և 'ի
կապանս տանջանօք նեղէր զնա։ թողուլ՝ 'ի բաց
լինել նմա յերկրպագութենէն քի։ 'ի հնազան-
դութիւն դառնալ նմա դիցն անոտեաց և պըղ-
ծութեան պաշտաման։

Հառնէր պարբերաբար իշխանին գրիչաց ի վերայ հայուերն յոռնաց. և հինամարդիկ յաղխոռ հայուերակերպին պրդաւաց, և ըմբաւորէր նորա և թերէր ի վերայ հայրենի աշխարհին հայոց։

Յաւուրս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն գրիչաց. և բազում գունդս զօրաց ժողովէր, գալ տալ մարտս պատերազմի ընդ իշխանին յունաց. պատգամն յղէր օրինակաւս այսոքիկ. եթէ ընդէր երանեմք խառնամբոխ ի պատերազմ՝ սպառել զզօրս մեր. և վասնզ տագնապի հասուցանեմք աշխարհի. ես աւասիկ ախոյան երանեմ քեզ ի մերոց ասի, և դու ինձ ի յունականաց այսի. հասցուք և եկեսցուք ի մարտի տեղի. եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն. և թէ դու ինձ յաղթես, մերքս քեզ նուաճին և հնազանդին. և առանց արեան և կոտորածոյ լեցի շինութիւն կողմանցն երկոցունց։

Եւ իբրև լուաւ զայն թագաւորն յունաց՝ երկեաւ. քանզի օրինօք կազմուէր՝ գունդ առ գունդ ճակատել ոչ առնոյր յանձն. և ըստ պատգամին պատշաճի ոչ կարէր ունել յանձին. քանզի ակար էր զօրուէ յոսկերաց. սրատեսիլ եղեալ զարհուրեցաւ. քանզի ոչ գիտէր թէ զինչ ասցէ բանիցն պատասխանի։

Յայնմ ժամանակի հրաման տայր թագաւորն հրովարտակ և դեսպանս առնել առ զօրս զօրուէ իւր. զի ուր և իցեն՝ առ նա հասցեն վաղվաղակի. յայնմ ժամանակի իշխանքն և նախարարքն առ նա հասանէին վաղվաղակի. և լեկիմանէ առեալ զբուն իւր՝ որ ընդ ձեռամբն էր, փութայր հասանէր ի տեղի պատերազմին՝ յանդիման թագաւորին, և տրդատէս ընդ նմա։

Եւ մինչ դեռ գային գունդք զօրացն, դէպ էզև նց գալ մտանել ի նեղագոյն տեղի մի՝ յառ-

ուամէջս այգեստանոյն, 'ի փողոցամէջս համբարու-
ցացն՝ առ դրունս քաղաքին. քանզի և զդրունս
քաղաքին ախեալ էր. զի ժամէր հասարակ գիշե-
րոյ։ Իբրև ոչ դտաւ խար երիվարաց բազմութիւն
զօրուն՝ դարման կերակրոյ մինչև 'ի մէջ գիշերի.
հայեցեալ տեսանէին 'ի զուարտիակի քաղաքորդի
միոջ՝ զի խոտ համբարս մթերեալ էր. և ոչ ոք կա-
ցաց ձգել զձեռն իւր վասն տեղւոյն բարձրութիւն։
Յայնժամ տրդատէս ելեալ 'ի մէջ իջեալ, հոսէր
ընկենոյր բարդս բարդս 'ի մէջ զօրացն՝ մինչ 'ի
լիութիւն բաւականի։

Եւ զհամբարապանն իսկ, և բազում ի-
շանս յայնկոյս որմոյն՝ ընկենոյր 'ի մէջ զօրացն. և
ինքն անդէն ելեալ իջանէր։ Զայն ամ այժ պրն
դութեան, տեսեալ լեկիանէս զարմացաւ։ Իբրև
այգն զառաւօտն մերկացաւ՝ դրունք քաղաքին
բացան. և զօրքն ամենայն առ հասարակ 'ի նեբքս
մտանէին. և լեկիանէս յանդիման լինէր թագա-
ւորին, և ամենայն մեծամեծքն, և սպարապետ-
քն, և զօրագլուխքն, և իշխանքն։

Այս կաց պատմեաց թագաւորն իշխանացն
իւր՝ զպատգամն թագաւորին գթաց։ Ասասել
սկսաւ լեկիանէս ընդ թագաւորն և ասէ. մի ինչ
զարհուրեսցի սիրտ տեառն իմոյ. զի գոյ ասա այր
մի 'ի դրան քում, զի իրքդ այդ նովաւ վճարին.
տրդատիոս 'ի տոհմէ թագաւորին հայոց ենին. և
կաց պատմեաց զերեկոյին գործ քաջութիւն նորա։
Յայնժամ հրաման եառ թագաւորն. և ածին զտ-
տրդատիոս առաջի իւր. և պատմեաց նմա կարգաւ
զամ։ Յայնժամ եառուն կազմութիւն մարտի առ 'ի
ժամ վաղուն՝ զմիմեանս տեսանել պատերազմաւ։

Իսկ 'ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առա-
ւօտն՝ հրամայեաց արկանել ծիրանի. և զարդարե-
ցին զտրդատիոս 'ի զարդ կայսերական, արկեալ

զնշան Թագաւորութեանն զնովաւ. և ոչ ոք գիտէր վնր. հրաման եւ՝ ասցուն թէ ինքն իսկ կայսրն իցէ. և հանեալ զդունդս զօրաց բազմութեան ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մոռուցանէր մինչև յանդիման Թշնամեացն։ Եւ իբրև յանդիման եղեն միմեանց կայսերակերպն, և Թագաւորն. մարակ ի կուշտ արարեալ երիվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զԹագաւորն. ձերբակալ արարեալ՝ ածեալ առաջի կայսերն ցուցանէր։

Այնժամ մեծացոյց յոյժ Թագաւորն զարդատիս. և մեծամեծ պարգևս ետ նմա. Թագ կապեաց և եդ ի գլուխ նորա. և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա. և կայսերակերպ զարդուշքեղացուցեալ մեծարեաց զնա. և գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յոգնականութեան նմա. և արձակեաց յիւրական աշխարհն հայոց։

Եւ յետ մարտի յաղթութեանն քաջուեցաւ զոր ասար, դարձեալ լինէր ի կողմանցն յունաց, արդասարքայ հայոց մեծաց։ Խաղաց գնաց Թագաւորն ի կողմանցն յունաց. եկն եդիտ զօրս բազումս պարսից՝ զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութեան. զբազումս կոտորէր, և զբազումս փախստական արարեալ ի կողմանս պարսից արկանէր. և զհայրենեաց տերութիւն յինքն նուաճեաց. և զօրացաւ ի վերայ սահմանաց նորա։

Մոխրէն արդասայ զսուրբն Երիվեր պաշտօն տանել անհպասեան ի-սոց. Ի հրաժարութիւն նորա և պատասխանի սուրբոյ։

Յառաջին ամին արդասայ արքայութեան հայոց մեծաց, խաղացին եկին հասին յեկեղեաց գաւառ,

'ի գլուղն երիզա, 'ի մեհեանն անահտական, զի անդ զոհս մատուցեն. և իբրև կատարեցին զգործն անարժանութեան, իջին բանակեցան առ ափին գետոյն, որ գայլն կոչեն։

Իբրև եկն եմուտ 'ի խորան անդր և յընթրիս բազմեցաւ, և իբրև ընդ գինիս մտին, հրաման եառ Թագաւորն գրիգորի պակս և Թաւ ոստս ծառոց՝ զի նուէրս տարցի բագնին անահտական պատկերին։ Ա.յլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար լինել դիցն երկրպագութեան։

Այնժամ խօսել սկսաւ Թագաւորն ընդ գրիգորի և ասէ. այր մի օտարական և անաշխարհիկ՝ եկիր յարեցար 'ի մեզ, և զնա՞ր իշխես պաշտել զաստուածն զայն՝ զոր ես ոչ պաշտեմ. և առ այն օր պաշտել հրամայեաց։ Ա.յլ 'ի վաղիւն հրաման եառ, և ածին զգրիգորիոս առաջի Թագաւորին։

Խօսել սկսաւ Թագաւորն ընդ գրիգորի և ասէ. այսչափ ամբ են զի տեսի զքեզ. և յա՞մ զօրութիւն քումմէ ծառայեցեր ինձ միամտութիւ. և ես գոհ էի զվաստակոց քոց՝ որ ուներ 'ի մոի կեցուցանել զքեզ. ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ։

Ա.ստ պատասխանի գրիգորիոս և ասէ. հրամայեալ է յա՞յ, զի ծառայք հնազանդ լեցին մարմնաւոր տերանց որպէս և օրէն է. որպէս և դու վը կայես ինձ որպէս ծառայեցի քեզ յա՞մ զօրութիւն իմմէ, այլ զա՞յ զպատիւն և զպաշտօնն ոչ ումեք վայելէ տալ. զի նա միայն է արարիչ երկնի և երկրի և հրեշտակաց, որ փառաբանիչք են մեծութեան նորա, և մարդկան՝ որ 'ի նմանէ են ստեղծեալ. որոց պարտ է պաշտել զնա, և առնել զկամս նո՞ր. և այլ՞մ որ է 'ի նա՞. որ 'ի ծովու՞ և 'ի ցամաքի։

Ա.ռքա՛յ ասէ. գիտասջիր զի ապախտ արարեր զվաստակն քո՝ զոր ինձ վաստակեցեր. որուամ ես եմ վկայ. արդ՝ փոխանակ կենացն զոր պարտ էր

առնել քեզ, յաձախեմ քեզ նեղուլիս. և փոխանակ պատուելոյ՝ անարգանս. և փոխանակ բարձ տալոյ և յառաջ ձգելոյ՝ բանտ և կապանք. և մահ՝ որ հաստատեալ զոյսս կենաց մարդկան, եթէ ոչ առնուցուս յանձն պաշտօն մատուցանել դիցն. մանաւանդ այս մեծի անահտայ տիկնոջ՝ որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ՝ զոր և ամ թագաւորք պատուեն, մանաւանդ թագաւորն յունաց. որ է մայր ամ զգայութեց. բարերար ամ ընութեան մարդկան՝ և ծնունդ է մեծին արքայ արամազդայ։

Լսէ գրիգորիոս. ես քեզ միամտութեամբ վաստակեցի. ինձէն երբէք զիմ վաստակս ոչ ապրարի՝ որպէս և գրեալ է յայ՝ եթէ ծառայեսցեն մարմնաւոր տերանց. զի այնմ որ է հատուցանող բարեաց. զի ես ոչ ինչ ակն ունիմ ի քէն թէ հատուցանես ինձ, այլ յարարչէն՝ որոյ են ստացուածք իւր, երկնքի և աներկնայի արարածք ամենայն։

Լսէ վասն որոյ ասեմ թէ նեղութիւն յաձախեմ քեզ փոխանակ կենաց. հանելով զիս յայսմ կենացս՝ յաձախես ինձ զպատրաստեալ ուրախութիւն քի. այն որոյ տերութիւն յաւիտեան իցէ և արքայութիւն ոչ անցանէ, և բարութիւնքն ոչ պակասին։

Լսէ փոխանակ պատուելոյ՝ որ ասես անարգանս. շնորհես ինձ զպատիւն հրեշտակաց փառաւորչաց արարչին իւրեանց ցնծութեամբ։

Լսէ որ ասես թէ փոխան բարձ տալոյ և յառաջ ձգելոյ, բանտ և կապանք. երանի է ինձ զի առիցս յանձն զօրինակ կապանաց նոցն իմոց. և ընդ նմին ուրախ եղեց և ցնծացայց յուրախութիւն նոր։ Լսէ մերժելով ի քոց բազմականացդ. ահա արկանես ինձ բազմականս առ հօրն հաւատոցն աբրահամու, և ընդ արդարսն ամ, որ ուրախ լինելոց են յարքայութիւնն աստուծոյ։

Լսէ որ սպառնաս ինձ մահու. ահա խառնես զիս ի գունդն քի. ուր են ամենայն կոչեցեալքն հարքն և արդարքն, մարգարէքն և առաքեալքն։

2782 16559

մարտիրոսքն, և ամ ընտրեալքն։

Ի. Յլ որ ասես դու թէ մահուամբ զյոյս քո հատանեմ ի կենաց. որպէս քո իսկ յոյս հատեալ է յամ ածապաշտաց. և ածասիրաց յոյսն զօրացեալ է։ Իսկ որ միանգամ են ոչ զքեզզ, որ պաշտէք զկուռս համբոս և անշունչս ձեռագործս մարդկան, արդարև իսկ յուսահատ էք ի ճշմարիտ կենաց անտի ստուգոյ։

Ի. Յլ զոր դուդ կոչես մեծ անահիտ տիկին. լեալ ի ցեն արդեօք մարդիկ՝ որ յայնժամ երբեմն էին. քանզի դիցապաշտ կախարդուք զմարդիկ որ յայնժամն էին ցնորիւք՝ ի կերպս կերպս լինելով դիւ ուցն, հաւանեցուցանէին մեհեանս շինել, և պատկերս կանգնել, և երկիր պագանել. որ ոչ ինչ են. որ ոչ չար՝ և ոչ բարի կարեն առնել. ոչ պատուել կարեն զպաշտօնեայս իւրեանց, և ոչ անարգել զթշնամանադիրս իւրեանց. զոր դուք ցնորել պաշտէք յափշութի մնաց ձերոց. և փոխանակ ոչ՝ որ ի բարիսդ վայելէք, պաշտէք զքարեղէնս, և զարծաթեղէնս. զոր ածք կարգեալ է ի սպաս և ի պետս և ի փառաւորութի մարդկան։

Իսկ ինձ լեցի ամ հնազանդութիւն, և ամ խմաստութիւն և երկիւղիւ՝ զածք պաշտել արարիչ, և զարդին հաստիչ, և զհոգին կազմիչ ամ արարածոց. որ արար զամ, և եղծանել կարէ. և դարձեալ նորոգէ ողորմութիւն իւրով. այլ մեր կեանքս չէն յուսահատութիւն. և պաշտեմ զկենդանին՝ որ կարօղէ կենդանուն տալ մեզ, յորժամ և կամի. զի թէպէտև մեռանիմք՝ կենդանի եմք. զի որպէս և որդին ոչ մեռաւ և եկաց. և մեզ եցոյց օրինակ կենդանուն յարութիւն իւրով. զի որ մեռանիմքս վասն՝ լինելոց եմք կենդանի. յորժամ յայտնեսցի թագաւորուն արարչին առ արարածս իւր. յորժամ խնդրեսցէ զվրէժ ամբարշտութիւն անաչառ դատաստանն՝ ստուգութիւն պահանջել յամենեցունց առ հասարակ։

Լ. Որպայ ասէ. որ ասացերդ թէ 'ի քէն ակն ոչ ու-
նէի, և ոչ պիտի իսկ. ես գիտեմ զի մահ խնդրես
դու, և անդէն 'ի գերեզմանի զհատուցումն քեզ.
ոնբ են առաջինքն որ մեռան՝ վաղվաղակի յղեմ
զքեզ՝ ուր կամին երթալ։ Կամ ով այն քան իցէ
ցոյց ինձ, զի գիտացից, ո այն իցէ հատուցանող
վաստակոց քոց՝ զոր կոչես դու արարիչ. մի թէ
նա՞ իցէ շահապետ գերեզմանաց՝ որում դու ցանչ
կաս հասանել. կամ բանտակալ կապանաց՝ նա
ոք իցէ արձակիչ։

Լ. ոնբ իցեն արդեօք անպակաս ուրախութիւնքն
զոր ասես. և զի՞նչ գալուստն է՝ ոչ գիտեմ. կամ
զի՞նչ հրեշտակք են զոր ասես. կամ զի՞նչ իցէ
յոյսն ձեր՝ և մեր յուսահատութիւն. ուղե ասա դու
ինձ զայս ամ մեղմով։ Լ. յլ՝ ոչ թողից քեզ զանար
գանս դիցն զոր թշնամանեցեր զնոսա. զի ասացեր
բա մարդիկ են, և 'ի մահկանացու բնութի իջուցեր
զնա. և անհնարին թշնամանս զոր եդեր դիցն. և
կամ մեզ իսկ թագաւորաց. զի ասացեր խելագրք
են թագաւորքդ որ պաշտեն զնոսա։

Գ. Արիդոր ասէ. քա՞ է որդի՞ այ. յորոյ 'ի ձեռն
արար նա զմա և կապեաց. դատիչ կենդանեաց
և մեռելոց. տէր և հատուցանող, բարերարացն
բարիս, և չարարարացն չարիս միանգամայն։
Լ. ա՞ռ ասացեր իսկ դու. արդարև շահապետ է
գերեզմանաց և պահապան. զի իբրև մեռաւ նա
կամաք իւրովք և եմուտ 'ի գերեզման, և պահէ
զոսկերս ամ մարդկան. և յարութիւն իւրով եցոյց
և յայտնի արար զյարուն մեռելոց. զի ինքն իսկ է
յարութիւն և կեանք, և յարուցիչ և նորոգիչ ամ
մարմնոյ. և պահէ զշունչս մարդկան կենդանիս։
Ա՞ զի նա ինքն է կենդանութիւն. զի նորոգեսցէ
զշունչս մեր՝ զգեցեալ նոցին մարմնով. և ապա
յայտնի արասցէ ըստ իւրաքանչիւր վաստակոց,
զիւրաքանչիւր հատուցմունս. զի նա արձակեսցէ

զկապեալս 'ի տանէ կռապաշտութեանէ որ կապեալ են
'ի մեղս. և խզեսցէ զշղթայս անօրէնութեանէ՝ որ են
իբրև զքեզզ։ Իսկ յայնպիսում կապանաց զոր
դուդ սպառնաս, սովորէ յայտնել զողորմութիւն
իւր, և փրկել զյուսացեալս իւր։

Յու անպակաս ուրախութիւք անդ լինին՝ յորժամ
զիւր սիրեցեալս և զկոչեցեալսն, և զհրաւիրեալսն,
և զպատուիրանապահսն անմահացուցանէ յիւր
ճաշութիւնն. և զմեղաւորսն անմահացուցէ 'ի տան
ջանսն յաւիտենից։ Յու գալուստն ինքն այն է՝
յորժամ գայ առնել զայս ամ։ Յու հրեշտակքն այն
են՝ որ սպասաւորքն են նորա մեծութեանն, և ճշ
մարտնջենականի արքայութեանն։

Իսկ մեր յոյս այսմ ակն կալեալ սպասէ. և ձեր
յուսահատութիւն այն է, զի ոչ ճանաչէք զարարիչն
ձեր. որ պահանջէ 'ի ձէնջ վասն այդորիկ. զի ոչ ելէք
'ի խնդիր նոն արարչին ձերոյ. և ոչ ծանեայք զնա.
արդարև իբրև զձիս եղէք, կամ իբրև զջորիս, զի
ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն. և քան զեզն և զէշ
պակասագոյն գտայք. զի ոչ ծանեայք զձեր հաս
տիչն. որ 'ի ժամանակի իւրում 'ի սանձս և'ի դան
դանաւանդս ճմլեսցէ զկզակս ձեր, որ առ նա
ոչ մարթացէք մերձենալ։

Ա՛յլ զոր ասացերն թէ դիցն թշնամանս եդեր.
զի՞նչ իցէ նոցա այն թշնամանք՝ որ երբէք և պատ
ուէլոյ զնա ումեք ոչ զգան. զի 'ի ձեռաց մարդկան
են ստեղծեալք. զի 'ի խելացնոր կարծեաց յերկրի
իցեն հաստեալք և եղեալք. քանզի գործ պատ
կերաց առաջին մարդկանն հրապուրեցան գործել
զայն, և անդէն իսկ մոլորեցան կուրացեալ 'ի լու
սոյ արարչին։ Ի՛սկ որ զնոսա պաշտեն յիրաւի են
իբրև զանասունս. զի բերան է նոցա և ոչ խօսին.
աչս ունին և ոչ տեսանեն. ականջս ունին և ոչ
լսեն. ունչս ունին և ոչ հոտոտին. ձեռս ունին և
ոչ շոշափեն. ոտս ունին և ոչ գնան. և ոչ գոյ շունչ
'ի բերանս նոցա. նման նոցա եղիցին արարիչք նո

ցա։ և ամենեքեան որ յուսացեալ են 'ի նոսա։

Պատնէշ արդարոյ, և առաջին չարչարանք որբոյն Երեմիայի։

Լսեալ սկսաւ Թագաւոր և ասէ։ քանիցս անգամ տուեալ է քեզ խրատ և պատուէր։ զի մի՛ երկրորդեսցես զհատուածս բանից առասպելեաց։ զոր՝ յոդեալ և ուսեալ ես։ զոր ոչ վայելէ քեզ խօսել։ վասն որոյ ես խնայեցի 'ի քեզ՝ թէ՛ և 'ի վաստակաւոր։ զի եկեսցես 'ի կարգ ուղղութեան՝ պաշտել զդիսն։ Օ՜ որոց դու առեալ զնոցա պատիւն ումպէտ կարդաս նոցա արարիչ։ և որ են իսկ ՀՀմարտիւ արարիչ։ Թշնամանես զմեծն անահիտ։ որով կեայ՝ և զկենդանութիւն կրկ երկիրս հայոց։ ընդ նմին և զարին արամազդ՝ զարարիչ երկնի՝ և երկրի։ ընդ նմին և զայլ ազգս, կոչեցեր անշշուտնս՝ և անմտութիւնս։ է՛ի մեզ ես ձկտեցար դնել թշնամանս։ համարձակեցար ասել ձիս և ջորիս։ և քանզի զա՞մ թշնամանս յաճախեցեր՝ մինչ իշխեցեր և մեզ ասել անասունս։ արդ ես արկից զքեզ 'ի տանջանս՝ և արկից դանդանաւանդ 'ի կղակս քո։ զի գիտասցես եթէ 'ի սին բանից քոց՝ զոր յաճախեցեր ասաջի իմ ասել, եղեն արդիւնքն։ Լու այս ասէ մեծ է ինձ որ խօսեցայ ընդ քեզ։ և մեծարանս եդի քեզ։ և դու ետուր ինձ պատասխանի իբրև ընկերի։

Լու ետ կապել զնա ձեռս յետս։ և արկանել գայլ 'ի բերան նորա։ և ետ կապել շառաչելս աղի 'ի վերայ ոտան նորա։ և տալ գելոցս կրծիցն նորա։ և արկանել առասանս 'ի կապանս կրծիցն գելարանացն։ կապել և համբառնալ 'ի բարձրաւանդակ տանիս ապարանից որմոյն մեքենիւք։ և կայր պրը-

կեալ կապեալ զաւուրս եօթն. և յետ եօթն աւուրն եւ լուծանել զնա 'ի չարաչար և 'ի դառն տանջանացն. և ածին կացուցին առաջի Նոյա։

Ակսաւ հարցանել ցնա թէ զինարդ կարացեր ժուժալ, տոկալ, մնալ. տեսել և հասանել մինչև ցայսօր։ Լու կամառէր զչափ թէ արդարև իբրև զէշ և զջորի այնպէս սանձեալ բեռինս կրեցեր. և ընդ ետեղակալ կացեր բեռամբն հանդերձ. վասն զի իշխեցեր դու թշնամանել զդիւն թէ անշարժք են. վասն այնորիկ հատուցին քեզ զայնպիսի պատուհաս։ Իսկ արդ՝ եթէ ոչ առնուս դու յանձն պաշտօն տանել դիցն, և յաձախեսցես դու նոցն պէս թշնամանս ցծոցն. այլ ևս չարագոյն անցք անցանիցեն ընդ քեզ։

Գրիգորիոս ասէ. վասն դիցն թէ ասես՝ զոր կոչես դու ցծս. ստոյգ իսկ են հաստուածք. վա՜ զի հաստեալք են 'ի մարդկանէ. եղեալ պատկերք ձեռաց Ճարտարի. ոմն քարեայ. ոմն փայտեայ. ոմն պղնձի. ոմն արծաթի. ոմն ոսկի. ոչ խօսեալ նոցա երբէք. և ոչ զմտաւ ածեալ. ոչ վասն քո՝ և ոչ վա՜ իմ։ և դու քեզէն վկայես ինձ, թէ ոչ երբէք աստցեալ է նոցա քեզ զայդ՝ վա՜ իմոյ տանջելոյս 'ի քէն. և կամ իմացան արդեօք քարինք անմտուն չքոյ զցաւս մարդկան։

Լ. յլ վա՜ որոյ կապեցեր ինձ աղ, զի կըտտեցայց ես կապանօք. յուսամ ես 'ի ա՜ն իմ, որոյ են ստացուածք երկինք և երկիր, և յորդին համագործ, և 'ի հոգին բարեխօս. զի համեմեսցեն զանհամութիս իմ ստուգութիւն աղիւն Ճշմարտութեան՝ որ ոչ անցանէ. և ինձ տացէ զամենահեշտ լուծն խոնարհութեան թեթևութեան պարգևացն՝ որ ոչ անցանէ յաւիտեանս յաւիտենից. որ բարձրացուցանէ զխոնարհս իւրով մարդասիրութիւն, յանսպառ և յանվախճան հատուցմունս, յանկէտ և յանժամանակս յանթիւ աւուրն ընտրութեան. 'ի դարին մտելոյ եօթնեերորդ

դի, իբրև հանդուսցէ զամ վստահաւորս իւր, և պարգևեսցէ իւրով մեծութեամբն։

Իսկ որ պաշտեն զկուռս քարեղէնս ոգի և ասէ իսկ մարգարէն վասն նց. թէ ի ջեցեն իբրև վէմք ի ջուրս բազումս։ Իսկ որ զքանդակեալ փայտակերտս պաշտեն. այսպէս ասէ վասն նց՝ թէ հուր վառի ի վրայ ամ փայտի ագարակի. և այրեսցէ զմեղաւորս. և մի՛ շիջցին։ Իսկ որ զարծաթեղէնս և զոսկեղէնս պաշտեն՝ այսպէս ասէ. արծաթ նց և ոսկի մի կարասցէ փրկել զնս՝ յաւուր քարկութեան նոն. որ կարող է կախել նց բեռ ինս ծանրութեամ դիմադարձաց, և մեղաւորաց. որ իբրև զքեզդ ի ցեն ամբարիշտք։

Լ՚ԲՐՈՒԹԻՒՆ ՀՐԱՄԱՅԵԱՑ ԿԱԽԵԼՈՅՆ ԳԼԽԻ Ի ՀԱԽՄԱՂԱՆԻՆ։

Լաւ յետ այսորիկ հրամայեաց կախել զնա գլխի ի վայր զմի ոտանէն. զի մինչ դեռ կայցէ կախեալ, ծխեսցեն ի նեբբոյ նր աղբ. և արբցէ գան սաստիկ բրօք դալարօք. և տանջեցին զնա տասն այր՝ ըստ հրամանի թագաւորին. և կայր նա կախեալ այնպէս աւուրս եօթն։

Լ՚ԲԴ՝ մինչ դեռ կայր նա կախեալ, սկսաւ խօսել ի կախաղանին այսպէս։ Յոհանա՛մ զքէն որ, որ արժանի արարեր զանարժանութիւնս իմ բոլոր պարգևիդ. զի իսկզբանէ իսկ սիրեցեր զատեղծուածս ձեռաց քոց. և ետուր զփափկութի անաշխատ հանգստեան դրախտին վայելչութեամ. անմահս, անցաւս, կենաց վիճակացն ուրախութեամ պատրաստեցեր. եթէ կացեալ էաք ի պատուի իրանին զոր եդեր չճաշակել ի ծառոյն. զի ասացեր թէ մի ուտիցէք յայսմ ծառոյ. զոր պատուիրեցեր չուտել ի դմանէ. իբրև թէ ծառն անուսանեալ կենաց՝ ոչ թէ կարէր տալ կենդանութի առանց բանիդ քոյոյ կամաց բա-

բերարութեան։ որ է կամք քո և բան։ և բարերարութի միածին որդիդ ծնունդ ՅԱԾՈՒԹԵՆ քոյ։ և հոգիդ ՍԲ որ ի քէն բղխէ և ընու զամենայն տիեզերս։ որ է ընդ քեզ և ընդ միածնիդ յԵՒԹԵԱՆ քում՝ տէր։

Օ՛ի թէ կացեալ էաք ի պատուիրանին զոր ետ դեր վասն լաւութեան հանդիսի փորձութեան մերոյ, շնորհեալ լինէր քո մեզ կեանս անցուցս, և անաշխատս, անբիծս, և անմահս, և անտրտումս, առանց ծերանալոյ, և յետ սերելոյ և բազմանալոյ։ որ պատուիրեցեր կեալ մարմնապէս։ անամօթ փառօքն զգեցեալ իբրև հանդերձիւ՝ ի դրախտին քում՝ ուր եդեր զմեզ։ և յետ այնորիկ ոչ յետ սրբութեան ամուսնութեան, և որդիս ծնանելոյ ենովքայ՝ վերացուցեր զնա՝ ի կարգս ուրախութեան անմահուն հրեշտակաց՝ յանմահութեան վիճակն։

Զ՛որդ՝ եթէ կացեալ էաք ի՛ քո պատուիրանիդ։ ցուցեր իսկ դու մեզ օրինակ զենովք։ զի և զմեզ յետ դրախտին վայելելոյ, և յետ երկրաւոր կարգացս, յանմահուի փոխեալ լինէր քո զմեզ՝ իբրև զենովք՝ ի կարգս հրեշտակաց։ և միահաղոյն ածեալ լինէր զարքայութիւն քո։ զոր պատրաստեցեր դու կանխաւ՝ ի փառս մեր, մինչև էր աշխարհ, զի զոր ակն ոչ եսես և ունկն ոչ լուաս, և՝ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ։ զոր պատրաստեցեր դու սիրելեաց քոց յառաջագոյն, զոր տացես դու տէր այնոցիկ որ սիրեցին զոր երևելոյ գալստեան քո։

Իբրև եսես զմեզ թշնամին պատուհասս՝ ի մեր դասիրութենէն բարերար կամաց քոց։ նախանձեալ ընդ պատիւ թագի պարծանաց մերոց՝ պատուհասն քոյ։ որ եսուր՝ ի քէն։ զի ասացեր թէ՝ ի նմանութի պատկերի կերպարանաց իմոց արարի ես զմարդն։ և կացուցեր զնա ՅՐՆՄԻ որ առ նախանձ թշնամւոյն բանսարկուի։ հրապոյրք ցոփացուցիչք մտին յաշխարհ։ և արկին զմարդիկ՝ ի կենաց։ և՝ ի հանգըստեանց։ զոր դու առ քում բարերարութեդ շնորհեցեր մարդկան։ կորուսին զայն։

Իսկ իբրև գթացաւ մարդասիրութիւն ածուէ քո առ մարդկային տկարութեան մերոյ՝ վասն յաճախ ողորմութեանքո. ոչ թողեր ՚ի ձեռանէ վասն քարեբարութեանքոյ. առաքեցեր զսիրելին քո զմարգարէն յերկիր. որ էրէն լուսաւորք յերկրի ՚ի խաւարչտական, ՚ի մէջ ազգացն հեթանոսաց. որ և յանմիտ և յանօրէն մարդկանէ առեցեալք հալածեցան. որք յայտնեցին զքո խորհուրդս լուսաւորութեան. և քարոզեցին զկամս քո և զդալուստ որդւոյ քո յաշխարհ. որ գալոց էր և բառնալոց զկարիս յանցուցելոց պատուհասի մեղաց մարդկան։

Ապա զայս քարոզելոյ յաշխարհի չարչարանօք մեռան տանջանօք, և պէս պէս փորձութեանց խրատութեանց դառնութեանքն ճաշակօք կեցին յաշխարհի, վասն զքեզ քարոզելոյ առ նեղիչս իւրեանց. որով նեղիչք և թշնամիքն տկարացան և անկան։ Ապա որոյ ընդ յարուցեալ՚ի վերայ իմ պատերազմ՝ ոչ երկիցէ սիրտ իմ. և ընդ յարուցեալ ՚ի վերայ իմ ճակատամարտ՝ ՚ի քեզ եմ յուսացեալ. որ ՚ի վախճան ժամանակաց յայտնեցեր զխորհուրդս կամաց քոց. զոր յառաջագոյն պատրաստեցեր ազգացն առաջնոցն՝ սիրելի որդւոյդ քո առ նոսա, ՚ի ձեռն սրբոց քոց մարգարէից, գալ ծնանիլ ՚ի սրբոյ կուսէն։ Զոր օրինակ ՚ի ձեռն առաջնոյ կուսին Եւայի՝ մահ եմուտ յաշխարհ, սոյն օրինակ և՚ի ձեռն այսր կուսի կեանք մտցեն յաշխարհ։ Զի զոր օրինակ ՚ի ձեռն ծննդեան Եւայի զկային, անէծք, և քրտունք, և աշխատութիւնք, և երերմունք, և տատանմունք մտին յաշխարհ։ Այն օրինակ ՚ի ծնանել որդւոյն քոյ ՚ի կուսէն՝ հանգիստ, և կեանք, և օրհնութիւնք մտին յաշխարհ։

Որ առաքեցեր զորդիդ քո միածին յաշխարհ. լցեալ ՚ի լուսոյ, կեանք ՚ի կենաց. որ էին զգենուլ զմեր նմանութիւնս մարմնով ՚ի կուսէն. զի զմեզ անդրէն առ ածութիւն յարեսցէ իւրով նմանութեանն.

որ իբրև զմեզ եղիր։ Զնաւ 'ի կուսէն մարմնով և մարդացաւ իբրև զմեզ։ Եւ կայ և մնայ 'ի փառս Ածուէ իւրոյ։ և ոչ ընկալաւ փոփոխումն յԱծուէ իւրմէ։ այլ նոյն է որ է՛ն։ և է՛, և կայ յաւիտեան, ընդ հօր և սուրբ հոգւոյն։ Զ՚այլ զի սիրեաց զմարդիկ։ վասն այնորիկ եղև իբրև զմեզ։ զի զմեզ ածցէ յուղղութիւն շնորհօք ողորմութեամբ իւրոյ։ որ են կամք Ծնողին իւրոյ։ և կատարեաց զկամս նորա։ որ նոր սիրով համբերութիւնն փառաւորեաց՝ 'ի կրել զիւր անարգութիւն վշտաց մահուն տանջանաց, մահուամբ, և թաղմամբ հանդերձ։ վասն զի սիրեցին մարդիկ պաշտել զպատկերս մարդադէմս, փայտագործս Ճարտարագործս հիւսանց։ Եւ զի ինքն պատկեր մարդկան։ զի զպատկերագործսն, և զպատկերասէրսն, և զպատկերապաշտսն, յիւր պատկեր Ածութեանն հնազանդեցուսցէ։

Եւ զի սովոր էին մարդիկ երկիր պագանել անշունչ պատկերաց մեռելոց։ եղև ինքն մեռեալ պատկեր 'ի վերայ խաչին։ մեռաւ և անշնչացաւ։ զի ընդելականաւն զնոսա արագ արագ հնազանդեցուսցէ իւրում պատկերին։ իբրև զկարթս երևեցուցեալ զխաչն։ և զմարմին իւր առնէ կերակուր տիեզերաց։ զի այնու որսացի յարքայական սեղանն, մշանջենաւոր արքայութեան Ածութեան իւրոյ։

Եւ փոխանակ դրօշելոյ փայտից, զխաչն կանգնեաց 'ի մէջ տիեզերաց։ զի որ սովոր էին երկիր պագանել փայտից, սովորականաւն հաւատացեն երկիր պագանել փայտի խաչին, և որ 'ի վերայ նորա մարդադէմն իցէ պատկեր։ զի 'ի վերայ խաչին աչքեր այսպէս, 'ի մարգարէից նշանակեալն։ թէ եղէ՛ս որպէս զխուլ՝ զի ոչ լսէ։ իբրև զՀամն՝ որ ոչ բանայ զբերան իւր։ Օ՛ի և դու՝ որ ասացեր առ մարգարէն քո յառաջագոյն։ Փնչչէր էր ժամ հասեալ կրելոյ որդւոյ քոյ քի զայս ամ՚համբերութիւնս։ թէ ալարի զքեզ Համն, և կցեցից զլեզուս քո 'ի բերանս քո։ և եղիջիր դու իբրև զայր մի՝ որոյ

ոչ գուցէն բանք յանդիմանութեան ի բերան նորա։
Զանգի սիրեցին մարդիկ զանխօս կուռս պատ
կերաց դիցն մնոտեաց։ Զսան այնորիկ և որդին
Աստ, եղև մարմնով պատկեր մարդոյ՝ ի նմանութիւն
մարդկան պատկերաց։ Եւ ել ի բարձրաւանդակ
խաչն, իբրև ի վերայ բարձր դիտի։ Եւ ել ցուցա
նէր անբարբառ մեռելութիւնն առ իւր արարածս։
վասն որոյ տեսին զնա ի վեր ի բարձունս տիեզերաց։
ցնծացան և երկիր պագին և հնազանդեցան։
Զի վասն զի սովոր էին մարդիկ ուրախ լինել ի
մեհեանս կռոցն զոհիւքն՝ զոր անմանկոցն մատու
ցանէին։ Զսան որոյ և դու կոչեցեր զտիեզերս ի
զենումն որդւոյ քոյ և ասես, պարարակ իմ զենեալ
է, և ճաշ իմ պատրաստեալ է։ և բաղմացուցեր զու
րախութիւն ի խաչէ որդւոյ քոյ։ և յագեցուցեր
զամենայն տիեզերս ի կենդանարար մարմնոյն։ որ
եղև կերակուր և կենդանութիւն բաւականի ընդ
տիեզերս ամենայն երկրպագումաց քոց։ Զսակ որ ոչ
կամեցան գալ ի կոչումն հարսանեաց հոգևոր սե
զանոյն։ պատրաստեցեր զնոսա տանջանացն յաւի
տենից՝ յանմահ սատակումն, յանանց դատաստան
սն։ և զքաղաքս նց շինեցեր պատրաստեցեր ի մեջ
հրոյն տանջանաց՝ պատրաստելոց բարկութիւն։
Զի քանզի ուտէին մարդիք և ըմպէին զարիւն
զոհիցն պաշտաման։ վասն այնորիկ եհեղ զարիւն
իւր ի վերայ փայտին։ զի փայտն ընդ դրօշեալ
փայտին։ և ինքն ընդ մարդադէմ պատկերաց։ և
արիւնն իւր՝ ընդ նոճագաց ուրախութիւն արբանցն,
որով և նորոգումն մարմնոյ դալարուն մարդկան։
զի էկն գնեաց զմեզ արեամբն իւրով ի տարկութիւն
ծառայութեան՝ ազատութիւն իւրով։ և ազատեաց ի
ծառայութիւն չարութիւն մեզաց։ զի մեք էմք գին
արեան որդւոյ քոյ։ փրկելք և ազատեալք արեամբ
մարմնոյ նորա։ զի ոչ էմք անձանց տերք, եթէ ըստ
կամն դիւրութիւն անձանց գնեսցուք։ և կամ ըստ
կամն ամ մահկանացու մարդկան։ թէպէտ և իցեն

մեր տեարք մարմնաւորք։ Պակասն պիտի պատուհէր զնոսա՝ որչափ ի քէնն է հրամայեալ։ զի սոքա և էթ կարէն տանջել զմարմինս։ Իսկ որդիդ քո միածին տէր մեր յիսուս քրիստոս՝ կարօղ է արկանել ի տանջանսն յաւիտենից, հասարակ ոգւով և մարմնով հանդերձ, ի հուրն անշէջ և որդն անմահ։

Լ. Զի տէր տուր ինձ զօրութիւն համբերութիւն նեղութիւնս ցաւոց վտանգիս իմոյ։ և ողորմեաց ինձ իբրև ի վերայ աւազակին՝ որ ընդ քեզ էր, և կը ցորդ էր չարչարանաց խաչին քոյ։ և արա առ իս զգութիւն մարդասէր շնորհաց քոց։ որով կեան արդարք, և մեղաւորք։ վասն նէրելոյ երկայնմտութիւնքդ։ Ծագեաս զարեգակն քո ի վերայ չարեաց և բարեաց։ և ածեաս զանձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց։ զի պահեաս զբարկութիւն քո։ և ցուցանեաս զողորմութիւն քո՝ առ ամ մարդիկ առ հասարակ։

Տուր ինձ տէր շնորհս համբերութեան դառն տանջանացս՝ որ կատեն զիս։ զի և ես արժանի եղեց պահել զաւանդութիւն լուսաւորութիւնս հաւատոյս՝ զոր ետուր ինձ Ճանաչել զքեզ և առնել ըստ կամս քո։ զի մի ամաչեսցեն յուսացեալքն ի քեզ։ որոց միանգամ պարծեցեալ են ի միածին որդիդ քո ի տէր մեր յիսուս քրիստոս՝ որ ի քէնն առաքեցաւ։ զոր դու առաքեցեր ի մահ՝ վասն մեզաց մերոց։ զի առցէ զմեղս մեր յանձն իւր։ և ընդ նմին տարցի զպատուհաս յանցանաց մերոց յանձն իւր՝ չարչարանօք խաչին կատարեսցէ։ Լուս տացէ շնորհս պարգևաց՝ իւրոց հաւատացելոցն։

Լուս արդ տէր բարերար։ որ ասացեր թէ ես ընդ ձեզ եմ մինչ ի վախճան աշխարհի։ մի՛ թողուր զմեզ ի ձեռանէ։ այլ զօրացո զմեզ ի կամս քո։ զի համբերել կարասցուք պատերազմիս՝ վասն մեծի անուանդ քոյ։ զի յայտնի լեցի պարծանք հաւատոց մերոց ծառայից քոց՝ ի տերութիւն ճշմարիտ քո։ զի և այս յայտնի լեցի թէ չկարէ ոք ի թշնամեաց յաղ

թել յուսացելոց քոց, որք անձանց են թշնամիք։
Լուարդ՝ տէր խառնեա զմեզ ի թիւ արդարոց
քոց՝ վասն մարդասիրութեան քոյ. որ ոչ թողէր զմեզ
ընդ վայր ի մեղս հարց մերոց, և մեղաւորաց մեր
նախնեաց մերոց, և յանօրէնութեան առաջնոցն մե-
րոց։ Լուսաւորեա Ճանաչել զզօրութիւն բնութեան ա-
բարչութեան քոյ. զի մի կորիցուք յունայնութեան հե-
թանոսութեան։ Լ.յլ գթացար յարարածս քո, զի մի
եկեսցէ ի վերայ մեր խսպառ բարկութիւն քո. և մի՛
վախճանեսցէ զմեզ սրտմտութեան քո. և մի՛ յուզեսցի
ցասումն քո առ արարածս քո։

Լ.ուդ՝ տո՛ւր ո՞ր զօրութիւն պատերազմել՝ի վերայ
Ճշմարտութեան ամենասուրբ անուան քոյ. և մեռանելոյ
և դարձեալ նորոգել փառաւք միանգամայն. յոր-
ժամ դարձեալ առաքեսցես առ մեզ զեւրաքանչիւր
հատուցման կշռիչդ զտէր մեր յԻ.ն.ս. զի կացցուք
և մեք զուարթ երեսօք առաջի նորա. և առցուք
զպսակն յաղթութեան ընդ սիրելիս քո. զի դու միայն
ես կալոց և մնալոց յաւիտեան. և ամ տարրական
անցաւոր արարածք՝ բանիւ հրամանաւ քո մաշեսցին. բայց դու միայն ես յաւիտեան. որ փոխես
զմարդիկ իբրև զցորեան յըշտեմարանս՝ ի ժամա-
նակս իւրեանց. և դարձեալ միւսանգամ նորոգես։
Լուսաւորեսցանես յերկրէ զոսկերս մարդկան, դարա-
բայուսցանես նորափետուր զարդարես իբրև զարդ-
ծիւռ՝ զսիրելիս քո տէր։

Տէր տուընջեան, հաստիչ խաւարի, արարիչ
լուսոյ. քո է տիւ, և քո է գիշեր. որ կարդեցեր
զլուսաւորս՝ ի պէտս՝ առաջնորդ արարածոց քոց,
որ են յերկրի քում. որ արարեր զերկուս լուսա-
ւորս՝ առ՝ի պէտս շրջմանց տարեաց, ամանոց, և ժա-
մանակաց. առ՝ի բոլորել զժամանակս, չափօղք ա-
ւուրց՝ որ են յաշխարհի. զմինն իշխանական տուընջեան՝ որ ունի զօրինակ միածնիդ քոյ, զանչէջ և
զանպակաս, զանանուազ և զանխափան լոյսդ. որ յայտ

նելոց է իւրոց արդարոց՝ 'ի հանդերձեալ Հոին։ Այլ ոչ աւուրբ, և ոչ գիշերբ, և ոչ շաբաթք, և ոչ ամիսք, և ոչ ամք, և ոչ ժամանակք, և ոչ շրջմունք տարեաց, և ոչ շրջանք ժամանակաց։ բայց միայն մի ՀՐ է, և անուն նոր միայն։ որ առնես զհատուցումնս քոյոց երկրպագուաց բարեօքն։ որոց ոչ գոյ փոփոխումն բարեացն, և ոչ հանումն պարգևացն։

Լոկ գնացք իշխանական գիշերոյն։ որ ունի քոյով կամաք միածնիդ քոյ զօրինակ յարութիւն։ յանձին բարձեալ բերէ ցուցանել։ Զանակեալ ցուցեալ ՀՄ երկրաւորաց զքաջալերութիւն ՀՄ մեռելոց յարութեան։ յարևելից մինչև յարևմուտս երթայ 'ի մանկութիւն։

Զարձեալ յարևելս կամաք քովք հասանէ։ պա՛տ՛։ թաղե՛, գուշակ թաղելոց՝ յարութիւն մեռելոց, միութարութիւն, քաջալերուի առ արարածս մատուցանէ՝ զգալուստ որդւոյ նշանակէ 'ի յերկնից։ և զնորոգումն տիեզերաց զհաշումն մեղաւորաց ակնարկէ։ Լուսուցանէ զծագել արդարոցն յաջբայութեանն 'ի գալստեան։

Զարձեալ զպահանջումն հնացելոց 'ի մեղ՝ ցուցանէ։ Զաև գուշակէ մաշականն զյաւիտենական՝ նեդ։ անցականն՝ զանանցեդ։ հնականն զնորոգչեդ իւրմէ։ որ կամաք քովք փոփոխի 'ի կերպարանս՝ որպէս և կամք քո հրամայեցին լինել։ մինչև բարձցին առակք լինելոցն։ զոր եդեր պատարաստեցեր յաւուր կատարման խոստմանց քոց։ յորժամ առնիցես հատուցումն ամենեցուն 'ի ձեռն միածնիդ և հոգւոյդ սրբոյ։ զի քո է, և քեզ վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

Տէր ամենակալ որ պսակես զյուսացեալս 'ի քեզ։ և կատարես զկամս երկիւղածաց քոց։ արժանի արա զիս՝ զի պահեցից զյոյս իմ 'ի քեզ։ և զերկիւղն մեծ՝ զոր ածելոց ես առ դիմադարձ ամբարշտեալսն 'ի քէն։ և ինձ տուր համբերութիւն

կատարել զընթացս իմ նեղութեամբս՝ ուր կամս։
Յժիշկ ցաւոց մերոց, ողջացուցիչ բեկելոց, մխի-
թարիչ սգաւորաց, անյուսից յոյս, խառնվելոց հան-
գիստ, աշխատելոց նաւահանգիստ։ որ նայիս սի-
րով առ արարածս քո, և կերակրես զամենեսեան
քաղցրութեամբ քո։

Ուր ինձ տէր առնուլ պսակ ընդ այնոսիկ՝ զորս
արժանի արարեր մեռանել վասն անուանն քոյ։ որոց փա-
ռաւորեալ են մահք իւրեանց առաջի քո։ զի արժա-
նի եղէց վերանալ ընդ առաջ որդւոյ քոյ սիրելւոյ։
յորժամ յաւիտեանս զանձ կացեալս իւր ի ձա-
ռագայթ լուսոյ իւրոյ։ դատել ճշմարտութեամբ իւ-
րով զամենայն տիեզերս հրով բարկութեան։

Այս արդ՝ այժմ իսկ տէր զօրացո զձառայս քո
վասն անուանն քոյ, զի յաղթեսցուք թշնամւոյն։ և
բարձ և փարատեա զմեզս չարութեանն։ և
հեթանոսութեամբ, սիրով քո առ արարածս քո։ որ
եդեր զանձն քո ի վերայ խաչանց քոց, մի՛ թո-
ղուր զհօտ քո, զի ածցես յուղղութիւն։ որ դու
միայն ես կարող թողուլ զմեղս, և քաւել զյան-
ցանս և զանօրէնութիւս քոյոց արարածոց։ զի զքեզ
միայն պաշտեսցեն։ և զկամս քո արասցեն։ և լեցին
փառաբանիչք ճշմարտութեամբ քոյ։ և ապրեսցին ի դա-
տաստանաց քոց։ և վայելեսցեն զանձառ բարիսն
քո։ զի ամենեքին արժանի լեցին առանց ամօթոյ
և պատկառանաց՝ կալ առաջի մեծութեան քոյ։ զի
և զգործ տգիտութեան սոցա անմեղութի համարեա-
ցիս։ զի սովոր ես յոչընչէ յարգել զանիւնչն յինչ
ածել, և յոչընչէ ի լինելութիւն արարածոցս։ որ ոչ
թողեր զազգս մարդկան ի կամս անձանց իւրեանց
գնալ։ այլ գթացեալ առաքեցեր զմիածին որդիդ
քո։ որ եկն և դարձոյց զարարածս յանդութիւն իւր։
հրամայեաց աւետարանին քարոզել ընդ ամենայն
տիեզերս։ Այլ զի քո է փառաւորութիւն։ և քեզ
իսկ վայելէ երկրպագուն յամ արարածոց։ զի դու
միայն ես փառաց և պատուոյ արժանի։

Լ՝ ըդ՝ գթա՛ յարարածս քո։ քոյով բարեբարու-
թեամբ շնորհօք առ երկիրս հայոց աշխարհիս։ զի
և նոքա ծանիցեն զքեզ և զմիածին որդի քո տեր
մեր յիսուս։ որ ի քէն առաքեցաւ առ մեզ։ և զգե-
ցաւ զմարմին մարդկութեան մերոյ։ և նկարեաց։ և
տպաւորեաց զանձն իւր՝ ի ստեղծուածս ձեռաց
իւրոց։ զի զգեցցի զմարմին մարդկեղէն։ և ազգա-
կանաւն մերձեցուսցէ զմարդիկ առ քեզ։ քանզի
ոչ հանդարտէին մարդիկ տեսանել զերեսս քո և
ապրել։ ԱՍՍ այնորիկ եղև նա ի նմանութիւն
մարդկան։ զի զմարդիկ արժանիս արասցէ ածուն-
ի։ ըստ։ զի ազգակից մարմնոյն որ ի մէնջ՝ տեսեալ
զածութիւնն յարգեսցուք բարեբարութիւն հօր։ և
ընդ նմին ընկալցուք զշնորհս բարեբարութեան հոգ-
ւոյդ սրբոյ՝ որ ի քէն։ զի և շնորհեսցին պատգամք
աւետարանի քո այսմ աշխարհի։ զի և սոքա ծանի-
ցեն զքեզ և զերախտիս բարեբարութեդ շնորհի
քոյ։ որ առ ամենեսին է։

Լ՝ յլ որ առատանասդ ամենեցուն։ տուր մեզ
զի լեցուք վկայք ածութեդ քոյ։ և մեռանել վասն
ճշմարտութեան։ և նորոգել՝ ի գալստեան ածութեան
քո։ զի դու եկիր և մեռար՝ ի վերայ արարածոց
քոց։ և խառնեցեր զմահկանացութիս մեր յանմա-
հութիւն քո։ ԱՍՍ այսորիկ և մեք մինչ՝ ի մահ
լեցուք վկայք կենդանութեան քում։ զի խառնես-
ցուք՝ ի թիւ վկայից քոց։ զի այլ զինչ ևս կարիս
ցեմք առնել դարձուածս փոխարէն բարեացն որ
ի քէն։ եթէ ոչ տացուք զանձինս մեր փոխանակ
պատուիրանաց քոց՝ ի հաճութիւն կամաց քոց։ զի
լեցուք ժառանգաւորք արքայութեան քում ընդ այ-
նոսիկ՝ որ հաճոյ եղեն առաջի քո։ զի մատուսցուք
զանձինս մեր պատարագ ածութեան քում։ կորուս-
ցուք զանձինս մեր։ զի դարձեալ գտցուք զնա։
Յաւուր յարութեան կացցուք ընդ աջմէ քումմէ
զանմեղութիւն զգեցեալ՝ ընդ գառինս աջակողմեան
դասուն կամարարաց քոց՝ յուրախութիւն սրբոց քոց

որ սիրեցին զանձութիւն քո, և զմիածին որդիդ՝ զոր մեր յն քո • որ եղև գառն Աչմարիտ, և մատոյց զանձն իւր քեզ պատարագ վասն մեղաց ամենայն աշխարհի • զի լիցի հաճեցուցիչ և բարեխօս ընդ արարարիչ և ընդ արարածս։

Իսկ որ յայս հաճութիւն ընթացեալ մերձեցան, պատրաստեաց նոցա օթեվանս յարքայութիւն ՅԱՇՈՒԵ իւրոյ։ Իսկ որք ոչ կամեցան մատանել 'ի հաճութիւն հնազանդութեան գալստեան նորա, յաւիտենից տանջանս խոստացաւ։

Լաւ արդ՝ տեր բարերար, որ եկիր և խոնարհեցար, և առեր զկերպարանս մարդկան, և եռուր զանձն քո ամենայն համբերութիւն, և ոչ դարձուցեր զանձն քո յանարգանաց, ընդ երեսս թքանելոյ • և մատուցեր հարկանողացն զծնօտս քո • քացախ և լեղի դառնութիւն արբեր վասն մեր • քաղցրացո զսիրաս ՅԱՄ մարդոյ՝ 'ի պաշտօն քո • զի հնազանդեսցին ընդ ամենահեշտ լծով քո, և ապրեսցին 'ի յաւիտենից տանջանացն • զի լցաւ երկիր ՅԱՇ պաշտութիւն քով • և որ մնացեալքս են՝ զի և սոքա մի՝ վերիպեսցին 'ի Աչմարտութիւն ճանապարհաց քոց • և հրաւիրեսցին յարքայութիւն սեղանոյ • և վայելեսցեն յարքայութենէ քումմէ։ Որ վա՜ ամենեցուն եկիր 'ի սպանումն իբրև զգառն • և ուրախ արարեր 'ի մարմնոյ քումմէ՝ զոր եռուր 'ի փրկութիւն ամենեցուն • և զուխս փափկութեան քոյ եռուր ըմպել զարիւն քո՝ վասն կենաց ՅԱՄ աշխարհի։ Գնա՛ զի յիշեսցեն և դարձցին և եկեսցեն առ քեզ ՅԱՄ ծագք երկրի • և երկիրպագցեն առաջի քո ամենայն՝ ցաք իջանեն 'ի հող • զի կարօղ ես միասնագամ կանգնել, կենդանացուցանել, և առնել արժանի մարդասիրութիւն քում • զի քո իսկ արեամբ են փրկեալք, և ազատեալք յիշխանութիւն խաւարի • արդ ծանիցեն ըզ քեզ յորոց վերայ մեռար դու • զի քո իսկ են ծառայք • և քեզ լիցին երկրպագութք • զի մի՝ եկեսցէ

բարկութիւն քո և սրտմտութիւն քոյ 'ի վրայ մարդկան։

Զ.բայ զմեզ որդի լուսոյ և որդի տուընջեան։ զի փառաւորեսցի անուն քո 'ի վերայ ամ տիեզերաց։ զի դու ես փառաւորեալ 'ի մշանջենաւոր արքայութեանդ։ որ ես աստ յեռութեանդ։ յիսկութեանդ։ յինքնութեանդ։ Որ ետուր օրինակ չարչարանաց քոյով չարչարանաց խոնարհութիւն՝ քոյոց սիրելեաց։ և ցուցեր զտանջանս քոյոց սրբոցն։ 'ի քո մնանել 'ի տանջանս կուսիսարութեան։

Իսկ մեք հողեղինքս ընաւ իսկ զինչ բերիցեմք 'ի համար զմեր նեղութիւն չարչարանաց։ զի դու որ խոնարհեցար և առեր յանձն զամ։ և բարձեր ըզ վիշտս և զչարչարանս ամ տիեզերաց։ Զ.արդ՝ զօրացո՛ զիս 'ի ժուժկալութիւն պնդութեամբ նեղութեան՝ որ կամս։ զի յերկարեսցի իմդ պարծելս 'ի նեղութիւն տանջանացս։ զի հաւասարեցից և ես ընդ սիրելիս քո՝ յաւուր յորում հատուցանիցես զանպատում բարիսդ։ որ կայ պահի յուսացելոց քոց որ յաւիտենից։

Ներսէս Չարչրան։ «Բ»ոյն Դրէդ»էր։

Զ.ու արդ՝ մինչ դեռ նա կախեալ այնպէս։ խօսեցաւ զայս ամ։ և գրեցին առենակալ դպիրքն նշանագրացն։ զի առ ոչինչ համարեալ զկախաղանն։ և ոչ զբրածեծ գանին գրեաց մինչ զվիշտս։ զի ջարդել էր զամ մարմնոյն յոգորածեծն առնել։ և այլ ևս բազում քան զայս խօսեցաւ՝ մինչդեռ նա կայր կախեալ։ և գրեցին և մատուցին զայն առաջի թագաւորին։ քանզի էր կախեալ զնա զեօթն օր։ Զ.ու յետ այնր ետ հրաման։ և իջուցին զնա անտի։

Ասկսաւ խօսել ընդ նմա թագաւորն և ասէ։ զինչ ունիս։ և կամ զինչ եդեր 'ի մտի։ լինել կցորդ կենաց իմոց։ որպէս աշխատեցար ընդ իս 'ի մանկուէ վաստակօք քովք։ եթէ մեռանել տաքսապարտուց։

'ի տարտարոս խորհուրդս ընդունայնութեան մտացդ՝ ուր կայդ իսկ։ Եւ ետ պատասխանի և ասէ. փութամ ես ելանել 'ի մարմնոյս, և առնուլ զՊատկն և զկենդանն յաւիտենից. այլ տուր հրամանն վասն իմ որպէս և կամիս՝ զինչ մահ և հրամայեսս վասն իմ։

Եւ պատասխանի աբբայ և ասէ. ոչ տամ զայդ պարգև՝ թէ լիցի քեզ վախճան մահու՝ արագ աղրագ հանգչել 'ի տանջանացդ՝ զոր կոչես դու կեանս յաւիտենից. այլ կատել զքեզ ընդ երկար՝ զի ոչ հնար լիցի քեզ արագ մեռանել. այլ պահանջել 'ի քէն զանարդանս դիցն, և զյամառութիդ քո. որ ոչ կամեցար պաշտել զնոսա։

Եւ ետ հրաման բերել կոճեղս փայտից, և առնուլ ըստ ոլորի խոստաց ոտից նորա. և դնել և պնդել ուժգին առատկօք, մինչև իջանէր արիւն ընդ ծայրս ոտից մատանց նորա. և ասէ՝ գիտիցեն արդեօք, կամ զգայցես ինչ ցաւադ։ Եւ ետ պատասխանի և ասէ. տուռաւ ինձ զօրութի՝ քանզի խնդրեցի յարարչէն արարածոց. որ է ճարտարապետ և արարիչ ամի, որ երևին և որ ոչն երևին։

Զորդորդ չարչարանք արքոյն Գրիգորի։

Եւ ետ հրաման՝ և լուծին զնա յայնմանէ։ Եւ ետ հրաման բերել բևեռս երկաթիս, և վարել ընդ ներբանս ոտից նորա. և առեալ զձեռանէ նորա՝ ատամ անտի՝ ընթացուցանէին զնա յայս կոյս, և յայն կոյս. և արիւնն հոսէր իջանէր յոտից անտի. և առռգանէր զերկիրն սաստիկ յոյժ։ Եւ դարձեալ ասէ ցնա. այդ են աներևոյթ արարածք այն քոյ՝ զոր դու տեսանես։

Եւ ասէ. բարիոք ասացեր թէ այս են անե-

թեւոյթ արարածք աստուածոյն իմոյ։ վասն զի սերմանի տկարութիւն՝ և յառնէ զօրութիւն։ սերմանի անարգութիւն՝ և յառնէ փառաւոր։ զի լալով լան՝ որք տանիցին զսերմանս իւրեանց։ այսինքն են վիշտք և չարչարանք՝ որ վասն ճշմարտութեան հասանեն մեզ։ այլ յորժամ որոյն 'ի հունձս եկեալ մատուսցէ գատարութեան բերրի զպտուղ՝ սերմանողացն։ ընդ նմին և զյնծութիւն բերկրութեան ուրախութեաց ամէն։

Հինգերորդ չարշաբաթ արքոյն երեքորի։

Լսէ Թագաւորն։ բախեցէք զսման լալոյն արտասուաց։ թող եկեսցէ դմա ուրախութիւն։ և հանին նմա կռուփս 'ի գլուխն անհնարին հարկանելով։ Ակսաւ հարցանել զնա և ասէ՝ այդ է ուրախութիւնն։

Լու նա ասէ՝ այո այս է։ զի թէ ոչ քրանեսցի մշակն 'ի տապ խորշակի ջերմոցն արեգականակէզ լինելով՝ ոչ ըմբռնէ արդիւնս շահեկանս ուրախութեան պտղոյն՝ ձմերայնոյն հանգստեան։ Լու պատասխանի արքայ և ասէ։ դու աստէն իսկ աշխատեաց 'ի մշակութիւն տանջանացդ։ յորում կասդ իսկ։

Վեցերորդ չարշաբաթ արքոյն երեքորի։

Լու ետ հրաման բերել ամ և բարկ քացախ, և բորակ։ և արկանել զնա յորսայս։ և դնել զգլուխ նորա 'ի հիւսանց մամուլս, և դնել վող եղեգան 'ի քիթս նորա։

Լ՝ՕՐՆԵԼՈՒԹԻՆ ՀԱՐՅԱՐԱՆԻ ԱՐՔԵՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ։

Լ՝ու յետ այսորիկ եւ հրաման՝ և բերին պարկս օդենիս մեծամեծս և լցին մեխրով հնոցի։ և ապրարին թուլագոյն։ զի մի՛ կարիլ ի իցէ վասն տուր և առ շնչոյն։ զի հարկանելով ընդ խելսն վասնզեւ ցէ զնա։ և ագուցին զայն ի գլուխս նորա։ և կապեցին զբերան պարկին ի փողս նորա։ և եկաց նովիմբ հանդերձ աւուրս վեց։ Լ՝ու յետ այսորիկ եւ հրաման և ածին առաջի թագաւորին։

Ասասա խօսել թագաւորն և ասէ։ ուանի՞գասա՝ թերևս յարբայութէ անտի գայցես զոր ասէիր։ Լ՝ա պատասխանի գրիգորիոս և ասէ՝ այո իսկ յարքայութէ անտի գամ՝ զոր ասէի։ վասն զի արժանի արար զիս ՅԾ զայս ամենայն կրել յանձն իմ վասն անուանն իւրոյ։ Լ՝ըդարձ կայ և ծնայ ինձ արքայութիւն։ որ ոչ անցանէ։ փոխանակ մեխրոյն՝ անթառամ ծաղիկն։ և փոխանակ քացախայն՝ անապատուրախութիւնն։

Ա-ՐԵՐՈՐԴ ՀԱՐՅԱՐԱՆԻ ԱՐՔԵՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ։

Լ՝ու ևս բարկացեալ թագաւորն՝ եւ պնդել զոտս նորա ի հրապարս տկոց։ և կախել զնա գլխի վայր։ և եւ դնել ձագար ի նստոյ տեղին։ և արկանել ջուր տկաւ յորովայն նորա։ Լ՝ու եւ հրամայեալ հիզուցանել յայնմանէ։ սկսաւ հարցանել զնա և ասէ։ առնեա՞ զկամս իմ թէ ոչ։ պաշտեա՞ զդիսն՝ որ են ամենայն երկրի կեանք և շինութիւն։

Լ՝ա պատասխանի գրիգորիոս և ասէ։ ես ՅՈՆ՝ այ խնդ երկիրպագանեմ։ զի նա է արարիչ և կեանք և շինութի։ և զորդին հաստիչ և համոզոր և համագործ։ և զՀոգի նորին որ ելից իմաստութիւն զամ

տիեզերս. այլ զկուռս կռեալս, կոփեալս, քերեալս, և արարեալս. ոչ կալայ երբեք առ ՀԾՆ Ճշմարիտ. և մի՛ լեցի այլ ուներ՝ մինչև իցե շունչ 'ի մարմնի իմում։ Լ՝սա պատասխանի Թագաւորն և ասէ. փութանակ զի իշխեաց ասել կռեալս դիցն, պահանջեսցի դա ընդ այդորիկ։

Լենեբուրդ չարչարանք արքոյն երիեորի։

Լ՝սա ետ հրաման քերել զկողս նորա երկաթի քերչօք, մինչև ոսոգան ամ վայրքն յարեանէ նորա. սկսաւ ասել ցնա. արասցե՞ն զկամս իմ գրիգորիոս, որ յայդպիսի տանջանս մատնեցար։

Լ՝սէ ցնա. ինձ լեցի պահել զուխտն ՀԾ-պաշտուն Թեան՝ զոր ուսայ 'ի մանկութէ իմմէ. որ կարօղն է փրկել զիս յամ նեղութէ. և զքեզ արկանել 'ի տանջանս՝ որ ոչ Ճանաչես զնա. և դարձեալ զայլս ևս զարհուրեցուցանել կամիս, և քակել 'ի պաշտմանէ սիրոյ նորա։ Լ՝սա պատասխանի Թագաւորն և ասէ. ոՀՀ այն ՀԾ քո՝ որ փրկէ զքեզ 'ի ձեռաց իմոց. և կամ դատի որպէս ասացեր, դատատանօք իւրովք։

Տանեբուրդ չարչարանք արքոյն երիեորի։

Լ՝սա ետ հրաման, և քերին տատասակ երկաթի քազում սակառօք, և արկին 'ի գետնի Թանձր. և մերկացուցին զգրիգորիոս, և արկին 'ի վերայ տատասկին մերկ. և Ծակոտեալ լինէին մարմինք նորա առ հասարակ. և քարշեցին և Թաղեցին զնա 'ի տատասկն. և շրջ շրջէին զնա անդէն՝ մինչև առ հասարակ Ծակոտեցան մարմինք նորա, մինչ զի ոչ

Ճնաց 'ի նմա տեղի ողջ։

Լրա 'ի փաւսում աւուրն ած ին զնա առաջի նո-
ցա։ սկսաւ հարցանել զնա և ասէ։ զարմացեալ եմ
կարի քաջ՝ զի՞նդ կաս դու կենդանի։ և ոչ ինչ
գրեցեր դու զցաւսդ, և խօսիս և՛ս։ զի արժան
էր թէ վաղուց էիր դու վախճանեալ 'ի տանջա-
նացդ յայդցանէ։

Լրա պատասխանի գրիգորիոս և ասէ։ ոչ է իմ
ժուժկալութի տուկալոյս իմով զօրութիւ։ այլ ու-
ժով զնորին՝ զոր իմոյ։ և իմոյ յուժարութիւն կամացս՝
որ խնդրեցի 'ի նմանէ։ զի և դու զփորձ առցես
զծառայիս այ։ և գիտասցես թէ ոչ ոք կարասցէ
մեկնել զյուսացեալս 'ի նա՝ 'ի սիրոյ նորա։ զի նա
տայ ուժ և զօրութիւն համբերութի՝ համբերել
նեղութեց և փորձութեց։ զի ամաչեսցեն անօրէնք
յունայնութեան իւրեանց՝ և յամբարշտութի և
յապստամբութի իւրեանց, որ իբրև զքեզդ ի-
ցեն։ և կացցեն ամօթով յաւուրն այցելութեան,
և յանդիմանութեան։

Ա՝էպատանէրսդ Հարիարանդ սրբոյն Գրիգորի։

Լրա եւ հրաման արկանել կապիճս երկաթի 'ի
ծունկս նորա։ և վարել ուռուանս սուր։ և
բառնալ 'ի կախաղանս՝ մինչև յոշեսցին ծունկք նո-
անդրէն։ Լրա եկաց կախեալ զերիս աւուրս։

Լրա յաւուրն չորրորդի հրաման եւ թագաւորն։
և իջուցին զնա 'ի կախաղանէն։ և ած ին կացուցին
առաջի նորա։ Լսօսել սկսաւ թագաւորն և ասէ։
տես գրիգորիոս, զի ոչ փրկեաց զքեզ մնասի յայն
քո՝ յոր յուսայիր դու, չեՀան զքեզ 'ի ձեռաց իմոց։

Լրա պատասխանի գրիգորիոս և ասէ։ տեսեք
դու, զի մնասի են յայսքն քո, և ոչ կարացին հաւա-
նեցուցանել զիս և երկեցուցանել։ զի ըր դու

պաշտեա՝ մնոտի է. և ամ գործք մոլորութեան քո Լ.յլ տես դու՝ զի ոչ ի տանջանաց քոց երկեայ ինչ ես. այլ զօրութեամբ ոն իմոյ մարտեայ ընդ թշնամւոյն՝ որ ի ծածուկ քեզ պատերազմի ընդ ճշմարտութեան. և մատնեցի զմարմին իմ ի կիզումն տանջանաց։

Օ ի եթէ վաղ և եթէ անագան՝ տակաւին քակտի հնացեալ մարմինն. զի եկեսցէ ճարտարապետն գտեալ զորդիս մարդկան, զնոյն հնացեալս միւսանգամ նորոգեսցէ։ Օ ի զորոց զհոգիսն գտանէ ի պարկեշտութեան, ի սրբութեան, ի քաղցրութեան, ի հեզութեան, յաճապաշտութեան կացեալ. նորոգէ, զարդարէ, կեցուցանէ, զնոյն ոգի նովին մարմնով։ Իսկ զորս գտանէ յանօրէնութեան, և յամբարշտութեան, յաճատեցութեան, ի կռապաշտութեան. թէպէտ և բուսանել բուսանին մարմինք նոցա առ ժամանակ մի, այլ զնոսին իսկ նովին ոգւով և նովին մարմնով արկանէ ի գեհենն, յանշէջ հուրն՝ յաւիտենից տանջանսն. մանաւանդ զայնոսիկ՝ որ իբրև զքէզդ իցեն ի կռապաշտութեան։

Իսկ իբրև զայն թագաւորն լուաւ, բարկացաւ ընդ բանսն և ասէ. ինձ չէ փոյթ զայնմանէ՝ եթէ նորոգեսցէ զքեզ ածն քո, եթէ ոչ. այլ զի ասացեր թէ զքեզ յանշէջ հուրն արկանէ. ես զքեզ աստէն իսկ այրեցից շինչանուտ հրովն. տեսցուք քո ածն զնա՞ զդ այրեսցէ։

Երկոտասանեարդ չարչարանք սրբոյն Գրիգորի։

Լաւ ետ հրամանն երկաթի պուտկօք հալել կապար. և ջերմն մինչ դեռ ջուր իցէ՝ հոսել արկանել զմարմնով նորա. և այրեցին զմարմին նորա առ հասարակ, և ոչ մեռաւ. այլ կայր մեծ ուժով, և զնոչ հալցանէին՝ վաղվաղակի տայր պատասխանի։

Եւ զարմացեալ Թադաւորն ընդ ժուժկալութիւն համբերութեան կարի անհնարին, և տակաւ նորա. և ասէ զինքդ կայ ի քեզ շուտիդ յայնչափ ժամանակաց, և չարաչար տանջանացդ՝ որով զքեզ կատեցի։ Եւ պատասխանի գրիգորիոս և ասէ. ոչ վաղ իսկ ասացի քեզ, եթէ զի առցես դու զփորձ համբերութեան ծառայիս այ. զի տայ զօրութիւն. և յամօթ առնէ զայնոսիկ՝ որ առանց նորա իցեն. և մարտնչին ընդ դեմ նորա իբրու զքեզդ։ Զի այսպէս ասէ ոչ թողից զձեզ, և ոչ ընդ վայր հարից. արդ՝ այն է պահպանութիւն նորա առ արարածս իւր, և առ սիրելիս. զի պահեսցէ զնոսա ի հաւատս իւրեանց՝ որ ի նա, մինչև հատուցէ նոցա ի գալստեան իւրում։

Տեղեկանալն արդասաց վասն սրբոյն գրիգորի՝ ըստ սրդի է անուանց պարկեսի, և սրկանէն ցնա ի վերայն մահապարտաց։

Մինչ դեռ խորհէր տրդատիոս խօսել և այլ ողբով ընդ նմա. յղել պատգամն և խոստանալ կեանս և պատիւս՝ որում ոչ ինչ էր լսելոց. և եթէ այսմ ևս ոչ լսիցէ՝ այլ ևս յաւելից, և ի տուկ կրատեցից։ Ամն մատուցեալ ի նախարարացն սկսաւ խօսել և տալ տեղեկութիւն, և ասել այսպէս վասն նր. եթէ վասն զի չէ պարտ վասն կենաց՝ վասն այնորիկ ոչ կամի կեալ, և ոչ զլոյս տեսանել։ Զի այս քանի՞ ժամանակք են որ առ մեզ բնակեալ է՝ և ոչ գիտեաք զդա. այլ է դա որդի անակայ մահապարտի՝ որ զայն զհայրն քո խոսրով. և արար խաւար հայոց աշխարհիս. և ի կորուստ մատնեաց զայս աշխարհս, և ի գերուն. արդ՝ չէ պարտ կեալ դմա. զի որդի վրիժապարտի է դա։ Եւ յետ այսչափ հարցից և տանջանաց, գանից՝ և քանտից, գեալարա-

նաց՝ և կախարդանաց, և դառն նեղութեաց, և ա-
մենայն կատանաց՝ որով կատեցին զնա, բազում
համբերութիւն յանձն իւր կատարեալ վասն ան-
ուանն տեառն մերոյ Յի Քրիստոսի։

Որդ՝ իբրև զայն և ս հասանէր թագաւորն 'ի
վերայ իրացն՝ եթէ տրդատ արդի անակայ պար-
թևիւ՝ որ սպան իսկ զխոսրով հայր նոր. հրաման
տայր կապեալ ոտիւք, և կապեալ ձեռօք, և կա-
պեալ պարանոցաւ. խաղացուցանել զնա յայրարատ
գաւառ, և տալ զնա 'ի դղեակ բերդին արտաշա-
տու քաղաքին, և իջուցանել զնա 'ի վիրապն ներ-
քին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև ան-
դէն մեռցի։ Որ եղև նա յայնմ վիրապի ամս ե-
րեքտասան։

Որ ինքն թագաւորն խաղայր գնայր 'ի ձմերայ
նոցս յայրարատ գաւառ, 'ի վաղարշապատ քաղաք՝
'ի հայոց աշխարհն յարևելս։ Իսկ թագաւորն տըր-
դատ զամ ժամանակս իւրոյ թագաւորութեան, ա-
ւերէր քանդէր զերկիրն պարսից թագաւորութեան.
զաշխարհն ասորեստանի աւերէր, և հարկանէր 'ի
հարուածս անհնարինս։ Զան այնորիկ պատշաձ
ցան բանքս այս 'ի բանս կարգի առակաց. թէ իբրև
զսէգն տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս
գետոց. և ցամաքեցոյց 'ի սիգալ իւրում զյորձանս
ծովուց։ Զան զի սէգ իսկ էր առ հանդերձ, և այլ
ուժով զանդութեամբ հաստատութիւնքս բուռն ոսկերաց,
և յաղթ մարմնով, քաջ և պատերազմող անհնա-
րին, բարձր և լայն հասակաւ. որ զամ ժամանակս
կենաց իւրոց պատերազմեալ՝ առնէր մարտիցն յաղ-
թութիւն։ Զեծ անուն պարծանաց քաջութեան ըս-
տանայր անձին. և զխոյակապ շքեղութիւն յաղթութեան
ընդ ամ աշխարհ կացուցանէր. հարկանէր 'ի հար-
ուածս զթշնամիս, և խնդրէր զքէնս վրիժուց՝
իւրոց հայրենեացն։ Զոր առնոյր աւար բազում
'ի կողմանցն ասորեստանեաց. թափէր կողոպուտ

սաստիկս անհնարին 'ի նոցանէ։ Բ. Երկանէր 'ի սուրբ զզօրս պարսից, և Թափէր կողոպուտս անհնարին։ Լինէր առաջնորդ առն և ձիոյ՝ զօրացն յունաց։ և մատնէր նոցա զքանակս նոցա։ հանէր զզօրս հոնաց սաստիկ յոյժ, և գերէր զկողմանս պարսից։

Բ. Եւ զայն երեքտասան ամն որ եղև գրիգորիոս 'ի բերդի 'ի բանտի 'ի խոր վիրապին, կին ոմն այրի որ բնակեալ էր 'ի բերդին յայնմիկ։ հրաման առեալ յարքայէ, զի աւուրն նկանակ մի պատրաստա- կան արարել՝ ընկենուլ 'ի նեղքս 'ի խոր վիրապին։ և այնու կերակրեալ լինէր նա'ի հրամանէն աստ՝ զայն ամն որ եղև նա անդ։ Իսկ յայն վիրապ՝ ուր ընկեցին զնա, պահեալ լինէր կենդանի շնորհիւ ան իւրոյ։ Իսկ զայլ մարդիկ որ միանգամ իջուցեալ էր անդր՝ ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ չարաշունչ դառնութեան տեղոյն, վասն կարակուտ տղմին, օձախառն բնակութեան, և խորութեան։ վասն չարագործաց իսկ շինեալ էր զայն տեղին և'ի սպա- նումն մահապարտաց ամենայն հայոց։

Հրովարտակ արքայական վասն դէպն պաղատանաց։

Բ. Յետ այսորիկ հրաման ետ արքայն՝ հրովարտակ առնել ընդ ամ աշխարհս իշխանութեան իւրոյ։ հրաման հանեալ օրինակ զայս։

Տրդատ արքայ հայոց մեծաց։ առ մեծամեծս, և առ իշխանս, և առ նախարարս, և առ գործա- կալս, և առ այլ մարդիկդ՝ որ ընդ իմով իշխանութեանդ է, յաւանս, և'ի շէնս, և'ի գեօղս, և յագարակս։ առ ազատս, և առ շինականս, միանգամայն իսկ առ ամենեսին ողջոյն։ Ողջոյն հասեալ և շնորհիւն դիցն օգնականութեամբ։ լուեալ պարարտութիւն յարքայն արամազդայ։ խնամակալութեամբ յանահիտ տիկնոջէ։

և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջն վահագնէ ամ հայոց աշխարհիս. խնամատութիւն յունաց հասցէ դաստակերտիցդ կայսերաց. և ի մեր դիւցախառն պարթևաց հասցէ այցելութիւն. ի փառաց թագաւորաց, և ի քաջ նախնեաց՝ առ ամենեսին ողջոյն։

Զ՝մենայն որ գիտասցէ ի մերոց հրամանաց որ ձեզ վասն ձերոյ շինութեան իցեմք հոգացեալ. զի յորժամ եկաք մեք ի յունաց աշխարհին, տեսանէաք զհոգաբարձուն թագաւորացն՝ ի հոգալ ի շինուն իւրեանց աշխարհի, ի պատուէր զբադինս դիցն ազգացն, շինուածովք, և սպանդիւք զոհիցն, և երևելի պատարագացն ընծայիւք. և գունակ գունակ նուէրօք պաղոցն յամենայնէ՝ զամ նոցա մատուցանել. և ջերմեռանդն եռեալ՝ զեռեալ պաշտամանն, շքեղեցուցանելով և զարդուք զարդարեալ և զերևելի խոյակաց՝ զանեղծ զդիս մեծարելով։

Զ՝ այն և եթէ տեսանէաք ի նշնէ՝ ի նոցունց դիցանտի, զխաղաղասէր շինութեան մարդաշատութեան, հոծ բազմամբոխ լինութեամբ պարարտութեամբ նոցա. զայն փոխադարձ փոխարինացն շինութեան շնորհէ՝ ամենալրիւք բարութեամբ մեծացեալ խաղաղացեալք ի բարիսն վայելեն։

Ա՝յսն որոյ պատուէր առեալ՝ ահաբեկ արարեալ թագաւորաց աշխարհին, զմարդիկ կացուցանէին՝ զի ի պաշտաման դիցն յոլովելոյ. վասն զի եթէ խառնիճաղանձ բազմամբոխ խաժամուժ մարդիկ առ ոգիտութեամբ ինչ, կամ թէ ոք յանկարծ փոխելութեան, իշխեսցէ արհամարհել զպաշտօն դիցն. հրաման առեալ զօրացեալ ի թագաւորաց զի խլեսցեն բրեսցեն իշխանք՝ որ իցեն յիւրաքանչիւր գործակալութեց, զի շինութիւն ՝ի ի դիցն բազմացի։ Զ՝ի թէ գուցէ ոք յանկարծ զդիսն անարգիցէ՝ ինաս մեծի ցասման յուզիցէ. այնպիսիքն զանձինս կորուսանեն, և աշխարհի մեծ ոճիրս ինասուց ի նոցանէն ընդոստուցանեն. վասն այնորիկ և եռուն իսկ զհրամանս սաստից այնպիսեացն

պատուհասից մահու՝ Թագաւորին յունաց յիւրեանց յաշխարհին։

Լ՚ըդ մեր զհրաման շինութեան կամեցեալ, զձեզ հոգացեալ։ զի և ձեզ ամենայնիւք ամենայն բարիք ՚ի դիցն բաղմացին։ զի ՚ի ձէնջ պաշտօն նոցա և փառաւորութիւն։ և ՚ի նոցանէ շինութիւն և լիութիւն, և առատութիւն և խաղաղութիւն։ զի որպէս ամ տանուտէր ընդ տան իւրոյ և ընդ ընդանեաց հոգայ։ այնպէս և մեք հոգամք ընդ մեր հայոց աշխարհիս շինութեան։

Լ՚ըդ՝ ամ նախարարք և մեծամեծք, գործակալք և ազատք, և սիրելիք մեր Թագաւորաց։ շինականք և բնակք, ձեռատունկք և ձեռնասունք մեր արշակունեացս՝ յանձանձեալդ և սնուցեալդ անխայեալ և յառաջեալ՝ որ վասն ձեր օգտի հասարակաց հոգացեալ, զի զդիսն պատուել մարթասջիք։ Լ՚ըդ՝ եթէ յանկարծ ոք գտցի՝ որ զդիսն անպատուէսցէ, և գտցեն զայնպիսին՝ կապեալ ոտիւք, և կապեալ ձեռօք, և կապեալ պարանոցաւք՝ ՚ի դուռն արքունի ածցեն։ և տուն, և կեանք, և աւրարք, և ստացուածք, և գանձք, այնոցիկ լիցին՝ որ զայնպիսին ՚ի մէջ ածցէ։ Ո՛ղջ լերուք ՚ի դիցն օգնականութիւն դուք ամենեքին, և՚ի մեր Թագաւորաց՝ որ ընդ այս հրաման կամիմք։ և՚ի շինութեան բնակեսջիք ամենեքին։ զի և մեք ողջ եմք։

Իսկ զի՞մ ամն ժամանակաց իւրոց՝ Թագաւորն տրդատ, գոհացեալ ընդ պարսից տէրութեանն, խընդրել զքէն վրիժուց մարտից պատերազմաց։ Իսկ՚ի ինուլ ամացն որ եղև գրիգորիոս՚ի վիրապին՝ իբրև ամք երեքտասան։ Լրս էր մարտ՝ ՚ի սաստիկ խըստութեան տրդատայ, ընդ պարսից Թագաւորին՝ զամենայն աւուրս կենաց իւրոց։

Հրովարտակ պրպտասոյ վասն յաւելմնդրէր լինելոյ ժրիսոնէից, և մասնէլոյ յարբունիս։

Իսկ միւս ևս այլ հրովարտակ հրամայեաց գրել ընդ աշխարհս, և ընդ գաւառս՝ իշխանութեան իւրոյ՝ օրինակ զայս։

Տրդատիոս հայոց մեծաց արքայ։ առ աշխարհս՝ և առ գաւառս, առ նախարարս՝ և առ զօրս, և առ շինականս, և առ ամենեսին ողջոյն։ ողջ լիջիք։ և մեք մեղէն ողջ եմք։ Յուրք ինքնին գիտէք, զիսրդ՝ի քանէ նախնեացն իսկ յաղթութեի խաղաղութեան բազում շնորհեալէր մեզ դիցն օգնականութիւն։ որպէս զամ աղգս նուաճեալէր, և՝ ի հնազանդուն ունէաք։ Իսկ յորժամ զդիան ոչ մարթացաք հաճել պաշտամամբ՝ զկամն նոցա քաղցրացուցանել, հանին մերժեցին՝ ի ցասմանն իւրեանց զմեզ՝ ի մեծի տերութենն։ մանաւանդ վասն քրիստոնէից աղանդին՝ պատուիրեալ ձեզ։ զի հազար և բիւր գեղեր, թէ գացի որ։ զի նորա անհնարին լցին խափան դիցն պաշտաման։ զայնպիսին թէ գացեն՝ վաղվաղակի՝ ի մէջ ածցեն։ յարքունուստ պարգևք և պատիւ նոցա լինիցի շնորհեալ՝ որ զնոսայն յայտ նեսցէ։ ապա թէ որ ոչ յայտնեսցէ զայնպիսին, կամ թաքուսցէ։ ուր և գտցի՝ այսպիսին ընդ մահապարտս համարեսցի։ և՝ ի հրապարակ արքունի եկեալ մեռցի։ և տուն նորա յարքունիս երթիցէ։

Զդ՝ զոր օրինակ ես ոչ խնայեցի յիմ վաստակաւոր սիրելն գրիգորիոս։ որ վասն դորին իսկ իրաց չարչարեցի, և սաստիկ տանջանօք տանջեցի։ և յետ այնորիկ եառ զնա՝ ի խոր վիրապն ընկենուլ։ զի անդէն իսկ միանգամայն օձից լինել կերակուր։ Զ՝ և ոչ զմեծ վաստակ նորա համարեցայ ինչ առ սիրով և ահիւ դիցն։ Դրեցի ինչ, զի և ձեզ՝ի՝ լցի այս, և երկիւղ՝ի մահուանէ։ այլ զի կեցջիք ընդ հովանեաւ դիցն։ և՝ ի մեծ բարիս

գտանել մարթասջիք. ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք։

Պէտրոսեանց վայելչաբերի արքոյ Հոսէին հռիփսիմեայ, և խնդրելն զնա դիոկղէտիանոսի հայուէր ի Հնոտրի իւր։

Այս ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին՝ կայսրն դիոկղիտիանոս. և այնուհետև ընդ ամ կողմանս տէրուն իւրոյ արձակեալք շրջէին պատկերագործք նմանանգնք, ձշգրտագործք գեղա տախտակք պայծառակշիռ հասակաչափ։ Զ գեղեցիկս և զմարգարդ յանիցն 'ի տախտակսն՝ համանման դեղոքն պատուանացս, յայտ յանդիման ցուցանէին առաջի ակնաշարժ կամաց թագաւորին։

Հայնմ ժամանակի եկեալ գտանէին 'ի քաղաքին հռովմայեցւոց՝ արգելանս մի կուսանաց. փանձանական, լեռնական, ունդակերս, զգաստացեալս, պարկեշտականս, սրբամատոյց կանայս՝ քրիստոսական հաւատոց. որ զցայգ և զցերեկ, և յամ ժամանակի, փառաբերութիւն զկատարեալ աղօթս իւրեանց՝ առաքել 'ի բարձունս արժանի լինէին։ Որոյ անուն էր գլխաւորին գայիանէ. և սանու նորին 'ի դատերաց ուրումն՝ յանդգնագոյն և թագակալ տոհմի, զի անուն էր նմա հռիփսիմէ։

Իբրև եկին հասին՝ բռնութիւն մանին 'ի սուրբ կայեանս առաքինեացն. և տեսեալ զպարկեշտագեղն հռիփսիմէ, զարմացեալ սխրացեալ ընդ սքանչելատեսիլն տեսիլ, 'ի նկարագրագրեալ 'ի տախտակսն յօրինեալ էին. և առ թագաւորն հասուցանէին։

Իբրև ետես թագաւորն զգեղապանծ վայելչութիւն պատկերակերպ և նկարագիրն հռիփսիմեայ. մոլեկան ցանկութիւն տրփողաց, զի անկարգ ցանկութիւն յիմարութիւն և մոլութեն ստիպէր, ժամառուելաւ ուրախութիւն հարսանեաց՝ ձեռքով և ոտգ-

նապատ. Ճէպէր զուրախութիւն հարսանեացն կատարել։ Յայնմ ժամանակի տագնապափոյթ տխրագով դէսպանս արձակեալ պատուիրակս հանեալ ընդ աշխարհս ամ. զի ամենեքեան օժտաբէր ընծաստարելոցն մեծի հարսանեացն. և բազում ուրախութիւն գալ կատարել ամենեցուն զօրէն արքունական փեսային՝ ըստ օրինաց թագաւորաց։

Լսակ իբրև տեսին առաքինիքն զգաղտաձիգ նեղս թշնամւոյն. որով 'ի ծածուկ սոլոր է ձգել 'ի սուրբն քրիստոսասէրս. չարին ման գտեալ զթագաւորն՝ որպէս 'ի դրախտի անդ զօձն անդրուվար արարեալ՝ առ 'ի զպատուիրանն մոռանալոյ, մտեալ յանզգամ ունկն կնոջն առաջնոյ. սոյնպէս և ասա զթագաւորն անօրէն՝ իբրև զվահանակ երեսաց գտեալ. նովաւ մարտուցեալ ընդ ածաչէն եկեղեցիս։

Լսակ զթագաւորն հպարտացուցեալ ամբարհաւաճեցուցանէր որոգայթադիր թշնամին՝ 'ի գրբգռել՝ յարուցանել հալածանս 'ի վերայ եկեղեցեաց աստ. խելացնորեցուցեալ՝ պագանել երկիր՝ ուրուական մեռելոտոց, ոսկեղէն՝ և արծաթեղէն՝ պղնձագործ պատկերաց դից մնոտեաց, և պղծութեանն պաշտամանս։ Լա եդեալ համբառնայր հալկանել ընդ հաւատոց եկեղեցւոյ, վիմին ինչ ոչ ստանել կարացեալ. ինքն առ վիմին խորտակեցաւ։ Լակայն ամբարհաւաճեալ մոլեգնութիւնն՝ վատահացեալ. բազում և անչափ էր այն՝ որ 'ի նմանէ անցանէր ընդ եկեղեցիս։

Լ. ՁԵՐ ԱՐՔԵՍ ԳՈՒԴՈՒՆՈՅ։

Լսակ երանելին գայիանէ՝ հանդերձ պարկեշտասէր հուխիսիմեաւ, և այլ ընկերօքն իւրովք, յիշեալ զուխան սրբութեան զօրինաւոր կրօնիցն զգաստութիւն սրբութիւն, յոր մտեալ էին. ողբով

յանձինս իւրեանց, վասն նկարացոյց հրամանին, առ 'ի նկարել զպատկերս նոցա պիղծ և անօրէն թագաւորին, Ճգնութեամբ մատուցեալ յաղօթս՝ խնդրել 'ի բազումողորմ տեառնէն օգնութի, փրկել զնոսա 'ի փորձութէն, որ հասեալ էր 'ի վերայ նոցա։ Եւ յաղաչէն իւրեանց այսպէս ասէին։

Տէ՛ր տերանց. ո՞ՀՀ աստուածոց. ո՞ՀՀ յաւիտենական. ո՞ՀՀ երկնից՝ որ հաստատեցեր զամբանիւ քով. որ արարեր զերկինս և զերկիր, և զամ զարդ նոցա. որ ստեղծեր զմարդն հող յերկրէ. և իմաստուն կացուցեր՝ և բազմացուցեր զնա 'ի վերայ երկրի. և օգնական եղեր նոցա 'ի դարս իւրաքանչիւր որ յուսացան 'ի քեզ։

Եւ զդ՝ օգնեա՛ և մեզ տէ՛ր 'ի պատերազմիս՝ որ նեղէս զմեզ. զի յաղթեսցուք որոգայթից նենգութեանց թշնամւոյն. և անուն քո տէր փառաւորեսցի. և եղջիւր եկեղեցւոյ քոյ բարձրացեալ լեսցի. զի և մեք արժանի լիցուք հասանել յօթեւանս արքայութե պատուիրանապահց քոց։ Եւ մի՛ լեսցի պակասութի ձիթոյ լապտերաց մերոց. և մի՛ շիջցին ճրագունք հաւատոց ուխտի սրբութե մերում. և մի՛ հասցէ տխրական մթացուցիչ գիշերոյ կորստեան՝ 'ի վերայ լուսաւոր ճանապարհաց մերոց. և մի՛ գայթակղեսցին ոտք մեր 'ի լուսագնաց շաւղաց քոց. և մի՛ կուրասցին ակամբ տեսանելեաց մերոց՝ 'ի զուարթարար ճառագայթից ճշմարտութե քոյ. և մի՛ յաւիշտակեսցէ թռչունն մահացան՝ զսերմանիսն բուսոց կենաց. զոր սերմանեաց 'ի մեզ միածին որդիդ քո ո՞ր մեր յա՛ քա՛. և մի՛ տարցի զգաստութի սուրբ հօտի քոյ՝ գազանն ապստամբ. և մի՛ յաղթահարեսցէ զառնիս հօտի քոյ՝ գայլն ապականիչ. և մի՛ վարատեսցէ թշնամին ուխտին մերոյ՝ զոչխարս առաքելական եկեղեցւոյ քում սրբոյ։

Տէ՛ր ո՞ՀՀ մեր. որ առաքեցեր զառ մեզ զմիածին որդիդ քո. որ եկն և ելից զամ տիեզերս՝ հոգւով

իմաստութիւն քով. զի զամենեսեան յիսրայէլ անուն՝ ճծաւոր՝սս գրեսցէ։ Եւ մեք լուսաք զի ասաց՝ թէ պէտ և հալածեսցեն զձեզ քաղաքէ 'ի քաղաք՝ ոչ կարասջիք սպառել զքաղաքս իսրայէլի, մինչև 'ի դարձ գալստեան իմոյ այսրէն։

Եւ՝ զդ՝ խնայեա տէր յանձինս՝ որ ապաւինեցաք յանուն քո սուրբ. զի մի՝ խառնակեսցուք ընդ աշարդութիւն պղծութեան հեթանոսաց. և մի՝ տար զզգաստութիւն սրբութեան մերոյ՝ բոզանոց անօրէն շանագգաց լկտութեան նոցա. և մի՝ զկուսութիւն մեր գարիւտ հաւատոց մերոց՝ 'ի շաւիղս խողգանաց ամբարշտութեան նոցա։ Եւ մի՝ շարժեսցէ ուխտացան ջուրցն բազմութեան՝ մոլորահողմն խաբէութեան, զրահեղեղն սատակութեան՝ զհիմունս եկեղեցւոյ քոյ. որ բազմա պատիկ վիմաք արդարովք շինեցաւ 'ի վերայ վիմին հաստատանոյ. որոյ գլուխ անկեան կատարմանն եղև տէր մեր յս քս, 'ի ձեռն մարմնոյ արեան. մահուն և յարութեան, վերանալ յերկինս, և նստել ընդ աջմէ ճծութեդ՝ ուր էր յառաջն։

Եւ՝ զդ՝ նայեա տէր յերկնից 'ի սրբութիւդ քումմէ. զի մի՝ լեցուք մեք իբրև զայն տունն՝ որ 'ի վերայ աւազոյն շինեալ էր. զոր դրդուեցին խռովութիւք նեղութեան փորձութեաց. այլ հաստատեա զմեզ ՀՐՇ մարտութեան աւետարանին խաղաղութիւն. և առաջնորդեա մեզ ըստ կամաց քոց. և արժանի արա զմեզ՝ գիշերոյ լուսոյն հարսանեաց. յորում զգիշերն իբրև զտիւ լուսաւոր առնես 'ի ծագել Հառագայթից յերեսաց փառաց քոց. և ապրեցո զմեզ 'ի նեղքոյ թեւոց քոց. զի և մեք հասցուք 'ի նաւահանգիստ կամաց քոց. և տուր մեզ զի արքցուք զբաժակն նահատակութեան. զի առցուք զփոխարէն պսակին՝ յաւուր արդար դատաստանին՝ 'ի յայտնութեան փառաց քոց։

Պախարակ սրբոց հայրապետացն ի հաստատեալսն աշ
խարհէն ի սահմանս հայոց։

Եւ յետ այսորիկ սուրբն դայիանէ սանականն
հոյիսիմեաւ, և պարկեշտաժողով ընկերօքն հան
դերձ, դէմ եդեալ տարադէմ գնացեալ փախըս
տեայ լինէին։ զի զանձինս իւրեանց սրբութեամբ պա
հեսցեն։ յայսմիկ ի հողաթաւալ, մերաթաթաւ,
մերանչական, անօրէն դիւական խառն ի մարդկա
նէս։ զի առաւելութեամբ յուսոյն կենդանութեան, լու
սոյն յարութեան, արժանի լեցին հասանել։ ընդ առա
քելական սահմանօքն ապրեալ ի վախճանի հան
դերձեալ դատաստանաց անտի։ և յաջակողմն գա
հուն մտեալ խոստացելոց բարեացն հասանել։ ան
թառամ պակօքն զարդարեալ ընդ հնգեկան կա
մարար կուսանացն, գործովք բարութեամբ լուսա
ւորեալ ի հանդիսաւ նորոգական վայելչութեամբ դը
րախտին ընդ ճոխական փեսային։ ի բազմաժողով
արդարոցն ի բազմականս աբրահամու, անպակաս
ուրախութեանցն լինել ժառանգաւոր։ Եւ ոչ և ոչն
յաւետարանի անդ ասաց։ եթէ որ թողցէ զբնա
կութիւն իւր վասն անուանն իմոյ, ի միւս անգամ
գալստեան իմում՝ զկենաս յաւիտենականս ժա
ռանգեցուցանեմ նմա։ Եթէ ոչ ի ժամանակեան
մահուանէս փախուցեալք, այլ յանհնարին մոլե
կան անօրէն ցանկութեանցն ճողոպրեալք։ Եթէ ոչ
զի զմարմինս իւրեանց ի տանջանաց երկրակոխաց
ի զրպարտութենէս ապրեցուցեն։ այլ զի զոգիս
իւրեանց սրբութեամբ առանց աղտեղութեան պահես
ցեն՝ յանօրէն դիւութեան՝ պղծութեան աղտեղութեան
խառնից մարդկօրէն կրօնից։ այլ զի զանձինս իւր
եանց՝ կապանաց։ բանտից, և պատժոց, և մահու,
և անհնարին նեղութեաց վասն անուանն Յն պատ
բաստեալ։ զի արդարութեամբ պակին արժանի լեցին
հասանել։ Եւ այսորիկ թողեալ զերկիր ծննդեան

իւրեանց, զինչս և զստացուածս, և զմերձաւոր ազգակիցս, և զտոհմայինս՝ վասն ՅԾԱԿԱՄ հրամանին. զանձինս իւրեանց հրեշտակական զուարթուն կարգաւ լուսաւորեալ վարուցն քաջութիւն, զի ՅԾԱՏԵՍԱՆԵԼ կարասցեն։

Յայնմ ժամանակի գային հասանէին յերկիրն հայոց՝ յայրարատ գաւառ՝ ի վաղարշապատ քաղաք, զոր նոր քաղաք, կոչեն ի նիստս թագաւորացն հայոց։ Գնուհէաև եկեալ մեռեալ էին ի հնձանայարկս այգեստանոցն՝ որ կան շինեալ ի հիւսիսոյ յարևելից կուսէ. և կերակրէին ընչիւք իւրեանց՝ ի վաճառաց քաղաքին. և ոչ այլ ինչ գայր թոշակ ընդ նոսա զոր ունէին. բայց մի ոմն ի նոցանէ ունէր արուեստ ապակագործութեան՝ առնել ուլունս ապակեղէնս, և տալ գինս ընդ կերակրոյ և ընդ հանդերձի աւուրն պարենի ըստ ՀԿԻՆ։

Հրովարտակ դիոկղետիանոսի հայսէր առ տրդատ արքայ վասն յոստանդէր լեռնէրոյ հոգեւորեայ։

Յայնմ ժամանակի ոչ սակաւ խռովութիւն լինէր ի մէջ յունաց աշխարհին. ի կողմանս կողմանս յուզախնդիրք ելանէին. դեսպանս արձակէին՝ թերևս ուրեք գտանել կարասցեն։ Յայնմ ժամանակի գայր հասանէր դեսպանն առ տրդատ արքայ հայոց մեծաց. յանդիման լինէր թագաւորին ի վաղարշապատ քաղաքի. և իբրև մատոյց զհրովարտակն. առեալ ի ձեռանէ նորին խնդալով։ Իսկ էր պատճէն հրովարտակին օրինակ զայս։

Ինքնակալ կայսր դիոկղետիանոս. առ սիրելի եղբայր և տիւռակիցս մեր տրդատ՝ ողջոյն։

Գ. խոստովանիցի լեցի եղբայրութեանդ քում Նիզակակցի մերում, վասն չարեացս որ անցանեն ընդ մեզ հանապազ՝ ի մոլար ազգէն քրիստոնէից. զի յամ ժամ դարձեալ լեցի տերութիս մեր՝ յուխտէ նոցա. և արհամարհեալ լեցի արքայութիս մեր ի նոցանէ. և ինչ համբաւութիւն ոչ գոյ ի նոսա։ Զի ինքեանք զմեռեալ ոմն խաչեալ՝ պաշտեն. և փայտի երկիր պագանեն. և զոսկերս սպանելոցն պաշտեն. և զիւրեանց մահն որ վասն նոցն իւրեանց է՝ փառս և պատիւս համարին։ Յա՛ի մեր արդար օրինացս դատապարտեալ լինին. վասն զի զմեր զնախնիսն զառաջինս զթագաւորս դառնացուցին. զի մեր սուրբս բռնեցան, և նոքա ոչ զարհուրեցան ի մեռանելոյ. զի ինքեանք զկեռ հրեի ուսումն խաչելոյ մոլորեալ են. և զթագաւորս անպատուեալ ուսուցանեն։

Յա՛ և զլուսաւորացդ զօրութիւն զարեգական և զլուսնի աստեղօք հանդերձ՝ առ ոչ ինչ համարեն, նաև արարած առնեն այնր խաչելոյ. և գլխովին զպատկերս դիցն ջնջոցն անարգել ուսուցանեն. և զաշխարհս ամ փոխեցին ի պաշտամունք դիցն. մինչ զի և զկանայս անգամ յարանց, և զարս ի կանանց կենդանւոյն մեկնեալս հեռացուցանեն։ Մեպէտ և ազգի ազգի պատուհաս տանջանաց ի վերայ եդաք՝ առաւել ևս աղօրացեալ յորդագոյն տարածեցաւ աղանդն նոցա։ Մեպէտ և բիւրապատիկ ինչ արքայութիւն սատից արկաք ի վերայ նոցա, առաւել ևս բազմեաց յորդեաց ուսումն նոցա։

Դէպ եղև ինձ տեսանել յաղանդդ ուսման նոցա՝ օրիորդ մի կոյս և գեղեցիկ. և կամեցայ առնուլ զնա ինձ կնութիւն. սակայն և զայն իշխեցին խորամանկել յինէն։ Յա՛ ոչ իբր ի թագաւոր ցանկութիւն փափաքեաց յիս, և ոչ ի սատից սպառնալեաց խնդերկեան նոքա. այլ առաւել ևս վասն աղանդոյն իւրեանց՝ աղուեղի և պիղծ և գարշ համարեցան զնս. և մնուցիչ նորին դայեկաւն՝ ի կողմանս ձերոյ

տերութեանդ փախուցեալ յուղարկեցին։
Լ.ուդ՝ փոյթ լեցի քեզ եղբայր մեր։ զի ուր և իցեն
զկողմամբք զայդոքիւք՝ զՀեռս նՁ գտանել մար-
թասցես։ և որ ընդ նմայն իցեն դայեկաւն հան-
դերձ՝ վերիժուց մանչու արժանի արասցես։ և զՀրա-
պուրեալն զչքնաղագեղն՝ ինձ ի սոյն արձակես-
ցես։ ապա թէ հանՁոյ թուՀեսցի քեզ տեսիլ գե-
ղոյ նորա՝ առ քեզ պահեսցես։ զի ոչ երբեք գը-
տաւ նման նմա ի մէջ յունաց աշխարհիս։ Ա՛ղՁ
լեր դիցն օգնականութիւն ամ պատուով։

Զ.ոանիէլն արքայ հ-ի էսխիդանոյ ի հնՁանս վաղարշ-
պատ հաղարի։ և հրաման պրդապայ ածել գառ-օր ՀՀը-
ա-ի էսխիդ յարչանին ի լնուրի է-ը։

Լ.ու եղև իբրև ընթերցան զՀրովարտակն հրա-
մանաց թագաւորին։ հրաման տայր թագաւորն՝
մեծաւ սաստկութիւն պատուիրանաւ, զի զՁամ տե-
ղիս իշխանութիւն իւրոյ՝ քննայցէր և փութով խնդ-
րեսցեն։ Ա աղվաղակի դեսպանս արձակեր ընդ-
կողմանս կողմանս, զի ուր և գտցեն՝ ի մէջ ածցեն
վաղվաղակի։ և որ գտանէր զնոսա՝ մեծամեծ պար-
գևս հատուցանել խոստանայր։
Ա՝ինչ դեռ յայն յոյզ քննութիւն էին՝ յաշխարհի
սահմանացն հայոց։ սուրբ վկայքն այնոքիկ եկեալ
ղողեալ էին յարքայականի կայանին՝ ի նմին թագա-
ւորացն վաղարշապատն քաղաքի։ Լ.ու յետ սակաւ
ինչ աւուրց՝ վաղվաղակի ի մէջ եկեալ խուզիւք
իրքն յայտնէին։
Լ.յլ ոչ պարտ իսկ էր թաքչել Ձշմարտութիւն
վկայիցն առաքինութիւն։ և ոչ լուսոյ Ձրագին ընդ-
գրուանաւ ծածկել։ և ոչ ի նեղքոյ ստուերաց
կաթեդրացն աներևոյթ լինել։ այլ ի վերայ ոսկւոյ
աշտանակաց զարդարելոց։ և ոսկի Ձրագարանաց

զիւղն պարարտութեամբ անուշութեամբ՝ զարդարութիւն հաւատոցն վառեալ ոլոյսն համապայծառ. որպէս և ինքեանք իսկ յառաջին աղօթս իւրեանց աղաչէին. որպէս և տէրն իսկ սաէր առ իւր սիրելիսն. թէ տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։

Տեսանեմ՝ զի վասն գործոց բարութեամբ ՀՀմարիտ որդին ՀՀայ ոչ գարշի տալ զիւր ժառանգութիւնն իւրոց սիրելեաց ծառայիցն. որ ինքն բնութեամբ որդի է՝ անվէհեր մատուցանէ զիւր պատուիրանապահն յիւր բնութիւնն. բայց միայն թէ ոք է որ պահիցէ զբանս նորա՝ իբրև զմարգարիտ պատուական գըտեալ՝ խնդութեամբ գնել. և զգուշացեալ լինի նա, առեալ զնշան պատուի զպսակն թագաւորութեան, և յաբքունականն մատուցանի. որպէս և պատուականութեամբ լուսոյս այսորիկ՝ երևեալ առաջի հեթանոսաց հայաստան աշխարհիս ակամայ. իսկ զփառաւորութիւնն առ ՀՀծուինն՝ հնչիւնք լցին զտիեզերս։

Լ՚ուրդ՝ գտեալ լինին նոքա ՀՀ հնձանս շինուածոցն։ Բանզի իբրև եկին հասին հրամանք հրովարտակացն ՀՀ թագաւորէն յունաց՝ առ տրդատ արքայ հայոց. ոչ սակաւ ինչ խռովութիւն եղև ՀՀ մէջ աշխարհին հայոց. զի պահէին զՀՀմ անցս ՀՀանապարհաց պողոտայիցՀՀ՝ զՀՀմ գաւառացն. ՀՀ կողմանս կողմանս քննէին։ Իսկ ուրումն տեսեալ պատմեաց զնոցանէ։

Իսկ իբրև իրքն հռչակեցան զնոցանէ. ապա երկու աւուրս սպարապետ արարեալ՝ տուեալ պահել զնոսա անդէն, ուր գտին զլեգէոն հետևակ զօրուն։ Լ՚ապա յետ երից աւուրց համբաւն հռչակեալ պարկեշտութեամբ՝ զանազան գեղեցկութեամբ հռիփսիմեայ ՀՀ մէջ բազմամբոխ հրապարակացն լինէր. ամենայն այր առ այր, և մարդ առ մարդ՝ զարմացումն յաճախեաց։

Իսկ ի տեսիլ գեղջ նորա՝ կուտեալ սլեալ, զեղեալ խուռն կամաւոյն կուտակէր. նաև նա խարարք և մեծամեծք աւագանոյն ընթացեալք ի տեսանել՝ զմիմեանսք ելանէին։ Եւ ազատակոյսն՝ խառնիճաղանձ ամբոխիւն հանդերձ՝ զմիմեանս դիզանէր ի միմեանց վերայ, առ պակշոտ յիմարութեամբ ցոփութեամբ բարոյեցն, այլանդակ մտացն՝ զխութեամբ գիտութեամբ հեթանոսաբար սովորութեաց։

Իսկ երանելիքն իբրև գիտացին զանմիտ և ըզշաղաբարոյ մարդկանն յոռութիւն, կամանաբարձ արտասուալից՝ զձեռս լի աղօթիւք յերկինս համբառնային՝ խնդրել զիրկութիւն յամենազոր յամենակալ տեառնէն. որ յառաջին նուագին ապրեցոյց զնոսա յանօրէն պղծութենէն արութեամբ զաղբութեամբ հեթանոսաց. զի նոցն տացէ նոցա զմարտին յաղթութիւն, զհաւատոցն լուսաւորութիւն. և զերեսս իւրեանց պատեալ անկեալ դնէին յերկիր, յամենայն լկտեացն տեսողաց՝ որ ժողովեալ էին ի տեսանել։

Այս յետ այսորիկ զարմացուցեալ զթագաւորն բազմութիւն տեսողացն՝ որ մտերիմք էին. եկեալ էին ի տեսիլ գեղջ նորա. և պատմեալ առաջի թագաւորին։ Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն, և ևս վաղագոյն հրաման ելեալ ի թագաւորէ անտի. զի զերանելին հոխիսիմ տանել յարքունիս, և զսուրբն գայիանէ անդէն պահել՝ պարկեշտաժողով ընկերօքն հանդերձ։

Ընդէն արքունուստ վաղվաղակի ոսկեմատաղ գահաւորակս սպասաւորք հանդերձ՝ հասուցանէին առ դուրս հնձանին, ուր էին վանք նոցա արտաքոյ քաղաքին։ Եւ հանդերձս ազնիւս և գեղեցիկս, փափուկս և պայծառս, և զարդարանս երևելիս մատուցին նմա յարքունեաւն՝ զի զարդարեսցի, և շքով և պատուով մտցէ ի քաղաքն. և յանդիման լեցի թագաւորին. քանզի չէ՛ եր տեսեալ զնա՝ խորհեցաւ կին առնուլ զնա. սակս այնորիկ որ պատմեցին զնմանէ՝ վասն վայելչութեան գեղջ նը։

Հարդարեալն խրատ արքոյն Գայիանէսոյ առ հրէիսն զ. և աղօթ։ արքոյն հրէիսն։

Լ՝ որդ՝ իբրև ետես սուրբն Գայիանէ, խօսել սկսաւ ընդ սանուն իւրում, և ասէ այսպէս։ Հիշեա՛ որդեակ իմ, զի թողեր լքեր զմեծապատիւ շքեղս շուք ոսկիակուռ՝ զաթոռն քո հայրենի, զծիրանեաց թագաւորութեն. և ցանկացար անանց ճառագայթարձակ լուսոյ թագաւորութեն քի, որ է արարիչ, և կեցուցիչ, և նորոգիչ. և խոստացեալ պահէ զանպատում բարիսն յուսացելոց իւրոց։ Լ՝ դու որդեակ, անարդեցեր զքոյոյ զբնութեն զծիրանեին. արդ՝ արդեօք տացես դու զզգաստութիւն սրբութեդ քո՝ կերակուր շանց, յայսմիկ ի բարբարոս աշխարհիս։ Վ՝ա՛ քեզ որդեակ, եթէ լինիցի այդ այդպէս. այլ ընկալցի զմեզ քեզ հանդերձ, այն՝ որ առաջնորդեաց մեզ ի մանկութենէ մերմէ մինչև յօրս յայս, և ի ժամս յայս՝ յորում հասեալ կամք։

Լ՝ բրև ետես սուրբն հուխիսիմէ զայն ճամբոխս չարեաց, և զոր լուաւն ի դայեկէ իւրմէ՝ վառեցաւ հոգւովն սրբով, իբրև զինու զօրութեանն իւրոյ. զի զգեցեալ էր զհաստատս մանկութենէ տիոցն՝ իբրև սպառազէն զրահիւք. ձգեաց մեծաձայն ուժով, և տարածեաց զբազուկս իւր ի նմանութի խաչին. և սկսաւ ասել մեծաձայն այսպէս։

Տէ՛ր ամենակալ, որ հաստատեցեր զամենայն արարածս քո՝ ի ձեռն որդւոյդ քո միածնի և սիրելւոյ. և կազմեցեր զյօրինուածս երկնչի և անեղև այթ արարածոց ի ձեռն հոգւոյդ սրբոյ. դու ես որ յաչնչէ զնամ էութի յօրինեցեր. և քոյով հրամանաւ վարին ամ զօրութիք երկնչիք և աներևոյթք, որ յերկինս՝ և յերկրի, ի ծովս՝ և ի ցամաքի։ Վ՝անզի դու ես՝ որ ետուր յոլոզ ջուրց՝ զանօրէն

պղծալից մարդիկ ուԹերորդ դարուն։ և փրկեցեր զիրելին քո զնոյ։ որ պահեաց զհրաման բանի քո։ ապրեցուցեր խաչանման փայտիւն 'ի ջուրցն հեղեալ։ որ յայնժամ օրինակաւ խաչին արարեալ փրկուԹի։ այժմ արա ճշմարտուԹիւն քո խաչիդ։ յոր եղեր և հեղեր զարիւն քո բժշկուի ցաւոց մերոց։

Ո՛ պահեցեր զաբրահամ 'ի մեջ ամբարիշտ քանանացւոց։ որ յամօԹոյ խայտառականաց պղծուԹենէ մահուն՝ ապրեցուցեր զաղախին քո զարայ։ Ո՛ գԹացար յիսահակ ծառայ քո։ և փրկեցեր զաղախին քո զուեբեկայ՝ յանօրէն փղշտացւոց անտի։

Ո՛'ի Թողուր զմեզ 'ի ձեռանէ վատ մեծի անուանդ քո։ որ ուսուցեր։ վարդապետեցեր։ և ետուր զբանս քո 'ի բերան մեր։ զի այնու ապրել մարԹացուք յորոգայԹից Թշնամւոյն։ և ասես՝ անուն իմ 'ի վերայ ձեր կոչեցեալ է։ և դուք տաճար էք ճաճուԹե իմոյ։ Լ՚ւ ասես Թէ զանուն իմ ոբառնիջիք 'ի սիրտս ձեր։ և եդեր բան 'ի մտի՝ խընդրել 'ի քէն և ասել։ սուրբ եղիցի անուն քո 'ի վերայ մեր՝ զոր խնդրեմք 'ի քէն։ Լ՚ւ ահա ժողովեալ բազում չարք՝ պղծել զանուն քո սուրբ որ 'ի վրա մեր է։ և զտաճար անուանն քո։ զի Թէպէտ և մեք տկարք և անարժան եմք։ սակայն դու տէր պահեա յանարժան խայտառականացս։

Ո՛'արդասէր և քաղցր։ որ արկեր զմեզ յայս փորձուԹիւն։ տուր մեզ յաղԹել քո զօրուԹիւդ։ զի քոյ է յաղԹուԹիւն և յաղԹեսցէ։ յանուանդ քո պահեցէ զմեզ։ յուսով զգաստուԹիւն։ զի այսու մնցուք 'ի Թիւն վիճակաց արդարոց քոց։ և առցուք զվարձս վաստակոց՝ զոր տայցես հատուցանես իւրաքանչիւր այնոցիկ՝ որ կացեալ իցեն յահի քում։ և պահեալ իցեն զհրամանս քո։

Ո՛ ապրեցուցեր զնոյ 'ի ջուրցն հեղեղէ։ ապրեցո՛ և զմեզ յանօրէնուԹեցս հեղեղէ՝ որ շուրջ պատեալ է զմեզ։ Ո՛'ի Թէ զգալանս և զանա-

սունս ապրեցուցեր 'ի տապանին։ Որչափ ևս խնայ-
եսցես 'ի քո պատկերս, որ զքեզ փառաւորեմք։
Լակ եթէ 'ի սողունս և 'ի թռչունս խնայեցեր։
Որչափ ևս խնայեսցես 'ի մեզ, որ անուանեցեր տա-
ճար կամաց քոց։

Զաւն հրաբերեալոց արքունի առ առաքեալն հրեշտակն։
աղաչանս ՝ՀԷ էուսանացն առ ՝ՀԾ, և արքունին և ՀՅՅՆՆ
երկնային 'ի հաջալերութիւն արքոյն հրեշտակաց։

Ի՞նչ՝ իբրև այս այսպէս եղև՝ ժողով ամբո-
խին 'ի վերայ կուտէր բազմութիւն մարդկանն։ էին
բազում սպասաւորք արքայի՝ որ եկեալ էին տա-
նել զնա յարքունիս։ Նախարարքն և մեծամեծք ա-
ւագանցն շքադիրք, որ եկեալ էին պատիւ առ-
նել նմա, և երթալ ընդ նմա յարքունիսն։ զի տաք-
ցին զնա կնուութիւն տրդատ թագաւորին, և տիկ-
նութեան հայոց։

Լակ նոքա արտասուագոչ ողորմողորմ՝ զձեռս
համբարձեալ յերկինս, խնդրէին 'ի կամարար
տեառնէն՝ ապրեցուցանել զնոսա յանօրէն և յա-
նարժան պղծուէն հարսանեացն։ Զոչիւն բար-
ձեալ լալով մեծաձայն ՀՅԷին և ասէին։ քա՞ւ լեցի
մեզ եթէ պարտիցեն զմեզ մեծութիւնք։ կամ խախ-
տեսցեն զմեզ փափկութիւնք։ կամ հրապուրեսցեն
զմեզ թագաւորութիւնք։ կամ նեղեսցեն զմեզ հա-
լածանք։ կամ վտանգեսցեն զմեզ տանջանք հարուա-
ծոց։ թէպէտ և բիւր ազգի ազգի տանջիցեք զմեզ։
Կամ երկիցուք մեք արդեօք յահագին մահուա-
նէն՝ զոր ածելոց էք դուք 'ի վերայ մեր։ քա՞ւ լե-
ցի մեզ եթէ փոխանակեսցուք զանցաւոր կեանս՝
ընդ յաւիտենական կենացն, որ ոչ անցանէ։ որպ-
սէրութիւն յեութիւն հաստատեցաւ։ անփոփոխ են
բարիքն ՀՄ, և ոչ անցանեն։ Ի՞նչ ոչ խորութիւնք։ և

ոչ բարձրութիւն • ոչ վիշտք • և ոչ չարչարանք • ոչ կապանք • ոչ տանջանք • ոչ հուր • ոչ ջուր • ոչ սուր • և ոչ զբօսանք • ոչ պատրանք • և ոչ մեծութիւն • ոչ աղքատութիւն • ոչ այս աշխարհս • և ոչ այն աշխարհ • ոչ կեանք • և ոչ մահ • և ոչ այլ ինչ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն քրիստոսի։ Օ՛ Նմա աւանդեցաք զսրբութիւն մեր • զի Նմա մնամք • և Նմա՝ փափաքեալ սպասեմք սիրոյ Նր • մինչև կացցուք առաջի փառաց գովութեան Նր՝ առանց ամօթոյ և պատկառանաց։

Լ՛ուդ՝ եղեալ որոտաւոր յերկնից սաստիկ անՀընարին, և ահաբեկեալ զամբոխն • և ձայն զի ասէր ցնոսա, թէ զօրացարուք, պինա կացէք, քաջալերացարուք, զի ես ընդ ձեզ եմ • և պահեցից զձեզ յամ ճանապարհս ձեր • և ածի զձեզ պատեալս մնարատութեաբ • և հասուցի զձեզ մինչև 'ի տեղիս յայս։ Օ՛ և ասա փառաւոր լեցի անուն իմ առաջի հեթանոսաց՝ կողմանց հիւսիսականաց • մանաւանդ դու հռիփսիմէ ըստ անուն քում՝ արդարև ընկեցեալ եղեր գայիանեաւդ, և քոյով սիրելեօքդ՝ 'ի մահուանէ 'ի կեանս • և մի երկնչիք, այլ եկեսջիք 'ի տեղին յայն՝ զոր ես և հայր իմ պատրաստեցաք ձեզ՝ զանբնին տեղն ուրախութեան ձեզ, և որ միանգամ իբրև զձեզդ լիցեն։

Լ՛ու այնպէս յերկար որոտացեալ, զի թմբրեալ լինէին մարդիկն յահէ անտի • և բազմաց ընդ ոստուցեալ անգուշեալ, բազում երիվարք հեծելոց՝ յահէ անտի զբազումն ընկեցեալ, և զբազումն առաթուր հարեալ սատակէին։ Լ՛ու մարդկանն ընդ միմեանս իսկ ամբոխեալ, ընդ կուտակէն՝ բազումք զբազումն կոխեալ սատակէին • և բազմացն լինէր կոտորած, և ձայն աղաղակի և վայոյ • և անՀնարին չարիք և արհաւիրք 'ի վերայ մարդկան հասանէր • և բազումք մեռան • և բազմոց արիւն հեղեալ զեր կիրն առոգանէր։ Լ՛ուդ՝ իբրև այս շփոթ ամբոխի եղև 'ի նոցանէ՝ 'ի մէջ կուտակելոց մարդկան

բազմութեան։ Ամենք 'ի մեծ սպասաւորացն արքունի՝ ընթացան անդրէն պատմել թագաւորին զամբանս նոցա։ քանզի դիպեցան անդ նշանագիրք՝ որ գրեցին զամենայն խօսսն։ և ընթերցան առաջի թագաւորին։

Հրաման Ներգաւորին պրդապաշ բռնի ածելոյ յարքունիս զնոսին։ զնոսին հրամայեալ, և խնդրուածոյ նորա առ ածի։

Այսպէս թագաւորն։ փոխանակ զի ոչ կամեցաւ գալ պատուոմով շքեղութեամբ կամաբ։ բռնաբար ածցեն մինչև յապարանսն։ և մուծցեն զնա մինչև 'ի սենեակն արքունի։

Այդ՝ առեալ զսուրբն Հռիփսիմէ սպասաւորացն բռնաբար։ մերթ վերամբարձ, մերթ 'ի քարշ։ Այնուհետև աղաղակէր և ասէր։ տէր յիսուս օգնեա ինձ։ և համամբոխին զկնի նորա փողեալ՝ թնդէր երկիրն 'ի բազմութենէն։ Այդ՝ ածին մուծին զնա յապարանս թագաւորին՝ մինչև 'ի սենեակն արքունի։ Իսկ իբրև արգելին զնա 'ի սենեակն, սկսաւ խլնդրել 'ի տեառնէ, և ասել այսպէս։

Տէր ած զօրութեաց, դու ես ած Հայմարիտ։ Դու ես որ հերձեր զծոմն կարմիր, և անցուցեր զժողովուրդն քո։ Դու ես որ զամուլ զվէմն դարձուցեր ծննդականութեան ջուրցն վտակաց, և արբուցեր զժողովուրդն ծարաւեալ։ Դու ես որ ինքնուցեր զծառայ քո յուսման յանդունդս խորոց ծովուն, և եռուր առնուլ զչափ քոյոյ զօրութեանդ։ և արտաքսեցեր զնա 'ի դուրս՝ քան զմարդկային բնութիւն։ և դարձեալ միւսանգամ առանց ապականութեան ածեալ՝ ողջանդամ կացուցեր զնա 'ի կենդանութեան։ զի և մնաց մի անգամ՝ ոչ շարժեալ լինէր 'ի վարսից նորա։ Դու՝ և զդանիէլ որ կերակուր

արկեալ գաղանացն՝ ապրեցուցեր յահագին ժա-
նեացն. կացուցեալ զզրպարտեանն առաջի նեղչացն
փառաւորութիւն։ Ո՛ւռ՝ և զերիս մանկունսն որ ար-
կեալ յայրել վասն զքեզ պաշտելոյն, ողջ և անա-
բատ 'ի հրոյն պահեցեր. փառաւորեցին զքեզ՝ որք
տեսին զսքանչելիսն քո։ Ո՛ւռ եռուր խոտաձարակ
լինել խիստ և անօրէն թագաւորին բաբելացւոց.
զի ոչ իմացաւ փառաւորել զքեզ 'ի վերայ սքանչե-
լեացն՝ զոր ցուցեր նմա. փոխեալ զնա 'ի կերպա-
րանս անանոցն. ընդ գաղանս անապատի եղեր ըզ-
բնակութիւն նորա, և ընդ ցիռս վայրի զարօտ նորա։
Ո՛ւռ՝ և զաղախին քո շուշան կրկին ապրեցուցեր
յերկուց մահուց փրկեալ. և խայտառակամահ սա-
տակեցեր զանօրէն թշնամիսն. և պսակ պարծանաց
արդարութեան յուսացելոյն 'ի քեզ հնորհեալ՝ կանգ-
նեցեր։ Ո՛ւռ Նոյն ինքն ես, և ամբ քո ոչ պակա-
սեն։ Ո՛ւռ տեր զփառս քո այլում ոչ տաս։ Ո՛ւռ
ես որ փառաւորեալդ ես 'ի վերայ ամ տիեզերաց.
մի՛ պղծեսցեն զանուն աւր քո՝ հեթանոսք։ Ո՛ւռ
կարօղ ես փրկել զիս 'ի պղծութեան յայսմանէ. զի
արբութեամբ մեռայց վասն անուան քում մեծի։

Պարսաւանքն ընդդառաջին 'ի հաւիսիմեայ. և յորդոր
ցաջալերութեան արքոյն գայէանեայ։

Լ՝ՐԴ՝ մինչդեռ սուրբն հռիփսիմէ զայս ամ
աղօթս առ ած մատուցանէր, ելին եմուտ թագա-
ւորն տրդատ 'ի ներքս 'ի սենեակն՝ ուր էրն զնա
արգելեալ։ ԼՐԵՐԵ ելին եմուտ 'ի ներքս. առ հասա-
րակ մարդիկն՝ ոմանք արտաքոյ ապարանիցն, և
կէսք 'ի փողոցսն 'ի ներքսագոյն՝ առ հասարակ երգս
առեալ բարբառեցան կայթիւք վաղելով՝ ցուց բար
ձեալ մարդկանն. կէսք 'ի բերդամիջին, և կէսք զքա-
ղաքամէջն լցին խնձիւք առ հասարակ, համարեին

զՀարսանեաց զպարան պարել, և զկաքաւան յար-
դարել։

Իսկ տէր ՅԾ նայեցաւ յիւր սիրելին հռիփսի-
մէ՝ ապրեցուցանել զնա՝ զի մի՛ կորիցէ աւանդն՝
որ պահեալ և զգուշացեալ էր. և լուաւ աղօթից
նորա՝ զօրացուցանել զնա. իբրև զյայտնին, և զդ-
ջովսայն՝ եւ նմա զօրութիւն. զի ապրեսցի՛ ի սատա-
կակ բռնութենէն անօրինին։

Լ՚ուդ՝ մտեալ Թագաւորն բուռն հարկանէր ըզ
նմանէ՝ կատարել զկամս ցանկութիւն իւր։

Իսկ նա զօրացեալ լինէր ի հոգւոյն սրբոյ. գա-
զանաբար ոգորեալ, առնաբար մարտնչէր. յերեք
ժամուն սկսեալ մարտնչել՝ մինչև ի տասն ժամ
աւուրն. և պարտեալ լինէր Թագաւորն. և զայն՝
որ անհնարին համարեալ էր ուժով. որ մինչ՝ ի յու-
նաց աշխարհին էր. բազում՛ զյաժ պնդութիւն ոսկե-
րաց ցուցեալ էր, և զարմացուցեալ զամենեսեան.
և՝ ի Թագաւորութենն իսկ իբրև հայրենի բնակու-
թիւնն եՀաս՝ բազում գործս արքութիւն քաջութիւն
և անդ ցուցեալ. և այն՝ որ այնպէս հռչակեալ էր
ամենայնիւ. արդ՝ յաղՀկանէ միոջէ պարտեալ վա-
թարանայր, կամաք և զօրութիւն քի։

Լ՚ուդ՝ իբրև պարտեցաւ, վաստակեցաւ, և լը-
քաւ, էլ նա արտաքս, և եւ ածել զերանելին գայլ
անէ՝ և արկանել խառան՝ ի պարանոց նորա, և ա-
ծել ունել զնա առ դուրս սենեկին. և ինքն՝ ի
ներքս մտանէր անդրէն. և եդ բանս՝ ի բերան ըս-
պասաւորացն՝ զի ստիպեսցեն զանՀրապոյրն գայլ-
անէ, ասել՝ ի դրաց անտի՝ ի ներքս՝ ի սենեակն
առ հռիփսիմէ՝ թէ արա՛ զկամս դորա և կեաց
դու և մեք։

Իսկ նորա յանձին կալեալ խօսել ընդ սանուն իւրում. և մատուցեալ 'ի դրաց տաճարի՝ ասէր 'ի ներքս 'ի սենեակն առ հոգիսիմէ։ Որդեակ, պահեսցէ զքեզ քո 'ի պղծութենէդ, և լեցի քեզ զօրավիգ. քանզի լեցի քեզ որդեակ, եթէ լեցի քեզ ելանել 'ի ժառանգութենէ անդի կենացն այ, և ժառանգել զանցաւորս՝ որ ոչ ինչ է. այսօր, և վաղիւ կորնչի։

Իբրև իմացան թէ զոր խրատս յանձնեաց մատուցանել. բերեալ քարինս՝ հարկանէին զբերանն մինչև թափիլ ատամանց նորա. և ստիպէին ասել նմա՝ զի արասցէ զկամս Թագաւորին։

Եւ նա ևս քան զևս պնդեալ ասէր. քաջալերեաց պինդ կաց. և այժմ տեսանես զքրիստոս՝ առ որ անձ կացեալն էիր։ Յուշ լեցի քեզ որդեակ՝ հոգէխառն մնունդն, որով զքեզ մնուցի։ Յուշ լեցի քեզ ճաշեղէն խրատն, որով զքեզ պարարեցի։ Յուշ լեցին հալածանք իմ, և քո 'ի միասին։ Յուշ լեցի քեզ և քաժակ մահու, զոր 'ի միասին եմք ըմպելոց։ Յուշ լեցի քեզ և յարութեան ամ տիեզերաց։ Յուշ լեցի քեզ և մեծատանն յանդիմանութիւն։ Յուշ լեցի քեզ և այրումն յաւիտենական գեհենին տանջանաց։ Յուշ լեցի քեզ և անսպառական պարգևք արդարոցն, զոր և մեզ է պատրաստեալ։ Յուշ լեցի քեզ ճաշեղէն և երկնաւոր բարբառն, զոր լուար դու քեզէն իսկ քո ականջք յայսմ աւուր. քաջալերեաց որ զօրացայց զքեզ մեք հանդերձ, նայն և արժանիս արասցէ պսակին և հանգստեանն զոր խոստացաւ. և զօրացուսցէ զքեզ մեք հանդերձ, զի լեցուք բնակիչք այ լուսեղէն յարկացն յաւիտենականաց։

Ի. յլ տէրն և Թագաւորն և ճշն մեր, որ վասն մեր խոնարհեցաւ յանարգութիւն, ոչ թողցէ զմեզ յանարգանս, զի զօրութեամբ նորա ցանկացաք. փրկիչն աշխարհաց օգնեսցէ մեզ. որ ոչ թողուլ ընդվայր զծեալ իւր, և զյուսացեալս իւր. և արժանիս

արար զմեզ՝ իւրոց բանիցն քաջալերս տալոյ։ զի նա անարդամեծար տէր է։ և նա ինքն պահեսցէ զմեզ զաղախնայս իւր յամ մեղաց։ որպէս և այսօր իսկ լուսաւք։ զի էր պահեալ զմեզ ամենազօր աջոյն, և պահեսցէ զմեզ մինչև յաւիտեան։ բայց միայն ՚ի սիրոյ նորա մի՛ մեկնեսցուք։

Ա.յլ զարթուսցէ զզօրութիւն իւր, և եկեսցէ կեցուցցէ զմեզ։ և մեք զանուն ոն կարդասցուք։ և երևեցուսցէ տէր զերեսս իւր ՚ի մեզ, և կեցցուք։ զի նա է ոճ փրկիչ մեր։ վասն նորա համբերեցարք զօրհանապազ։

Ոչ՚ուշ լեցի քեզ տէրն, որ վասն զմեզ բարձրացուցանելոյ՝ խոնարհեցաւ, և եհեղ արիւն իւր ՚ի վերայ խաչին։ վասն կենաց մերոց և փրկութեան՝ ՚ի մահ վարեցաւ։ դիր զնա ՚ի մահ քում, և կարդա զնա սրտիւ քով։ ահա հասեալ է քեզ յօգնականութիւն։ և զօրացուսցէ զբազուկս քո՝ որպէս զմանկանն դաւթի ՚ի վերայ արջուցն և առիւծուցն։ որ իբրև զուլս այծեաց ՃեղՔեալ բեկանէր։ նաև զարի սկայն ջարդեաց ՚ի ձեռն դաւթի ծառայի իւրոյ։ խորտակեսցէ զչարութիւն անօրինիդ՝ որ առաջի քո։

Զ՚ուստոր մարդարէութեանն հաւատոցն դաւթի։ և մնեալ արդարութեանն ՚ի վերայ բաղկաց իմոյս։ առաջի սուրբ և փառաւորեալ սեղանոյն՝ այ՝ մնար դու աղախին քո։ այն՝ որ այսօր իսկ յայտնութեամբ՝ գթութեամբ՝ և մարդասիրութեամբ իւրով յայտնեցաւ մեզ։ որ իմաստութեամբ խնդրեցարք զնա։ նոյն տացէ քեզ մեզ հանդերձ՝ առանց ամօթոյ տեսանել զնա դէմ յանդիման։

Ի՚րդ՝ զայս ամ խօսեցաւ գայիանէ՝ ՚ի բարբառ հռոմայ՝ ընդ սանուն իւրում՝ ՚ի դրաց սենեկին։ մինչ դեռ թագաւորն ոգորէր ընդ սրբոյն հռիփսիմեայ։ Ի՚այց գոյին անդ ոմանք ՚ի սպասաւորացն արքունի՝ որ լսէին զայն ամենայն ՚ի բարբառն հռոմայեցւոց։

Կրկին պարտուելի լեգեւորին։ Եւ բառնաբար էբլեան հաւիսիդեայ յարձուն պարանոց առ ընկերս իւր։ Եւ զ՝ հայոցականն աջով նորա առ ձգ։

Եւ իբրեւ լուան զայն ամ՝ զոր խօսեցաւ ցնն գայիանէ ընդ սանուն իւրում, ի բաց առին զնա ի դրաց անտի։ Եւ ի թէպէտ և բազում անգամ հարին զնա, և ծեծեցին քարամբք զերեսն նորա, և թափեցին զատամունս նր, և ջարդեցին զմնուր բերանոյ լեղուաց նորա։ սակայն ոչ շրջեաց զբանս իւր՝ խօսել ընդ աղջիկանն այլ ինչ։ այլ զոր սկիզբն արարեալ էր բանիցն իւրոց առաջնոց՝ զնոյն յաճախեալ բազմացուցանէր։

Եւ թագաւորն մարտուցեալ ընդ նմա ի տասն ժամէն ուրուր մինչև ի պահ փ գիշերոյն՝ պարտեաց զթագաւորն։ Եւ զօրացեալ լինէր աղջիկն ի հոգւոյն ցբյ։ հարեալ՝ վանեալ՝ պարտեալ՝ վաստակ կաբէկ առնելով զթագաւորն, մեղկեալ ընկենոյր զնա։ մերկ և կողոպուտ ևս ի հանդերձիցն զթագաւորն կացուցանէր։ զպատմուճանն պատառեալ, և զնշան թագին ցրուեալ կողոպտեալ և ամենայնիցն թողոյր։ թէպէտ և զիւր զդեստիկն քանձեալ պատառատուն ի դուրս բերէր, յաղթօղ պահեալ զանձն իւր սրբութեամբ։

Եւ բացեալ զդուրս սենեկին բռնաբար՝ ի դուրս ելանէր, հերձեալ զամբոխ մարդկան, և ոչ ուրուք կարացեալ յաղթահարել զնա։ ընթացեալ ընդ քաղաքամէջն, ելանէր ընդ արևելս կոյս, ընդ արեգ դուռն քաղաքին։

Եւ երթեալ առ հնձանօքն՝ ուր էին իսկ յառաջ վանք իւրեանց։ ձայն աւետեաց մատուցանէր ընկերացն։ և ինքն անցանէր հարուստ մի ի քաղաքէն ի կողմն մի հիւսիսայ՝ ի տեղի մի յարևելս կոյս, ի սարաւանդակի ի բարձրաւանդակ աւազին տեղի մի, մօտ ի բուն պողոտային որ երթայր

յարտաշատ քաղաք։ իբրև եհաս յայնմ տեղի՝ ծունր եդեալ կայր յաղօթս՝ և ասէր։

Տէր ամենակալ, ով կարիցէ հատուցանել քեզ փոխարէն բարեացս՝ որ ի քէն շնորհեցաւ մեզ։ զի պահեցեր զյոյսն մեր հաստատուն՝ որ ի քեզ էր։ և ապրեցուցեր զմեզ ի պղծալից ժանեաց գազանին՝ որ կամէր ապականել զմեզ։ Զ.յլ զի՞նչ ևս կայցէ ի մեզ կար՝ փոխարէնս հատուցանել քեզ։ բայց անձինք մեր՝ լեցին փոխանակ փրկութեանդ։ զի դու ինքնին տէր արժանի՛ արարեր զբանեկութեանդ կրել զանուն քո՝ որով ապրեցուցեր զմեզ։ զի բայց ի՛ քէն տէր՝ զայլոք ո՛չ գիտեմք։ և զանուն քո անուանեմք զօրհնեալդ։

Զ.յլ մեզ լաւ է մեռանել ի սրբութեանդ մերում, քան թէ ձգիցեմք զձեռս մեր՝ առ ոչ օտարս, որ չէն իսկ։ այլ ո՛չ ինչ իսկ են ամ պաշտամունք հեթանոսաց։ զի դու ես արարիչ՝ և ամ ի քէն է։ և որդւովդ քո միածնիւ՝ առանց որոյ եղև և ո՛չ ինչ։ և հոգիդ քո բարի առաջնորդեսցէ մեզ ի յերկիր ուղղոյ։ որ տանի զմեզ ի բարութիւնս յաւիտենական յերկնաւորս։

Որոյ յանդիման լինելոց եմք առաջի միածնիդ քոյ։ զի առանց ամօթոյ կայցեմք ի կողմանդ աջոյ։ յորժամ առաքեսցես զդա ի պատրաստ լուսոյ ի բնակութիդ հայել յամ բնակիչս երկրի։ որ ստեղծիսկ զսիրտս որդւոց մարդկան։ որ ի միտ առնու զամ գործս նց։ զի և մեք ի ժողովրդենէ քումմէ եմք։ և խաչն սրտի քոյ։ մնասուանդ մտցուք ի յարկս քո զոր պատրաստեցեր սիրելեաց քոյ։ Փութ թամք տէր՝ զի ելցուք ի մարմնոյս։ և խառնեսցուք ի գունդդ միածնի որդւոյ քո սիրելւոյ։ և ի թիւ այնոցիկ՝ որ սիրեցին զոր երևեալ գալստեան ոն մերոյ յի քէ։ ի պղծութէս և եթ ապրեսցուք։

Զ.յլ եթէ եկեսցէ տանջանք ի վերայ մեր վասն անուանդ քոյ՝ պատրաստ եմք։ զի ո՛չ զրկես դու զմեզ։

և դու տէր ինքնին վկայես ինձ. զի վարուց երկրա
կաց կենացս՝ ես ինչ ոչ ցանկացայ 'ի մանկութենէ
իմմէ. վասն զի նայեցայ և հաւատացի բանի քում
զոր ասացեր. թէ վայ է ձեզ յորժամ բարի ասիցեն
զձէնջ մարդիկ. այլ երանի է ձեզ յորժամ նախա-
տիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամ բան չար
սուտ զձէնջ վասն իմ՝ ցնծացէք և ուրախ լերուք։

Արդարև ցնծացաք և ուրախ եղաք ընդ այս
պատերազմս որ եհաս մեզ, մարանչել սիրով քով. զի
յաղթեաց յաղթող զօրութիդ քո, և ետ մեզ յաղ
թել։ Ուրախ եղաք ընդ այս՝ փոխանակ աւուրցս՝
որ խոնարհ արարին զմեզ, և ամացս՝ յորս տեսաք
զչարչարանս. հայեաց տէր 'ի ժառանգութիս քո և
'ի գործս ձեռաց քոց. և առաջնորդեա մեզ 'ի վե-
րին քաղաքդ քո Երուսաղէմ՝ որ 'ի բարձունս. ուր
ժողովեալց ես զամ արդարս զսուրբս և զսիրելիս
անուան քոյ. եղիցի լոյս ոտն այ 'ի վերայ մեր։

Ա Հայոյական հոգ սրբոյն հոգեխոսութեաց, և ընկերաց նոցա։

Զի մինչ դեռ երանելին հոգիսիմէ խօսէր զայս
ամանդէն 'ի նմին գիշերի եկին հասին վաղվաղա
կի 'ի տեղն անդր իշխանք թագաւորին, և դահճա
պետն դահճօքն հանդերձ. և ջանք լուցեալք ա-
ռաջն նոցա։ Զի մատուցեալ կապեցին զնա ձեռս
յետս. և խնդրէին հատանել զլեզուն։

Իսկ նա կամօք իւրովք բացեալ զլեարան՝ իւ-
րովն հանեալ մատուցանէր զլեզուն. և անդէն ըզ
հանդերձիկն պատառատուն՝ որ էր զնովաւ՝ 'ի բաց
զերծուին 'ի նմանէ. և հարեալ չորս ցիցս 'ի գետ-
նի՝ երկու ձեռացն, և երկու ոտիցն. և պրկեցին
զնա. և մատուցին կանթեղս ցնծ ժամն. այրեցին
և խորովեցին զմարմինս նորա հրով կանթեղացն. և
քարինս վարեցին ընդ գոգս նորա, և 'ի վայր թա-

փեցին գաղէս նը։ և մինչ դեռ ևս կայր կենդանի՝ փորեցին զաչս նորա։ ապա անդամանդամ յօշեցին զնա՝ և ասէին։ թէ ամենէբեան որ իշխեսցեն անգոմնել՝ և անարգել զհրաման Թագաւորաց, ըստ նմին օրինակի կորիցեն։

Լ։ին և այլ բազում արք և կանայք որ ընդ նմա եկեալ էին՝ աւելի քան զեօթանասուն մարդ։ այլ որ ի ժամու անդ հասին ի տեղի յայն՝ որ խընդրէին ամփոփել զմարմինս նոցա և Թաղել։ յորոց վերայ սուր եդեալ կոտորեցին իբրև երեսուն և երկու ոգիս։

Որոց ասացեալ և նոցա զայս։ սիրեցաք զքեզ տէր զի լուիցես ձայնի աղօթից մերոց։ խոնարհեցուցեր զուսնկն քո բարերար, և մեք կարդացաք առ քեզ։ զքեզ տէր փառաւորեմք որ ոչ զրկեցեր զմեր անարժանութիս ի քոց բարեացդ մարդասէր։ որ պահեցեր զմեզ իբրև զբիբ ական, և ընդ հովանեաւ Թևոց քոց ապրեցաք յանօրինացս բազմութենէ։ և ահա մեռանիմք վասն փառաւորեալ անուանդ քո։ Լ։ զայս ասացեալ միաբան առ հասարակ սպառեցան։

Լ։ մի ոմն որ անդէն սպանին ի նեբրս հնձանի անդ՝ ուր էին վանք նոցա։ որ այսպէս ասէր ի ժամ հրաժարման իւրոյ։ թէ գոհանամ զքէնն տէր բարերար՝ զի և զիս ոչ զրկեցեր։ զի և ես հիւանդ էի՝ և ոչ կարացի ընթանալ, և զհետ ընկերացն ժամանել։ սակայն դու տէր մարդասէր և քաղցր՝ ընկալ և խառնեա և զիմ ոգիս ի գունդ նոցց վկայիցն քոց։ քըՔերցն խմոց և ընկերաց։ առ քո աղաչին և մայրն մեր և գլուխն գայիանէ։ և քեզ սիրիչ և որդեակն մեր հռիփսիմէ։ Լ։ սա այսու օրինակաւ խօսեցեալ՝ փոխեցաւ։ Լ։ քարշեալ ընկեցին զմարմինս նոցա՝ առ ի կեր լինել շանց քաղաքին, և գաղանաց երկրի, և թռչնոց երկնից։

Լ.փշոնի հայոց ներգաղթութեան վասն հոգեվարքեայ. հրամանն ապանման արքայն գայլիանեայ, փոխանի նոր տաճ, և յաղարանն նորա ընկերօք երրորդ։

Լսեալ թագաւորն Թողեալ զեւր ամօթ կորանացն որ պատրէր՝ որ այնչափ անուանի եղեալ քաջութիւն առաւելոյր 'ի մարտս պատերազմացն. նաև յոլովակիաթն յունաց հակայազօր երևեալ. և քաջութիւն գործս արուեստ և անդ ցուցեալ. և ոչ սակաւ պատերազմունս մղեալ յայնկոյս եփրատ գետոյ, 'ի կողմանս տաճկաց. որ և կարէր խոցեալ ելանէր երիվարաւն 'ի պատերազմէն։ Լսեալ նորա առեալ զերիվարն, և զասպազէնն առեալ կապէր 'ի թիկունս իւր, և 'ի վերայ մկանանցն 'ի լիւղ անցանէր՝ ընդ գետն եփրատ։

Լ.ուդ՝ որ այնչափ հզօր զօրութիւն էր՝ և քուռն ոսկերօք, յաղջկանէ միոջէ յաղթահարեալ լինէր կամաքն այ։ Լու զայն ոչ եղեալ 'ի մոի զամօթ նախատանացն. այլ 'ի տեսիլ գեղոյ նորա ջնռեալ. տխրեալ էր ընդ մահ աղջկանն, և տրտմեալ սգայր։

Տեսէք ասէ զկախարդասար աղանդ ազգիդ քրիստոնէից, զնարդ կորուսանեն զանձինս քաղաքս մարդկան, հանել յաւծոցն պաշտամանէ. և յերկրաւոր կենացս վայելչութիւնն խափանեն. և 'ի մահուանէ ոչ դողան. մանաւանդ վասն սքանչելոյն հռիփսիմեայ՝ որոյ ոչ գոյր համեմատ յերկրի 'ի ծնունդս. զոր կանանց։

Զ՝ ամենորոյ սիրտ հատեալ անմոռաց 'ի մտաց չանկանի որչափ կենդանի եմ ես տրդատ արքայ. զի զյունաց աշխարհ, և զհրոմոց քաջ գիտեմ, և զմեր պարթևաց կողմանս. վա՜ զի բնակութիւն իսկ է մեր. և զասորեստան, և զտաճկաստան, և զատրպատականս. և զի՞մի ըստ միոջէ թուեմ. զի քաղաքս տեղիք այն են՝ որ իմ խաղաղութիւն հասեալ է. և քաղաքք այն են՝ որ մարտիւ և պատերազմաւ աւարի

ասպատակեալ. որ ոչ երբեք տեսեալ նմանութիւն այսր գեղոյ՝ զոր կորուսեալ էր այս կախարդաց. զի և այնչափ զօրացան կախարդութիւնքն՝ մինչև ինձ յաղթեցին։

Իսկ 'ի վաղիւ անդր մատուցեալ դահճապետն՝ հրաման առնոյր վասն սրբոյն գայիանեայ սպանման։ Իսկ նա իբրև լուաւ՝ առ սէրն եռեալ, զեռեալ յիմարեալ ասիշեալ. և ոչ յիշեալ վասն սրբոյն հռիփսիմեայ՝ համարեցաւ եթէ կենդանի իցէ։ Ասէ աւադութեամբ բարձի և պատուոյ պարգևս խոստանայր, եթէ յանկարծ որ հնարիցէ պարտեալ զմիտս աղջկանն գալ առ նա։ Իսկ նա ասէ. այնպէս կորիցեն թշնամիք քո ամբոյ, և որ զաջս անարգեն, և զհրաման ձեր թագաւորաց. այլ կախարդն այն կենդանի է. և երկու ևս ընկերք նորա, որ կորոյս զչքնաղագեղն։

Իբրև լուաւ թագաւորն՝ թէ մեռաւ սուրբն հռիփսիմէ, դարձեալ տրտմութեամբ կալաւ. ինչեալ նստէր 'ի վերայ գահոյն, և լայր, և 'ի սուգ մտանէր։ Ապա հրաման տայր վասն սրբոյն գայիանեայ սպանմանն. նախ զլեզուն ընդ ծոծրակն հանել, և ապա սպանանել. վասն զի իշխեաց ինքնակար խրատուն իւրով՝ կորուսանել զայնպիսին, որ զդիցն գեղեցկութիւն ունէր 'ի մէջ մարդկան։ Իսկ դորին խրատ անչնարհ առնել զդիւն իշխեաց, որոյ նմա զայն շնորհեալ էր գեղեցկութիւն. վասն այնորիկ զնա կտտամամբ սպանցեն։

Արդ՝ ելեալ դահճապետն պարծելով՝ չարամամբ առնել զնա. և ետ հանել զնոսա շղթայիւք 'ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային՝ որ հանէր 'ի մեծամօրի կամուրջն. 'ի տեղին յայն՝ ուր սովոր էին սպանանել զամմահապարտս. 'ի ճախճախուտ տեղի մի մատ 'ի պարկէնտիոսին՝ որ շուրջ գայր գքաղաքաւն։ Լու վարեցին չորս ցիցս միում միում 'ի նոցանէ։ Լու մինչ դեռ կալվէին

զայն՝ սիսաւ ասել սուրբն գայիանէ ընկերոքն հանդերձ այսպէս։

Յոհանամք զքէն տէր՝ որ արժանի արարեր զմեզ մեռանել վասն անուանն քո մեծի. և յարգեցեր զհողեղէն բնութիւնս մեր, զի լեցուք արժանի ճծութեանդ քում. և հաղորդեցեր զիս մասին սրբոց քոց՝ հռիփսիմեայ և ընկերացն. և արդ փութամ և անձկացեալ եմ հասանել նոցա, որ սիրեցին զքեզ. և ես ժամանեցից զկնի դատերն իմոց և որդեկին հռիփսիմեայ, և քրտերցն իմոց և ընկերաց։

Արդ յիշեա զմեզ տէր՝ որ վասն անուանն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք իբրև զոչխար ի սպանումն. արի և մի՛ մերժեր զմեզ իսպառ վասն անուանն քո. և դու տուր մեզ զյաղթութիւնքո. և չարն գործակցօքն իւրովք հանդերձ՝ նկուն լեցի յահէ փառաց քոց։

Եւ յետ այսորիկ պատառեցին զհանդերձս նոցա. և պրկեցին զնոսա մի մի ի չորս ցիցս. և ծակեցին զմարթս ի պձղունս նոցա, և եդին փողս, և փչելով այնպէս կենդանուցին մարթեցին զսուրբսն զերեսինն՝ ի ներքուստ ի վեր մինչ ի ստինսն. և ծակեալ զծորդակսն, և ելեզուն ընդ այն հանեին. և վարեցին քարինս ընդ գոգս նոցա. և ցրեցին զաղիս նոցա յորովայնին՝ ընդ գոգս նոցա. և քանզի դեռ ևս կային կենդանի. ապա ըարձին զգլուխն նոցա սրով։

Ա՚ռանէլն որդւոցն յաչաքաց յերկիրն աւերեցաց։ էշխոնուն՝ի դպրութեան, և Խագաւորութեան դարձ։

Լ՚ըդ՝ի վերայ նոցա այր մի ընտիր, կացուցեալ զօրավար և առաջնորդ՝ հրամանաւ՝, մեծն Մովսէս։ որ և յԵսուս անուն Ճանաչիւր։ որ առեալ յանապատէն զաբրահամեան զաւակն զորդիսն իէլի, գնաց խաղաց՝ի խոստացեալ երկիրն։ խլեաց քաղեաց զազգս Եօթն ամբարշտացն։ և զնոսա ածեալ բնակեցոյց՝ ուր և տեղի երևեցուցեալ։

Ալ՚ախ յանուն ՀՈ տաճար շինել։ որ յայտ իսկ էր՝ի հրամանէ՝ Աստուծոյ։ անդ միայն իշխել մատուցանել զողջակէզս պատարագաց։ ուր բնակեալ էր ՀԱ՝ի մէջ մարդկան։ Լ՚ու անդ յարուցեալ նոցա դատաւորս։ որք ըստ՝ այ կամացն դատէին զիսրայէլ։ որ և լի էին հոգւով մարգարէութեամբ։ և էր զի ամենեքեան արարեալ նոցա։ իբրև մեռանէին դատաւորքն՝ դարձեալ ամբարշտեալ յայ՝ դիւց պաշտօն տանէին։ և պատկերաց երկիր պագանէին։ Ա՚ՀՈ որոյ անդէն մատնեալ զնա՝ի ձեռս օտար ազգաց, և հեթանոս թագաւորաց՝ խրատեալ զնոսա։

Յետ այսորիկ ինքեանք իսկ խնդրեցին յայ թագաւորս։ Յորոց՝ի միջէ յարեաւ դաւիթ։ որ լի էր

հոգւովք սրբովք որում վկայեաց և ասէ, թէ գոմ զդա-
ւիթ որդի յեսսեայ . որ արասցէ և կատարեսցէ
զամ զկամս իմ. և կանգնեաց և՝ զաթոռ նորա, և
զաթոռ զաւակի նորա ։

Լրեալն այս առ Խարգարէս զանապան պէսլեանէ . և
Խարգէն զհրէշտակն ի պահպանութիւն Խարդէան ։

Լրս ապա դարձեալ անդրէն տեսանել՝ ի պար-
գևական երկրին՝ գունդս գունդս մարգարէա-
կանս . որք և տեսանողք կոչէին՝ վասն ապագայ
յայտնութեանցն պատահելոց ։ Որք բարձրագոյն
պատմէին իսրայէլական տոհմին, ըստ իւրաքանչիւր
կարգի . որպէս և արքայ իսկ դաւիթ՝ զհամաշխարհա-
կան տերութիւն երգեաց՝ թէ, տէր տէր մեր՝ զի
սքանչելի է անուն քո յամ երկրի ։

Օ՛ ոմն կառոյց տեսեալ՝ իբրև զզօրավար պայ-
ծառագոյն . և ոմն իբրև զայր մի՝ ի դատողական
աթոռս դատաւոր, իբրև զորդի մարդոյ ընդ ամպս
երկնից եկեալ զՏին աւուրցն տեսանէ ։ Իսկ այ-
լոմ իբրև զայր մի՝ ի վերայ սեղանոյ . զոր և ասէ
իսկ, թէ տեսի զտէր, զի կայր՝ ի վերայ սեղանոյ .
տեսանեն զի թէպէտ և այր տեսանի՝ տէր Աստուած ։

Լրս միւսումն ևս սքանչելակերպ . թէ տեսի
զտէր՝ ի վերայ աթոռոյ բարձրացելոյ . և վեցթևեայ
սրոբէագունդ՝ շուրջ զտէրամբն . ուստի՝ ամ՝ ածե-
ղէնն իմանալի . որպէս և՝ այ իսկ առ աբրահամ, ան-
համար և յաճախագոյն տեսիլս արարեալ, և՝ ամ
զաւակի նոր ։ Օ՛ որ և ասէ իսկ մարգարէն՝ ի՝ տնէ .
թէ ես տեսիլս յաճախեցի, և՝ ի ձեռն մարգարէ-
ից նմանեցայ ։

Որ՝ ի բաժանելն ազգաց, և՝ ի խառնակել լեզ-
ուացն, և՝ ի ցանել որդւոցն Ադամայ, կարգեաց

սահմանս ըստ թուոյ հրեշտակաց ոյ։ Ալիք և հրեշ-
տակացն իսկ ինքնասատուամ արարեալ ցանկալուցն
դանիէլն՝ զեւրաքանչիւր սահմանաց. զոր և բարե-
բարին ոյ հարկանելով, 'ի բարկութիւն զողորմութիս
յիշել. զի 'ի պիղծ դասուցն, և 'ի պատերազմն
դիւացն ոճակարգ անուշահոտ ոգիքն՝ զազգս
մարդկան աներկիւղ պատեսցեն, առ 'ի յարդարելոյ
'ի գիտուն ոճամերձ։ Օ որ երանելոյն դաւթայ՝
զչափ առեալ պատմէր, թէ քանակք հրեշտակաց
տեառն շուրջ է զերկիւղածովք իւրովք, և պահէ
զնոսա։ Լու մեծն յակոբ, թէ հրեշտակն որ պահէր
զիս 'ի մանկութիւն իմմէ։ Լու ամենատէրն, թէ հր-
եշտակ իմ երթիցէ առաջի քոյ՝ պատրաստել զճա-
նապարհս քո։ Արդ պահպանութիւն առ 'ի ծանօթ
առնելոյ ոճամերձ գիտուէն զմիտանական ազգն
բաժանեալս՝ զանկեալսն յերեսաց ոյ. զի թերևս
երևելի արարածովքս՝ ծանօթք անեւուութիւն ոյ
լեցին։

Օ զի արար 'ի միոջէ արենէ զամ ազգս մարդ-
կան՝ բնակեալ 'ի վերայ երեսաց երկրի. հաստա-
տեաց կարգեալ ժամանակս և սահմանադրութիս
բնակութիւն նոցա՝ խնդրել զոճ. զի թերևս զննիցեն
զնա և գտանիցեն. զի անեւուայթք նորա իսկզբանէ
աշխարհի՝ յարարածոցս իմացեալ տեսանի. զի տէրն
արժանաւորաց իւրոց մերձաւոր է։ Զայն օրինակ
և 'ի հոնէ են ամ պահպանութիքս. զի ուր տէրն է՝
անդ ամ քանակք հրեղինացն են. որպէս և հայրա-
պետին յակոբայ՝ ըստ յայտնութեանն եղելոցն առ
նա՝ միանգամայն իսկ 'ի միջի լինէր հրեշտակա-
խառն քանակաց. քանզի կարգեալ էին հրեշտակքն
ըստ նմանութեաց, առ 'ի պատգամաւորութի մարդ-
կան, կամօք մարդասիրին ոյ. որ առ վերցիւեան
սերովբէ իւրն իմանալի է։

Քանզի ոչ թէ մարմնեղէն թեւաւորք, այլ ըստ
նմանութեան. որք երբեմն բնաւ իսկ սոսկագոյն իրբ
և զմարդիկ հրեշտակքն երևեալ. քանզի առ աբ-

բահամաւ և առ զոմտաւ՝ մարդկօրէն իսկ դարմա-
նեալ։ Եւ առ Դանիէլիւ՝ իբրև զայր մի երևեալ.
նոյնպէս երբեմն առ գէդեոնիւ՝ թանձրագոյն
տեսլեամբ. իսկ զաբրիա՝ հեծեալ 'ի մէջ լերանց
եռեաց։ Եւ եսու՝ բնաւ իբրև զմարդ յանկարծա-
գոյն. որումն և յաներկիւղ հարցանէր. 'ի մէնք իցես
ասէ, թէ 'ի թշնամեաց մերոց. ապա տեղեկացեալ
թէ զօրավար է զօրացն ՅՀ, անկեալ երկիր պագա-
նէր. նոյնօրինակ ամ հրեշտակատեսացն։

Զ՝շմարտագոյնս համարիք այսու հեռև զհո-
գևորական ազգին, զամ մարդակերպ նմանութիս
առ մարդիկ եղեալ, առ 'ի պատգամաւորութի սպա-
սաւորութի՝ կամաք մարդասիրին ՅՀ. առ 'ի պաշ-
տօն ժամանակաց ըստ իրաց իրաց ինչ ընծայելոյ,
և ոչ հանապազակիր զնոյն նմանութի յանձին պա-
հելոյ։ Զորոց զանտարրական անձինս մարգարէն
իսկ գուշակէ, թէ ո արար զհրեշտակս իւր հոգիս,
և զպաշտօնեայս իւր 'ի բոց հրոյ. զի հոգիք են հար
կաւորք՝ որք առաքին 'ի սպասաւորութի ժառան-
գաւորացն փրկութեան։

Զ՝ այսորիկ և անպատուամ եղեալ մովսէսի. զի
մի՝ ՀՀ անզգայ արարածքս հոգիքն մնաւորք և բանա-
ւորք համարեսցին. այլ ծառայական սպասաւորութիւն
ինքեանք իսկ բարձեալ բերիցեն զհրամանս մե-
ծութեան փառացն ՅՀ։ Այլ զՀ՝ արարեալ բնութիւն
նոցա՝ անտուստ 'ի վերուստ իսկ մարգարէքն բարձ-
րագոյն գոչէին, թէ արար զհրեշտակս իւր հոգիս։
Եւ միւսն, թէ ես եմ տէր ՅՀ՝ որ հաստատեցի
զերկինս և զերկիր. որպ ձեռք հաստատեցին զամ
զօրս երկնից. բայց թէ էին տարբաւորք, ապա է-
րև ելիք և ոչ աներևոյթք. և ոչ առ հասարակ, և ոչ
ուստեք երևեալ։ Իսկ եթէ արարելոցն այսպիսի.
ինչպէս ևս առաւել բարձրագոյն անարար և անմա-
տոյց աներևոյթ բնութի էականին ՅՀ իմանայցի։

Որով ամ ածատես կատարելոցն միապէս մարդա հասակ նմանութիւն երևեալ ի իւրաքանչիւր ժամանակի, որ 'ի բարբառոյն և 'ի հրամանացն իսկ ճանաչի՝ թէ մարդակերպ երևեալ. քանզի և ի մարդկան խօսէր, վասն հրաւիրելոյ 'ի տեսիլ բարեացն խոստացելոց. և ոչ մշանջենաւոր զնոյն նմանութիւն յանձին պահելոյ. այլ նա բաւական է նմանութիւնք ճշմարտութի ցուցանել. որով ամ դժուարինքն դիւրինք են՝ և անհնարինքն հնարաւոր. կարօղ է ամ, և տկարանայ նմա և ոչ ինչ։ Որմէ տեսանօղքն բարձրաձայն հնչէին. զի 'ի չափաւոր յայտնութեաց՝ զանչափական անսերևոյթն ճանաչէին. և առ ժամայն տեսլեամքն՝ զէական զօրութիւն գիտէին ըստ կարի իւրեանց։

Որ և հայրապետն աբրահամ՝ տէր և դատաւոր ամի կոչէր. և մեծն մովսէս՝ էական ածաբարիչ ամենեցուն. որով և ցանկացեալ իսկ էր ըզփառսն տեսանելոյ. զի ամ իսկ մարգարէքն տեսանօղք էին։ Ամն՝ թէ տէր տէր առաքեաց զիս և հոգի նորա. և թէ՝ բերան ամն խօսեցաւ զայս. ապաքէն որ 'ի բերանոյն լսէր, և կերպարանացն ակնատես լինէր։ Զոր ոմն պաղատանս մատուցեալ ասէր. տէր տէր, ահաւասիկ խօսել իսկ ոչ գիտեմ զի մանուկ եմ։ տեսանէս աւասիկ զյանդիմանն ցուցանել։ Զոր ամ իսկ հրամանաբերքն՝ իբրև յերեսաց ամն եկեալ բարձրաբարբառ ընդհանուր աղաղակէին. ոմն՝ թէ ասաց տէր զօրութեց. և ոմն՝ թէ հրամայեաց տէր ամենակալ։ Իսկ սովսական բարբառոնն միանգամայն իսկ ճանաչի՝ որով ասէն, թէ ոչ արասցէ ածն իրս ինչ, եթէ ոչ յայտնեսցէ զկնրատն ծառայից իւրոց մարգարէից։

Զոր արդ՝ յայտնի է այսուհետև ասացելովքս, թէ և նախաստեղծ մարդոյն զնոյն նմանութիւն երևեալ իսկզբանն. որպէս և առ յայտայ ամ ածատես կատարելոցն զնոյն պահեալ՝ զի մի՛ օտարագոյն

ինչ և անծանօթ կէրպարանօք զտեսօղն հարթուցանիցէ։ մանաւանդ թէ առաւել լաւագոյն իսկ, զի յաճատեսս հօրէն՝ որդւոյն տեղեկացեալ դիւրագոյն պատրաստիցին իբր ընդելականի։ և զլուսէանսն ունկնսն՝ և ակամբ ևս նկատեալ։ Որպէս և երանելին և սիրելին այս արդարն յոբ։ որ ասէր ցաճ, թէ 'ի լուր ականջաց լսէի զքեզ յառաջագոյն, բայց արդ և ական իմ տեսս զքեզ։ ցոր և ասէր իսկ աճ։ զնդեա՛ իբրև այր զմէջ քո։ և մի՛ համարիր այլ ինչ երևեալ առ քեզ։

Բանդի և 'ի սկզբան իսկ ըստ տղղեցութենն երևեալ աճ։ զոր և ասէն իսկ, թէ ըստ պատկերի այս արար զմարդն։ Լու՛ համ յաւիտենիցն ըստ նմին նը մանութեաց աճ փառաց երևեալ։ զոր և ասէր իսկ նախամկայն, թէ աճ փառաց երևեցաւ հօր մերոյմ աբրահամու։ և ամենեբեան իսկ տէր սաբաւոթի, և աճ ամենակալ կոչէին։

Լու արդ՝ զերևեալն այս ը նմանութեանէ մարդկան, ապաբէն ըստ կարողութեանէ տեսողացն իմանալի է։ և ոչ էթէ անչափակալ բարձրութենն այ՝ սահմանաթարոյց և կողմնափակ իցէ։ և երբէք երբէք յիւրակայան սահմանաց՝ յայլ սահմանս երևեալ գայցէ։ որով լի է համ։ այլ զիմանելով և հնաւորութեանէ՝ ընդելացուցանէր նմանութեանէն։ զի մերձաւորս և աճամուխս և յանդիմանատես ճշմարիտ կերպարանացն պատրաստիցէ։ քանզի 'ի նմանութեանէ անտի՝ ապաբէն լինի ճշմարտութենն իմդրելի։

Որով և մեծն մովսէս՝ ցանկացեալ հայէր։ զի թէպէտ ձեռն 'ի ձեռն, և բերան 'ի բերան, և յանդիմանախօս ընդ այ՝ մովսէս ճանաչիւր։ սակայն ճշմարիտ դէղոյն փութայր հասանել, ասելովն ցաճ՝ թէ ցոյց զանձն քո։ Լու՛ արդ՝ տես զպատասխանին։ թէ ո՞չ դոյ մարդ որ տեսանիցէ զաճ և ապրիցէ։ և ապա սակաւ իմ ինչ նշանաւ նուազեալ զնոյցօրն։ և զբնականն անեղեալ պահեալ։

Տես զի անտեսական է՝ ի կարողաց, և անբնական ի քննողաց՝ ըստ առանձնական կերպարանացն. քանզի ոչ եթէ կերպարանք ինչ տարրականք իցեն նմանութիւն, այլ առ ժամայն տեսիլ. իսկ ՀՐՇՄարտութիւն՝ բնութի գոյական։ Զանգի և մովսէս նմանութիւն օրինական և տարրական խորան ցուցեալ. ըստ որում կազմեաց խորան նիւթական. և եզեկիել՝ տաճար օրինակ տաճարի։ Զոյնպէս և առաջին մարդոյն ի նմանութիւն անտարրական երևեալ այ. զի արասցէ մարդ տարրական ի նիւթոյ՝ մերձաւոր Հշմարտութեանն. քանզի ՀԾ անզգոյական բարերարութիւն իւրով կարգեաց առաջին մարդոյն՝ մերձաւոր և ՀԾամուխ լինել ՀԾական վայելչութեանն։

Զու մի ըստ միոջէ առատապէս հոգին այ հեղեալ ի վերայ դասադաս և գունդագունդ մարգարէիցն՝ ի մէջ իսրայէլական տոհմին՝ որք ըստ կամացն այ պատուիրեին իւրեանց ազգացն՝ պահել զգուշութիւն հրամանացն այ. որ ազգ էին ընտիր. և պատուէր առին չմերձենալ և չխառնակել յայլազգիս՝ ի տոհմս հեթանոսաց. զի մի՛ ուսցին զմեզ նոցա։

Զսկ նոցա խառնակեալք թաթաւեալք ինամութիւն ընդ նոսա, առին ուսան զանՀԾ պաշտութիւնս նոցա. թագաւորօքն և իշխանօքն խառնակեցան։ Զ ամենորդի տրտունջ առեալ մարգարէին գոչէր, թէ խառնակեցան ընդ հեթանոսս՝ և ուսան զգործս նոցա. Ծառայեցին կռոց նոցա, և եղև նոցա ի գայթագղութիւն. զոհեցին զուստերս և զդստերս իւրեանց դիւաց, և հեղին արիւն մարդիծ. արիւն ուստերաց և դստերաց իւրեանց զոր զոհեցին կռոցն քանանու։

Լ՝ զաղաքաքին որդւոցն Իսրայէլ 'ի Ճառայաքաքենէ Եգիպտոսի . և պաշտել նոցա զնոսա ազգաց երկրին առաքաց։

Լսակ տէր ՅԾ 'ի ժամանակին զի հարկանէր զեր կիրն Եգիպտացւոց՝ վասն զի հանցէ զնոսա անտի, կոտորեաց զՅամ անդրանիկս Եգիպտացւոց, և փրկեաց զնոսա անտի։ Ա՝ան որոյ եղեալ ուխտ ընդ հարս նոցա, նուիրել զորդիս իւրեանց անդրանիկս՝ ՅՆ ՅՅ իւրեանց։

Լ՝ըդ փոխանակ այսորիկ՝ առեալ զորդիս և զդստերս իւրեանց՝ դիցն հեթանոսաց զոհէին։ Լ՝ագինս շինեալ յերկրին՝ զոր տէր ՅԾ իւրեանց անուանեալ վնասակ ժառանգութեան իւրոյ կոչէր . նոքա պատակերս կանգնեալ փոխանակ նոր՝ քարանց և փայտից երկիր պագանէին ընդ նորա . և շաղախեալ երկիր յարենէն՝ որ պոռնկել 'ի դիսն յաՅա խեցին զպոռնկութեան մարմնոցն . որով պղծեալ 'ի գնացս իւրեանց։

Օ՝ և 'ի մտանելն նոցա յերկիրն զոր եւ նոցա, հրամայեաց ջնջել զանօրէն ազգն որ էին յերկրին՝ զոր ոչ սատակեցին . այլ դաշնաւոր եղեալ ուխտս հաստատեալ ընդ ազգն անօրէնս . ընդ որում միաբանեալ ժառանգեցին զամբարշտութեան։ Օ՝ և ՅԾ վասն չարեաց նոցա եհան զբուն բնակիչս երկրին 'ի բնակուէ անտի։ Լսակ սոքա մոռեալ ըզնոյն գործ միաբանութեան սկսան գործել . իւրեանց թագաւորաքն և իշխանաքն և քահանայութիւնքն հանդերձ՝ զայն սկսան գործել։

Ա՝ան որոյ ՅՆ ՅՅ վասն առաւել գթոյ մարդասիրութեան իւրոյ՝ առաքեալ առ նոսա զմարգարէսն՝ սպառնացեալ պատգամաքք, զի դարձցին յանօրէնութենէ գնացից իւրեանց, և պաշտեսցեն զՅԾ աստարիչ ՅՅ . որ վասն իւրոյ մարդասիրութեան՝ գթացեալ ողորմեր 'ի վերայ չարութեան նոցա։ Ա՝ր մար-

գարէիւն տրանջէր զնոցանէ, թէ փայտին ասացին հայր իմ ես դու. և քարին՝ թէ քո ծնեալ է զիս. և դարձուցին յետ զթիկունս, և ոչ զերեսս իւրեանց։

Լրդ՝ չար և անմիտ ազգի կուրացելոցն, յայրուցեալք ի վերայ մարգարէիցն՝ քարկոծել և սպանել. և այնչափ կոտորեալ զնոսա, մինչև աղաղակեալ մարգարէի միոջ, թէ ես միայն մնացի։ Լու առեալ զմարգարէ սուրբ անուանն, կարդալ՝ սուտ և ընդ վայրահար քրմանցն։

Լյան ծածատես մարգարէքն Ճշմարիտք, որք Ճշմարտութեամբ պատմեցին նոցա զգալուստս Ճշմարիտ որդւոյն ՅՍ յաշխարհ՝ մարմնաւորութեամբն հանդերձ. որ դառնացօղ ազգին՝ և զայն չկամեցեալ լսել։ Ալ ան որոյ առաւել զմահ ի վերայ նոցա զօրացուցեալ, զի և մի ոք ոչ մնացեալ՝ զոր ոչ սպանին պէս պէս տանջանօք։

Ալէքսանդրիա արքեպսկոպոսն իսքայէլ ի Բաբիլոն. ապաստանի՝ նոցա յետ ասացն Եօթանասնից. և նորոգուի պատարին։

Ալ ան որոյ բարկացեալ են ՅՍ ի վերայ ժողովրդեանն՝ գարշելի առնել զժառանգութիւն, մատնեալ զնոսա ի ձեռս հեթանոսաց. զի զորոց սիրեցին պաշտել զդիսն, և ի նոսին պոռնկեցան, զնոսին տանջիչս և թշնամանիչս և գերիչս ի վերայ յայրուցեալ՝ մատնեաց ի ձեռս նոցա. որպէս և ասէն իսկ, թէ մատնեցի զնոսա ի ձեռս հոմանեաց իւրոց հեթանոսաց, և տիրեալ նոցա ատելեացն, և թշնամեացն նեղել զնոսա ի ներքոյ ձեռաց նոցա։ Զի թէ և բազում անգամ փրկեալ զնա ի ձեռաց նեղչացն. սակայն յետ ելանելոյն ի նեղութենէն՝ ի նոյնն յաճախեցին. դառնացուցին զՅ ի խորհուրդս իւրեանց, և կորացան յանօրէնութեան իւրեանց։

Լ՚սպա հայեցեալ տէր ՚ի նեղութիս նոցա՝ ՚ի լսել զձայն աղօթից նց. յիշեալ զուխտն որ ընդ հարսն էր. և գթացեալ ըստ բազում ողորմութեանն իւրում. և ետ զնոսա ՚ի գթութիս առաջի ամ գերելոց նց։ Փրկեալ զնոսա ՚ի նոսա՝ և ժողովեալ ՚ի հեթանոսաց. դարձուցեալ զնոսա ՚ի գերութէն յետ ամացն եօթանասնից, յերկրէն բաբելոնի, ՚ի կողմանցն ասորեստանի։

Հինեաց զաւերական վերստին, և նորոգեաց զտաճար անուանն իւրոյ. ետ զմարգարէութիւն, և դարձոյց զքահանայութիւն, և նորոգեաց վերստին զնա. և անդէն ՚ի սկզբանն ընծայեցոյց, զոր յետ անցելոց յաւիտեանց՝ կատարեաց միածնաւն իւրով։

Զի ոչ եթէ յետոյ իմացեալ ամենագիտին՝ գայր երևեալ որդին յաշխարհ, և բարձրացուցանել զմարդիկ ՚ի փառս աւագութեան. այլ ըստ առաջնացուն խնդրանն՝ կատարեաց ՚ի վերնանն։ Զի խորհուրդն ծածկեալ առ ՚ի ծածկեալ յազգացն յաւիտենից, այժմ յայտնեցաւ ՚ի բերոյ. քանզի նմանուելիք երևեալ առ ժամանն արդարոցն՝ գուշակիք ՀՀմարտութեան յաւիտենականի որ գալոց է որ լինին։

Ղուկաս Եւանգելիստ նարգարէից վասն գալստեանն Քրիստոսի. և հալածանաց և չարչարանաց նոցա։

Զի բազում մնասմբք և բազում օրինակօք՝ կանխաւ խօսեցաւ ՚ի ընդ հարսն մեր մարգարէք. ՚ի վերնանն աւուրցն այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն. որ է ժառանգ ամենայնի. որով և զյաւիտեանս արար. որ է լոյս փառաց՝ և նկարագիր էութեան նորա։

Տեսանէն զմասունսն և զօրինակսն, և զմարգարէսն յաճախագոյն, և ՅԾ մի՝ որ վասն միածնին իւրոյ խօսէր։ Բ. սաց մարգարէն 'ի դիմաց ՅՆ, թէ ես եմ ՅԾ. և չէր այլ ոք՝ բայց միայն, որ պատմեսցէ յառաջագոյն զվերջինսն մինչև եղեալ իցեն, և միանգամայն կատարեսցին. զի խորհուրդն լուցեալ 'ի ժամանակաց, և յայտնեալ մարգարէական գրովք, վասն միայնոյ իմաստնոյն ՅՍ։

Գիտէ իսկ յորժամ ինքն էկեալ փրկիչն որդին ՅՍ՝ յայտնեաց առ աշակերտսն, թէ երանի է աչաց ձերոց՝ զոր տեսանէքդ, և ականջաց ձերոց՝ զոր լսէքդ. զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսէքդ, և ոչ տեսին. և լսել զոր լսէքդ, և ոչ լուան։

Տեսանէն զի ազդեցուցիչք էին նմանութիւնք ճշմարիտ կերպարանացն քի. և վայրկենի նմանութեամբք 'ի մշանջենաւոր կերպարանսն փութացին հասանել։ Զոր և օրէնքն մովսիսադիրք ամ իրօք՝ զհանդերձելոցն նշանակեալ փայլէին։

Բանզի իբրև ետես ՅԾ զհամաշխարհագործ զմեղսն տարածեալ, և որով մահն թագաւորեալ՝ առ հասարակ կլանէր, յադամայ մինչև ցմովսէս. և 'ի մոռացօնս դարձուցեալ զկենսաբեր աւետիսն յառաջագիտս. որպէս և հուր իսկ մոլեկան հրդեհի՝ որ ապականիցէ զվերինս և զդաշտս արձակեալ այնուհետև 'ի ներքս զօրէնսն իբրև զհեղեղատ սաստիկ՝ շինիցանել համատարած։ Զայսն որոյ և ասէ իսկ, թէ ամ որ արասցէ զայս՝ կեցցէ 'ի սոսին. որպէս ադամայ թէ ճաշակեսցէ 'ի ծառոյն՝ մահ սպառնացաւ, ուստի և թագաւորեաց մահ. նոյնպէս և զօրինացն ասաց, թէ որ արասցէ զայս՝ կեցցէ 'ի սոսին, որով և շինցաւ իսկ մահ։

Բանզի և օրէնքն իսկ սառուցեալ դադիր յօրինակատարն քն՝ կորուսին զմահ. որով և յայտ իսկ ապարեալ զծովացեալ զմեղսն. և 'ի համար արկեալ

և ըստ իւրաքանչիւր յանցանաց մահ սպառնացեալ։ Եւ տկարացուցեալ զամենեսին, և փակեալ ընդ անիծիւք և ընդ մեղօք. զի յորժամ եկեալ բառնայցէ ամենափրկիչն քո՝ զմեղս անիծաբերս և մահածինս, ասասցեն ազատեալքն՝ թէ շնորհք նմա՝ որ յայնչափ մահուց փրկեաց զմեզ։

Եւ յայտ իսկ առնէ, թէ օրէնքն քի մնային. ասելովն, թէ օրէնքն յանցուածոց վասն յաւելան, մինչև եկեսցէ զաւակն՝ որում խոստացեալ էր կար գեալ հրեշտակօք 'ի ձեռն միջնորդի։ Զանգի ընդ օրինօքն իսկ ասէ փակեալ պահէաք 'ի հանդերձեալն հայեցեալ. որում ոչ միայն ազգ երկրածնաց, այլ և աներևոյթ զօրք հրեշտակաց՝ հանդերձ ամ անդայ արարածովքս սպասեալ մնային. ըստ այնմ՝ թէ ակնկալութի արարածոցս՝ յայտնութեան որդւոյն այ սպասէ. զի ընդունայնութեան արարածք հնազանդեցան. ոչ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ՝ որ հնազանդեցոյցն յուսով. զի և ինքեանք իսկ արարածքն ազատեսցին 'ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութի փառաց որդւոյն այ։

Զանգի ադամ որ ըստ պատկերի այ արարաւ, և ամ զաւակք նորա՝ որդիք այ համարեցան. կամաք իւրեանց զապականութի ժառանգեցին. ընդ նոսին և ամ արարածք հնազանդեալ ապականեցան. ոչ իւրեանց կամաւ, այլ վասն առաջնորդութեան կամացն այ առ 'ի քո ազատելոյ։ Զանգի և որ միանգամ 'ի վայելչութի և 'ի փառս մարդոյն հաստատեցան, ապականեալք՝ ևս անարգեալք վասն նորին բարկութի. քանզի և երկիր անիծեալ՝ և փշաբեր հեղեղատեալ, և հրայրեաց շարժահիմն յողդողդեալ ընդ ժամանակս ժամանակս. և լուսաւորք խաւարամած արիւնանշան, և երկինք այլագունեալք. որպէս և 'ի գրոց մարգարէականաց զանգելոցն է նշանակեալ. զոր և նոքն իսկ մարգարէքն յաղագս կրէին յանձինս իւրեանց։ Զի

թէպէտ յոյ պատուէրաւք առաքէին, սակայն թըշ-
նամանալք և քարկոծեալք 'ի չընդունողացն. որպ
և ասէ իսկ ամենատէրն, թէ վասն ձեր կոտորեցի
զմարգարէսն՝ բանիւ բերանոյ իմոյ։

Այնպէս և հրեշտակք պատգամաւորեալ առ ազգս
մարդկան, անտրգելք և տրտմեալք դառնային 'ի
չընդունողացն. որպ և առ զոմսն եկեալք հրեշտա-
կաքն, պատեհագոյն է և զայլոցն իմանալ։ Վասնզի
եթէ դարձ միոյ մեղաւորի՝ ամ հրեշտակաց ուրա-
խութիւն բերէ. որչափ ապաստամբութիւնն ամենեցուն
տրտմութիւն գործէ. որով և անուանն այ հայհոյեալ
ասի, և հոգին սուրբ տրտմեալ։ Այլ թէպէտ և
այսպէս նեղութիւնքիր ամ արարածք ընդունայ-
նութեան ծառայեցին. սակայն առաջի եդելոյ ազա-
տեցուցիչ յուսոյն՝ ամենեան սպասէին. հրեշտակք,
մարգարէք, և ամ արարածք։ Զի ոմն ասէր, 'ի պա-
հու իմում կացից՝ և ելից 'ի վերայ վնամ՝ և ակնկա-
լայց և սպասեցից այ փրկչին իմում։

Պապանաս յանդիմանէ զալանդեանն 'ի յաղխարհ։

Իսկ ընդէր արդեօք յերկարեալ միածինն, այն-
չափ նեղութիւն արարածոյն հասուցանէր. եթէ ոչ
զի նախ ազգ արարեալ յառաջագոյն ընդելականս
առնիցէ. զի մի' յանկարծ երևեալ անծանօթ՝ ան-
ընկալ լիցի. այլ իբրև հայցողաց և սպասողաց՝ ե-
կեալ ծանօթս տայցէ։ Զի եթէ յայնչափ ժամա-
նակաց եկեալ առ իւր արարածն անընկալ եղև.
որչափ անազդելոցն և անհամբաւելոցն. այլ կան-
խաւ խորհրդով ծանօթս տուեալ ամ ազգաց և
յաւիտեանցն եկելոց։

Որպէս ոմն 'ի պատգամաւորացն այ ասէր, թէ
ինձ տուան շնորհքս այս՝ 'ի հեթանոսս աւետարա-
նել զանքննին մեծութիւն քրիստոսի. և լուսաւոր

առնել զամենեսեան։ Թէ զինչ է տնտեսութիւն խորհրդոյն՝ որ ծածկեալն էր յաւիտեանց՝ որ առ յայս որ զամ ինչ արար։ զի յայտնեսցի արդ իշխանութեամբ և պետութեամբ որ յերկինս են՝ ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութեան՝ ըստ յառաջադրութեան յաւիտեանցն զոր արար տէրամբ մերով յԻսուսի։ որոյ և վասն նորին իսկ յայտ արարեալ՝ Թէ իբրև եկն լրութեան ժամանակացն։

Այսպէս ոչ այն իցէ ի մարդկանէ՝ որ կարօղն իցէ այնպիսի վարդապետութիւն զանձութիւնն ճշգրտել և խօսել։ այլ որչափ ինքն կամեցաւ՝ առ ի ծանօթ առնել զինքն։ զի ծանիցեն զնա, և կեցցեն։ Ոչ բաւէն արարածքս զարարչէն պատմել՝ որ բաւական կամք ի տիպս պատկերի՝ ըստ առնելառնողին։ այլ որչափ ըստ ժամու ժուժալոյ տկարութեան մերոյ՝ ինքն կամեցաւ պատմել մեզ։ քանզի ոչ ոք գիտէ զնա՝ եթէ ոչ հոգին նա։ և որդին որ եկն պատմեաց, և եցոյց, Թէ որ եսէս զնա՝ եսէս զՀայր իմ։

Ընդէսորն բնութեան նա։ և երևութն նորա արդարոց և մարգարէից զանազան էրդպարանոց։ վասն պարարութեան մարդկան։

Բայց ահա հոգի կենդանի է։ հուր կիզելոյ։ անթիւ և անփոփոխ է։ փառքն անպատում։ զօրութիւն անբաւ։ գեղն անման, զարմանալի։ անհայս մտաց և խորհրդոց։ անխօս լեզուաց։ անանփոփոխ խորհրդոց։ արտաքոյ քան զամ ճառս։ ոչ ական տեսեալ։ և ոչ ունկան լուեալ։ և ոչ կարծիք սրտի կարեն հասանել։ Երկինք ամփ, և աշխարհ ամփ, և տիեզերք ամփ՝ ի վեր ունել ոչ բաւեն։ և բան նորա բարձեալ՝ ի վեր ունի զամ։ և զօրութիւն հրամանի նորա կախեալ առանց թելոց՝ ի թռիչս՝ ի վերայ օդոցն իբրև թռուցեալ։ Ինքն պատեալ զամիս։

'ի Ներքոյ ամի. 'ի վերոյ ամի. արտաքոյ ամի. և ամ 'ի նմանէ. և ամ 'ի նա. և ամ 'ի փառս նորա։

Այլ 'ի բազում նշանս և 'ի բազում արուեստս խոսեցաւ ածՔ Հարսն մեր Մարգարէն՝ և Ժամանակս ժամանակս 'ի տեսիլս անպատումս, յանմանութիւնս, 'ի լուր զարմանալի, 'ի գեղ գովելի, յածեղէն կերպարանս։ Ուստի լուսեղէն նմանութիւն՝ 'ի կերպարանս մարդոյ. ուստի իբրև ըզհուր բորբոքեալ՝ 'ի կերպարանս մարդոյ. արդարոց բազմաց երևեալ՝ ըստ կարելոյ տեսանելեաց նոցա. և ըստ հանդուրժելոյ լսելեաց նոցա, խօսեցաւ ընդ նոսա։ Զի անքաւ է մարդոյ տեսանել զածՔ գոյիւ իւրով, որպէս մամ զհուր, զի եթէ լերինք ոչ կարեն տեսանել զնա. զի յորժամ հայեցեալ ընդ նոսա՝ հալեսցին։

Այլ իբրև ինքնակամ կամաք բարերարութիւն իւրով զինքն ցուցանէր, 'ի կերպարանս մարդոյ էրևէր. ուստի լոյս. ուստի հուր. ուստի հոգի, և ամպ, և մէգ, և մրրիկ։

Իսկ թէ ասիցեմք՝ եթէ հուր է զոր ինչ տեսանեմք. և եթէ ասեմք՝ եթէ լոյս է. զաստի կարծիս առեալ զմերոյ բնութեան նմանութիւն ցուցանեմք աներևութին՝ վասն մերոյ անհասութեան։ Այլ նա ըստ մերում փոքրկութեան երևի. որպէս զի մի՛ տարրական արարածք կիզցին յահէ փառաց նՔ։ Այլ զանուն նորա ոչ ոք գիտաց. զի չէ՛ ոք ևս անդր քան զնա՝ որ անտի և այսր անուանիցէ։

Այլ յերևելն իւրում արդարոցն՝ զահ իւր յինքն ամփոփէր. և մարդատեսիլ և հրեշտականման երևէր, մեծահաս ըստ հանդուրժելոյ աչաց։ Ոչ արարածք կարեն քննել զարարիչն. և ոչ զանգուածՔ զանգիչն գիտէ։

Այլ արարիչն գթայ յիւր արարածս. զի ածՔ արարք զամ արարածս. և զարդարեաց 'ի գեղ գովելի

և 'ի վայելուչ փառս։ Լու 'ի հողոյ ստեղծեալ զհողեղէն մարմինս. և 'ի լուսոյ զհրեշտակս զարդարել 'ի լոյս վայելուչ, և զդեցեալ զարդարեալ. զփառաց աթոռուին մատնեն օրհնութիւնք հրեշտակաց. բարբառք սրոբէից. փառաւորութիւնք զուարթնոց. ժողովք բանակաց, և գունդք սրբոցն, և դասք գովչացն, և օրհնութիւնք երկնաւորացն. աղօթք արդարոցն, և պաշտօն սրբոցն. սերոբէքն և քերոբէքն, և զօրք միաբանական լուսոցն։

Պատանութիւն ուղղափառ հաւատոյ յանէնաստուրբ երրորդութիւնն, և 'ի ն ածութիւն։

Այս վկայութիւն ասացեալ կարգեցաք 'ի ձեր լսելիս՝ զսուրբ հաւատս Աշմարիտս, որ յայտ յանդիման վարդապետեցին մեզ գիրք սուրբք՝ սուրբ հոգւոյն, վասն մշանջենաւոր արքայութեան ածութեան. որ յայտնեցաւ խորհրդով արդարոցն հարցն մերոց. և խօսեցաւ ընդ մեզ որդւոյն և սուրբ հոգւոյն. և ա ետարանեցաւ մարգարէիւք և առաքելովք. և տուաւ մեզ հաստատութիւն հաւատոց։

Ի հաւատով Աշմարտութեանս՝ 'ի մի ածն հայր և տէր՝ և արարիչ ամի. և 'ի միածին որդին՝ որ 'ի հօրէ, և առ հօր, և ընդ հօր. և 'ի սուրբ հոգին՝ որ 'ի նորին էութեէ, և նովաւ արար զամ արարածս։ Որ է մի տէրութիւն. մի զօրութիւն. մի իշխանութիւն. մի մեծութիւն. մի գիտութիւն. մի խորհուրդ. մի պետութիւն. մի սկզբնական զօրութիւն. երեք կատարեալ անձինք. մի կատարեալ կամք. անպատուամանքնին միութիւն երրորդութեան. իսկութիւն. մի էութիւն. մի ածութիւն. հայր է. և որդի է. և հոգի է. երեք անձինք. մի զօրութիւն ածութեան. հայր յանձնէ. որդի 'ի հօրէ. հոգի 'ի նոցանէ 'ի նոսին։ Իսկութիւն էութիւն ածութիւն հարթ և

հաւասար։ հաւասարակ 'ի խորութիւն, 'ի բարձրութիւն, 'ի լայնութիւն, յերկայնութիւն։ մի էութիւն բնութեան։ մի պտակ երրորդութեան։ և լի են երկինք և երկիր փառաւք նորա։

Որպէս սողոմոն արքայ որդի մարգարէին ասէր 'ի հոգեկիր աղօթսն, թէ երկինք և երկիր չեն քեզ բաւական։ Յու մարգարէն ասէր իբրև յերեսաց ոտն, թէ երկինք աթոռ իմ են, և երկիրս պատուհանն դան ոտից իմոց։ որպիսի տուն շինիցէք ինձ ասէ տէր, և կամ զինչ տեղի բնակութեան պատրաստիցէք ինձ։ ոչ ձեռն իմ արար զայս ամենայն, և ես յո՞ հանգեայց և դադարեցից, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և յայնոսիկ զոր դողան 'ի բանից իմոց։ և եղէց նոցա ածի, և նորա եղիցին իմ ժողովուրդ։

Իսկ որում երկինք և երկիր չեն բաւական, որպիսի ունիցի զնա սիրտ մարդոյ։ մի թէ մեծ ինչ իցէ մարդ քան զերկինս և զերկիր։

Մ. Յլ յաճութիւն զինչ կամի՝ և լինի։ զինչ կամեցաւ, և արար։ զինչ կամեցաւ՝ և եղև։ որ ինչ կամի՝ ոչ զանցանէ։ այլ ամփոփեցաւ՝ փոքր ինչ կացաւ, և եղև զինչ և կամեցաւ։

Գաւլուսա դաճնին ցաշխարհ, և մարդեղութիւն նորա 'ի սրբոյ կուսէն մարիամայ։

Մ. ՐԴ՝ առաքեաց ածի զորդին իւր յաշխարհ։ որ եկն և եղև 'ի կնոջէ։ և 'ի մարդկեղէն մարմին պատեցաւ մարմնովն՝ որով զամ մարմինս կենդանացուցցէ։ Որով և յաղթեց իսկ արարիչն աշխարհի։ զի նորոգեսցէ զարդարս, և զերծուսցէ 'ի մեղաց ածին ծնանդոց։ հրեշտակակերպս արասցէ՝ և ածորդիս կոչեսցէ։ և զմահկանացուս անմահացուսցէ անմահ հոգւովն։ պատեսցէ ածեղէն փառաւքն։ Ա ՝ցելուշ լուսոնն զարդարին։ և յերկրաւորեա

յերկնաւորն անցանեն, 'ի մահուանէս յանմահուն. զանանց լոյսն զգենուն, և զանանց գեղ կերպարանացն։

Ոչափ և իցէ ածութիւն՝ որ ամ բնութեաց աղբիւր են կամք նորա, և տեր ամ գործոց. և բանիւ բերանոյ նորա հաստատեալ կան ամ արարածք. և 'ի նմանէ լոյս առին ամ լուսաւորքք. և 'ի զօրութենէ նորա հաստատեալ կան ամ վերնայարկք երկնից, և ամ աշխարհ, և որ 'ի նոսին. և 'ի հոգւոյ բերանոյ նորա ամ զօրութիւք նոցա։

Յերկնաւոր պաշտօնեայքն, և սրբոցն լուսեղէն բանակք՝ յուսով նորա կան կախեալ, և ողորմութեաց նորա կարօտին. և 'ի նորա ակնարկեալն՝ ամ արարածոցս պէտքն պատրաստին. և զօրութիւք նորա կեան ամենեքեան. և աչք ամենուն 'ի նա յուսան։

Որ արարիչն և հաստատիչն և առաջնորդն է ամի, իսկութիւք բնութիւնն. անքաւ զօրութիւնն որ 'ի նմանէ է՝ տարածեալ. արկեալ զամենեքումբք. ուստի կենարար զօրութիւքն բաշխին՝ որ ընդ ամ արարածս անցանէ, ընդ երկնաւորս՝ և ընդ երկրաւորս, ընդ օդս՝ և ընդ հողս, ընդ հուր՝ և ընդ ջուր, ընդ լոյս՝ և ընդ խաւար, ընդ անդունդս՝ և ընդ բարձունս. որ զաներևակի զօրութիւնն թափանցանց լուսով իւրով ելանէ։

Որ զօրուն հոգւոյն անքաւ է, զամիւ սփռեալ՝ ընդ ամիւ տարածեալ. և ելանէն ճառագայթք զօրութիւք. անընդունելի բնութիւք. մի ունի զչափ վերին բարձանցն՝ և մի զատրին անդնդոց, մի յաջ ձգեալ՝ և մի յահեակ, մի 'ի դէմն՝ և մի 'ի թիկունս։ Ի՞ ե՞ զ զօրութիւք ճառագայթքն, վեց հազարեան դարքն. եօթնեերորդ դարն հանդիստ արդարոց։

Ի՞ եօթակերպ զնծ քարոզեսցուք. յոգ ապատ ան դամբք՝ զանգեալ 'ի հողոյ, իւրաքանչիւր անդամ զիւրաքանչիւր գործ բերեալ. բարձեալ 'ի յանձին ջձեռնհաս 'ի գործ ընկերին. ոչ ակն լսէ, և ոչ ունկն տեսանէ. ոչ լեզու հոտոտի, և ոչ ձեռքն գնան.

և ոչ ոք աղաղակէն։ Բ.երան խորտակաց. հոտոտե-
լիք հոտոց. քիմք ճաշակաց. մի մի իւրում բնուէն
կապեալ կայ։

Բ.այց ինքն իւրով կամաք արար զամենակեցոյց
գալուստն իւր. և կատարեաց զկամն հօր իւրոյ։
Բ.ուսքեցաւ ՅԾ յոյս սուրբ հոգին, և մաքրաղար-
դեաց զկոյսն. առ մարմին 'ի կուսէն. որդին ՅԾ
մարդ կատարեալ՝ կատարեալ ՅԾութիւն. զՅԾուէն
զօրութիւն յայտ արար, և զմարմնոյ տկարութիւն ցու-
ցանէր։ Ծառայակից եղև մարմնոյն մարդկուէն,
և ազատեաց 'ի մեղաց զմարդկային մարմին։ Որով
էջ 'ի դժոխս, և ած էհան անտի զարդելեալսն 'ի
դժոխոց։ Մարմնով հալածեցաւ, և հալածեաց
զսատանայ, և կապեաց զմեղն։

Օ՛ի որ 'ի մարմնէն հաւատացին՝ ծանոյց նոցա
զՅԾութիւն իւր. և որք 'ի մարմնոյն գթեցին, և ու-
րացան զբնութիւն նր։ Բ.անզի միացաւ 'ի մարմնի
անդ բնութեամբ. և խառնեաց զմարմինն ընդ իւր
ՅԾութիւնն։ Որք հաւատացին 'ի նա՝ վայել-
լեցին յանպատում բարիսն. և որք յայսց հաւա-
տոց վրիպեցան՝ զանկոս և զանխուլ գնացին՝ և
զարտուղի անկան. և խրամատեցին անձանց իւր-
եանց ցանգս անկարկատս. և զբազումս 'ի հաւա-
տոցն ՅՀմարտութիւն թիւրեցին. իբրև կարծէին
թէ գտին ինչ՝ գտին զոչինչ. որպէս և գրեալ է՝
չոգան զՀետ ոչ ընչի. և գտին զոչինչ. զի գիւ-
տիցն խնդիր աշխատութիւն է. իսկ անգիւտ աշխա-
տութիւն սուտ վարդապետութիւն՝ կռապաշտութիւն
հասանիցեն։

Օ՛ի անտուստ 'ի վերուստ իսկ զանցելոց իրաց
զյաւիտեանցն՝ զկնի եկելոցս մարգարէիքն ամե-
նեքումբք ծանօթս տայ. և առաջին օրինօքն՝ վերջ
նոցս բազումանգամ վարդապետեալ. մերթ ակա-
գին սպառնալեօք կարգէ՝ յիշատակաւք առաջին

վրիժուցն խնդրելոյ։ զի զանհաւատն զարհուրեցուցեալ՝ յուղղութիւն յորդորիցէ։ որպէս զգունակ գունակ հարուածսն եգիպտացւոց, և զդառնագոյն հատուցումն նոցա վրէժխնդրութեան։ Լաւ կամ զանհաւան անկելոցն յանապատին, և զամ իսկ զփորձ առեալոց զբարկութիւնն այ՝ զյիշատակս առեալ բերէ։

Լաւ քեռի իսկ՝ զերկիրն սոդոմացւոց և գոմրացւոց յօրինակ առեալ։ զի 'ի չհաւանելն ոմանց՝ և դժընդակագոյնս կրեսցեն զնոսն։ և մերթ բազմադիմի սքանչելագործութիւնս պայծառագոյնս՝ և զհատուցումն այ պարգևել յիշեցուցանէ։ կարգէ միանգամայն և զհաստատութիւն արարածոցս պայման։ բազումանգամ ասելով՝ թէ զերկինս ձգեցի, և զերկիր հաստատեցի, և ցծով աւազով փակեցի։ զի այսու ամենայն հաւատարիմ զլսօղն՝ առ 'ի խոստացեալսն քաջալերեսցէ։

Լոգաբանն գոռշոնէան նահապետաց և մարգարէից՝ գալատացոց գրիգորի։

Իսկ եկեալ կատարեաց փրկիչն ամենայն զերբեմն խօսեցեալսն վասն նորին։ և վկայութիւն զգալուստս որդւոյն կարեմք ճշմարտել մարգարէականօքն յաւաջաստացելովք՝ վասն մարմնացին ծննդեան ածորդւոյն, հոգեխառն բանիւք զածախառն մարմնոյն։ զոր յաջագոյն ածեցոյց զնոսա որդւոյն զգալուստ՝ արժանաւոր իւրովք մարգարէիցն ձայնիւք։

Զի առաքեաց ածզորդին իւր, որ եկն ծնաւ 'ի կնոջէ, և եմուտ ընդ օրինաց։ զի զորս ընդ օրինաց էին գնեսցէ։ զի մեք զորդեգրութիւն ընկալցուք։ Զանգոյն սորա և կարապետն յոհաննէս ասէր։ ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից։ զոր և յաւետենից ամենայն արքայութիւնքեր՝

առաջի իսկ դնէ ասելովն, թէ կատարեալ է ժամանակ. և հասեալ է աղբայութիւն։

Որդ՝ եկեալ սքանչելի խորհրդակից որդին՝ կատարել զխորհուրդ նախակարգ յաւիտենից. զոր և մարգարէն իսկ ասէ, թէ հաստատեալ զբան ծառայից իւրոց. և զխորհուրդս հրեշտակաց իւրոց արդարացուցանէ։

Ունի և զհրեշտակն պատրաստել նմա ճանապարհ. որոյ տուեալ ողջոյն կուսին՝ առ 'ի զմարգարէականն կատարելոյ. եթէ կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցէն զանուն նոր Էմմանուէլ. և ասէ ուրախ լեր բերկրեալ տէր ընդ քեզ։

Յաւանդէն նշանակէ՝ թէ զինչ օրինակ տէր ընդ նմա լինելոց իցէ. ասէ՝ հոգի սուրբ եկեսցէ 'ի քեզ՝ և զօրութիւն բարձրելոյն հովանի լեսցի 'ի վերայ քո. քանզի որ ծնանելոցն է՝ նոր է, և որդի բարձրելոյ կոչեսցի։ Յաւանդէն 'ի մարգարէականն հայեցեալ ասէ, եթէ տացէ նմա տէր աթոռ զաթոռն դաւթի հօր իւրոյ. և թագաւորեսցէ 'ի վերայ տանն յակոբայ յաւիտեան. և թագաւորութիւն նոր վախճան մի՛ լեսցի։

Որմէ և հայրապետն յակոբ՝ հոգւով ցուցեալ ասէր, և փառաւոր զյուդա գիտացեալ 'ի մարգարէութենն՝ ասէ. մի՛ պակասեսցէ իշխան յուդայ. և մի՛ պետ յերանաց նոր. մինչև եկեսցէ այն՝ որ իւր է թագաւորութիւն. և նա է յոյս հեթանոսաց։

Հա՛ տեսանեմք լցեալ և կատարեալ զամ վարդապետութի՛ լիով. ահաւասիկ տեսանեմք զամ հեթանոսս սպասեալ նմա, որ կամաւ և որ ակամայ. ասէ կապեսցէ զգրաստ իւր զորթոյ, և զյաւանակ իշոյն՝ զորթոյն գնդակէ. այսինքն զգայն խոնարհութեամբ առ մշակս այգւոյն, որք ոչն կամեցան զայգւոյ տէրն. որ չարչարեցաւ իւրովք կամաքն համբերեալ։ Որ 'ի ժամանակի իւրում պատաս-

ցուք , որ դեռ վասն ծննդեանն էն բառք ասել
ձեզ . զգուշակումն մարգարէից . զքարոզութիւն
առաքելոցն . զվկայութիւն վկայիցն . որ նա ինքն է
յեսութէն , որպէս և էն իսկ .

Ղուկանոնի ողբաց հաւասոյ 'ի Մարդեղութիւն .է .

Սակայն յորժամ կամեցաւ՝ առ զմարդկային
կերպարանս . և զգեցաւ մարմին , և էջ 'ի մեր նման
նութիւն . այն որ անբաւն էր և անհաս յաճմ լրութիւն
ածութիւն , և վասն մեր էջ 'ի չափաւորութիւն , և ան
փոփոխեցաւ 'ի մարմին . բովանդակեցաւ ՀՇմարտութիւն
'ի մարմնին , և Հշմարիտ իսկ մարդ եղև . և էջ յա
նարգութիւն՝ զի զմեզ բարձրացուսցէ . Սակայն
իւրոյ ածութիւն յերկինս էր և յերկրի՝ առ հօր ,
և ընդ հօր . և ամ արարածք հրամանաւ նորա շար
ժին ըստ իւրաքանչիւր կարգի կազմելոյ .

Սակայն թէպէտ վասն մեր էջ յանարգութի ,
այլ կայ յիւրում բնութեն . որպէս և ինքն իսկ ա
սէ . թէ ես նոյն եմ , և ոչ փոփոխեցայ . Օ 'ի թէ
պէտ զկերպարանս էառ և զմարմին մարդկան . այլ
խառնեաց միացոյց ընկղմեաց զմարմինն յածութիւն
իւրում .

Դ դարձեալ ասէ . սա է ածածմեր յաւի
տեանս յաւիտենից . Դ դարձեալ ասէ . դու նոյն
ես , և ամք քո ոչ անցանեն . Դկեալ զայսպիսի բար
բառ՝ և առ մեծն մարգարէից մովսէս . թէ ես եմ
որ իսկզբանէն էի . այսպէս ասասցէս , թէ որ 'ի
սկզբանէն ածառաքեաց զիս առ ձեզ .

Օ որ և յոհաննէս ասէր 'ի թղթին իւրում . որ
էրն իսկզբանէ՝ զորմէ լուաք . որում ականատեսք
իսկ եղաք . ընդ որ հայեցարն . և ձեռք մեր շօշափե
ցին զբանն կենաց . և կենանն յայտնեցան , և տե
սաք և վկայեմք , զի նա ինքն է ածՀշմարիտ . և

կեանք յաւիտենականք։

Որ առ զմարմին ըմբռնելի, և շօշափեցաւ, և ըմբռնեցաւ մարմնով։ և զնա՞մ անցս մարմնոյն յանձն առեալ իւրով կամաւք։ յանծանօթս եղեալ համբերս խոնարհութիւն, և ոչ ուրուք բռնադատութիւն։ բայց իւրովք իշխան կամաւք կրեաց զայն։ որպէս և ինքն ասէր, իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ իմովք կամաւք։ զի դարձեալ միւսանգամ առից զնա։

Լա՛ ինքն ծնաւ 'ի կուսէն իւրովք կամաւք։ և կատարեաց զկամս առաքչին իւրոյ։ ասէ՝ ես եկի կատարել զկամս հօր իմոյ։ զի ցուցցէ զմիաւորա՞կան՝ անքակ՝ անքաժին ինքնութեանն միութիւն կամաւք հօր։

Լամուտ յարգանդ կուսին՝ և ոչ դարշեցաւ։ վասն զի ինքն է սրբիչ ա՞մի։ Լամաւ իւրով պա՞տեցաւ 'ի խանձարուրս։ եդեալ 'ի մնուր անասնոց։ զի ինքն իսկ է տէր և արարիչ ա՞մ մեծութեց, և բղխիչ ա՞մ բարութեց։

Հինաւուրցն վասն մեր մանկացաւ։ և առ ըզ կերպարանս մարմնոյ տկարութեան մերոյ։ զի զմեզ փոխեսցէ յանմահութիւն իւր։ Լակայն թէպէտ զգեցաւ մարմին, և եղջ 'ի մեր նմանութիւն։ այլ կայ 'ի փառս հայրենի բնութեան ա՞ծութեան իւրոյ։ որպէս և էր իսկ, և է, և կայ յաւիտեան՝ ընդ հօր իւրում 'ի բարձունս՝ յիւրում բնութեան՝ հանդերձ մարմնովն զոր 'ի մէնջ զգեցաւ։ փառաւորեաց ցանգորդ՝ 'ի հոգեղէն և 'ի հրեղէն զուարթնոց։

Լա՛ եկն եղև մարդ, զի մարմնաւորքս տեսանել կարասցեն։ բայց զա՞ծ գոյիւ ոչ տեսեալ ուրուք։ ոչ հրեշտակաց, և ոչ հրեշտակապետաց, և ոչ սերոբէից, և ոչ քրոբէից, և ոչ բիւրաւոր բանակաց երկնաւոր զուարթնոց։ բայց որդին ծածկեալ մարմնով՝ կատարելամիտ իմաստնոց եցոյց և յայտնի արար, զի յագէսցին լուսոյն սքանչելութի՞ւն։ թէ որ եատես զնա՝ եատես զհայր իմ։ Լա՛ եկեալ

ղխոստացեալսն կատարեաց 'ի սրբոյ կուսէն։ և ա-
ռաջին ծնունդն 'ի հօրէ յառաջ քան զանկեալ յա-
ւիտեանսն։ մշանջենական և յաւիտենական ծը-
նունդ, 'ի մշանջենական և յաւիտենական հօրէն
յառաջ քան զամ։

Ա. յաչափ և եթ գիտել տկարութեան արարելոցս
'ի նմանէ։ զի նա Աշմարիտ է՝ և հայր Աշմարիտ մի
են։ ուստի ամ հայրութի անուանեալ կոչի երկնա-
ւորաց և երկրաւորաց։

Ա՝ի միայն տէր, երեք անձնական զօրութիւք։
երեք անձինք, մի զօրութի։ մի էութի գիտութեամ
զօրութի։ մի միասնական փառաւք, մի միայն լուսա-
ւորութիւն, մի միայն խկութիւն։ զի ոչ ոք կարէ քննել
թէ որպէս կամ զիարդ եղև։

Հաւատացէք յերրորդութին։ Աշմարտեցէք 'ի
միութին անշշուանչ լուութիւն, լուռ հաւատովք։
Ա՝այց զայն յուզել զանքննին, ո՞՝ հոգապետեանս 'ի
հողոյ զանգեալս զիարդ քննել կարիցեմք, և գիտել
զկամս բարձրելոյն, և սկզբնաւորաց զանսկզբանէն։
զանհասն զիարդ ոք կարիցէ քննել։

Հաւատաք Աշմարիտ այս են։ Խոնարհեցաւ և
խառնեաց զաստուծութի ընդ մարդկութեան, և զան-
մեռն ընդ մեռոտս։ զի զամ անքակ արասցէ յան-
մահութէն ամ ծնութիւն իւրոյ։ Յորժամ մարմնով
ընդաղմէ հօր եմուտ, և խառնեաց զմեզ յաստուն
իւր՝ միածին ամ ծնորդին, արարչակիցն հօր։ յորոյ
'ի ձեռն հաստատեաց զհիմունս երկրի, և պարզեաց
զարարածս երկնից։ Զ՝ այն որոյ և մարգարէն
ասէ։ յայտնեաց տէր զաջ իւր և զբազուկ իւր
ամ հեթանոսաց։ և տեսին ամ ծագք երկրի զփրկ-
կութիւն ամ մերոյ։

Ա՝ջն հօր ինքն խակ է և բազուկ։ միածինն քն։ և
նովաւ լուսաւորեցան ամ եղեալք։ որ խկզբանէ
էր բանն։ և բանն էր առ ամ։ և ամ էր բանն։ որ
ամ ինչ նովաւ եղև։ և նովաւ հաստատեցաւ ամ։

որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի։ Հարկ էր զի նո-
վին սրբեսցին՝ որով եղէնն և հաստատեցան, և
նովաւ լուսաւորեսցին։ և կամեցեալ նայ՝ զի կեցցին
արարածք, և մի՛ կորիցին։

Լ՚ըդ՝ առաքեաց ածՀոգին աբ՚ի կոյսն մա-
րիամ՝։ և էառ ածորդին մարմին՝ի կուսէն։ որով
կորոյս զչարն, նովին մարմնովն պարտաւորեաց ըղ-
մեզն։ ածախտն մարմնովն՝ զարձրախտն խո-
նարհութիւն, զանէրևոյթ խառնն տեսմանն առ հո-
վիւն՝ զածային փառացն գուշակէր։ Ա՚նսուրն և
խանձարուրն՝ զխոնարհաձիգ մարմնոյն զաղքատու-
թիւնն՝ի մէջ քերէին։ առաջնորդ աստղն՝ մո-
գուցն պատարագաբ, յայտնի է ամենատեառն տէ-
րութիւն։ երկրաւորքաս գիտասցուք զմարմինն։ և
երկնաւորքն ծանիցուք զածութիւն։

Լ՚ըդ՝ տես զինչ պատմէ մեզ մէրիայն՝ շնորհք
հոգւոյն մարգարէութիւն, թէ և դու բեդղեհէմ
ասէ, ոչ ինչ կրսեր վիճակաց հասեր։ ի՚բէն ծա-
գեսցէ ինձ պետ՝ և իշխան տանդ իսրայէլի։ և ելք
նորա իսկզբանէ աւուրց հի։ զսկիզբն զածութիւն
ցուցանէ։ ի՚ բեդղեհէմ զմարմինն պատմէ։

Հրեշտակապետն ասէ։ ծնցի որդի՝ և կոչեսցեն
զանուն նորա յիսուս։ և սաղմոսարանն երգէ։ յա-
ռաջ քան զարև զանուն նորա։ զմարմնածին ծը-
նունդն պատմէ։ և միւսն զածութիւնն ցուցանէ
յառաջ քան զարուսեակ՝ի հօրէ ծնեալ։

Ա՚էք զայս Հշմարիտ հաւատս ունիմք՝ի սուրբ
գրոց և օրինաց եկեղեցւոյ, առաջնորդ կենաց Հա-
նապարհի առ ածն, և՝ի աբ գիրս վարդապետութեանէ
հաւատովք։ Լսու մի՛ խոտորիք՝ի կարգաց իմաս-
տութեանէ։ մի՛ յաջ, և մի՛ յահեակ։ զի ոչ եթէ այսպէս
սիրք իցեն սերմանիքն ամուլք և ժանկաւք, ազա-
զուանք և սինեալք, քայքք զոր սերմանեմք յանդաս-
տանս սրտի լսելեաց։ զոր և որ սերմանէ զայսպիսի

սերմանիս 'ի լսելիս լսողաց՝ այնպիսիքն նղովեալք են. թէ և հրեշտակ երկնից իցէ. իբրու զօձն նզովեալ հողակեր. որ սուտ և պատիր բանիւք՝ զպատուիրան արարչին փոխել կամեցաւ։

Բայց մեք ոչ այնպիսի պատուիրանս ձեզ մատուցանեմք. և զայս վկայեմք առաջի ՅՍ. զի նա միայն գիտէ զսրտի խորհուրդս. և ՅՍ ծածկելքն յայտնի են նմա. զի յՍՄԺՄ առաջի նորա եմք։ Եւ այժմ առաջի նորա, զնորա պատգամն խօսիմք, զքաջաբոյսս՝ և զատոքս՝ և զպտղաբերս, և զարդիւնատուս, և զշահեկանս, և զվայելելիս, և զշտեմարանալիցս. որ կարօղէն պարարել զձեզ, ասա մարմնաւոր պտղով. և անդ յարքայութեանն զձեզ վայելեցուցանեն յանանց և յերկնային ուրախութիւնն։

Զմա փառք ամենատեառն. որ վասն մերոյ կենաց մարդացաւ՝ և մարդակերպ շրջեցաւ. եկեր իբրև զմեզ և էարբ. տանջեցաւ, չարչարեցաւ, խաչեցաւ, բևեռեցաւ, սպանաւ, թաղեցաւ, կենդանացաւ. յարեաւ, վերացաւ, և ել նստաւ ընդաջմէ ծնողին իւրոյ ՅՍ և հօր. և կենդանացոյց զամենեսին որ հաւատացին 'ի նա։

Ծնունդ տէր 'ի սէր։ Հայրենեաց ի գաւառս Ռիշ նորա՝ ըստ գրոցն։

Բայց մեզ դեռ կայ պատմել ձեզ՝ զծնունդ ՅՍ որդւոյն 'ի սուրբ կուսէն. թէ զիարդ եղև, մի ըստ միոջէ պատմեսցուք։ Զի ոչ եթէ յորմէ հետէ ծնունդն 'ի կուսէն իցէ՝ յայնմ հետէ է սկիզբն անսկզբնականին գոյութիւն. այլ յառաջ քան զՅՍ յաւիտեանս ծնեալ 'ի հօրէ, իսկ արդ՝ վասն մերոյ էջ և մարմնով ծնաւ 'ի կուսէն. այն ծնողդ հայրն որ զնա ծնաւ՝ նա միայն գիտէ։

Իսկ երկրորդ ծնունդն շնորհիւ իւրով 'ի մէջ մարդկան. վասն զի կեցուսցէ զմարդիկ. և օրհնեսցէ յառաջին անիծից անտի զերկիր. իւրովք օրհնութիւնաբեր գարշապարօքն եկեալ նորոգեսցէ. զի եսեսս կորուսեալ զմարդիկ, ժողովեաց զցրուեալսն, եգիտ զկորուսեալսն։

Եւ յղացեալ այնուհետև 'ի հոգւոյն սրբոյ զը նորհագիւտ կուսին յանարատ անապական արգանդին զորդին Աստուծոյ, անհասական պայմանաւ։ Եւ ըստ օրինակի ծննդականաց ծնաւ զանդրանիկն 'ի քաղաքի դաւթի 'ի բեթղեհեմ՝ առ 'ի կատարելոյ զմարգարէականն, թէ դու բեթղեհեմ տուն էփրաթայ՝ սակաւաւոր իցես լինել 'ի հազարաւորս յուդայ. 'ի քէն ելցէ ինձ պէտ և իշխան իսրայէլի. և ելք նորա իսկզբանէ աւուրց աշխարհի։

Տեսանեն զելսն յառաջնածայս։ Տեսանեն և զաւետիս հրեշտակացն յօթեվանս հովուաց. ծնաւ ձեզ այսօր փրկիչ՝ որ է օծեալ տէր 'ի քաղաքի դաւթի։ Տեսանեն որ ելքն իսկզբանէ աշխարհի, այսօր ծնաւ ասէին. պատմեն զօծելոյն՝ առ 'ի նշանակելոյ զմարգարէականն, թէ ո՞ պատմէ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր։ Եւ տուեալ նշան զօծելոյն, թէ գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձուրս, և եդեալ 'ի մուրս. այն իսկ էր յաւիտենական խորհուրդն ծածկեալ առ՝ այ՝ որ յայտնեցաւ երկնակեաց իշխանացն։

Օ՜ որոյ անդէն իսկ զաճական փառացն զերգս առեալ երկնաւոր զօրուն՝ հովուացն ուսուցանէին. զի մի՛ 'ի մերոյն և 'ի պատանացն արհամարհեալ կարծիցի հովուացն։ Եւ փութացեալ այնուհետև հովուացն՝ հասեալ գտանեն զմանուկն ըստ նշանակելոյ հրեշտակին. որ ոչ միայն մատաւորացն, այլև բացական արուեստեաց աստղանշան ծանօթ գտեալ։

Զ՚նդ էր այնուհետև քննել 'ի հոգէպատում մատեանս մարգարէականութեանն, թէ մանուկ ծնաւ

մեր՝ և որդի տուէաւ մեզ • որոյ իշխանութիւն է 'ի վերայ ուսոց իւրոց • և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ • սքանչելի խորհրդակից • աստ հզօր • իշխան • հայր հանդերձելոյ աշխարհին •

Եւ նա ասէ նմա զի և որդի և իշխան , և հրեշտակ և խորհրդակից , և աստ հզօր , և հայր հանդերձելոյ աշխարհին , զայսօրուանս մանուկն նշանակէ • Զանազի և էր իակ որդի • վասն զի զօրութիւն այ է , և խորհրդակից , և աստ հզօր • որով և յաւիտեանսն հաստատեցան • Զի մանուկ , զի այսօր 'ի սրբոյ կուսէն 'ի բեթղեհեմ ծնեալ • որով և առաջապատում իակ է , թէ տէր ասաց ցիս որդի իմ ես դու՝ և ես այսօր ծնայ զքեզ • Զի հայր հանդերձելոյ հին , զի զհնացեալ և զմահակուլ աշխարհս , ըստ հողաւ ծին առաջին մարդոյն՝ երկրորդ մարդն կուսածին եկեալ յերկնից նորոգեսցէ • Զի իշխան , քանզի գաւազան բղխեալ յարմատոյն յեսսեայ՝ ասէ էսայի • և ծաղիկ , և 'ի շառաւեղէ անտի , ծնունդ դստեր դաւթի • ապա և յաթոռն դաւթի նստցի , և զարքայութիւն նորա յաջողեսցէ •

Որով եկեալ հասին աւուրքն , զոր մարգարէն յառաջագոյն սահմանեաց • ահա աւուրք գան ասէ տէր , և հաստատեցից զբանն իմ բարի՝ զոր խօսեցայ 'ի վերայ տանն իսրայէլի , և 'ի վերայ տանն յուդայ • Յաւուրսն յայնոսիկ՝ և 'ի ժամանակին յայնմիկ՝ ծագեցից դաւթի ծագումն արդարութեան , որ առնիցէ իրաւունս և արդարութիւն յերկրի • Զայն որոյ և անդէն ասէ • դարձ յակոբ , և բուռն հար զնմանէ , ընդ ծագումն առաջին լուսոյ նորամի՝ տար այլում զիտաս քո • և մի՝ զօգուտն քո ազգի օտարոտոյ •

Իսկ այլ մարգարէ յայտնագոյն վէճիս տայ , թէ յաւուր յայնմիկ կանգնեցից զխորանն դաւթի , զանկեալն և զկործանեալն • և զատակեալս նորա վերատին շինեցից • և կանգնեցից զնա ըստ աւուրցն

յաւիտենից ։ որպէս զի խնդրեսցեն զիս մնացորդք մարդկան ։ և ամենայն ազգ՝ յորոյ վերայ կոչեցեալ է անուն իմ ասէ տէր ։ որ առնէ զայս ։ յայտնի է 'ի յաւիտենից ։

Զանգի յառաջագոյն խոստացեալ դաւթի՝ ասէ ։ 'ի պտղոյ յորովայնէ քումմէ նստուցից յաթոռ քո՝ բարձրացուցանել քան զՇամ թագաւորս երկրի ։ հաստատել զաթոռ նորա ըստ աւուրցն երկնից ։ իբրև զարեգակն առաջի իմ ։ որպէս լուսին զի հաստատեալ է յօդս ։

Ա՛յս եկեալ՝ որոյ իւրն է թագաւորութիւն ։ և նա է յոյս հեթանոսաց ։ որպէս ասաց մովսէս ։ Լուսայրուցեալ թագաւոր համաշխարհական ։ զՇամ ազգս հնազանդելով ։ և զթագաւորութիւն նորա այլում ազգի ոչ փոխեալ՝ ըստ ասացելոյն դանիէլի ։

Որ և վասն դաւթի իսկ ։ որոյ որդին անուանեցաւ քրիստոս ։ բղխեալ 'ի սրտէ հոգեպատում բարբառոյ մարգարէին ։ զհանգամանս թագաւորին յայտ արարեալ ։ Ա՛յսպէս՝ թէ գեղեցիկ է քան զՇամ որդիս մարդկան ։ և շնորհս սիրէ 'ի շրթանց իւրոց ։ և գեղեցիկ ոչ զկերպարանացն ։ այլ զանշուքականն փառացն ասէ ։

Լուսաբարձեալ՝ թէ ածէ զսուր ընդ մէջ քո հզօր ։ զվայելէ Ճշմարտութիւն քում ։ Ա՛յսպա յետ այսորիկ զմիանգամայն զվէրս տայ ։ թէ աթոռ քո ածէ յաւիտեանս յաւիտենից ։ գաւազան ուղղութիւն՝ գաւազան արքայութիւն քոյ ։ և նշանակէ՝ թէ օծեալն է այն ։ զոր և ինքն և մարգարէքն՝ զմուսս օծելոյն երգէին ասելովք ։ վա՛ այսորիկ օծ զքեզ ածէ ածէ քո իւղով ուրախութիւն՝ առաւել քան զընկերս քո ։

Տեսանեմ՝ զի յառաջագոյն ծանուցեալ տեսանող մարգարէին հոգւովն սրբով՝ թէ միածին որդին այդ աթոռակիցն՝ հօր սիրելին ։ եղև որդի դաւթի ։ առ 'ի բարձրացուցանել զաթոռ նորա յաւիտեան ։ Որպէս և ասէ իսկ ։ յառաջագոյն տեսանէի

զտեր առաջի իմ յամենայն ժամ, և ընդ ամենայն իմում։ զոր մարգարէն և Եղիա գիտէր։ զի երդմամբ երդուաւ ծած նմա, ի պողոց որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։ որում և օրինականքն իսկ վկայեին, թէ յազգէ դաւթի։ և ի բեթղահէմ գեղջէ գայ քրիստոս։

Լուարդ՝ նա ոչ միայն յառաջագոյն գուշակեցոյն, այլև առ ժամայն նշանակաւ մոգուցն եկեալ՝ թագաւոր ճանաչիւր։ Զոր և ասէին։ ո՞ւր է որ ծնաւ արքայն հրէից։ և տեղեկացեալ՝ի դպրացն հաստատէին ուր է մանուկն։ որում երկրպագեալ, և պատարագս մատուցեալ, և միանգամայն տիրաբգէտ և հրեշտակածանօթ եղեալ դարձան։

Թ։ Փաստաբերն։ Եւ Փախուստն նորա յԵգիպտոս։ Եւ դարձն նորա ի Գալիլեա։

Լուարդ՝ իբրև լցան աւուրք ուրթ թլփատել զնա։ կոչեցաւ անուն նորա յիսուս։ որ կոչեցեալն էր՝ի հրեշտակէն, մինչև յղացեալ էր զնա յորովայնի։ Զոր և ասէր իսկ մարգարէին, թէ մինչև ստեղծեալ էի զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ։ և մինչև ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զքեզ։ և այս՝ի տէրն իսկ թարգմանի՝ թէ զոր հայր սրբեաց և առաքեաց յաշխարհ։ Իսկ այլ մարգարէ, թէ յարգանդէ կարդաց զիս տէր։ և յորովայնէ մօր իմոյ կոչեաց զանուն իմ։

Լուարդ՝ դու տես զՀնչմարիտ կերպարանս բերեալ՝ի սրբոյ կուսէն, և ոչ առաջօր ինչ տեսիլ։ Զի և սկիզբն առնու անսկզբնականն։ և աւուրք հաստատեալ թլփատի ուրթ օրեայ՝ յառաջ քան զարուսեակ որդին։ աւետեաց խոստացեալ զաւակն աբրահամու՝ որով օրհնին ամ ազգ երկրի։ որով՝ի թլփատէն յիւրն առ՝ի կատարելոյ զաւետիս հարցն։

որոյ մանաւանդ ասէ ընդ օրինաւ, զի զօրինաւորսն փրկեսցէ. զի և մեք զորդեգրութիւն ընկալցուք։

Զ. Յնուհետեւ ընկալեալ որդին դաւթի հալածանս, հալածի յեգիպտոս. առ 'ի կատարելոյ զայն, թէ յերկրէն եգիպտացւոց կոչեցից զորդի իմ։

Զանգի յառաջագոյն սահմանեալ էր ամենագիտի հոգեկիր մարգարէութիւնքն իւրովք, թէ որպիսի՞ համբերութիւն միածինն որդին 'ի հրէիցն եկեալ կրիցէ։ Որպէս և պետրոս յառաքելագործմատեանին ասէ. թէ ՅԾ որպէս յառաջագոյն պատմեաց 'ի բերանոյ ՅՄ մարգարէիցն զչարչարիլն քրիստիւրոյ, Նոյնպէս և կատարեաց. զոր և ՅՈՐՆ իսկ ասէր՝ թէ եկի կատարել զօրէնս և զմարգարէս։

Զալոռոան չէ յեգիպտոսէ 'ի նազարէթ. Լուսանչէլն վարդապետութիւնն նորա յերուսաղէմ՝ յերկիրս ամանդեայ հասակի էրոյ։

Կոչեցեալ ասէ յեգիպտոսէ՝ գայ անցանէ 'ի նազարէթ, 'ի կարծեցել հայրենիսն իւր ըստ մարմնոյն։ Զ. Զէ և զարգանայ հասակաւ՝ ըստ օրինակի մարդկան. որդի մարդոյ անսայ և իսրայէլական աղգին՝ զի ինքնակամ դիմեսցէ։

Զ. Դ՝ եկեալ աղբիւրն կենաց. քանզի զնմանէ իսկ նշանակէ սաղմոսանուագն, թէ աղբիւրն կենաց 'ի քէն է։ Զ. Որ և փրկիչն յայտ արարեալ սատմարացի կնոջն ասելով. թէ գիտեիր դու զպարգևսն ՅՍ, և ովք որ ասէդ ցքեզ տուր ընձ ըմպել. դու արդեօք խնդրեիր 'ի նմանէ, և տայր քեզ զջուրն կենդանի։

Որոյ ապա 'ի ընուլ ամացն երկոտասանից՝ եկեալ յերուսաղէմ, և ընդ վարդապետսն օրինացն քանա

'ի կիր առեալ՝ և զարմացուցեալ զամենեսին. առ 'ի կատարելոյ զմարգարէականն, թէ ահաւասիկ 'ի միտ առցէ մանուկ իմ. վերասցի և բարձրասցի և փառաւորեսցի յոյժ։

Զ 'ի թէպէտ և խոնարհեցաւ ՅԾՈՒԹԻՆ յերկնից, սակայն յերկրակեաց 'ի ներքնոցս բարձրացեալ ՀԱՆԱՅԻՆ՝ 'ի միտ առեալ։ Այլ զի թէպէտ և խոնարհուԹԷ էջ, սակայն ինքնաբուն իւրայոյ փառացն զօրուԹԷ վերացեալ. ըստ յառաջագուշակ տեսողուԹԷ մարգարէին, թէ վերասցի և բարձրասցի և փառաւորեսցի։ Այբրև զի ոչ ինչ է նա կարօտ փառաց, այլ յետ իւրովք կամաց՝ զիւր կամս կատարելոյ համԷերատար իշխանուԹԷ. ոչ եկամուտ ինչ՝ այլ բնական փառաց վերացեալ ՀԱՆԱՅԻՒՐ ԵրԿնաւոր զօրուն. ըստ այնմ որ ասէն. Հոմարձաւ ՅԾ օրհնուԹԷ, և որ մեր ՀայնիՀ փողոյ։

Իսկ փողն մի ԹԷ եղջիւր ինչ գոչիցէ, փոքոց ուռայոյ ընդ օք, թռալիր օդով փողիցն այսմամԷ. այլ ՅԾ-սաքանչաւէտեօք, զամ գոչել և լցուցանել, ԹԷ ահա ՅԾ, ահա տէր, զի և ՀԱՆԱՊԱՐՀ արասցեն կենսաբեր վարդապետուԹԷ նորա. և Դանիէլ 'ի միտ առեալ Դանիցեն, ԹԷ ահա տէր որում սպասէաք սմա. ցնծասցուք և ուրախ լիցուք 'ի փրկուԹԷան մերում։

Որ նովին ՀԱՆԱՊԱՐՀ քարոզուԹԷն բացեալ զիւրեանց կենաց յուսոյ բարեաց հանգստեան. և 'ի միտ առեալ Դանիցեն, ԹԷպէտ ընդ նմա յարքայուԹԻ վերացեալ՝ լուսեղէն յարկացն բնակուԷ բնակիչք լեալ հաւանեսցին լսել։ 'Ի միտ առնուլ՝ ոյսինքն է ՀԱՆԱՅԷՆ զնա տիեզերաց. որպէս և սաղմոսարանն ասէ, ԹԷ յիշեսցին և դարձցին առ քեզ ամ Դագք երկրի։

Այս վերանալն և բարձրանալն. զի էջ 'ի խոնարհուն խոնարհ մարմնոյն. վասն այնորիկ նմին խոնարհուԷ մարմնոյ կերպարանօք բարձրանայ իբրև զմարդ խոնարհ երևեալ. և ես առաւել քան զամ մարդիկ

հեզ և խոնարհ։ Յոյս հանդարտութիւն ցուցեալ համբերութիւն վշտաց զոր առ մարմինն։ վասն այնորիկ նովին մարմնով բարձրացեալ ի խոնարհութենից։ մարդկութիւնն վերացեալ, բարձրացեալ, և փառաւորեալ։ իբրև զմարդատեսիլ կերպարանացն զոր առ, բարձրացուցանէր։ զբարս խոնարհութիւնն օրինակեալ տպաւորէր։

Ողբոսութիւնն ի ցաւ հանէ։ և հաստատութիւնն խորհրդոյ ողբոսութեան նորոյ օրինաց։

Լ՝ուրդ՝ լուեալ ամս երեսուն զինքն յայտնելոյ ի հասակ մարմնոյն զարգացեալ՝ ըստ բնութեան ամենամարմնոյն անսայ։ նախ յառաջագոյն կարապետ առաջի արձակեալ զյովաննէս մեծն մարգարէից՝ պատրաստել նմա ճանապարհս՝ և ուղղել զշաւիղս յայտնութեան նորա։ Լ՝նսայ տալ զմկրտութիւն ապաշխարութեան։ ոչ զմկրտութիւն ապաշխարութեան լուսաւորութեան կենացն, այլ զապաշխարութիւն զսրբութեան մկրտութեան։ որպէս առ մովսիսեան դարձեալն, յորժամ ածէ կամքն նոցա երևել՝ հրամայեաց նոցա լուանալ և սրբել։ զի արժանի լիցին ածելոյն փառացն երևելոյ։

Այսպէս և յովաննէս եկեալ լուանայր զժողովուրդն ապաշխարութեամբ։ զի յորժամ ածուրդին երևեսցի, պատրաստագոյնք արժանաւորութեամբ՝ նորա վարդապետութենն զունկնդրութիւն մատուսցեն ի սիրտս գործել ճանապարհ։ ի հեզ և ի խոնարհ օրթեվանս զամենատեսն ընդունել մարթասցեն։

Լ՝ուրդ՝ եկեալ և ինքն մկրտիլ ի յովաննէ։ ձեռն արկեալ գրել կտակ յաւիտենական։ և իւրովարեամբն ինքեալ, ապրել ամենեցուն լուսաբեր և կենատու մկրտութեամբն։ հրամայեաց երկրածին մարդկան ամենայն մեղեաց՝ ածային պատկերին

փրկութեան նմանել։

Լ՚ուրդ՝ եկեալ կնքատուն առ յովհաննէս մկրտիլ՝ ի նմանէ. որոյ զահի հարեալ՝ ընդդէմ գնացեալ, թէ ինձ պարտ է ի քէն մկրտիլ։ Որոյ լուեալ պատասխանի, և առեալ հրաման համարձակ մկրտել զնա. թիւր ոչ ասէ՝ այժմ այսպէս արժան է լինել. զի կատարեսցուք զամ արդարութիւն։

Լ՚ս զինչ իցեն արդարութիւնքն. եթէ ոչ զոր հոգւովն սրբով նորուն յովհաննու հայրն զաբարիա գոչեաց. յիշեաց ասէ զերդումն՝ զոր երդումաւ աբրահամու հօր մերում, տալ մեզ առանց երկիւղի փրկութեան՝ ի թշնամեաց մերոց, պաշտել զնա ստուգութեամբ և արդարութեամբ. զի յիշեալ զուխտն իւր ընդ աբրահամու, և զերդումն ընդ սահակայ. հաստատեալ առ յակոբ զհրաման իւր, և առ իսրայէլ զուխտ իւր յաւիտենից. օրհնեալ հաւատովք հաւցին՝ զամ երկիր օրհնեալ կատարեաց զխոստմունսն։ Ամսան նորին էջ՝ ի ջուրսն. և սրբիչ և նորոգիչ մանգամանն զջուրսն կացուցանէր։

Լ՚ս վասն զի զերկիր զառաջինն՝ ի ջուրցն փարատեցուցեալ. և հրաման եառ ջրոյն պտղաբերել. և ջրոյն՝ ամ բոյսք, և գազանք և սնասունք, և թռչունք, ՝ի ջուրցն դալարութեամբ բղխեցին յերկիր։ Այսր օրինակ դալարացոյց զարգանդ ծննդականն ջուրցն մկրտութեամբ, սրբեալ ջուրքն, և մկրտել ըստ հնութեան մաշուածոյ հողեղէն նիւթոյս. որ ՝ի մեղացն էր մաշեալ և հնացեալ, և մերկացեալ՝ ի շնորհաց անտի հոգւոյն։

Լ՚ուրդ՝ միւսանգամ բացել զարգանդն անեռնոյթ հոգւոյն՝ երևելի ջրոյն՝ նորածնունդ նորափեսաւոր զարդարեալ միւսանգամ՝ ի ծննդականու թեամբ աւազանին, զգեցուցանել զամսին լուսաւոր պատմուճանաւք, որ միւսանգամ վերստին ծնանիլին։

Քանզի յիսկզբանն իսկ՝ յարարչութենէ ժամանակին՝ շրջէր հոգի ՅԱԾՈՒԹԵՆ ՚ի վերայ ջրոյն. և անտի զկազմած արարածոցս յօրինէր. ՚ի լինելութի արարածոցն հրամայէր հաստատանալ. ՚Լաև հաստատութիւն երկնի բնակութենէ հրեշտակաց հրեղինաց, որ երևի մեզ ջրեղէն, հրամայեաց հաստատանալ. ՚Լյոնօրինակ կատարեաց զուխտն զոր եդն Հարան.

ԼՆՉ ինքն ՚ի ջուրսն, սրբեաց զՀուրսն նեբբին երկրիս՝ որ պղծեալ էր մեղօք մարդկանս. ԼՈՐԴ՝ իւրոց գարշապարացն կոխելով՝ զՀուրսն սրբեաց, և սրբիչ արար. ԼԻՆչ որպէս յառաջագոյն շրջէր ՚ի վերայ ջրոյն հոգին. Նոյնօրինակ բնակէսցէ ՚ի ջուրս, և զամենեսեան ընկալցի որ ծնանին նորաւ.

ԼԻՆ ջուրքն վերինք մնացեալ՝ բնակութենէն հրեշտակաց. արդ զայս ջուրս՝ իբրև զայն ջուրսն արար. վասն զի ինքն էՀ ՚ի ջուրս. զի ամենեքեան ՚ի ջուրցն հոգւոյն նորոգեալ հրեշտակացին.

ԼԻՆ նոյն հոգի մինչև յաւիտեան՝ ՚ի ջուրցն զամենեսեան յորդեգրութի մատուցանէն. Ա՝ սան զի դրունք բացեալ ջուրքն ՚ի խոնարհ. զի ՚ի վերանալ ջրոյն՝ դրունք երկնից բացցին, և զամենեսեան վաղագ վերացուսցէ յորդեգրութի.

Ա՝ սան զի Ճշմարիտ որդին Աստուծոյ խոնարհեցաւ, և էՀ ՚ի ջուրսն մկրտութենէ. զի զխոստմունսն կատարեսցէ զՀարցն, և զաւետիսն. ՀԱՌաՀ քան զայս և թլփատութի առ յանձն. վասն զի զերկոցունց կողմանցն շնորհեսցէ շնորհս, և հատուսցէ զբարիս. զի իւրով թլփատելովն կատարեսցէ զհատատութիւն խոստմանցն որդեգրութենէ ժառանգութեան արժանաւորացն.

ԼԻՆ՚ի մկրտելն զամ մկրտեալսն կեցուսցէ. և իւրովն յանձն առեալ զմկրտութենն. և պատուական արարեալ իւրով ինքանելովն ՚ի մկրտուն. ԼԻՆ նախ անտի իսկ ՚ի միտ առեալ Ճանաչի Ճշմարիտ որդին

այ՝ բարբառով հոր իւրոյ, և իմիմանէ հոգւոյն։ Զի
անտի իսկ ի միտ առեալ Ճանաչի՝ առ ի կատարելոյ
զառաջնացութիւն հօր, թէ ահաւասիկ ի միտ
առցէ մանուկ իմ, վերացցի և բարձրացցի և փա-
ռաւորեսցի յոյժ։

Զի ամենեքեանս լուա և անեղև ոյթ շրջեալ ի
մէջ նոցա, և ապա եկեալ հասեալ ի միտս։ արդ՝
ի միտս թէս Ճանաչի ամենեքեանս։ Զիովանննէս վկայէ
և ասէ։ սա է զորմէ ասէի։ որ զկնի իմ գայր՝ առաջնի
իմ եղև։ զի նախ նա իսկ առաջին էր։ զի ի լրուն
անտի նորա մեք ամենեքեան առաք շնորհս։

Յ Ջուտն հոգւոյն սրբոյ ի նմանութիւն աղաւնւոյ։
և վկայութիւն հօր այ ի դրոշութիւն տրիտոսի։

Զ՚ս հոգին ի վերայ նորա իջեալ ի նմանութի
աղաւնւոյ։ Զսկ ընդէր ի նմանութի աղաւնւոյ
երևի հոգին սուրբ այ։ վասն զի ուսուցցէ տեսո-
ղացն, թէ ոչ այլ իւիք է հնար մատչել առ ածոր-
դին՝ թէ ոչ անմեղութիւն և սրբութիւն, յաղաւնա-
կերպ նմանութենէ անտի առեալ զկերպարանս՝
յանձինս բերիցեն։

Զ ան զի քնինչ է սրտից և ծածկագէտ, ամ
գաղանեաց յայտնիչ։ զի զամ ինչ գիտէ։ և զամ
ինչ զոր ասէ՝ կարօղ է կատարել։ և տկարանայ նմա
և ոչ ինչ։ որպէս ասաց գաբրիել առ կոյսն սուրբ,
ոչ տկարասցի առ ի յայ ամ բան։ Որ և զսրտից
մարդկան զխորհուրդս ի վեր բերեալ յանդի-
մանէ։ ցայսմ, որ ստեղծ առանձին զսիրտս՝ ի միտ
առնու զամ գործս նց, որ առ նա էին մատչելոց։

Զ ան այնորիկ հոգին սուրբ աղաւնակերպ է-
ջանէ։ զի ուսուցցէ տեսողացն՝ սրբամտելով առ
ածորդին մերձենալ, և զշնորհս բարեբարութեան
հոգւոյն ընդունել, և հօր հաճոյ լինել։ վասն այնորիկ

որդին ՝ այ էին և կատարեաց զուխտ հարցն՝ ան-
ուանելով նոցա որդի որդի ՝ այ։

Զ մին իրի եկեալ մկրտի, հաստատելով զմկրտուն
ՀԱՄ՝ որ մկրտելոց էին ՝ի նա. զի անդ իսկ զայս
աւանդելով փրկութիւն՝ ամենեցուն յայտնեալ, և ՝ի
միտ առեալ ծանիցի իսկ. և բացցէ զամենակեցոյց
Հաւատոյ թեան վարդապետութիւն իւր յայտնեալ
աշխարհի։ Որպէս և ասէր մարդարէն յերեսաց ՀՈՆ
որդւոց. մատերուք առ իս, և լուարուք զայս. ոչ
խակզբանէ ՝ի ծածուկ ինչ խօսեցայ, և ոչ ՝ի տեղւոջ
խաւարին երկրի. զի յորժամ լինէին՝ ես անդ էի. և
արդ՝ տէր տէր առաքեաց զիս և հոգի նՐ։

Յ ԵՍԱՆԵՆ զէական միաւորութիւն. յորժամ լի-
նէին՝ ես անդ էի ասէ. յայտ արարեալ զմիաբանութիւն
երրորդական զօրութիւն. թէ ՝ի հաստատելն հա-
մագործ, և ՝ի նորոգելն միաբան։

Ի՞ՐԴ՝ բացեալ երկինք. և հայր աղաղակէր. թէ
դա է որդի իմ սիրելի. և հոգին ելջեալ ՝ի նմանութի
աղաւնւոյ. զի յայտ լիցի միաբանութիւն խորհուրդ ՁՐ-
ՐՈՒԹԵՍՆ՝ գալաւեանն որդւոյ։

Ա՞ՐԴ զինչ լցէ զոր ասէն, թէ խակզբանէ խօսե-
ցայ. եթէ ոչ զառաջաւանն սրբոց մարդարէիցն.
որ ինքն իսկ ՝ի նոցանէ վասն իւր իսկ խօսեցաւ.
և խորհրդով միաբանական հօրն և ՝ի հոգւոյն՝ ե-
կեալ երևի։

Ի՞ՐԴ՝ ՝ի վախճան ժամանակացս. որ էրն խակզբա-
նէ բանն. և բանն էր առ ՀՈՆ. և ՀՈՆ էր բանն. նա
էր խակզբանէ առ ՀՈՆ. ամ ինչ նոքա եղև. առանց
նորա եղև և ոչ ինչ՝ որ ինչ եղև։ Նովա կեանք
էր. և կեանքն էր լոյս մարդկան. և լոյսն ՝ի խաւա-
րի անդ լուսաւոր էր. և խաւար նմա ոչ յաղթեց։
ՅՀզև այր մի առաքեալ յայ՝ անուն նմա յովհան-
նէս. սա եկն ՝ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լու-
սոյն. զի ամենեքին հաւատասցեն նովա։

Լ.ուդ՝ լցեալ և կատարեալ զնմ. և լցս որդւոյն
այ ի մէջ անցեալ լուսաւորել զնմ մարդ՝ որ գա-
լոց էր յաշխարհ. որում ոչ կարացեալ խաւարն հա-
մեմատել յաղթել. այլ այսու լուսով եղև աշ-
խարհ. և զնա ոչ ծանեաւ։ Լ.ուդ՝ վասն այնորիկ
իսկ եկեալ՝ զի ի միտ առցեն զլոյս նորա, և որդիք
այ լիցին։ Լ.ինն հաստատել զօրէնս և զմարգա-
րէս. զօրինականսն անցուցեալ՝ և զճշմարտութիւն
հաստատեալ։

Լ.ու զնոչ իցէ զոր ասէ՝ բանն. մի թէ բարբառ-
ոկ իցէ բախիւն լեզուի ընդ օդս. որ յառաջ քան
զասել ասողին չիցէ՝ յայտ. և կամ յետոյ հետ չմիջի.
այլ վասն այնորիկ անուանեցաւ բանն. զի որպէս
բանն ի բերան ասողին, նոյնպէս ամ հրամանք հօր
կամացն՝ էանեն ի բերանոյ որդւոյ։

Լ.ու զի գիտակ է հօր՝ և կատարիչ կամաց նր.
որպէս իսկ և ինքն ասէ. ոչ զոր գիտէ զհայր՝ եթէ
ոչ որդի. որպէս և զորդի ոչ զոր գիտէ՝ եթէ ոչ
հոգի։ Լ.ու դարձեալ՝ թէ եկի կատարել զկամս
այնորիկ՝ որ առաքեացն զիս։ Լ.ու դարձեալ՝ յո-
հանէս ասէ. զնոյն երբեք ոչ զոր կարացէ տեսանել.
բայց միածինն որ է ի ծոց հօր՝ նա պատմեաց։

Լ.ու ինքն իսկ առ հայր ասէ. եհաս ժամ, փա-
ռաւորեա զորդի քո. և եկեալ բարբառ յերկնից
ասէ փառաւորս արարի, և այլ փառաւորեցից. իբ-
րու զի ոչ թէ ի խնդրել ապաստան, և կամ կարօտ
ինչ հայրաբանն փառացն, այլ զի լուիցեն արա-
բածք և հաստատեսցին յորդին։

Այն օրինակ և որդին ի միջի կացեալ՝ զհայր
ցուցանէ աշխարհի, և զհոգին սուրբ. նոյնպէս և
հայր աղաղակէ. վասն միածնին, թէ դա է որդին
իմ միած ին՝ հաճեցուցիչ անձին իմոյ. եղիցէ զոգի
իմ ի վերայ նորա։ Որ և յայտ լեալ՝ իջանել և
հանդչել ի վերայ նորա. որպէս և որդին իսկ ասէ
զՀոգւոյն սրբոյ, թէ նա զիս փառաւորս առնէ։

Լոյս եկեալ նատարէ զկամս առաքչին իւրոյ։ որոյ և աղաղակ իսկ եղեալ ասէր։ թէ որ հաւատայ յիս՝ հաւատայ յայն որ առաքեացն զիս։ և որ տեսանէ զիս՝ զայն տեսանէ որ առաքեացն զիս։ և այսպէս զհայրական փառսն յինքեան ցուցանէ աստուածութեանն՝ յայտնի վարդապետութեան։

Լոյս յառաջընթաց կարապետն հրեշտակն առաքեալ հօր։ գայ առաջի և աղաղակէ։ թէ սա է որ դին ՝ի։ սա է գառն ՝ի։ սա է որ գայ բառնալ զմեղս աշխարհի։

Լուեալ ՝ի լերինն բարձու՝ ՝ի մեծութի զօրութեն ՝ի։ որպէս յառաջատես տեսօղ մարգարէն ասէ՝ ՝ի տեառնէ։ ՝ի վերայ լերինն բարձու լերինն սրբոյ՝ անդ ծառայեսցեն ինձ ամ՝ աղգ երկրի։

Լոյս դարձեալ՝ միւս տեսանօղն գոչէ։ թէ Ել ՝ի լերինդ բարձու՝ աւետարանիչդ սիոնի։ բարձրացո զբարբառ քո աւետարանիչդ երուսաղէմի։ Բարձրացայք։ բարձրացուցէք զբաբառ ձեր։ և մի՛ զանգիտէք։ ասա դու ցքաղաքսդ յուդայ։ ահաւասիկ տէր ՝ի՝ մեր։ ահաւասիկ տէր տէր գայ զօրութիւն։ և քաղուկն հզօր զօրութիւն։ ահաւասիկ վարձք հատուցման իւրոյ ընդ իւր։ և գործք իւրաքանչիւր առաջի նորա։ Իբրև հովիւ մի հովուէսցէ զխաշինս։ և բազկաւ իւրով ժողովէսցէ զգառինս իւր։ և ՝ի գիրկս իւր ընկալցի զնոսա։ և միսիթար լեցի յղեացն ծանրացելոց։ Ո՞՞՞

է լեալ ՅԾՈՒԹԵԱՆՆ քարոզք՝ ՚ի նոյն հրամանաց լեառն բարձուԹԵ, առանց զանգիտելոյ և երկիւղի՝ առաջի ամենեցուն անվեհեր քարոզել։

Լայսուսանիկն չէ ըստ Խրիստոսի՝ Հշանջլենաւոր չոհանայ, Ինգաւոր, և Խրգաբէ, Ղրթելովն ՚ի յովհաննէ։

Ա. ՈՐԴ՝ ԵԿԵԱԼ ՄԵԾՆ յովաննէս՝ որդի քահանայապետին զաքարիայ, անդէն իսկ աԹոռակից, և ոչ օտար ոք։ այլ անդէն ժառանգն և ընակիչն սիոնի, նորուն վակասակիր քահանայուԹԵՆ, խոյրադիր պատուէին՝ պատմուճանացն սրբուԹԵ, աւանդակիր պատուիրանացն, և ոչ եկամուտ ոք։ այլ կամարաձուն վայելչուԹԵ՝ շառաւեղն մովսէսի, և զաւակն ահարոնի, և աւետարանիչն սիոնի։ օծուԹԵՆ անդու, առեալ զպատիւ նախնեացն քահանայուԹԵ։ և բովանդակեալ զմարգարէուԹի մարգարէիցն։

Ա. ԵԼԵԱԼ յանապատ՝ ՚ի վերայ ՅԾԱԿԱՄ հրամանացն լեռնացելոցն, բարձրացուցեալ զբարբառ իւր՝ աւետարանիչն երուսաղէմի։ բարձրացուցեալ բարձրացուցանէր զբարբառ իւր։ զի ձայն բարբառոյ էր նա յանապատի։ ասէ՝ ահա ՅԾ մեր, և ահա տէր։ և սա՝ նոյն տէր իսրայէլի։

Ա. ՈՐԴ՝ ՅԱՄ շնորհք աւանդուԹԵՆ մարգարէուՀի իսրայէլական ազգին, որ կրէր աւանդապահ քահանայուԹԵՆ և աւետեացն և օծուԹԵՆ, ՚ի ձեռն զնեայ տոհմին էր յանձնեալ քահանայուԹԵՆ իսկ՝ ԹագաւորուԹԵՆ հանդերձ։

ՎԱՆԶ ՚Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ԼԵՐԼ կոչեաց տէր զՊՄովսէս ՚Ի ՄԷՋ հրոյն և ամպոյն՝ ՚Ի գլուխ սինէական լերինն։ և տեսիլ փառացն ՅՈՆ՝ ԼԵՐԼ զՀՈՒՐ վառեալ էր։ յորժամ՝ առնոյր զպատուիրանս օրինացն ՚Ի ձեռացն ՅՈ։

Մովսէս պարգևախնդիր՝ տեսանելոյն զաՃ՝ ՚ի պատասխանուցն նմա զի ասէ գթած եմ և ողորմած, անդ առնոյր զաւանդութիւն իշխանութիւն քահանայութիւն, թագաւորութիւն, և մարգարէութիւն ՚ի ձեռաց ՆՅ։ Ընդ եւ նմա զօրինակ օծութիւնն քի. զի նախ՝ առակքն լինիցին, և ապա իբրև եկեսցէ ՃշմարտութիւնՆ՝ որոյ են իսկ, և վասն որոց են։ Ընդ տայր նմա առնել զեղջիւրն օծութիւն, և զինգանոց խնկոյն։

Որ եղջիւրն օրինակ օծութիւնն քրիստոսի. և խնգանոցն զօրինակ սուրբ կուսին մարիամու ուներ. որպէս և նայն լի էր հոգւով սրբով, և հաւատով և զորութիւբ բարձրելոյն։ Իսկ եղջիւր ձիթոյն՝ զօրինակ օծմանն քի ունէր. զի որ միանգամ յօրինակին օծանին՝ անտի իսկ օծանէին։ Ուստի ամենայն իսկ օծանէր ՚ի քահանայութիւն ՆՅ, և առնոյր զքահանայութիւն թագն. ըստ օրինակի, օծանել և դնել նՅ արտախուրակա. և պաշտել զսրբութիւնՆՅ. և կարգել զՀանապազորդ հացն ՚ի սեղանն՝ որ սրբէր զօրինակ մարմնոյ ՆՅ ծորդուոյն։

Ընդ արար մովսէս զարծաթի եղջիւր օծութիւն իւրոյ. յորմէ քահանայքն, և մարգարէքն, և թագաւորքն օծանէին։ Ընդուստ կարգեալ գայր օծութիւնն մի ըստ միոջէ, ըստ հրամանի իշխանութիւն պատուի իրանին. որ կարգեալ գայր առաջնորդութիւբ յաբրահամեան զաւակին պաշտէր խորհուրդն. զի աւանդապահքն տային ցմիմանս, մինչև ՚ի յովանէս քահանայ, և մարգարէ, և մկրտիչ. և ՚ի նա հասեալ՝ իբրև ժառանգ մնացեալ։ Զի ՚ի նա հասեալ էր յառաջին նախնեացն, թագաւորացն, մարգարէիցն, և յօծելոց քահանայիցն՝ իբրև յաւանդապահ. և նա եւ զքահանայութիւնն՝ զօծութիւն, զմարգարէութիւնն, և զթագաւորութիւնն ՚ի տէր մեր յիսուս քրիստոս։

Զ։ Կատարեցաւ մարգարէութիւն յակոբայ՝ յաբել առորդիս ազգի իւրոյ, թէ մի՛ պակասեսցէ

պետութիւն իշխանութենն 'ի քէն , մինչև եկեսցէ այն՝ որոյ իւրն է իշխանութիւն և թագաւորութիւն. քանզի նա է յոյս հեթանոսաց։

Արդ՝ առաջին հարքն որ եղեն օրինակ նորա՝ յորս այ կերպարանքն նկարեալ կային . զի նոցա ամ արարածք հնազանդէին . քանզի զկերպարանս արարչին 'ի նոսա տեսանէին ։ Իսկ զմարդ հնազանդէին անխօս և անմռունչ և անչունչ արարածքն՝ մահկանացու մարդկան . եթէ ոչ զնչանս այ 'ի նոսա տեսանէին , և զկերպարանս արարչին . և այսպէս մի ըստ միոջէ վարեալ եկեալ աւանդութիւնքն մինչև ց յովաննէս . և յովաննէս ետ զաւանդ պահեստին՝ ոն իւրում։

Ա. Յայտնութիւն յովհաննու վասն յէ, ԼԷ նա է Քրիստոսն։

Արդ՝ այսուհետև տէրն ինքնին 'ի միջի կայ , և յովաննէս վկայէ , թէ չեմ էս քրիստոսն՝ այլ առաքեալ եմ առաջի նորա . այլ այր հարսն է՝ նա է փեսայ . և որ բարեկամն է փեսային՝ կայ առ նմա , և հնազանդի նմա . նա ուրախ լինի յուրախութեն նորա , և զձայնն լսէ զփեսային . իմ ուրախութիւնն լցեալ և կատարեալ . և արդ՝ նմա պարտ է աճել , և ինձ մեղմանալ։

Որ 'ի վերուստն գայ՝ 'ի վերէ քան զամ . որ 'ի յերկրէ է՝ յերկրէ ասի խօսի . որ յերկնիցն գայ՝ զոր ինչ ետես և լուաւն վկայէ . և զվկայութիւն նոր ոք ոչ ընդունի . որ ընդունի զվկայութիւն նորա ծը բարեաց և կնքեաց , թէ արդարև ճշմարիտ ած է։ Օրհ որ յայ առաքեցաւ . զբանս այ խօսի . զի ոչ եւթէ չափով տուաւ նմին հոգին։

Հայր սիրէ զորդի՝ և զամ ինչ ետ 'ի ձեռս նր . որ հաւատայ յորդի , ընդունի զկեանսն յաւիտե-

նից ։ և որ թերահաւատէ յորդոյ՝ ոչ տեսանէ
նա զկեանսն յաւիտենից ։ այլ բարկութիւն աստ ՚ի
վերայ նորա բնակեալ է ։

Զ՚հա եկեալ հրեշտակն յովհաննէս՝ պատրաստել
ճանապարհ տէն իւրում։ զի որպէս առաջին գալըս
տեսանն՝ գաբրիէլ եղև կարապետ ։ Իսկ յայտնու-
թեանս՝ սա եկեալ առաջի ասէ։ առաքեալ եմ ես ա-
ռաջի նորա ։ այլ այր հարսն է՝ նա է փեսայն ։

Իսկ ովք հարսն, կամ ովք փեսայն ։ թէ ոչ այն
զոր մարգարէն ասէ։ այսպէս ասէ տէր, խօսեցայց
զքեզ ինձ յաւիտեան ։ և խօսեցայց զքեզ ինձ
արդարութիւն, և իրաւամբք, և ողորմութիւն, և գը-
թութիւն։ և ծանիցես դու, թէ ես եմ տէր աստ քո։
և լքցես դու զհոմանիսն քո, զփայտեղէնսն, և ըզ-
քարեղէնսն ։ և ասասցես դու, երթայց դարձայց
առ այրն իմ առաջին ։

Ա՚ զի թողին մարդիկ զպաշտօն արարչին իւր-
եանց, և ամ փայտի և քարի հնազանդեցան։ և թո-
ղին զայրն զառաջին՝ որ յոչընչէ արար զնոսա, և
ընացան յամ ինչ տարրեղէն՝ որ առ ական դիպե-
ցան։ և պոռնկեցան զհետ անոտի պաշտաման արա-
րածոցս ։ Ա՚ ման այնորիկ էջ որդին այ, քակել
յերկրէ զընդունայնութիւն պոռնկութեանն ընութեան
փայտեղէն հոմանեացն ։ և դարձուցանել յերկր-
պագութիւն հօր։ և անուանել զայրն իւր՝ այր ։

Զ՚ս առաջին, վասն նախնական ինքնութեան ասէ։
որպէս և մեկնէ պօղոս առ հեթանոսս։ ասէ՝ խօսե-
ցայ զքեզ հարսնութեանն իբրև կոյս մի աբ՝ յանդի-
մանն կացուցանել քի ։ և մարգարէն ասէ, կացցէ
դշխոյ ընդաջմէ քումմէ ։ զամ տիրեղերս իբրև զմի
հարսն՝ դարձուցանել առ մի փեսայ ։

Զ՚ինպէս նշանակեալ այրն՝ որ յերկնից եկն որ-
դին այ։ որպէս և ասէն յովհաննէս։ այր հարսն է՝ նա
է փեսայ։ և մեք բարեկամք և ծառայք՝ ըստ հրա-
մանացն ընթանամք առ նմա կալ և հնազանդել։ և

ուրախ լինիմք յուրախութեամբ նորա։ և զձայնն լսեմք զիւեսային։

Այս այն է՝ զոր մարգարէն ասէ։ լուր դուստր և տես։ խոնարհեցո զունկն քո։ մոռա զժողովուրդ քո։ և զտուն հօր քոյ։ զի ցանկացաւ թագաւորն գեղոյ քում։ զի սա ինքն է տէր քո՝ երկիր պագ ցես սմա։

Այս այն է որ ասէն։ եղբօրորդեանն իմ՝ յա բիցես զարթիցես՝ մերձաւոր իմ, սիրելի իմ։ և բացցես ինձ զդուրս տանն։ և համբուրեսցէ զիս 'ի համբուրից բերանոյ իւրոյ։ զի առատ են ստինք քո քան զգինի, և հոտ իւղոց քոց քան զամ խունկս անուշութեամբ։ Իւղ արկեալ է անուն քո։ վասն այնորիկ օրիորդք սիրեցին զքեզ։ զհետ անուշութեամբ իւղոց քոց ընթացուք մեք։ տարաւ զիս արքայ 'ի սենեակ իւր։

Իւ ոչ իցէ հարան։ եթէ ոչ եկեղեցի հեթանոսաց։ կամ ոչ իցէ փեսայն՝ եթէ ոչ յն քն որդին նոյ։ որ էջ յերկնից՝ և նուճաձեաց զամ յերկրպագութիւն հօր։

Իւ զինչ իցեն առատ ստինքն, եթէ ոչ կտակարանքն նոյ։ որ արբուցանեն զամ տգէտս՝ հոգևոր կաթամբն գիտութեան։

Իւ զինչ իցէ որ ասէն։ հոտ իւղոց քոց՝ քան զամ խունկս անուշութեամբ։ և թէ՝ իւղ արկեալ է անուն քո։ զօծութիւն քրիստոսի, և զանունն յայտ արասցէ։ և համբուրելն սիրոյ նշանակ է։ զի եկեղեցի քրիստոսի, և քրիստոս որդի նոյ։

Զմա ասէլ և ինձ մեղմանալ։ որպ զժամանակն ասէ մեղմանալոյ։ զի մկրտութիւն զոր նա տայր ժողովրդեանն՝ ապաշխարութեամբ մկրտութիւն էր։

Որ 'ի վերուստ եկն ասէ 'ի վերոյ է քան զամ։ յայտ արարեալ զդալն 'ի ծոցոյ հօր առ մեզ։ Իսկ ես ասէ, յերկրէ խօսեցայ։ յերկնից առեալ զգի

տութիւն։ Որ յերկնից գայ ասէ, նա զհօրն խօսի, և զհօր գործ գործէ։ որպէս և տէրն իսկ ասէր առ հրեայսն. ես ի հայր՝ և հայր յիս. զինչ տեսա՝ նեմ թէ հայր գործէ, զնոյն և ես գործեմ։ և վասն այնորիկ ես եկի՝ զի արարից զկամս հօր իմոյ, և կատարեցից զգործս նորա։

Զ.սաց և վասն հրէիցն, թէ զվկայութիւն նորա դուք ոչ ընդունիք։ Իսկ որ ընդունի զվկայութիւն նորա՝ ծրարեաց և կնքեաց. զի անկորուստ լեցի արդարութիւնն. և երդմամբ՝ զի արդարև Աշնարիտ ՀԱՍ է. զի անշուշտ՝ և անշարժ՝ և անկորուստ լեցի արդարութիւն հաւատոցն. և երդումն կնիք, որպէս և առ աբրահամն։ Զ.ի որ եկն ի Ծոցոյն հօր, նա է տեղեակ խորհրդոց Ծնողին իւրոյ։ Զ.ի ոչ եթէ իբրև կարօտ որ էառ նա զշնորհս հոգւոյն. այլ ինքն միակամ, միաշունչ, միախորհ ընդ հօր և հոգւոյն. ինքն բաշխիչ շնորհաց հոգւոյն սրբոյ։ Զ.ի հայր սիրէ զորդի իւր՝ և ամ հաւատացեալքն հօր՝ որդւոյն է. և որ հօր՝ նոյն և որդւոյ. և որպէս հայր, նոյնպէս և որդի. և ամ շնորհք հոգւոյն՝ յորդւոյ բաշխին։ Որ հաւատայ յորդի՝ ունի զկեանսն յաւիտենից. և որ թերահաւատէ յորդւոյ՝ ոչ տեսանէ զյաւիտենական կեանսն։

Ա կայէ և յովհաննէս. սա է զորմէ ես ասէի. սա է միածին որդին նոյ. ես տեսի սուտ՝ և վկայեմ, թէ սա է որ եկն բառնալ զմեղս աշխարհի։

Ա Հայոց-Ալիանց Նարդաբէից, Ամ Հրէասոս է տէր, հաշվէ՛, և դասասոր ամենայնի։

Սա է ժառանգ այգւոյն և տէր, գայ զօրութիւբ իւրով, և բաղուկ հզօր տերութիւբ իւրով. զի բաղուկ հզօր սա է հօրն. և զտէրութիւն իւր՝ առիւր ունի. թէպէտև կամաքբ երևեցաւ խոնարհութիւբ։

Լ՝հաւատիկ վարձք հատուցմանն՝ ընդ իւր։ և ամի նա՛ է հատուցանող, և զգործս իւրաքանչիւր առաջի նորա։ ըստ այնմ, զի միտ առնու զամենայն գործս նոցա։

Իբրև հովիւ մի հովուէսցէ զխաշինս իւր։ Որ և զի մէջ իսկ անցել կենարարն ասէ, ես եմ հովիւ քաջ։ հովիւ քաջ զանձն իւր դնէ զի վերայ խաշին իւրոյ։

Լ՝ու զի բազուկս իւր ժողովէսցէ զգառինս իւր։ և զի գիրկս իւր ընկալցի զնոսա։ Որ և կենարարն եկեալ յայտ առնէր՝ առնուլ ժողովել զմանկտին զի վերայ ուծեղէն բազկացն։ և օրինակ եւ ամենեցուն, եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրև զմանուկս զայս՝ ոչ կարէք մտանել յարքայութիւն նոյ։

Կորոգել հրամայէ, և մերկանալ զհին մարդկութիւն՝ զի ձեռն մկրտութեան աւազանին։ Զի թէպէտ և կարի ոք թմբրեալ և ծանրացեալ իցէ՝ ծանրակիր մեղօքն խստութեամբ յղացեալ։ որպէս ասէ, ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն, յղացաւ զցաւս, և ծնաւ զանիրաւութիւն։

Սակայն բացեալ զդրունս ապաշխարութիւնն զի մէջ մեր եկեալ կայ կենարարն՝ աղաղակէ և ասէ։ եկայք առիս ամ վաստակեալք և աշխատեալք՝ և այք ունիք զբեռինս ծանունս, և ես հանգուցանեմ զձեզ։ առէք զլուծ իմ զի ձեզ՝ և ուսարուք յինէն, զի հեզ եմ և հանդարտ, և խոնարհ սրտիւ։ և գտջիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքր ոգի։

Իսկ եթէ ոք հարցանէ, զի իցէ որ մխիթար լինի յղեսցն ծանրացելոց։ լուիցես յեսայեայ մարգարէութենն։ Զամ՝ զի այն իցէ որ ասէ։ ո՞ չափեաց զերկինս թզաւ իւրով, և զերկիր ամ քլաւ իւրով։ զի եդ զլերինս ի կշռաւ, և բլուրս զդաշտս կշռոր դրաւ։ զի գիտաց զլմաստութիւնս ան, կամ զի եղև նմա խորհրդակից։ Որ ի հօրէ ուսաւ զվճիռ դատաստանին, նա՛ եկեալ մարդ լեալ և քարոզեալ աշխարհի։ և խառնեալ սիրով իւրով զամենեսեան

յԾՈՒԹԻՒՆն։

ԼՐ այնուհետեւ եկեալ լոյսն 'ի մէջ անցեալ՝ լու-
սաւոր առնել զամ մարդ որ գալոց է յաշխարհ,
քարոզէր և ասէր . թէ ապաշխարեցէք զի մեր-
ձեալ է արքայութիւն այ . կատարեալ են ժամա-
նակք՝ հաւատացէք յաւետարանն։

Լոյսն։ յառաջէլուրեի պէտրոսի և անդրէի . և յակո-
բայ և յովհաննու . ՈՐԾԱՓՈՐԾ նշանս և ուսանէլ էին ։

Լ՚ՐԴ՝ իբրև անցանէր առ ծովեզերբ միում,
տեսանէր զպետրոս՝ և զանդրէաս, և զյակոբոս՝ և
զյոհաննէս, և կոչէր զնոսա 'ի ձկնորսութիւն անտի.
որք անդէն իսկ վաղվաղակի թողուն զհայրն իւր-
եանց նաւաւն հանդերձ, և երթան զհետ նր։

ԼՐ զբաղումս յայլոց 'ի պէս պէս զբօսանաց
կոչեալ՝ աշակերտս երկոտասանս և առաքեալս ան-
ուանեաց . զորս ուսուցանէ ազատանալ յամ զբօսա
նաց՝ որ զհետ նորա շրջէին . արժանի եղեն ՈՐԾԱ-
գործ աւանդութիւն խորհրդոյն։

Ար այնուհետեւ մարդասէրն քրիստոս 'ի մէջ անցու-
ցեալ զամենակար բժշկարանն՝ բժշկել զամ ախտաս,
և զչարչարանս։ ԼՐ զյառաջաձայնս սրբոց մարգա-
րէիցն 'ի մէջ ունել զբանն՝ որ գոչէ, նա զհիւան-
դութիւս մեր բարձցէ . և զնոցուն բանս արդարա-
ցուցեալ՝ որպէս ասէն, թէ որ արդարացուցանէ
զբանս ծառայից իւրոց մարգարէից։

Ակնաւ այնուհետեւ և զառակսն անցուցանել .
թէ՝ ընդ ամ տեղիս 'ի ձեռն հոգւոյն ճշմարտութիւն՝
երկիր պագանել հօր . զի հայր զայնպիսի երկրպա-
գուս խնդրէ . և թէ՝ զողորմութիւն կամիմ, քան
զպատարագս։

Յուեթէ՝ ես եմ հօր որդին. զի հայր իսկ ինձ վկայէ հոգւոյն հանդերձ Աշմարտութիւն. և թէ՝ մնվսէս ձեզ յառաջագոյն իսկ գրեաց։ Յու յայ կոբ վասն իմ ասէր զյուդայէ. մի՛ պակասեսցէ իշխան յուդայ. և մի՛ պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ այն որ իւրն է թագաւորութիւն. քանզի նա է յոյս հեթանոսաց։

Յուեթէ՝ մարգարէքն ամ վասն իմ գրեցին. առ եալ յիմմէ առաջէն զգիտութիւն. և յայտ արար եալ նոցա, թէ իմ է այգին, և դուք էք մշակն. և ես եկի՝ զի ես եմ ժառանգ այգւոյն. եկի խնդրել այգոյն պտուղ զի առից. որպէս առաքեաց զիս հայր իմ, և ես եկի կատարել զկամն նորա։

Յուեթէ՝ եկի կատարել զխոստացեալ աւետիսն աբրահամու. և զի աւետեաքն կեցցեն զաւակն աբրահամեան. և զաւակն աբրահամու նոցա ծանօթ լինէր։ Իսկ սորա միանգամայն զՀշմարտագոյնսն առաջի եդեալ, թէ յառաջ քան զլինելն աբրահամու եմ ես։

Յուայնուհետև անդր 'ի վեր հայեցուցեալ. ոգի և ասէ իսկ՝ հարցանելով առ 'ի նոցանէ զմարգարէսն կանն, թէ որպէս ասէք դուք զքո՞ որդի դաւթի. զորմէ դաւիթ իսկ նշանակեաց հոգւոյն սրբով, թէ ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ. և արդ՝ զիա՞րդ ասցէ որդի դաւթի։

Զայնպէս ամ յայտնութիւնքն, և առակօք յանդիմանէ և խայտառակէ զկեղծաւորութի, և զամբարիշտութիւն, և զանօրէնութի նոցա։ Իսկ նոցա խլացելոց և կուրացելոց 'ի Աշմարտութէն նախանձեալ՝ 'ի չարութի դառնութե, կորուսանել զանձինս իւրեանց։

Իսկ նա եկեալ՝ լինէր բժիշկ մարդասիրութէն իւրով. զկոյրս լուսաւորել. զկաղս գնացուցանել. զբորոտս սրբել. փրկել զամ ըմբռնեալսն 'ի սատանայէ. և զանդամալոյծս յարուցանել. զխուլս

քանալ, և համբոյց տալ խօսել, և զմեռեալս յա-
րուցանել. և զսատանայ կոխան տայր հաւատացե-
լոց իւրոց. և խոստանայր երթալ օթեվանս պատ-
րաստել յարքայութենն երկնից. և զինքն արարեալ
օրինակ ամի. համբերել ճգնութեցն առաքինութ։

Որ դարձոյց զջուրն 'ի գինի՝ զի յայտնի լիցի
ճշմարտութիւն. թէ նոյն է որ յոչընչէ արար զջուրն
'ի բնութիւն ջրոյ. նոյն զջուրն 'ի գինի դարձոյց ոգի
և կամեցաւ։ Լու այն ինքն որ վասն մեզաց՝ ցաւս
խառնեաց. նոյն ինքն եկն զառողջութիւն բաշխել։
Լու բաղումք հաւատացին յանուն նորա, իբրև
տեսին զնա և զնշանսն զոր առնէր. այլ նա քանզի
սրտագէտ էր՝ գիտէր զամ խորհուրդս մարդկան
քանզի ծածկագէտ էր։

Պապասիրան խորհրդոյ ՊՐՈՒԹԵԱՆ ՆՈՐՈՅ ՕՐԻՆԷՍ.
ԳՐԻՈՒԹԵՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅՆ 'Ի ԺԷՌԱՊԱՐ-
ՈՒԹԵՆ ԱՆՀԱՒԱՏԷՆ։

Յետ այսորիկ տուեալ վճիռ՝ թէ ոք ոչ ծնցի
'Ի ջրոյ և 'Ի հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւն
նոյ. և ոչ Նորոգեսցի միւսանգամ. զի այս որ 'Ի
մարմնոյ ասի ծնեալ է՝ մարմին է։ Իսկ այն որ 'Ի
հոգւոյ ասի է՝ հոգի է. զի հոգին սուրբ ուր
կամի և գրկեսէ. զձայն նորա լսես այլ ոչ գիտես
ուստի գայ, կամ յո երթայ։ Զի ոչ ոք եկ յեր-
կինս՝ բայց եթէ որ էջն յերկնից որդի մարդոյ։

Լու ասացեալ վասն յառաջադիր չարչարանացն
իւրոց. թէ որպէս մովսէս կախեաց զօձն յանա-
պատին, այնպէս կախիլ պարտ է որդւոյ մարդոյ.
զի որ միանգամ հաւատասցէ 'Ի նա՝ ընկալցի ըզ-
կեանսն յաւիտենից։ Զի այնպէս սիրեաց ած
զաշխարհս՝ զի զորդին իւր միածին եդ 'Ի վերայ

նորա • զի ամ որ հաւատասցէ 'ի նա՝ մի՛ կորիցէ • այլ ընկալցի զկեանսն յաւիտենից ։ Զի ոչ առաքեաց Աստուծ զորդի իւր յաշխարհ , զի պատժեսցի աշխարհ • այլ զի փրկեսցէ նա զաշխարհ • որ հաւատայ 'ի նա՝ ոչ մատնի 'ի պատիժս դատապարտուիլ • և որ ոչ հաւատայ 'ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է , քանզի ոչ հաւատացին նորա յանուն միածնի որդւոյն աստուծոյ ։

Եւ սա է իւրան , և իւրքն զնա ոչ ընկալան • այն որ խոկղբանէ ժամանակացն եղեն երախտիքն , և խնամակալութիւնքն , և պատուիրանքն • ուսաւ և մարմնով իսկ մերժեցին զնա ։

Եւ այս իսկ են դատաստանք • զի լոյս եկն յաշխարհ • և մարդիկ սիրեցին զխաւար առաւել քան զլոյս • զի էին գործք իւրեանց չարութիւն ։ Զի ամ որ զչար գործէ՝ չար գոցէ • և ատեայ նա զլոյսն • և ոչ գայ առ լոյսն • զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա ։ Իսկ որ առնէ և գործէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն • զի յայտնի լեցի գործք նորա թէ աստուծով գործեցաւ ։

Եւ ածորդւոյն ուսուցեալ ամենեցուն զճանապարհս արդարութիւն ։ Իսկ խաւարասովոր գործոց մարդկան անօրինաց 'ի հրեից , սկսան կեղծաւորել • որ և խնդրեցին սպանանել զնա՝ մշակք այգւոյն • ոչ համարեալ արժանի զանձինս իւրեանց յաւիտենից կենացն ։ Իսկ այնպիսեացն գեհենն խոստացաւ ասելով՝ վայ վայ 'ի վերայ նոցա ։

Լողվէն ի զերկոսեան առաչելն և զերմանասան և երկոս աշակերտն • և տալ նոցա զաւետիս գալ ըստեան հոգւոյն սրբոյ ։

Իսկ քարերարի տեառն ժողովեալ զաշակերտսն երկոտասան՝ զոր և առաքեալս անուանեաց • և

դարձել՝ Եօթանասուն և երկուս. խրատել և վարժեալ զնա ՅԾուռնէ խրատիւ. և վկայ կացուցեալ՝ և ասացեալ ցնոսա, և սիրելի իւր և բարեկամ անուանեալ, թէ ձեզ ասեմ սիրելեաց իմոց, մի՛ երկնչիք յայսցանէ որ զմարմին սպանանեն, և զոգին ոչ կարեն սպանանել։

Այլ թէ՝ ես ինձ զձեզ բարեկամս գիտեմ. և զոր միանգամ ասաց ինձ Հայր՝ և ես ձեզ ցուցի։ Յայտնեալ զելսն առ'ի հօրէ, և զդարձն 'ի նոյնն ասելովն. ելի 'ի հօրէ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհս, և երթամ առ Հայր։

Տուեալ նոցա և զաւետիս հոգւոյն սրբոյ առաքելոյ 'ի հօրէ. եթէ երթամ և առաքեմ զմիխթարիչն. որ եկեալ միխիթարեսցէ զտրտմեալսդ վասն իմ։ Տես զդրդեանութիւնն. տես զմիաւորութիւնն զօրութիւնն. տես զմիական լուութեան կամակցութիւն. զի եկեալ ասէ՝ զնմ տեղին լցցէ ձեզ. և նովին ՅՀմարտութիւն առաջնորդեսցէ ձեզ. և յանդիմանեսցէ զաշխարհս՝ զի ոչ հաւատացին յիս. դատեսցի և զկարծեալ իշխան աշխարհիս այսորիկ։ ՅՀմարտեսցէ վասն իմ միանգամայն, զի 'ի հօրէ առաքի. որոյ գալուստն՝ զերթալոյն իմոյ առ Հայր, վկայէ՝ թէ նա եկեալ առաջնորդեսցէ ձեզ ամենայն ՅՀմարտութեամբ։

Ալեքսանդրիոյ պատրարքութիւնն է Վան չորքարանաց՝ մահու՝ և յարութիւն իւրոյ. գալուստս նորա 'ի լեռան Յիլիւեէոց, և նաև նորա յաղթիւն առ հայր։

Այս առնու այնուհետև զյառաջադիր զիսոր հուրդ չարչարանացն կատարել Յերուսաղէմ. վասն որոյ և բազում անգամ՝ գուշակէ, թէ մեռանելոյ է և յերիր աւուր յառնելոյ։

Լու վասն հոյր արդեօք գայցէ 'ի մահն. մի թէ պարտական է ինչ մահու. այլ որպէս մարգարէն ասէ, թէ անօրէնութի ինչ գործեաց, և ոչ գտաւ նենգութի 'ի բերան նորա. զոր և ինքն իսկ ասէր, թէ ոչ յանդիմանեսցէ զիս 'ի ձէնջ վասն մեղաց։

Իսկ ըստ օրինացն ինչ պարտական մահու. այլ ասէ՝ կատարել զօրէնս. որում առաքեալն վկայէ, թէ կատարած օրինացն քրիստոս է։

Իսկ 'ի բռնաւորացն արդեօք 'ի հարկէ մեռանիցի. այլ ասէ՝ անձամբ իսով դնեմ զանձն իմ, և ոչ ոք հանէ յինէն. անձամբ ասէ զանձն իմ դնեմ՝ զի միւսանգամ առից զնա։

Իսկ ընդէր կամիցիս զանձնդ դնել՝ անպարտաւանդ մահու. ես եմ ասէ հովիւ քաջ՝ որ 'ի վերայ խաչանց իմոց մեռանիմ։

Յորոց խաչանց արդեօք. 'ի հարթուցելոցն՝ 'ի փախուցելոցն՝ 'ի գազանակուր եղելոցն. զորոց մարգարէն յառաջագոյն ասաց. ամենեքեան իբրև ոչխարք մոլորեալք, այր 'ի ճանապարհի իւրում մոլորեցաւ. և տէր մատնեաց զնա 'ի մեղս մեր. և յայնօրէնութեէ ժողովրդեան իմոյ 'ի մահ վարեցաւ։

Ա՛ն որոյ և քահանայապետ ազգին տիրասպանեաց՝ ակամայ մարգարեացաւ, թէ լաւ է մեզ զի այր մի մեռանիցի 'ի վերայ ժողովրդեանս, և մի՛ ամենայն ազգս կորիցէ։ Այլ նա ոչ ասէր 'ի վրայ ազգին միայն, այլ զի և զամենայն որդիսն ցրուեալսն 'ի բաժանել լեզուացն՝ ժողովեսցէ 'ի մի։ Ա՛կայէ և պօղոս. յայտնեաց ձեզ զսէրն իւր 'ի մեզ. զի մինչ մեղաւորքն էաք՝ քա՛ վասն մեր մեռաւ. և թէ՝ 'ի ժամանակի 'ի վերայ ամբարշտաց մեռաւ։

Ի՛ զուրդ՝ եկեալ աշակերտացն 'ի լեռն ձիթենեաց՝ նացն. զի կատարեսցէ զբան մարգարէին որ ասէր, թէ եկեսցէ հացել տէր ձեզ իմ, և ամենայն ընդ նմա. և կացցեն ոտք նորա յաւուր յայնմիկ 'ի վերայ լերինն ձիթենեաց՝ հանդէպ երուսաղէմի։

յարևելից կուսէ։

Լու՛ի տօնական աւուրսն օրինակեաց։ գայ աշա կերտօքն հանդերձ՝ կատարել զօրէնսն։ և յայտնել զխորհուրդս հոգևորական տօնին։ և յառաջքան զչարչարանսն զիրական մարմինն իւր և զարիւնն՝ պարգևէ աշակերտացն։ Տէս զի կամաւ՝ և ոչ՝ի հարկէ չարչարեալ լինի որդին նայ՝ որ յառաջքան զչարչարիլն ճաշակեալ լինի։

Յետ այսորիկ աղօթս առնել առ հայր՝ խորհրդիւ՝ի լերինն։ ոչ վասն իւր ինչ զանգիտելոյ։ այլ զի ցուցցէ թէ միակամ ընդ հօր՝ զառաջի եդեալսն գործիցէ։

Վասն որոյ բազումանգամ ասացեալ յառաջագոյն՝ թէ ոչ յանձնէ ինչ խօսիմ։ և ոչ յանձնէ ինչ գործեմ։ այլ հայրն որ յիս է բնակեալ՝ նա գործէ զգործս։ մանաւանդ ընու զմարգարէական։ փոխանակ սիրոյ իմոյ մանէին զիս՝ և ես յաղօթս կայի։ և յայտ արարեալ աշակերտացն՝ զմիակամութիւն հօր։

Լու ապա իջանէ՝ի լեռնէն։ փութացեալ վասն անհաւատիցն դնել զանձն։ մանաւանդ յորժամ՝ի տօնն եկելոց հեթանոսացն։ աղաչել զաշակերտսն երթալ ընդ նոսա առ յիսուս։

Որով կատարի և մարգարէականն։ այսպէս ասէ տէր ամենակալ։ յաւուր յայնմիկ բուռն հարցեն զոր տան յամ ազգաց զդրօշակն առն հրէի և ասասցեն։ երթիցուք մեք ընդ քեզ։ զի լուաք՝ թէ ճշ՝ ընդ ձեզ է։ և յի՛ լուեալ ասէ։ եհաս ժամ։ զի փառաւորեսցի որդի մարդոյ։ տէս զի զչարչարանսն փառս կոչէ։

Պատանուելին զերթալսն զնա. զուշակուելի թա-
նացն արտաքուելի ի յեռա առաւելոց. գալոստան չի
ի յառաջագիտի աշխարհէս։

Լ. ուրդ՝ Զմարիա աշակերտացն երբեմն ժողով-
եալ առ Զմարիա վարդապետն յա՛ք՝ տէրն մեր,
և փրկիչն, և բարեբարն, և որդին այ, և օծեալն.
զորս հարցանէր ցնոսա, թէ զո՞ ասէք ասեն մար-
դիկս զորդւոյ մարդոյ՝ թէ ի՞նչ. զորոց տուէալ
պատասխանի։

Դուք զո՞ ասէք թէ ի՞նչ եմ. որոց ա-
ռաջինն էր պետրոս, ասէ՝ թէ դու ես որդի այ
կենդանւոյ. վա՛ որդ և զերանութեան ընկալաւ. ասէ
երանի է քեզ պետրոս՝ որդի յոնանայ, զի ոչ
յերկրէ առհմանկցաց քոց՝ ի մարմնոյ և յարենէ
ազգի քոյ՝ ի մարդկանէ առեր զայդ գիտութիւն.
այլ հայր ի յերկնից ես ի սիրտ քո, և յայտնեաց
քեզ։ Դարարար զնա վերհասատատութեան ամենայն
եկեղեցեաց։

Իսկ եղեն հիմունք առաքելոցն. և առին շնորհս
քահանայութեան՝ մարդարէութեան՝ և առաքելութեան
երկնաւոր խորհրդոցն գիտութեան. որ վարեր գայր
աբրահամեան զաւակին. զոր ես ցտէր ժառան-
գութեան աւանդապահն յովհաննէս։

Լ. ուրն ես առաքելոցն, և զփականս արքայութե-
ի ձեռս նոցա. զի ինքն իսկ ասծորդին էր դուռն
մտողացն. վասն որոյ մարգարէն ասէ՝ այս դուռն
տէրն է՝ և արդարք մտանեն ընդ սա։

Լ. ուրդ՝ ես յովհաննէս զքահանայութիւնն՝ և զօ-
ծութիւն, և զմարգարէութիւն, և զլծաւորութիւն
ցփրկիչն մեր քա՛. և քա՛ ես առաքելոցն. և առա-
քեալքն ես տուն մանկանացն եկեղեցւոյ համարձա-
կութիւն։

Զարցանելով զտէրն 'ի Հիթաստանաց լերինն. յորժամ վասն քակելոյ գեղեցիկ տաճարին վՀիւ եւ. ասա մեզ ասեն, երբ լինիցի այդ, և զինչ նշան իցէ քոյոյ գալստեանն՝ և վախճանի աշխարհիս։

Իսկ նա թէպէտ և հրաժարէր. թէ վասն աւուրն այնորիկ՝ ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք, և ոչ որդի, բայց միայն հայր։ Այս յառաքելագործ մատենին, առակաւ մեկնէ. ոչ է ձեզ գործ ասէ քննել զժամն և զժամանակս՝ զոր հայր եդ յիւրում իշխանութեան։ Իսկ ո՞ այլ ոք իցէ իշխանութիւն հօր՝ եթէ ոչ ինքն որդի. սակայն առեալ մանրապատում նշանօք, վասն ահաւոր և ամպախառնաց գալստեանն իւրոյ՝ աշակերտացն ուսուցանէր։

Այս զի գիտակ էր որդի, ոչ միայն աւուրն՝ այլ և ժամուն և կերպարանաց իւրոյ գալստեանն. և ոչ իւիք անտեղեակ. բայց վասն թերահաւատ լսողացն՝ ըստ ժամանակի և զիմանելոյ խօսէր. այլ թէպէտ խառնագատում չարեաց վասն հարցողաց զօրն եէմի, և զհամաշխարհական կատարածն, ոչ ինչ դժուարագոյն է հասանել 'ի վերայ. եթէ կամիցի ոք հաւատաւ քննել զիւրաքանչիւր ընտրելոյ։

Այս արդ՝ առեալ պայման մեծամեծ նեղութեան, և սուտ քրիստոսացն, և սուտ մարգարէիցն յարուցելոց, և զնեաին. զնոցին մոլորեցուցիչ նշանագործութիւնն Հաւէ։ Ա՝ ասն որոյ և առաքեալքն նշանակեցին, թէ յետին ժամանակս այնպիսիքն յառնելոց են։

Այլ վասն յանկարծակի և երագահաս գալստեանն իւրոյ նշանակէ, հանդերձ օրինակօքն տուէ լով նոյեմ և զոլտաւ. զոր և պօղոս՝ յայսն թօքաւփեալ ասէ։ Ա՝ աղվաղակի ասէ յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի. և լուսին ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք յերկնից թօքաւփեսցին. և զօրութիւնք երկնից շարժեսցին։ Այս ապա երևեսցի նշան 'ի վերուստ յերկնից. խաչն

փայլեցէ, և լնուցու զնմ երկիր լոյս նր։ յորժամ կրկին զեւբ գալուստն այսրէն նշանակէ՝ առնել'ի հատուցմունս իւր՝ 'ի ժողովուրդս ամ յանդիմանութեան։ յազգս ազանց՝ դատել զամ ազգս հրով բարկութեբ և դատաստանաբ։ զամ դիտութեն էտ և յայտնեաց իւրոց առաքելոցն, և հաւատացեալ աշակերտացն, և սիրելի բարեկամացն։

Լամաւոր հարչաբանէն հրիտոսի, և քրիստոսի խաչելութիւն նորա։

Ապ՝ եկեալ'ի մէջ ժողովրդեանն ուշ առնելով զյանդիմանաւոր և զհրապարակախօս վարդապետութեն իւր։ թէ ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի, և ամ ժամ ուսուցի ժողովրդեանն'ի տաճարի անդ, ուր ամ հրեայք ժողովեալ էին։ և'ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ։

Որ և աղաղակ իսկ եդեալ ասէր։ որ հաւատայ յիս՝ հաւատայ յայն որ առաքեացն զիս։ և որ տեսանէ զիս՝ զայն տեսանէ որ առաքեացն զիս։ և այնպէս վկայութիւն եդեալ ճշմարտութեբ և ուխտեալ, երթայ այնուհետև անկանել'ի ձեռս ապստամբողացն։

Օ'ի որք'ի լուսաւոր վարդապետութենն թիկունս դարձուցեալ մոլորեցան։ թերևս'ի շոշափել ձեռաց չարչարանօքն զկենդանարարն, սփածփեսցին և զդատաստանն մոլորականքն։

Քանզի քահանայիցն և օրէնսուսցց վարդապետացն մատնեցաւ՝ առ'ի յուշ առնելոյ նոցա օրինօքն զյառաջապատում չարչարանաց իւրոց։ և նոցա առեալ դատեցան զդատաւորն ամենայնի։ ըստ ամ գրեալոցն վասն նորա։

Որպէս և պօղոս վկայէ յանտիոք պիսիդեայ վբ նորա։ եթէ բնակեալքն յերուսաղէմ, անծանօթ

եղեն վասն նորա։ և ըստ բարբառոյ մարգարէիցն որ զնմա շաբաթս ընթեռնուին՝ դատեալ կատարեցին։ և ոչ մի ինչ պատճառս գտեալ՝ խնդրեցին 'ի պիղատոսէ սպանանել զնա։ և իբրև առեալ՝ ըստ կեանսն յանդիման իւրեանց կախեցին զփայտէն։ այն՝ վասն որոյ յառաջագոյն 'ի տէր նշանակեալ առ 'ի յօրինացն, թէ պարտ էր բարձրանալ որդւոյ մարդոյ։

Եւ անդ այնուհետև 'ի ժամուն յայնմիկ լցեալ կատարի ասացեալն բան առ յոր։ թէ որ տայ հրամանն արեգականն՝ և ոչ ծագէ, և թաքուցանէ զաշխարհատարած զճառագայթս իւր։ և որ ինքէ զերաքանչիւր փայլունս աստեղաց։

Եւ 'ի վեց ժամէ աւուրն ասէ աւետարանագիրն, թէ խաւար կալաւ զերկիր մինչև ցինն ժամն։ 'ի կատարելոյ զամենայնի մարգարէութիւն, թէ եղեցի յաւուրն յայնմիկ ասէ տէր, մոցէ արեգակն 'ի մէջօրէի, և խաւարեսցի յերկրի լոյս 'ի տուէ։

Հանգոյն նմա և զաքարիա։ թէ եղեցի յաւուրն յայնմիկ ոչ եղեցի լոյս և ցուրտ՝ և պարզ եղեցի օր մի։ և օրն այն յայտնի ՝ն։ ոչ տիւ լեցէ և ոչ գիշեր։ և ընդ երեկս եղեցի լոյս։

Եւ զինչ լեցէ թէ օրն այն յայտնի ՝ն։ էթէ ոչ յառաջագոյն կատարեալ մարգարէութիւնքն ասէ՝ թէ օր ՝ն։ որոյ և ժամադրութիւն յաստեղն կայր։ Որպէս և դանիէլ 'ի հրեշտակէն տեղեկացեալ գրոյ։ թէ յետ վեթասուն և երկու եօթներորդացն ապանցի օծեալն։

Իսկ յայտնի ՝ն՝ զնշանաւորն ասէ, զոր արեգակամէն ցուցեալ։ որպէս խսկզբանցն 'ի լինելոցն հաստատեաց զլուսաւորսն, թէ եղեցին 'ի նշանս։

Զ ասն որոյ իւր իսկ յերկարեալ զհրաժարելն հանդերձ խաւարադիր նշանաւն։ զի հայեսցեն և տեսցեն զոր խոցեցինն։ Իսկ նոքա ևս քան զևս նը սեմոցեալք, և հասեալք 'ի յատակս մոլորուն՝ իբրև

շունչ համբացեալք խոստովանական բարբառոյն։

Եւ նորա կատարեալ զամ. որպէս և աւետարանագիրն ասէ. յետ այսորիկ գիտաց յն, թէ ամ ինչ կատարեալ է, ասէ ծարաւի եմ. զի լցցէ ըզգիրն՝ այսպանութեամբ բաժակաւն, թէ քացախ ընդ լեղոյ խառնեալ մատուցին. վասն որոյ նշանակեաց, թէ ամ ինչ կատարեալ է։ Եւ ընդ լցեալ և մարգարէականն, թէ կատարած ինքն արասցէ. վկայէ և պօղոս, թէ իբրև կատարեցին զամ զգրեալսն վասն նորա, իջուցեալ զդին եդին 'ի գերեզմանի։

Եւ զինն ժամուն գոչեաց 'ի ձայն մեծ յն և ասէ. էլի էլի լամասաբաքթանի. այսինքն է, ած ած իմ ընդէր թողեր զիս։ Տեսանեն զի հրաժարեալն անսովակալութիւն վարդապետութեան գործէ. որով և զաւազանն խաչակից՝ և զհարիւրապետն, և բազում և այլս աշակերտեալս. քանզի կամաք եկեալ 'ի կատարումն, և ոչ 'ի բռնութեամբ ըմբռնեալ ամենաղօրն։

Վասն որոյ Եսայի իսկ գոչեաց 'ի ձայն մեծ. զի լուիցէ զասացեալս մարգարէին, թէ արեգակն և լուսինն խաւարեսցին. և աստեղք ծածկեսցեն զլոյս իւրեանց. և տէր 'ի սիոնէ գոչեսցէ, և յերուսաղէմէ տացէ զձայն իւր։

Եւ՝ ոմն ի նոցէ 'ի մարդկանէ որ 'ի տապնապել հոգւոյն յորժամ մօտ 'ի սպառելն ի նոցէ՝ զաղաղակ տացէ՝ կամ գոչեսցէ. այլ բերանակապ և անբան ևս եղեալ յառաջ քան զսպանանելն։

Իսկ հաստատին հոգւոց քո՝ կամայական սիրովն եկեալ 'ի մահ, հանդերձ ահաւոր նշանօքն տուեալով. և հաստատեալ՝ թէ համակամ և համագործ է ընդ նոսա։ Եւ յայտ արարեալ զհաւատսն մահն իւր վասն աշխարհի, բարբառելով զմարգարէականն, թէ ած իմ ած իմ ընդէր թողեր զիս. և եթէ 'ի ձեռս քո դնեմ զհոգի իմ՝

թաղէն ՝է՝ ի գերեզմանէ, և փառաւոր յարութիւն նը։

Այս մի՝ երկրեան ինչ վասն փութանակի և լուսաւորագոյն յարութեն ի նենգաւորացն համարիցի։ Այս ինքուցեալ՝ ի փայտէ՝ եդին ՝ի գերեզմանի։ զորմէ ինքն իսկ կանխեաց գուշակեաց օրինակելով ըստ մարգարէին։ որպէս յունանն եղև ՝ի փոր ձկանն զերիս ամիս և զերիս գիշերս, նոյնպէս և լինելոց է որդի մարդոյ ՝ի սիրտ երկրի։

Որով լցաւ տեսողութիւն եսայեայ։ ահաւասիկ դնեմ ՝ի հիմունս սիոնի վէմ պատուական։ Հանգոյն նմա և հոգեպատում երգողին, թէ ՝ի հողմանհու ինքուցին զիս։ որով և պօղոս վկայէ, թէ մեռաւ ըստ գրոց՝ և թաղեցաւ։

Որոց հմուտ և տեղեկագոյն եղեալ ասացելոցն, և պատմեալ դատաւորին զասացեալսն քի, թէ յետ բորդ աւուր յառնելոց եմ։ Այս առին դաս մի զենուորայ՝ զի անքուն ակամբ պատրաստագոյնս կայցեն ՝ի գիշերապահս զգուշութիւն։

Իսկ տէրն ըստ նկատելոյն իւրոյ՝ յարուցեալ յաւուրն երրորդի։ զի որպէս ՝ի մահն կամաք հօր՝ նոյնպէս և ՝ի փառս յարուցեն։ զի լցցին ասացեալքն մարգարէին, թէ յետ երկուց աւուրց յաւուրն երրորդի յարիցուք և կացցուք առաջի նորա, և ըստ հետ երթիցուք ճանաչել զտէր, և իբրև զառաւօտ պատրաստական գոցուք զնա։ որով լուծեալ է զերկուսն մահու։ Քանզի ոչ իսկ էր հնար ըմբռնիլ նմա ՝ի նմանէ։ որ չէր վաճառել ՝ի մեղաց։ զի թէպէտ և վերաւորեցաւ՝ և համարեցաւ ՝ի ննջեցեալս ՝ի գերեզմանս՝ առ՝ի բառնալոյ զմեղս։ և բժշկելոյ զարբարածս իւր առանց օգնականի՝ և ՝ի մեռեալս ազատ։

Քանզի միայն և անծառայական անձամբն ՝ի մեղաց՝ սպան զզօրացեալ մահն աշխարհակալ և

եհատ զնամ արտօսր յիմ երեսաց։ Ա՝ման այնորիկ և ասացեալն կատարէր. ոչ Թողցես զանձն իմ 'ի դժոխս. և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապա-կանութիւն. որ և ասէր իսկ, Ես եմ հովիւն քաջ՝ և վասն խաչանց իմոց դնեմ զանձն իմ։

Լ՝ուսել այնուհետև յերկրէ հովիւն հօտից բա-նաւոր ոչխարաց. և կատարել զմարգարէական բար-բառն, թէ որ ելհան յերկրէ զհովիւն հօտից. զոր և առաքեալն Թարգմանէ, թէ ելհան 'ի մեռելոց զմ հովիւն հօտից զմեծն արեամբ յաւիտենական ուխ-տին՝ զտէր մեր յ՝ Քս։

Լ՝ուսել քանզի բաղում անգամ աւանդեալ 'ի լսել-լիս օրինակեաց զչարչարանն, և զերրորդ աւուրն զյարութիւն. ոչ պարծանօք՝ և ոչ սպառնալով, այլ զնի քաղցրութեամբ վարդապետութիւն՝ զվրիպեալսն 'ի հաւատոցն 'ի ճշմարտութիւն ածցէ՝ յառաջագոյն ժամադիր առնէ առ յարութիւն։

Զ՝ի որոց եկեալ առ 'ի կուսէն ծանուցել, թեր-ևս յորժամ առ 'ի գերեզմանէ գայցէ, դիմեսցեն անդանել յարքայութիւնն։ Զ՝անզի առ 'ի կեալ կենդանիսն՝ եկն կենդանարարն. և նոքա փոխանակ կենացն՝ մահու նմա երևեցան յուսահատութիւն։

Ա՝ՀԵռաւ ապա վասն մեռելոց. զի յառնէ զո-րութիւն իւրով՝ և օրինակ լինցի. վասն որոյ և գի-շերի իսկ արարեալ զլուսաւոր յարութիւն, զի պա-հարկելոցն և գուշակելոցն ծանուսցէ զշճմարտուն իւր յիրացն կատարելոց։

Որոյ Թանձրագոյն իսկ և ահագին արարեալ զարհաւիրան. շարժմամբ երկրին, և վիմօքն պատա-ռելովք, և գերեզմանօքն բացելովք, և մեռելովքն յարուցելովք։ Որով և կատարէր բան մարգարէ-ին, Թէ լերինքն շարժեցան 'ի նմանէ. և երկիր խախտեցաւ յերեսաց նորա. և վէմք խորտակե-ցան. որով և խռովեալ պահապանացն՝ և եղեալ հանգոյն մեռելոց։

Իսկ կենդանին յարուցեալ՝ և հրեշտակացն վը
կայութիւն հանդերձ՝ ծանօթս տայ , որոց եկեալ
սպասէին . որպէս և նշանակեաց մարգարէն . քաղցր
է տէր որոց սպասեն նմա յաւուր նեղութեան , և
ճանաչէ զերկիւղածս իւր : Զանազի յաւաջագոյն
իսկ հրաւիրեաց յանկալութիւն լուսաբեր յարու-
թեանն . որով եկեալ 'ի վախճան և բարբառ մար-
գարէին , թէ վասն այնորիկ սպասեա ինձ ասէ տէր՝
յաւուր յարութեան իմոյ 'ի վկայութիւն :

Դ. Իսկեալ այնուհետև պահապանացն 'ի քաղաքն .
և այսպէս հոչակաւոր և աղուական արարեալ զծա-
գործ յարութիւն , մինչև անդէն գիշերայն 'ի գե-
րեզմանէն ընթացեալ եկելոց կանանցն՝ աւետարա-
նել աշակերտացն : Հեսեալ սքանչելիսն նշանպէս և
պահապանացն . և սրտաբեկ ոգեսպառ 'ի քաղաքն
անկեալ՝ պատմելով քահանայիցն . և աշակերտելոցն
եղելոց , մանաւանդ ամբոխելոցն նեղելոց և դըրդ-
ռէեցելոցն՝ 'ի քաղաքն երևելով բազմաց :

Որով եկեալ 'ի վախճան և խոստացեալ բան մար-
գարէին , թէ բացից զգերեզմանսն ձեր ասէ տէր ,
և հանից զձեզ 'ի գերեզմանաց ձերոց : Դարձեալ՝
եսայի ասէ . յարիցեն մեռեալք և կանգնեսցին
որ իցեն 'ի գերեզմանս . զի ցօղդ որ 'ի քէն է՝ բժըշ
կութիւն է նոցա . Թերևս վասն կենդանարար ար-
եանն քրիստոսի նշանակեաց , որ 'ի վերայ խաչին
հեղաւ զամենեքումբք :

Զ. Զի յայտ արասցէ՝ թէ անդ մարգարէացաւ ,
գնովիմբ ած և 'ի դէմս աշակերտացն . գնա ժողո-
վուրդ իմ , մուտ 'ի շտեմարանս քո . փակեա զդուրս
քո , և թաքիր առ ժամանակ մի :

Իսկ կամակոր ազգին խաչահանուՀացն , խլացե-
լոցն և կուրացելոցն 'ի Հչմարտութենէն՝ ոչ ինչ օ-
գուտ գործեաց . ոչ պատմութիւն կենդանեացն , և
ոչ երևումն մեռելոցն , և ոչ ահաւորութիւն նշանացն

ՇԾ-այաղթ յարութենն։ Զանգի վասն նց իսկ ա-
ռակեաց սմենագէտն՝ զլենելոցն իրս՝ սակս մեծ-
տանն Թեոդորեալ. թէ մովսէսի և մարգարէիցն
ոչ լուիցեն. ապա թէ և 'ի մեռելոց ոք երթայ առ
նոսա՝ ոչ լսեն։

Որոց 'ի դէպ ելանէ և բարբառ մարգարէին,
թէ յաւուրն յայնմիկ առից 'ի վերայ ձեր առակ.
և ողբասցեն ողբս ձայնիւ և ասասցեն, թէ թշուա-
ռութիւն թշուառացաք։ Զոր և առեալ իսկ ազգա-
կանին իւրեանց պօղոսի՝ ասէ. ողբալով ասեմ զթշ-
նամեաց խաչին քրիստոսի. որոց կատարածն կորուստ է։

Յրեւուն չրիսոսի աշակերտացն Խրոց դրօշն գաղէ
ըստ 'ի վերնատունն։

Զրթայ այնուհետև քան ընդ երեկս աւուրն մի-
աշաբաթուն. երևեալ աշակերտացն դրօքն փակե-
լովք՝ ասէ աւետարանագիրն, և տուեալ զկեն-
դանարար ողջոյնն. և քաղցրամ ուրախութիւն ա-
շակերտացն արարեալ։

Զրդ՝ կատարէր նուազ սաղմոսարանին, թէ
տէր ամբ մեր երևեցաւ մեզ, արարէք տօնս ուրա-
խութեամբ կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ։ Զրս
զինչ իցեն անկիւնք սեղանոյն՝ եթէ ոչ զխաչն նշա-
նակէ. որ և անկիւնս իսկ ցուցանէ չորս։

Զ'ի ընդ երկիր ցցեալ՝ զն ցուցանէ դնել զտն
գարշապարս յերկրի. զն 'ի վերայ վերի հաստատուն
շինեսցէ՝ դիցէ զբարձրութիւն հիմանց եկեղեցւոյ.
որպէս և մարգարէն գուշակեաց, թէ 'ի վերայ վե-
մին կացցէ զնս, զն անշարժ առնիցէ։

Զսկ զբուն անկիւնն կատարն 'ի վեր ուղղեալ.
զն այն անկիւնն 'ի վերկոյս ուղղեալ է, իբրև
կշռաւոր սահմանի զբնութիւն այնորիկ, որ 'ի վերայ
նորա քաղաքացաւ՝ 'ի վերկոյս հաստանիցէ. և անդր

հայեցուցեալ տեսողացն 'ի հայրն 'ի գլուխն քի՝ և բնութիւն ցուցանիցէ։

Իսկ աջ անկիւնն՝ ցուցանէ զզօրութի աջ բազկին. աջոյն զուրախութի զուարթութե արդարոցն, պարգևատուն պատրաստութե պսակացն ցուցանէ։

Իսկ ահեակ անկիւնն՝ զտանջանսն նշմարեցուցանէ զմեղաւորացն։ Պատանի զի ունի սեղանն չորս անկիւնս, որ է խաչն. և յիրաւի սեղան, զի եղև վերինկալ տերունական մարմնոյն՝ ճշմարիտ պատարագին որ մատեաւ հօր։

Յիրաւի չորս անկիւնս ասէ, զի ուղղեսցի ընդ չորս անկիւնս ամ երկրի։ Եւ զամ տիեզերս ուրախ առնել յայսմ սեղանոյ, զերկնաւորսն և զերկրաւորսն, և զանդարամետականսն, և զՏիմացեալսն՝ որ են առաքելքն՝ և մարգարէքն, և զերկնաւոր հրեշտակսն՝ զզօրս հոգեղէնս. որոց կարի իսկ ուրախութի եղև, և լենի ընդ կարծր կենացն. և մարդիկ իսկ երկրաւորք՝ որ կեցին և դարձան։ Եւ դուք արդ կամիք կեալ, և այցելութիւն քի, և սան դարամետական ննջեցեալքն. զորս և փրկեաց զնա գալստեամբն իւր։ 'Ի խաչն իւր կանգնական՝ ըզյաղթականն ցուցանէ. որ 'ի վեր անկիւնն զյաղթութիւնն ցուցանէ։

Իսկ յայսմ սեղանոյ վայելեցին նախ առաքելքն. վասն որոյ տեսին զյարութի Նորա՝ և ցնծացան. և լցեալ կատարեցաւ այն որ ասէ. արարէք տօնս ուրախութե կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ. անդ կատարէր և նուագ սաղմոսարանին, տէր ամ մեր երևեցաւ մեզ՝ արարէք տօնս ուրախութե. որոյ ցուցեալ զնշանս չարչարանաց յարութելոյն. որում և պօղոս վկայէ. այսուհետև ոչ մեռանի՝ և մահ նմա ոչ ևս տիրէ։

Եւ քանզի աբանչելագործ է, և անհաս 'ի քննողաց, և ամանչնարից հնարաւոր. զի որպէս յառաջքան զչարչարին պարգևեաց զկենդանարար մարմին և զարիւն իւր աշակերտացն, առ 'ի ցոյցս թէ

ինքնակամ չարչարի։ Նոյնպէս և յետ յարութեան ցուցանէ յանձին զնչան բեւեռացն։ Յայտ արարեալ թէ չէն բաւական վէրքն արգելուլ՝ի գերեզմանի զբժիշկն վերաւորաց։

Այնպէս և Ճաշակէն ընդ աշակերտան՝ի նոր արքայութեան, զի յայտ արասցէ՝ թէ որ յանկարօտ և անՃաշակ արքայութեան Ճաշակել գիտէ։ Նոյնպէս և յառաջ քան զչարչարանսն՝ի քաղցական և՝ի դարմանաւոր աշխարհիս, լի և անկարօտ ամենակեցոյցն շրջէր։

Զ. Յլ զոր օրինակ՝ անդ վասն հաստատելոյ աշակերտացն Ճաշակեաց։ Նոյնպէս և աստ՝ առ՝ի հաւատարիմ առնելոյ աշխարհի քաղցեաւ։ Այս թէ արդարև իսկական որդին ՝ի՝ եղեալ ըստ ժամանակին և որդի մարդոյ՝ զի կեցուսցէ զաշխարհ։ վասն որոյ և կանխասաց եղեալ մարգարէին ասէ։ Ճծն յաւիտենական, ՝ի՝ Ճծ որ հաստատեաց զԴաւ Երկրի։ ոչ քաղցիցէ և ոչ վաստակեսցի, և ոչ գոյ քննութիւն իմաստութեան նորա։

Այրևի և կղեոպանց ումեմն՝ի Ճանապարհին էմաուսայ։ և առաջի եդեալ նոցա զաւանդսն մարգարէականս՝ որ վասն նորա վկայեալ։

Այրեուն ՝ի՝ աշակերտաց Իւրոց ասա տիբերիական ծովն։ և հանդիպեալ նորա յերիքնոս ասա հայր։

Յետ այսորիկ երևեր աշակերտացն առ տիբերիական ծովուն։ և արարեալ նշանս առ՝ի հաստատելոյ զնոսա։ և յայտ արարեալ նոցա՝ եթէ ոչ սակաւ ինչ կասեցուցեալ գերեզմանին զՃծագործ զօրութիւն։ այլ որպէս առ ծննդեամբն, և յառաջ քան զչարչարանսն, և՝ի չարչարանսն՝ նովին հզօր զօրութիւն և յետ յարութեան։ որում և վկայէ խակ երանելին պօղոս։ յա՝ քա՝, երեկ՝ և այսօր՝ նոյն

և յաւիտեանս յաւիտենից։

Եպս յիշեցուցանէ աշակերտացն, և վկայելոցն հաստատութիւն և ասէ. այս բանք են զոր խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզն էի, թէ պարտ է լնուլ ամ գրելոցն յօրէնսն Մովսէսի՝ և 'ի մարգարէսն և 'ի սաղմոսս վասն իմ. և փչեաց 'ի նոսա յա՛ և ասէ, առէք զՀոգի սո՛ւրբ։ Յայնժամ եբաց զմիտս նոցա՝ իմանալ զգիրս, և ասէ ցնոսա. թէ այսպէս պարտ էր չարչարիլ քրիստոսի՝ և մտանել 'ի փառս, և յառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի։

Յաւ իբրև կատարեաց զուխտադրութիւն այ վա՛ հրէական ազգին. զորոց և ամբաստանէալ յառաջագոյն ասելովն, իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա՝ մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ՝ չէ՛ք պատճառ վասն մեղաց իւրեանց. զի տեսին զգործս իմ՝ զոր այլոք ոչ գործեաց. և ատեցին զիս։ և զՀայր իմ։

Դարձուցանէ այնուհետև զլուսաւոր վարդապետութիւն իւր 'ի հեթանոսս. որով ածեալ 'ի կատարումն զառաջնապատում պատգամն Եսայեայ, թէ Ետու զքեզ յուխտ ազգին և 'ի լոյս հեթանոսաց՝ լինել փրկութիւն մինչև 'ի ծագս երկրի։

Յաւ Եհան զաշակերտսն 'ի լեառն Ձիթենեաց. և հաստատեալ միաւորական ճշմարտութիւնն, ասելովն գնացէք՝ այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս. և մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյ սրբոյ։

Յաւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա. և ընդ օրհնելն վերացաւ յերկինս, ասէ աւետարանագիրն. զի կատարեսցի երգ սաղմոսարանին, թէ Համբարձաւ ած՝ օրհնութեամբ։ Որոց հրաման տուեալ, թէ նստարուք յերուսաղէմ, և էս առաքելոցդ զաւետիս հօր իմոյ 'ի ձեզ. որով եկեալ 'ի վախճան ամենական բարբառն, թէ որ շինե-

յերկինս զհամբառնալ իւր, և զաւետիս իւր յերկիր հաստատէ։

Հանբարձումն տրիսագոսի յերկինս, և գալուստ հոգւոյն տրեալ ի դասս առաքելոց։

Լոյն արկեալ մեզ այսուհետև ի վախճան ասացելոցս, ճառս ի մեջ առնուլ զքրիստոսապատում աւետեացն խոստացելոց՝ վասն միութեան աղբերս հոգւոյն սրբոյ։ Անաւանդ զի առնա թերևս ունկնիցիմք զդիւրահասոյցն քաջալերիչ զերանելին զուկաս, որ իրագէտ և միջամուխ էր քրիստոսագործ իրացն կատարելոց. վասն որոյ և բարձրապատում իսկ հնչեցուցանէ իսկզբանն տիեզերախօս աւետարանին ասելովն, թէ կամեցեալ ինձ՝ որ իսկզբանէ զհետ երթեալ էի ամ ճշմարտութիւն՝ կարգաւ գրել քեզ քաջդ թէոփիլէ. զի ծանիցես զբանիցն՝ որոց աշակերտեցար ճշմարտութեան։

Լոյս քանզի համառօտ բանիւք առ ի կատարած աւետարանին իւրոյ զերկնաչուս ճանապարհին քի նշանակեաց՝ առնու դարձեալ յառաքելանշան յերկրորդ մատենին զորպիսութիւն իրացն կարգեալ. և միանգամայն իսկ յառաջագիր աւետարանն յիշատակելով սկիզբն դնէ առաքելագործ գրոցն, զնոյն թէոփիլոսն. զբանն առաջին ասէ զոր արարի վասն ամ՝ ո թէոփիլէ, զոր սկսաւ յիս առնել և ուսուցանել։ Վասն որոյ և կարճապատում շարեալ ի վերանալն փութայ. և լուսաւորագոյնս պատմէ զհանգամանս վերանալոյն, զհրամանացն քի առ աշակերտսն, և զամպաչուէնն նորին, և զվկայուն հրեշտակացն ի նմանելոյ վասն վերանալոյն քի, և զբրինակն միւսանգամ նորին գալստեանն։

Յետայնորիկ զայծառադոյն, և առաւել աքան-
չելագոյնս նշանակէ զէջս հոգւոյն սրբոյ յերկնից,
յաւուրն պենտակոստէից. թէ 'ի կատարել աւուրց
ցն պենդեկոստէից էին ամենեքեան 'ի միասին՝ և
եղև յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրև
սաստիկ հողմոյ, և ելից զամ տունն յորում նստե-
ին. և երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև 'ի
հրոյ, և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա. և
լցան ամենեքեան հոգւով սրբով. և սկսան խօսել
յայլ և յայլ լեզուս՝ որպէս և հոգին տայր բար-
բառել նոցա։

Յետանէն զբարձրանշան զհռչակաւոր և զան-
կարծահաս զմուտ հոգւոյն նոյ. և եղև ասէ յան-
կարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ
հողմոյ։ Այլ և յայտ իսկ է՝ թէ երկնաւորացն և երկ-
րաւորացս ծանուցեալ զէջս հոգւոյն նոյ. մանաւանդ
եթէ հանդերձ երկնաւոր զօրուն իսկ խաղացեալ
գայր. որում յառաջնծայ իսկ եղեալ յերգ սաղմո-
սարանին՝ մարգարէն հայէր. որպէս 'ի քառասնեերորդ
ինեերորդ սաղմոսին նուռագէ. ՈՒՇ մեր յայտնապէս
եկեսցէ՝ և հուր առաջն նորա գնասցէ, և շուրջ
զնովա մրրիկ յոյժ. կոչեսցէ զերկինս 'ի վերուստ.
և զերկիր 'ի դատել զժողովուրդ իւր, ժողովել
առ ինքն զաւուրքս իւր։

Եւ քանզի յառաջագոյն վկայութիւն եդեալ
հոգւոյն սրբոյ տանն խորայելի. և ուխտ եդեալ
քրիստոսամուտ գալստեանն երկնիւք և երկրաւ.
երբեմն՝ թէ նայեցարուք երկինք, և խօսեցայց.
լուիցէ երկիր զբերանոյ իմոյ. և եր-
բեմն՝ թէ լուիցէ երկին, և ունկն դիցէ երկիր՝
զնա տեր խօսեցաւ։

Եկեալ այնուհետև 'ի դատաստան կոչէ զերկինս
և զերկիր, դատել զժողովուրդն։ Այլ զանորոյ և
ամենափրկիչն իսկ նշանակեաց, թէ եկեալ յան-
դիմանեսցէ զաշխարհս վա՞ մեղաց՝ զնոսա

յիս . քանզի տեղեկագոյնք և ընդելագոյնք էին հոգւոյն սրբոյ՝ տուն խորայելի , առ'ի գումարու մարգարէիցն յարուցելոց . և նոցին սքանչելեօքն և աշխարհնուազ երևեալ : Որով հեթանոսական ազգացն յայտ եղեալ ՅԾական հոգւոյն զօրութիւն . և նշանակէ իսկ ծանուցեալ թագաւորացն , ասել փարաւոնի ցյովսէփ , թէ ոչ գտանեմ զքեզ իբրև զքեզ՝ որ ունիցի հոգի ՅՍ , Ցյնպէս և բաղատասարս ասաց ցդանիել , եթէ գիտեմք զի հոգի սուրբ ՅՍ գոյ 'ի քեզ :

Ցանէաստացուն՝ նարդարէից վասն գալստեան հոգւոյն սրբոյ . և խորհրդածուն հրաւէրդ էլեանն ընդհանէր լեզուաց 'ի սուրբ վերնասուն :

Ի. ՅԼ որդիքն խորայելի առաւել ևս յղփագոյնք և ստուարագոյնք՝ որ մարգարէքն ճանաչէին . մեծն մովսէս՝ եօթանասուն և երկու ծերովքն յանապատի անդ . և 'ի պարգևական երկրին դասք դասք մարգարէիցն յարուցելոց յաւուրս թագաւորացն . որ 'ի թագաւորագիր մատեանսն գրեալ կայ . որոց բնաւին ինքնապատում յայտ արարեալ զմերձաւորութիւն հոգւոյն : Ցսայի ասէ , հոգի տն 'ի վերայ իմ . և մեքիա՝ ես լցայց հոգւով զօրութիւն տն :

Իսկ եղեկիէլն միանգամայն իսկ յայտ արարեալ զաղդողական զօրութիւն հոգւոյն , ըստ պատմութեան կառանչան տեսլենն : Ցամ նոյն ինքն իսկ յորժամ սքանչելակերպ զյարութիւնագործ տեսիլն պատմէ , թէ եղև ձեռն տն 'ի վերայ իմ . և առ զիս հոգին սուրբ , և տարաւ զիս 'ի դաշտ մի՝ որ լի էր ոսկերօք հզօրաց բազմաց . և ասէ ցիս հոգին տն . խոկ՞ թէ կենդանի լցին ոսկերքդ այդոքիկ . և ասեմ՝ տէր տն դու գիտես զայդ :

Յեսանէն զմարգարէն, հրաշիսի Ճշմարտագոյն տեղեկացեալ, յայտ առնելով զնոցա ական պատիւ հոգւոյն սրբոյ։ Ի միտ առ և զնոցա ական հոգւոյն զորութիւն գործոյ Ի վերայ Թանձրախառն ոսկեբաց հնացելոց։ Թէ հոգ առ իւրաքանչիւր ոսկը յարեալք և պատուաստեալք և կենդանացեալք՝ կանգնեցան կացին։ զի մի Ի բանիցն միայն և Ի հրամանացն, այլ առաւել ևս յիրացն կատարելոց առեալ տանիցիս զՃշմարտութիւն բարձրութիւն։

Լուարդ՝ նոյն բաւական ամենակալ հոգին նոր քինիչ խորոցն այ, որ յառաջագիր օրինացն աւետարանեաց մարգարէական բարբառովք՝ վասն կենսաբեր գալստեան որդւոյն այ։ որ առաքեցաւ յանական փառացն Ի ժողով երկոտասանիցն ընտրելոց՝ ժողովել առ ինքն զսուրբս իւր։ և Ճշմարտագոյն հաստատել վասն իրացն կատարելոց, որ վասն քրիստոսի գործեցան։

Լու երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև Ի հրոյ։ զի ականատես իսկ փայլեցուցանէ զշնորհացն բարձրութիւն։ Լու նոցա լցեալ հոգւով սրբով։ որք և Ի մերձաւորացն եպերեալք՝ եթէ արբեալք իցեն։ որպէս և էին իսկ արբեալք մարգարէական բաժակաւն։ Ի նոքա արբեալք և ուրախացեալք։ և միանգամայն իսկ զնմա տիեզերաց առեալ բերեալ զարձրութեաց ուրախութիւն։

Որ և ընդ նոցայն իսկ փոխանակ պատմեալ մարգարէին։ թէ ուրախ եղէց և ցնծացայց Ի քեզ։ և դարձեալ՝ թէ արբեցայց յերեսաց փառաց քոց։ և թէ՝ բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։ և թէ՝ ողորմութիւն քո տեր յառաջ մեծացէ զիս։ որ և յայտնի իսկ ծաւալեալ հոսեցան շնորհք հոգւոյն սրբոյ։

Լու իբրև հուր երևեալ՝ զի խոտանն այրեսցի։ և ընտիրն լցցի բաժակօք ուրախութիւն հոգւոյն։ անկարօտ դանձու պարգևաքն որ ոչ անցանէ։ Լու

նորա լցեալք անկարօտ հոսանօք հոգւոյն, զամբա-
ւեցին հոգեկան հոգւոյն զօրութիւն, որոց բարե-
գործացն բարութիւնք ուրախութիւն պատրաստեցին.
զի ամ տիեզերաց մատրուակք եղեալ արքունցին
զծարաւիսն. իսկ անհնազանդիցն արքունցին ըղ-
կործանումն։

Օ՛ի՛ի սկիզբն մատրուակութեան ժիր մարգա-
ւէ մանուկն երեմիա՝ ընթացաւ, արքայց բազում
լեզուաց զբաժակն հատուցմանն մեղացն, և զդա-
նութիւնն մահուն անկանգնական։

Իսկ սորա միանգամայն արքին զհուր ուրախու-
թեան հոգւոյն, և եղեն մատրուակք ընդ տիե-
զերս. ընթացան, պաշտեցին զանուշուի քաղցրութիւն
բաժակին ուրախութիւն արժանաւորացն՝ի բազմա-
կանսն արքունական հարսանեացն։ Իսկ յուլեցն,
ծուլացելոցն, անմտացն, շքթելոցն, խաւնեցին մա-
տուցին զմրուր բաժակացն լեղւոյն դառնութիւն.
զի այրեսցին իսկ ընդ ամպելն շրթունք իւրեանց։

Ա՛յրբ զայս բաժակ անանիա և կինն իւր սա-
փիրա. և ոչ կարացին զօրել ուժոյ զօրութիւն անայլ-
գինեւոյ նորա։ Ծարաւեցան՝ արքին և զմայլե-
ցան. և դարձեալ պասքեցան՝ի մաղձոյն որ թա-
քուցեալ էր՝ի փոր նոցա. չորացան երկմտութիւնք
մեղօքն իւրեանց. և կիսան՝ի մահու հրաբաժակ
գինւոյ սաստիկ զօրութեանն։

Ա՛յրբ զայս բաժակ և կին ոմն տաբիթա. բա-
ժակ գինւոյն որ արբեցոյց և ննջեցոյց զնա, դարձ-
եալ առողջութիւնք արդարութեան կանխեաց և յա-
ջոյց զնա յուսոն։

Ա՛յդ՝ի բաժակեա յայս և կուռնելիոս. որ եղև
արժանի բազմականին, և եւ բազմաց որ ընդ նմա
էին։ Ա՝տատրուակութիւնն շմաւանի սկիզբն արար
ուրախութեանց՝ի նմանէ՝ բաժակաւն որ՝ի ձե-
ռին նորա։

Լրսոպոնոն հոգեէիր պարգևաց հաստատելոց . և ապառնալէ պարծոց անհաստատից .

Լուսահա գայ պաշտէ զամենեսին , և եհաս ա-
սասիկ մինչև առ ձեզ . ահա լի՛ են շտեմարանք այս
թագաւորի . և կազմեն մատրուակքն արքուցիչք .
յօրինեալք բաժակք իմաստունս . և յօրինեալ
բազմականք 'ի տաճարս . Կազմեալ է զբնդելիքաղցը
և անոյշ , գինի ուրախութեան ամենեցուն՝ որ կամին
ընդել ընա հաւատովք . Կազմեալ է և զմրուրն
դաւանութեան խաւարային չարութեան չարացն ընդ-
լեին , այրիչն կործանման .

Լրդ՝ ահա զոր կամիք ընդել՝ պատրաստ է եր-
կոքումբք ստուգութեան ձեզ մատուցանել . արքէ՛ք
զնմանստութեան՝ և մի՛ զանմտութեան . զողորմութեան , և
մի՛ զբարկութեան . զհաւատն քաղցրութեան , և մի՛
զերկմտութեան անհաւատութեան , զայրիչ հրոյն չարութեան .
որ տոչորէ 'ի գեհենի և 'ի խաւար տանի . Լ. յլ զի
հուր բաժակացն լուսաւորեսցէ յընդելն ձերում
զնա . այրեսցէ զժանկ մեղաց ագիտութեան ձերոյ . և
պահեսցէ զանձինս ձեր յուսով հաւատոց ձերոց .

Լռաքելքն երանելիք արքին և արքեցան , և
ուրախ եղեն . և արքուցին տիեզերաց երկու բա-
ժակօք՝ որք կամեցան , զինչ կամեցանն ընդել .

Լրբոյց և ձեզ աւադիկ յիմարութեան ագիտութեան .
և խառնեաց աւադիկ ձեզ դեղ և բաժակ մահու .
առէ՛ք արքէ՛ք արդ հաւատովք զբժշկութեան բա-
ժակն կենաց անձանց ձերոց . զի փրկութիւն ապ-
բեաջիք յայրմանէն՝ որ գալոցն է .

Լհա հասեալ բաժակն պատուհասի պատժոց
յանձինս ձեր . առէ՛ք արքէ՛ք զբաժակն խաղաղու-
թեան՝ որ լի՛ է օգտութիւ . Զարաւի լերուք ա-
պաշխարութեան . զի խառնեաց 'ի ձեզ մխիթարութիւն
ուրախութեան . Լրբէ՛ք զհոգին որդեգրութեան , և
մի՛ զհոգին պղծութեան՝ զոր արքն սաւուղ , և

տարագրեցաւ. որք գաւիթ, և եմուտ յուրախութիւն իւրոյ։ Այսպէս և դուք՝ թէ կամիք միայն. բարերարէ ուրախարարն՝ որ առաքեաց առ ձեզ զառաքեալս. որ եկին ձեզ յուրախութիւն. և բերին երկուս բաժակս. զմիսն սասոյց, և միւսն ուրախութեանց։

Զի այն որ առաքեաց զերկոտասանսն իւր ընդ ամ երկիր մատրուակս, նոցն առաքեաց և զիւր զայս վկայսս 'ի մէջ ձեր. զի արքեալ իսկ էիք դուք զմեղրութիւն մեղաց ձերոց, արքուցին ձեզ զմրուր պատուհասին՝ որ եհաս առ ձեզ. և մահուամբն իւրեանց եղեն մատրուակք ճշմարտութեան՝ այ աւետեսացն՝ որ առ ձեզ քարոզեցին նոքա նեղութիւնն իւրեանց. և խառնեցին զարիւնս իւրեանց յերկուս բաժակս. զի խրատեսցեն զանմտութիւն կուրութեան սրտից ձերոց. և դարձեալ պատրաստեսցեն յառաջակայսն բաժակ ուրախութեան ձերոյ. և զի մահու կենդանութեան բաժակօքն ուրախ արասցեն զձեզ՝ զոր ինքեանք արբին։

Զայն զի տեսին զնոսն և զարարիչն արարածոց, զի խոնարհեցաւ 'ի բաժակ խոնարհութեան՝ մահու անսրգութեան՝ ինքնակամ իւրովք կամօք. և արբ զհամբերութեան չարչարանաց բաժակին ինքնայօժար խոնարհութեամբ։

Ա՛ այնորիկ ամ առաքինիքն վկայքն ճշմարտուն և ճշուն նը՛, եռուն զանձինս իւրենց նեղուն. զի իւրեանց նեղութեան և վշաւօքն զոր կրեցին՝ վկայ լիցին այնորիկ՝ որ կամաւ կրեաց զայն. զի զմեր աշնարգութիւն կրեսցէ. և զմեր չարչարանս յանձն առցէ. և մերում մահուն հաւասարեսցի հաճութեամբ կամացն՝ որպէս կամեցաւ, զինչ կամեցաւ՝ և եղև. և որպէս կամեցաւ՝ արար։ Զի զմեր հոլովեցն բնութիւս զգեցաւ, և խառնեաց յանխառն ճշութիւնս իւր. և զի տացէ մեզ զիւր անմահութիւն, և զանվշութիւն, և զանչարչարութիւն։ Լու զապականացու

մարմինս մեր՝ խառնեաց յանապականութիւն ճաւուէն. զի զբնութիւս մեր անապականս գործեսցէ։

Իսկ արդարքս այս ցանկացան ոչն մահուանն, մահուամբն իւրեանց լինել վկայ ասեմ՝ որ զմեռեալս թիւ արարածոցս կենդանացոյց մահուամբն իւրով. և ցանկալի եղև մահս՝ մահու ոչն մերոյ. որ վասն մեր արբ զբաժակ մահու, և եհատ ընդել մեզ զբաժակն անմահութեան։

Ա սան զի այս մահ ժամանակեան է, զի միւսանգամ նորոգեսցուք 'ի փառս յարութիւն անփոփոխ կենացն մշանջենականաց։ Որպէս և ինքն տէրն ասէ 'ի սուրբ աւետարանի անդ, թէ արդարեւ ասեմ ձեզ, զի թէ հատն ցորենոյ որ ոչ յերկիր անկանի և մեռանի՝ լոկ միայն հատ կայ. բայց 'ի մեռանելն բազմապտղիկ փառաւորի, և պաղաբերէ տոհմականաւ։

Հատուցումն վարձուց չէ պատճոյ ըստ իւրաքանչիւր գործոյ։

Իսկ ոմ վարք երկրի կենաց՝ նման են վարուց մշակութիւն երկրաբուխ արմտեաց. վասն զի սերմանի նախ սերմն յարգանդ, և ապա պայծառացեալ ծաղկի մարդահասակ պտուկեր ոճութիւն։ Զի ոչ վերագոյն ասացաք, թէ մարդ ըստ պտուկերի ոչ արարաւ, իմաստութիւն, քանաւորութիւն. որպէս ըստ վարս օրինակաց 'ի քանամարտէն կարգեցաք իսկ առ ձեզ։

Մարդ՝ առ մարդն վարել և սերմանել զերկիր. զի անդէն եդաւ նմա հրաման, թէ զինչ վարեսցէ մարդ՝ զնոյն և հնձեսցէ։ Իսկ սոյն առաւ խելամտութիւն իմանալ մարդկան զառ 'ի յայտնեացս ծածկեալ յաներևոյթսն՝ սերմանել և հնձել. զի ընկալցի յուսով զհամբարսն պատրաստեալս. զի զինչ

և վաստակեսցէ մարդ ՅԾ պաշտուԹԷ պատուիրա-
նօքն՝ անդ 'ի պատրաստեալ հանդերձելումն ըն-
կալցի զպտուղն։

Այսն օրինակ իսկ որպէս մեկուԹիւն, զի նախ
վաս վարեալս՝ ցելեալս՝ կակղեալս՝ հերձեալս, ա-
կօսաձիգս պատառեալ զերկիրն, սեւակոշտեալս,
պարարտացուցեալս։ Նախ քրտամբք և աշխատա-
նօք հատանիցեն զընդարմատս մոլաբոյսս՝ տարա-
պարտ ճանուն սիզաբոյսն բանջարոց։ և ապա սեր-
մանել զսերմանիս օգտակարն ցանից։

Այսն օրինակ և քարոզուԹիւն աւետարանին։ եԹէ
ոչ նախ հատցէ ոք զպարտս պատժապարտուԹեան
իւրայոցն, ընդ-վայրաբոյս սովորուՀեց արժանեացն,
կամասէր՝ կամագնաց՝ ինքնակամ մեղացն։ Որպէս
այժմ իսկ առ ձեզ տեսանիցեմք։ զի Թէ ոչ խլեսցիք
դուք 'ի մտաց ձերոց զարմատն ընդ-վայրաբոյս՝
ինքնակարս՝ կորուսիչս՝ մեղաց որ արմատացեալ էն
'ի ձեզ։ և պատեալ զոստովք մտաց ձերոց՝ առ 'ի խա-
փանել զծաղիկն, և առ 'ի չտալ բերել զպտուղն։
Եւ միանգամայն իսկ 'ի գօսացուցանել՝ ար-
կեալ զձեզ 'ի տարակոյս անօրէնուԹիւն՝ և կամ ան-
հիւԹ ապառաժ տեղին։ որ Թէպէտ վարել վարիցէ
ոք՝ անմատն եղեալ 'ի պտղոյն զրկի։ Այսն օրինակ
եԹէ ոչ խլեսցիք 'ի ձէնջ մենդէանն սովորուԹիս։
ոչ կարէք ընդունել զսերմն՝ որ 'ի ձեզ պտուղ
տայցէ զօգտակարուԹեան։

Ա-նայնուԹիւն պաշտաման անուամբ Յոյս։ և Հաղանջէնաս
որ դատապարտուԹիւն հէլենացոյց։

Ա՛ՐԴ՝ դուք Եղբարք՝ նայեցարուք իմաստուն
մտօք ընդ անձինս ձեր։ և խորհուրդ առեալ ձեզէն
'ի ձեզ խորհեցարուք, և տեսէք զանձինս ձեր։ զի
ՅԾ գԹած է և մարդասէր։ յայց էլ ձեզ, և ետես։

և ոչ կամեցեալ ընդ ձեր կորուստն ; և վաղագոյն սպառնալեօք պատուհասիցն՝ կոչեաց զձեզ 'ի դէ-
ռունս ապաշխարութեան մուծանել , զի կեցցէք ։
և մի՛ մեռանիցիք ։

Օ՛ի անարժան խնդրոյ մարդիկն՝ որ անցին հե-
թանոսութեանն իւրեանց ։ և չեղէն իսկ արժանի դիւ-
տի անձանց իւրեանց ։ որք ոչ կամեցան իմանալ զա-
րարիչն իւրեանց ։ յառաջագէտ կանխագէտ իմաս-
տութեամբ մեծութեանն՝ այ թողեալ զնոսա՝ որ ոչ էին
իսկ լսելոց հրամանաց նո՛ր ։ այլ պատրաստեալ տանջ-
ջանացն կանխութեանցն նիւթեալք թշղքեցան ։

Բ՛ղդ՝ պարտ է և ձեզ կակղացուցանել զանդա-
մատաց ձերոց ։ և խլել զմերձն դայթակղեցուցիչս
յանձանց ձերոց ։ որ խափանն առնեն 'ի ձեզ բուս-
ացն ։ այսինքն է կռապաշտութեանցն սովորութիւն ։ որ
'ի նախնեաց հետէ մոլորեալք դանդաչեցին ։ որ իբ-
րև քուն ընդ արթունս եղեալ յիմարակորոյսք ան-
մտեալք ընդ վայր թօթափեցան ։ որ թէ ոչ ինչ
յօգտակարն , այլ յունայնութիւս մտոտիս 'ի տա-
ղապարտս՝ յանօգուտս ։ որ բնաւ ոչինչ են ։ ոչ
օգուտ , և ոչ ինաս ։

Ամենք օգուտ չէն ։ զի անշունչք են ։ անիմաս-
տունք ։ անխաղացք ։ անշարժք ։ լուկ ։ ոմանք կոփա-
ծոյք են ։ ոմանք կռածոյք խարտատածոյք ։ ոմանք ձու-
լածոյք եղեալ 'ի ձարտարաց մտաց հաստատեալք ։

Դ՝ ինասել , ընդ վայր և էթ աշխատեալք 'ի զուր՝
որք պաշտեն զնոսա ։ ոչ կարեն ինաս ինչ պահել
'ի նոցանէ ։ և ոչ , այնչափ՝ թէ լու մի , կամ ձանձ՝
որ անօգուտ ընդ մարդկան է բնակեալ՝ քշել հա-
նել 'ի տանէ պաշտօնէիցն իւրեանց ։ Դ՝ու ոչ ըզ
սարդն որ եղև էջս առնեն զնոքիմբք պատկերօքն՝
և ձգեն զոստայնս իւրեանց զգլխովք նց՝ թէ զայն
'ի բաց ոչ կարասցեն մաքրել յանձանց ։ այլ ը՝ վայր
'ի ներքոյ ժանկակեր փոշոտեալ հարեալ մնային ։

Դ՝ու քարեղէն պատկերացն՝ առեալ զքարաքոտ
ժանկոյն , զաղբացեալ , կանաչացեալ , ներկեալ ։ և

անփոյթք եղեալ տգեղանան։ Իսկ զփայտեղէն պատ
կերսն, որդանց հարեալ, քոտոտակեր եղեալ մաշին։
Իսկ զհանդերձիկն որ զնոքօք արկեալ է, այն ցե
ցակեր՝ մեցոտեալ՝ փխրեալ՝ եղծեալ՝ մաշեալ,
կորուսեալ ապականին։

Իսկ թէ ումեք վասն նոցա անմոռութիւնքն զոք
ստիպեն փոյթ առնել՝ յախերկան կոտորել զանա
սունս իւրեանց՝ 'ի զոհս ՀԵՆՀԵՐՈՅՆ զաղջուութեան
պղծութեան շարաւոյն. սակայն նոյն խանձրախոտ
մուրն՝ և ծուխն այրեցածոյն ելեալ մածեալ զնո
քօք, իբրև զածուխս սևացուցեալ զնոսա՝ յայլա
գոյնս դարձուցանէ. և ծախք անշահք, և անօ
գուտք վատտակք՝ որ 'ի նոսայն լինի։

Այս ոչ ամ ըմբռնեալ ձեր՝ 'ի մոլորութի ՀԵ
սիք՝ ինասել օգտութենն. և յաւիտենական նիւ
թել ձեզ տանջանս յանչէջ հուրն. և յորդն անմահ
երթեալք։ Ա՛ն ոչընչին զարարիչն ձեր թողեալ՝
անմնչովքն բարկացուցեք զնա՝ ձեր. հանեալ ըզ
ձեր սերմանիս՝ փոխանակ ցորենոյն փուշ, և փոխա
նակ հաճարոյ՝ որոմն, և փոխանակ պարարտ երկրին՝
զանօգուտն զառապարն զանպտուղն ընտրեցեք։

Ա՛յդ՝ անդ տեսէք դուք՝ աւադիկ յանդիման
կայք, ո՞ զոք 'ի ձենջ յառաջ կացեալ տայցէ պա
տասխանի՝ թէ լուաւ զոք զձայն պատկերացն. կամ
ետես դուշնաբեայ օգուտս ինչ 'ի նոցանէն, որչափ
թէ սակաւ մի յայտնեօք։ Ա՛յց միայն երազովք
և պատիր խաբէութիւն ցնորիւքն՝ որ 'ի մեջ գալ ոչ
կարեն. այլ միայն կորուսեալ զոգիս ձեր, և հա
նեալ յարարչէն։

Ա՛յդ՝ որ այսպէս անօգուտ են և ոչինչ, և ոչ
ումեք պիտանացու. հանեք խլեցէք յանձանց ձե
ղոյ զցամաքեալն գօսացեալ. որ ոչ ձեզ խեղութի,
այլ առողջութի բժշկութի՝ դարման տանել ան
ձանց. իբրու զայն՝ որ թոթափիցէ զմաղձն և զգ
մաղանն դաւնութեան. և թեթևացուցեալ զինքն

յանխիցն՝ առողջութեամբ լինի։

Այսպէս և դուք զանօգուտն եթէ թողեալ լինիք՝ զօգուտն գտանէք, ի յաւիտենից ամենայնոց դատաստանացն ապրելով։ զի կուսապաշտութեան սերմանիք պաշտելոյդ՝ յանշէջ հուր գեհենին արկանէ, ուստի չիք հնար փրկութեան։ զայս պատուղ բերէ։

Յաւիտենական գառ հաստատելոյն ի Երիսպոս ի ցարութեան մարմնոց։

Ասէ Ճշմարտութիւն և բարեպաշտութիւն, զնծզարարիչն ամի Ճանաչելոյ՝ բերէ զպտուղ յաւիտենական մեռանելեաւոր արքայութիւն ուրախութեանց։ և ասայ այնոցիկ՝ որ զնայն Ճանաչեն։ Որոյ սերմանդ ձերոյ անօրէնութիւն՝ և առ ձեզ երեւեցաւ փոքր ի շատէ՝ բոյսք որոմանն պատուհասից։ զի գիտասջիք զգործին հասին հանել՝ որ առ յապային լինիցի։ որ առ ձեզ մատուցանիցի։ թէ ոչ վաղագոյն սրբեսջիք զորոմն ի ցորենոյն ընտրել։

Օն գայ միւսանգամ այլ ժամանակ՝ վարել և հնձել։ վարել ի գերեզմանի, և հնձել միւսանգամ յարութեն ի գործս իւրաքանչիւր վաստակոց։ Որ ի լինիք իբրև զգօսացեալսն։ զոր անշէջ հրոյն գտեալ՝ զձեզ կերակուր իւր առնիցէ։ այլ դալարութեամբ ծաղկեալ մրգաւէտ պտղոյն անուշութի՝ զարգոյսն մատուցանիցէք ոն ձերում։ Օն յոյժամ միւսանգամ ի գերեզմանացն բուսուցանիցէ զձեզ՝ լեցիք ցորեան։ զի շտեմարանն արքայութեն ընկալցի զձեզ ի բարիս։ զի բերիցէք զբարիսն ձեր առնելա՝ ընդ միոյ բազումս։

Օն զոր օրինակ ի հունձս՝ ընտրեալ զորոմն ի ցորենոյն՝ ի հուր արկանեն։ նոյնպէս բուսանին յանկարծ օրէն յակն թօթափել՝ մարդիկ ի գե-

բեզմանաց։ Որոց զԾծ-պատուիրեալ նորին պատուիրանօքն Հանդերձ՝ յանձինս ընկալեալ իցեն։ Նոքա ըստ նմանութեան առաջ ցորենոյ՝ բուսեալք պարարութեամբն։

Զ՝ուրպէս մի Հաստ մերկ յերկիր անկեալ՝ բուսեալ՝ առեալ արմատս, բերեալ ցողուն, արձակեալ ստեղն, կապեալ ծունը, ջովացեալ, առլցեալ հասկաթոռ, ընդ միոյ հատոյն բազումս առեալ՝ի շահեկանութի՝ սերմանելեացն պատրաստէ։

Զ՝այնպէս և անդ են տեսանել՝ բուսեալ անձինք արդարոցն՝ ի գերեզմանացն։ Նոյն մարմինք՝ նոյն հոգւով բերեալ զգործս վաստակոց արդարութեանն՝ անդստին՝ի գերեզմանացն զարքայութիւն։ Ընդ միոյ սակաւուն, ընդ միոյ մեկնակ անձինն բիւրս և հազարս պայծառացեալս՝ անթիւ հատուցմունս իսկ առեալ բերիցեն։ Անդստին ընդ յառնելն փառս զգենուցուն։ քան զհասկն և զառաքութի՝ յանձին ցուցանիցեն։ և՝ի շտեմարանս խնամոցն անկեալ դարմանին։

Զ՝այնոքս փուշքն զհասկն մեղաւորացն պատեալ ներբուստ՝ի վեր գայցեն։ Անդստին իսկ՝ի մօրէ զկերպարանս առեալ՝ի վեր բերիցեն զանօրէն գործոցն զպտուղսն։ Որպէս և՝ի հոգևոր երգարանին նուագէ։ Վասն այնորիկ թէ անկաւ հուր՝ և ոչ տեսին զարև։ Մինչև՝ի միտ առեալ էր զփուշս իւրեանց, իբրև զդժնիկ բարկութիւն կենդանւոյն ընկլուզեսցէ զնոսա։

Զ՝ասայն զի՞նչ իցէ զոր ասէն։ Մինչև՝ի միտ առեալ էր զփուշս իւրեանց։ այսինքն յանհոգութենէ գործէին զմեղսն։ Մինչ ոչն գիտէին զյանցանսն՝ յառաջադիր պատրաստեցան տանջանքն։ Որպէս և ուրեմն այլ ուր ասէ։ Թէ յառաջ քան զօր իւր՝ հասեալ պատահեցին նմա ցաւք իբրև զջուրս։ որպէս և՝ի սկզբանն։

Իսկ փուշք վասն մեղաց յանցաւորութենն բուսան։ Նոյնպէս և զյանցաւորսն պատեալ՝ բուսեալ՝

լուցկիք եղեալ՝ այրեացին իսկ ընդ յառնելն։ Իսկ ձեզ աւադիկ ազգ արար կանխեաց։ որպ զն դուք ապրեսջիք յայն ահագին հրոյն հեղեղէ։ զն սուրբ սերմանիք ցանեացին 'ի ձեզ, և մի՛ փուշն այրելի։

Պ.ասանիէլն զԻսրա.էլ զղջացելոյն յապաշխարութեանն։ և աննէրիէլ պատուհասն անզղջից։

Լ.ուրդ՝ որդիք մարդկան մինչև յերիք էք խաստ՝ սիրտք։ ընդէր սիրէք զնանրութիւն՝ և խնդրէք ըղ՝ ստութիւն։ Գիտասջուք զանազանութիւն սքանչելիսն՝ որ առ ձեզ երևեցաւ։ զի այսուհետև ոչ թողցէ ըս՝ տուգութիւնն զամ բնակիչս աշխարհի։ եթէ ոչ ծանիցեն զնա ամ ազգ երկրի։ և նմա ծառայես՝ ցեն ընդ միով լծով։

Լսեցուք ասէ զկապանս նոցա։ և ընկեսցուք 'ի մէջ զլուծ նոցա։ Լ.ուրդ՝ խզեցէք զկապանս հեթանոսութեանդ յանձանց ձերոց։ և ազատեցարուք 'ի ձեղացն յանցուածոց։ յուրախակից լինել այնոցիկ՝ որ ծիծաղին 'ի կորուստ ամբարշտաց։ որպէս ասէ իմաստուն առ 'ի հանդերձեալն։ այսուհետև ես ծիծաղեցայց 'ի վերայ կորստեան ձերոյ։ և թէ՝ այն որ բնակեալն է յերկինս՝ ծիծաղեսցի զնոքօք։ և տէրն արհամարհեսցէ զնոսա։

Յանժամ խօսեսցի ընդ նոսա բարկութիւ՝ բրով։ և սրտմտութիւ՝ բրով խռովեցուցէ զնոսա։ Լ.այս իսկ է ժամանակ կշտամբութեան յանդիմանութեան։ զի որդւոյն ոչ առեալ 'ի հօրէ 'ի ծնողէն իւրմէ՝ դատել զամենեսին։ որ ոչ պաշտիցեն զՀայր՝ դատի զնոսա։ և որ ոչ զորդին, կամ զՀոգին սուրբ՝ տանջէ զնոսա։

Լ.այս ձեզ Ճանաչելոյ զՀայր՝ բարբառն որդւոյն կանխեաց առ ձեզ։ ասէ՝ ես կացի թագաւոր 'ի նմանէ՝ 'ի պատմել ինձ զՀրամանս նորն։ հովուել

զնոսա գաւազանաւ խստութեամբ երկաթոյն։ և իբրև զկաւէզն անօթ փշրել զայնոսիկ՝ որ դիմադարձ լինիցին փրկութեանն։ Օ՛ի անօթք կաւէզնք իսկ են մարդիկ։ արդ՝ որ պիտանացուքն են՝ զնոսա գանձիւ պատուականաւ լցցէ։ Իսկ որ անպիտանքն են՝ զնոսա տանջանօք և կորստեամբ լցցէ։ զի զարթուցեալ իսկ է յամպոց սրբոց իւրոց, այց առնել՝ ամ անօրէնութեց մարդկան։

Ա՛ռդ՝ թագաւորք զայս՝ի միտ առէք, խրատեցարուք ամենեքեան այք դատիք զերկիր։ Ծառայեցէք տն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նորա դողութիւն։ Ի՛նկալարուք զխրատ նորա՝ զի մի՛ բարկացի տէր, և կորնչիցիք՝ի ճանապարհացն արդարութեան։ զի բորբոքեալ է բարկութիւն նորա։

Իսկ երանի իցէ ձեզ՝ եթէ մարթիցէք աղաչել զերեսս տն։ և յուսացիք՝ի բազում ողորմութիւն փրկութեան նոր։ Թողցէ ձեզ և շնորհեսցէ ձեզ զամ յանցանս ձեր։ Իսկ որ յամառեալ կայցեն՝ և փրշրեսցէ զաւազանն՝ի բերանս ամբարշտելոցն յամառացն։ և արկցէ՝ի յաւիտենական տանջանսն։

Ա՛պա ո՞չ ինչ օգտէ այն զղջումն՝ որ անդ անկեալ՝ի միտն լինիցի։ այլ տես զինչ գոչէ մարգարէն։ ո՞չ ոք է որ՝ի դժոխս խոստովան առնի առքեզ։ և ո՞չ ոք թէ յայնմ մահու յիշէ զքեզ։ զի այնուհետև ո՞չ ոք կարէ անցանել ընդ եղեալսահմանն հաստատութեան։

Իսկ ժամանակ այժմէ ողորմութիւն գտանել ապաշխարողաց։ որ այժմ այսպէս ասէ մարգարէն։ ՇԾ դատաւոր հզօր, արդար, երկայնամիտ։ որ ո՞չ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ։ Ա՛պա արդ՝ այս զի՞նչ ասիցէ արդեաք։ եթէ ոչ դարձցին ասէ՝ զսուր իւր սրեալ է, և զաղեղն լարեալ։ և նոցա է պատրաստեալ զանօթս մահու։ և զնետս հրեղէնս գործեալ է, որոց երկնեն զանօրէնութիւն։ և յղութիւն նոցա ծնանի զցաւս։

Իսկ այնք որ լսէն սքանչելեացն, և դառնան յապ-
բարիչն Ամ, և պաշտեն զնա՝ այսպէս ասէ. քանզ-
լերեաց երկիր, խնդա և ուրախ լեր. զի մեծամեծս
արար տէր զառնելն իւր ընդ քեզ։

Յետ մարդիկն այն՝ որ զարարիչն իւրեանց ոչ Ամ-
նաչեցին, նորա իբրև զանասունս համարեալ են.
վասն այնորիկ իբրև ընդ երէս խօսի. մի՛ երկչիր
երկ՝, զի բուսան քեզ Ամարակ 'ի դաշտս և յանա-
պատս. զի քան զանապատ անպտուղ էին սիրտք
մարդկան, և քան զդաշտս՝ ևս անջրդի։

Լ.ուդ՝ և այգի կոչէ զնուռ.ամ.ենալսն. և թզենի
պտղաբեր քաղցրութեաց՝ Ամապաշտութեան բանին.
որպէս և ասէ. որպէս զի քաղցր են 'ի քիմն իմ
բանք քո, քան զմեղր բերանոյ իմոյ. և դարձեալ՝
քաղցր ես դու տէր, և քաղցրութիւնքդ ուսո՛ ինձ
զարդարութիւնս քոս։ Յետ դարձեալ առ Ամապաշտն
գոչէ մարգարէն և ասէ. լցցին կալք քո ցորենով.
և զեղցին հնձանք գինւով և իւղով. և հատուցից
ամացն՝ յորս եկեր մարախն, և ջորեակն, և Ժանկն,
և թրթուրն. զոր իմ մեծ՝ զոր առաքեցի ես 'ի
վերայ ձեր, ուտիջիք և վայելեսջիք, և օրհնեսջիք
զտէր Ամ ձեր։

Իսկ առ անօրէնս այսպէս ասէ. արկէք զման-
գաղս՝ զի հասեալ է ժամանակ կթոց. մտէք հա-
րէք հնձանս, զի լցեալ են հնձանք, և զեղուն
գուբք իւրեանց. զի բազմացան չարիք նոցա. ձայնք
հնչեցին 'ի ձորն դատաստանի։

Պ՝իսհանոս ամբաղաքն Ամ.ինն սոդոմայեցոց, և
հրդեհիւղ պատուհան նոցա։

Զ՝ Ժամանակն աքրահամու արք սոդոմ զգի-
նին անօրէնութեամբ. արդ՝ խնդրեցաւ և քննեցաւ
'ի բարձրագահ Ամենն՝ 'ի հարիւրոց մինչև 'ի տասն.

և ոչ գտան 'ի նմա տան բաժակք արդարութեան։ Զի խաղող նոցա՝ խաղող դառնութեան։ և ողկոյզ նոցա 'ի դառնութեան լեզուց։ սրտմտութիւնք վիշապաց գինի նոցա։ սրտմտութիւնք իժից՝ անհարին առանց բժշկութեան բաժակք նց։ վասն այսորիկ իսկ և որ բուցին նոցին զհամ հրաբաժակ գինւոյ այրման նոցին։ և կիզան նոքա բաժակօքն իւրեանց։

Լցեալ էին շտեմարանք նց անօրէնութեամբ։ վասն այսորիկ իսկ հնչեաց կործանումն նց։ Հասեալ էր յանդս նոցա որոմն։ վասն այսորիկ 'ի գործ անկաւ մանգաղ նորա։ հնձեաց եկեղ զնա 'ի հրդեհի իւրում։ Ուռկանն որ պատեացն զնա, զոհեցան նոքա 'ի նմին ուռկանի։ և ծխեցան 'ի նմին ցանցի։ զի եղեն բաժին նորին։

Լիկեր զնոսա թրթուր, և ծախեաց զնոսա ջրաբակ։ և արածեցաւ 'ի նա մեղացն իւրեանց մարախն։ վասն այսորիկ վաղվաղակի գոսացան։ Լու արածեաց հուր զշինուածս նոցա։ տեղեաց 'ի նոսա հուր, և յորդեցին վտակք հրեղէնք 'ի մէջ նորա։ և եբարձ զկուրէն 'ի միջոյ նորա։ յորդեցին գետք հրեղէնք։ յարեան 'ի մէջ՝ և ողողեցին այրեցին զերկիր նորա։ Լցան շտեմարանք նր հրով, և զեղան նովիմբ հնձանք նորա։ լցին զբաժակս մեղաց իւրեանց։ 'ի մրրոյ նր արբին, և կիզան միանգամայն։ Զի զոմտեան բաժակն որ գտաւ 'ի մէջ նր, ուստի ոչ արբին նոքա զուրախութեան։ եղև նա նոցա այլ բաժակ, և արբոյց նոցա զտարտմութեան։

Բաժակն կենդանութեան՝ ուստի ոչ կամեցան ըմպել զկենդանութեան։ արբոյց նոցա զմահու դառնութեան։ Բաժակն քաղցրութեան՝ որ ոչ քաղցրացաւ 'ի քիմն նոցա, դառնութեամբ բղխեաց 'ի նմանէ։ այլ զի հուրն որ ոչ այրէր զուալարան, այլ պահէր զկնաչան։ և տոչորէր 'ի գոսան։ և այրէր զգոսացեալսն։

Արբ զայս յուդա իսկարովտացի, և այրեցաւ։ զի աղտեալն էր ծառ նր։ Արբին զայս առաքելքն

ՅՄ, և դալարացան. և լցին անուշահոտ պտղովն զեր կիր ՅՄ. տարածեցաւ հոտ ծաղկացն նոցա ընդ տիեզերս։ Արբութիւն նոցա և գինին անուշ՝ պաշտի յուրախութիւն վերնոց և ներքնոց, հրեշտակաց և մարդկան. և տէր տաճարին ուրախ է 'ի նոսա. իբրև զայս բաժակս որ հասին աւասիկ արբուցանել ձեզ։ Ա՛ի զովս՝ բաժակն աբրահամեան՝ որ գբ տաւ 'ի սոդոմ. ուստի չեղեն նոքա ուրախ. և ըստ այնմ՝ այլ ոչ գտան 'ի մէջ նոցա։

Յ՚ուսապրուիւն ներսուրեաց առ անգիտուրեաց ապ՚ նանելոյ զսուրբ Հուսանան. և յորդոր ապաստանելոյ յ՚ զրիուրեանն ապուծոյ։

Ա՚հա երեսուն և եօթն բաժակք քրիստոսեանք՝ որ եկին պաշտել զձեզ. հաւր է զօրութիւն նորա, և անպչ համ նորա. ուրախութիւն 'ի յայտնիս նորա, և տրտմութիւն 'ի ծածուկս նորա։ Օ՚ի թէ ըմպիցէք զնա արժանեաւք՝ այրեսցէ զմեղս ձեր, և սրբեսցին անձինք ձեր։

Ա՚յրեցան մարմինք որդւոցն ահարոնի. և ոչ այրեաց հուրն զպատմուճանս քահանայութիւն նց՝. սովոր է այս բաժակ այրել զաղտեղին, և պահել զսրբեալն։ Ա՚յդ՝ եթէ կամիք ըմպել զբաժակն երանութիւն սիրով, զոր յակամայ 'ի մէջ ձեր բխեաց՝ այրեսցէ զմեղս ձեր. և զտեսցէ զանձինս ձեր յուրախութիւն։

Ասկ եթէ արդեաք գայցէ ինչ զմտաւ ձերով՝ թէ մեք սպանաք զսուրբ վկայսն։ Ա՚յսպէս և պ՚ոս անօթն ընտրութիւն, 'ի ագիտութենն 'ի հրեութեանն՝ 'ի ժամանակին որ եկն քարոզութիւն առաքելոցն, 'ի հալածանս նոցին սպան նա զտեւիանոս. որ եղև վկայ ՅԾՈՒԹԻՒՆ ՀԱՆԱՐՀՈՒԹԻՒՆ, և անդրէն բարձրութիւն նորին 'ի նոյնն։

Լ՚ԸՆԴ՝ ահա և դուք տդիտացայք։ արքէ՚ք զբա-
ժակդ զայդ՝ զոր մղեցին ձեռք ձեր։ զի զոր վկայե-
ցին նոքա և մեռան՝ և նոցն մահուամբն կենդանա-
ցան նոքին։ և ելին ՚ի վիճակս երկնաւորս։

Լ՚ՍՈՒ սուրբն ստեփաննոս ՚ի ժամ մահուան իւ-
րոյ ետես զերկինս բացեալ՝ և զորդի ընդ աջմէ ծ-
նողին իւրոյ։ խնդրեաց զթողութիւն սպանողաց իւ-
րոց՝ և ելոյծ զկապանս ամբարշտութեանն նոցա։ բա-
ղեխօսութիւնքն և աղօթիւք իւրովք դադարեցոյց զգ-
դուռն արեան իւրոյ։ և լռեցոյց զբողոք տանջման
իւրոյ։ հայցեաց ՚ի տէրնէ զթողութիւն նոցա։

Ա՚ՍԱՆ այնորիկ և բարձ պօղոս վիրօք զլուծ նը՚
զոր ձգէր եղն ամոլոյն։ և առ յանձն իւր զսան-
ջանս նորին։ և արքն զնոցն բաժակ մահու նորա։ և
եղև վկայ բանից նորա։ ընդ նմին և հաւասարորդ-
առ տէր իւր։ և ետես զնոցն տեսիլ։ և լուաւ զնոցն
անճառութիւն բանիցն՝ զոր ետես ստեփաննոս։

Լ՚ՍՐԴ՝ դուք սպանօղք այսց սպանելոց։ հաւա-
տացէք ՚ի հաւատս նոցա։ և ձգեցէք զլուծ նոցա։
ընկեցէք զլուծ մեղացն յանձանց։ լերուք վկայք
ճշմարտութեանն քարոզչաց։ Լ՚ՍԼ արքէք զնոցն բա-
ժակ հոգևոր։ և եղերուք կցորդ նոցա։ և իջցեն մար-
դասէր սիրոյն վտակք յանդն սրտից ձերոց։ պա-
տրաստացուցանել զերկիր մտաց ձերոց։ զքարոզուին
որ ՚ի ձէնջն՝ տոհմական լինի։ զօրաւոր հաւա-
տովքն ձեր ՚ի նա։ լմնել զբաժակն մարդասիրութե-
զզուիչ հրոյն ընտրութեան։

Ասպէս ՚ի ժամանակս հրէութենն քահանայութե՚
՚ի դերութեանդ։ առեալ զկենդանի հուրն պա-
տարագաց։ տարեալ արկին ՚ի ջրհորն։ և հուրն ՚ի
ջուր դարձաւ։ և յետ ամացն եօթանասանից ՚ի
դարձին։ երթեալ տուին զնուրն՝ և բերեալ արկին
զողջակիզօքն։

Խրև շինեցաւ տաճարն։ և ջուրն դարձաւ ՚ի
բնութիւն հրոյ։ վասն զի կարծէք զկերպարանան

փոփոխել, և զարդիւնն ըստ իրացն մատուցանել. մանաւանդ այս սքանչելագոյնքն հուր՝ երևեալ ըստ մասանց մասանց հոգւոյն սրբոյ։

Որպէս հուրն ի մէջ դալարոյն կանաչ ոստոց մրրեանցն երևեալ՝ պահեաց զնա անթարշամ. զի հուրն լուսատու պահեաց զմրրեանին, և ապրեցոյց զմովսէս։ Զոր նմա բաժակ ուրախութեան. և արբ ի նմանէ մովսէս՝ որ յուսացաւ ի նա. ապրեցոյց զանատունն իսրայէլի, և խանձեաց զստացուածս եգիպտոսի ի մէջ կարկտին և ի մէջ ծովուն։ Զարբոյց զբաժակն իսրայէլի, զի արբին զհոգին սուրբ, և երգեցին ի մէջ ծովուն. որում մատրուակ էր մարիամ քնարաւն. զի անցին ընդ ծովն յաղթ, և օրհնեցին։

Զայնմ ժամանակէ արբին եգիպտացիքն, և արբեցան ի բաժակէ սեանն՝ որ կապեաց զանիւս կառաց նոցա. գլորեաց զնոսա մրուր նորա, և զարկոյց զնոսա հոտ նորա։ Զարբ ժողովուրդն զարանջման բաժակն՝ զոր խառնեաց բարկութեան. արբոյց նոցա բաժակ քնման՝ ուր պատատուրեցան նոքա։

Սիւնն անչրեաւէր և հրացայտ՝ օրինակ գրուբէն աց առ զզջացեալսն, և բարեխօսեանն՝ առ անզէղջսն։

Սիւնն սուրբ՝ որ հովանոցանայր նց ընդ ամպս երկնից ի տապ խորշակին ի տուընջեանն. և լուսատու ջերուցանէր զնոսա ի ցրտոյ սառնամանեացն՝ ի գիշերապահութեան առաջնորդութեան. նոյն սիւն ըստ ժամանակի ժամանակի փոփոխեալ՝ ըստ պէտոյից նոցա զպէտսն պատրաստէր։

Զարբեանն վնասցեալ հոսէր նոցա ի յագուրդ ի ծարաւն վտակս անոյշ ջուրցն. զի ինքն քրիստոս էր այն՝ որ ընդ ամենայնին ամենի լուութի լցեալ

բարերարէր նոցա. որ երբեմն քաղցրութիւն հացին. երբեմն թռչնոքն։ Իսկ երբեմն քաղցրութիւն աղ-
բերացն բղխէր նոցա. և բաժակ հոգւոյն ուրախ առնէր զնոսա։

Իսկ ըստ նոցին խստապարանոցութեան և ողն-
դժնեայ բարուցն՝ խառնէր տայր նոցա զբաժակն
դառնութեան։ Զի այս բաժակ թէպէտ հուր՝
թէպէտ ջուր. քանզի կարէ զգօրութիւն իւր փոփո-
խել յինչ և կամի. երբեմն ձիւն լինի. երբեմն
սառն. երբեմն անձրև. երբեմն հուր՝ 'ի փայլակն
դառնալ. երբեմն 'ի ցող՝ սնուցիչ բուսոյ. կերակ-
րել զգազանս՝ և զանասունս, և զթռչունս՝ և զերէ-
և պատրաստել զդարմանս մարդկան, և զինամս ա-
բարածոց։ Այսպէս կարէ և հոգևոր ցողել. բու-
սուցանել սերմն հաճոյ կամաց վերնոյն. պատրաստել
բանաւոր հօտին զկերակուրն անապական։

Իսկ երբեմն քաղցր անձրևն շահեկան բուսու-
ցիչն երկրապարար՝ խարակիչ փայլատակամբք, որ
զՁերմնոգոն արկեալ առ 'ի բոյսն քրտնացուցանէ.
արբուցանէ զստեղն յուրախութիւն։ Զի զփիթիթն
զուարթութեան կրկնակի պահանջէ՝ զգոհութիւն
տալեացն ընդհոգոյ. յորժամ օգտի 'ի հաճութեաց
անտի, զայս բաժակ արբուցանէ. զի և ամպք ըս-
պասաւորք հրամանացն մատուցակեն։ Զի թէ-
պէտ լցեալ և պատրաստեալ լի անձրևով զերեսս
երկնից ունիցին. այլ 'ի գալն և յարձակելն՝ 'ի
տալն, և 'ի մատուցակելն երկրի, յորժամ կամի՝
զշահեկանն մատուցանէ։

Իսկ յորժամ ոչ՝ զդժնդակն, զեղեամն և ըզ-
ձիւն, և զինչասակար կարկուտն. այրիչ նշոլիւքն
տապացուցանէ. և ժանկառութիւն պատրաստէ ըզ-
ինչասն, և զչարթոյն օդոյն ընչմունս խստութեան
դառնութեան. և խորշակահար ցամաքեցուցանէ
զկանաչաձև բոյսս դալարիցն՝ մօտ առ կաճինսն
արեցուցանէ։

Յրեանն ոչ անպով լուսաւորեալ և հրաբորբոք, ի նշանակ լուսաւորելոյ զարդարս, և այրելոյ զիզաւորս։

Ամպովքն զհրամանն կատարէ. զի բանական ինն է ամպովքն երևել՝ ի սկզբանցն. իսկ իբրև ընդունիչ ինն հրամանացն երևին. և պաշտօնեայ մաքրութիւնքն առ մարդիկ երևեալ. երբեմն բարկութեանց, երբեմն ողորմութեանց։

Զի յորժամ կամէր ոչ առ մարդիկ երևել՝ զգօրութիւն իւր յամպն ծածկեալ՝ առագաստեալ պահէր. զի ոչ կարէին մարդիկ համբերեն ժուժալ բաւեալ տեսլեան ոչ ութեն. այլ փակեալ զերկինս իբրև սրահակաւ ինն՝ յինքն վարագուրեալ. զի մի՛ անժոյժ եղեալ կիզցին արարածք։

Այս թէպետ և երևէր երբեմն ժամանակաւ ուրեմք ուրեմք արժանաւորացն՝ ըստ նոցա հանդուրժելոյ տեսլեանցն երևէր. որպէս զի նորա տանել կարասցեն. որպէս մովսէսն։ Այլ կամ գլխովին ժողովեալն՝ ի սինէական լերինն՝ ինքեալ ամպոյն պատեալ երևէր, և անտի խօսէր ընդ նոսա. նա էր յամ դարսն նոյնպիսի երևեալ ամպով։

Իսկ սրբոյն եղեկիէլի հոգեւոր մարգարէին ևս հուչական տեսլեամբ երևեալ. սակայն ոչ առանց ամպոյ տեսաւ երբէք ուրեք յամ մեղինաց։ Այնոքա և հոգեկիր մարգարէն՝ ի տեսողութեան իւրում պատմէ և ասէ. տեսի զի հոգին վերացեալ գայր՝ ի կողմանց հիւսիսոյ. և ամպ մեծ՝ ի նմա. և լոյս սաստիկ զնովաւ. և հուր և կայծակունք հատանէին՝ ի նմանէ. և՝ ի մէջ նորա տեսիլ արեգական, և ճառագայթ հրոյ։

Սակայն լոյս և հուր, և ոչ առանց ամպոյ. զի լոյսն՝ ի լուսաւորել զպիտանիսն. և հուրն այրել բարկութիւն զանպիտանսն։ Իսկ ամպ զերկոցուն զերկոսին տալ մատրուակեն յարբանեկել. զի հուրն՝ զմեղաւորսն այրել. և բարեացն՝ զհոգին շնորհացդ

յորդեգրութեանէ արքուցանել. և զբոցն Ծխախառն՝ հեղձամղձուկ նեղութեանէ տանջանացն։

Եւ մեծութեան իսկ՝ ամպքն գոտանին սպասաւոր. որպէս և տեսօղն պատմէ. թէ և ամպք փոշի են ոտից նորա։

Յորժամ յորդելոց բազմացելոց ամբարշտութեանն ասաց. սաստէ Ծովու, և ցամաքեցուցանէ. և զգետս ամաւերէ։ Ա՛ն զի զծովն մեղացն ցամաքեցուցանէ. և զգետն անօրէնութեանէ կիզեցուցանէ։ Զի զնեխան կանն, և զանհամականն, և զպղտորն, և զկացուցն, և զկայանն պարզեսցէ։

Իսկ իւրոցն ապաւինելոց՝ և զի նա յուսացելոց՝ փրկութեանէ բազմացեալ և ծովացեալ. և գետ առանց մեղաց յորդեսցէ։ Ա՛ն որոյ միւս մարգարէ ասէ զի նոյն պարու երգոյն իւրոյ, թէ զգետս ցըրուեսցես, և զերկիր դողացուցես սաստկութեամբ։ Զի՝ որ անցանէ ի սա։ Զի զջուր սաստկութեանցն զի վերուստ հոսեսցէ զի վերայ ջուրցն. զի նախ զջուրսն դառնացեալս զի բաց մղեալ մերժեսցէ. զի այն մնեալ որ սրբեսցին զի բաց անցուսցէ։

Որպէս միւս տեսօղն՝ զի դոյն նուագեաց, և անդէն զնոյն միաբան միահամուռ մեկնեաց. անձրև կամաց ասէ պատրաստեցեր ՅԾ ժողովրդեանքումն. թէպէտ հիւանդացաւ՝ սակայն դու հաստատեցեր զնա. զի զի մեղաց ծովն ըմբռնեալք, և նոյն ախտիւ հիւանդացեալք, և կապեալք յամբարշտութեանէ կապանն։ Ա՛ն այնորիկ զծովն անուն անհամուեքքամեալ. և ցամաքեցուցէ զակն աղբեր նորա, և զանձրև սաստիցն տեղացեալ առ մարդիկ։

Որպէս և յայս հայեցեալ երգեաց մարգարէն. խորք խորոց կարդացին առ քեզ՝ զի ձայն սահանաց քոց. զի իբրև սահանք հոգեւոր պատգամացն՝ զի վերայ կուտակէին. և զախտաժէտսն և զցաւագնոսան՝ զի բաց կորուսցէն։

Յու ցօղն բժշկութիւն եղև առողջացուցիչ՝ որպէս և ասէ. ցօղն որ ի քէն ցօղէ՝ այն բժշկութիւն է նոցա. զի դարձցին առ նա երկիւղիւ։ Օ՛ի այնք որ սիրոյն ոչ դարձան առ նա՝ ահիւ պատրաստեաց. արար զնոսա իւր ժառանգութիւն. որպէս և զձեզդ իսկ։ Օ՛ի նախ զՀեղեղն մեղաց ի բաց անցուսցէ. և ապա տացէ ձեզ զառաւաւութիւն շնորհս։

Օ՛ի ի ձէնջ բխեալ յորդեսցեն իբրև զգետս արդարութիւք, և իրաւունք իբրև զՁուրս հեղեղաց բազմասցին. և ապա զիւր գիտութիւն կենացն ձերոց՝ յամպոյն ողորմութիւն ի ձեզ տեղասցէ. որպէս և ասէն. անձրև կամաց պատրաստեցեր ՅԾ ժողովրդեան քում. զի թէպէտ և հիւանդացաւ սակայն դու հաստատեցեր զնա. և թէ՝ զուխս փափկութիւն քոյ տացես ըմպել արժանի եղելոցն։

Օ՛ի ըստ բանի հոգևոր երգչին՝ որ ասէ. ի քէն է տէր աղբիւր կենաց. և լուսով քո տեսանեմք զլոյս. Ծագեա՛ զողորմութիւս քո՝ ոյք Ճանաչեն զքեզ։ Իսկ իւրոց Ճանաչչացն Ծագեալ, և աղբիւրքն իմաստութիւն ի նոցն լուսոյ ականեն առ նոսին բխեալ։ Իսկ անիմաստիցն՝ այրիչ վտակքն, և ողողիչք՝ և հրդեհիչք՝ և տոչորականք։

Յու քանզի իբրև զՀուր յերկրի վառեալ էին մեղքն՝ առ ի տալ լոյս. զի անթաքուստ լեցին ի վրէժխնդրութիւն անտի՝ որ ի վերայն էր հասանելոց։ Ա՛ն որոյ յառաջագոյն կանխեաց յառաջագէտ մարդասիրութիւն. որ և իւրոց իրացն ասացելոցն հաստատութիւն. որպէս ասէ. տեսի ի մարդիկ զմեղս Ծովացեալս, բազմացեալս, հեղեղեալս. որպէս միանգամ և մեկնեցաւ իսկ առակն յաւուրս նոյեան դարին՝ Ծովացեալ մեղացն յերկրի. ընդ նմին Ծովացան և ջուրքն՝ կորուսանել զմարդիկ սատակացան։

Պատիճն ամբարշտայ յառաջէն դարան 'ի զգուշութիւն ապագայիցս։

Զ։ Որդ՝ սրբոց մարգարէիցն զեղելոց զառակս 'ի մէջ բերեալ յաճախագոյնս, իմն թերևս եղելովքն ահ արկեալ՝ զնոսա յիւրաքանչիւր ամբարշտութեանց փրկել կարացեն։ Զ։ ասն այնորիկ յաճախագոյնս երբեմն զսոդոմայեցիսն հրկիզեալ. երբեմն զհեղեղս զամաց մարդկին ջրահեղձոյց դարին՝ յօրինակ առեալ, և զայլոց բազմաց, և զանօրէնութիւնն ծովացեալս կոչէ. և փարատել յերկրէ խոստանայ։ Զ։ Դարձեալ զարդարութիւս յերկրի խոստանայ դնել։ և քան զՀրեղէնն և զյորդագոյնս բազմացուցանել. և զերաւունս ծաղկեցուցանել։

Զ։ ասն այնորիկ իսկ անցանել մարդկան զանցութեան ծովուն՝ գոչէ մարգարէն. անցցեն ընդ ծովն յաղթ, և հերձցեն զալիս ծովուն՝ այսինքն է զամբարշտութիւնք. և թէ՝ ցամաքեսցին պտոյտք գետոց, այսինքն մեղացն յորդութիւնք։ Զ։ ասն որոյ միւս մարգարէն ասէ. սրտմտութիւն քո 'ի վերայ գետոց, կամ՝ բարկութիւն քո 'ի վերայ ծովուց. և թէ՝ 'ի գետս բարկացիս տէր։

Զ։ Ի ածել զյորդութեան անձրևն. որ ջուրքն սուրբք կենդանութիւն հոսանքն՝ մերժեսցեն զջուրս ամբարշտութեան. և ածել կեսցեն յերկրի զդառնութիւն չարութեան ագիտութեան մարդկան ամբարշտութեան։ Զ։ Բայց և ասէ իսկ մարգարէն. թէ լցցի երկիր դիտութիւնք՝ որ ի բուրք բազումք զի ածել կեսցեն զծովս. և յայնմ կորստական ջուրցն ասէ՝ և 'ի կորուսիչ և 'ի հեղձուցիչ ջուրցն. թէ զայն ջուրս ածել կեսցեն՝ որ արբոյց զերկիր 'ի հրապոյրս պղտորս. որ առաւել ևս վասն հրապուրանացն 'ի կռապաշտութիւնն յորդորեն, մոլեգնեալ էին յաշխարհի։ Զ։ Եթէ հանցեն զամպն հոգիընկալ որ եզեկիել մարգարէին երևեցաւ. զի նոյն ամպ տեղացեալ առ

մարդիկ զշնորհսն գիտութիւն. և նոյն դալարացուցէ, և զչորութիւն ի բոյսս շրջեսցէ։

Իսկ զգօսացելովքն որ ի հաւանութիւն գալ ոչ կամիցին՝ սփռեսցէ զանձրև փայլատականցն ի կիզուլ յայրել, և ի վախճանել իսկ մատուսցէ՝ ըստ պէտ զբաժակն։ Որպէս ի տանտերորդ սաղմոսին նուագեաց առեսցն, թէ տեղասցի ի վերայ մեղաւորաց որոգայթ, հուր և ծծումբ. այս մասնիկ է բաժին բաժակի նոցա։

Օ՛ի տէր արդար է և զարդարութիւն սիրէ. և արդարութիւնն կամի առ ինքն կոչել զհեզ յորդէգրութիւն. զի հոգիընկալ ամսն ՅԾ-ակիր ՀՅմարառութիւն՝ սովոր է տեղալ յոգիս մարդկան զուսումն գիտութիւն. և տնկել ի սիրտ մարդկան զերկիւղն ՅԾ-ապաշտութիւն. և մատրուակել զսէրն քրիստոսի արարչին առ իւր արարածս. և նորին կամք ամբառնալ ի բարձրութիւս սիրոյ ՅԾ-ութիւնն. զոր և ձեզ պարտ է ընդունել։

Յերանեան քառասն սրբոյ հոգեբերանց. և հաղորդարար բարեխօսութիւնն նոցա։

Օ՛ի թէ և ամենք որ սպասաւորքն էն, առեալ հրաման՝ ի ՅՈՆԿ՝ ի ՅԼՅալ ի բարձանց՝ ի խորութիւն անգնդական ծովուցն՝ խոնարհ առթերացն լցեալք, ուռուցեալք՝ անսիսեալք՝ վերացեալք՝ տարածեալք՝ ծածկեալք զերեսս երկնից լի որոտմամբ՝ ցօղագին առատութիւնն զհրամանս արարչին կատարեն, առ ի նեբրնոցս մատրուակել։

Որչափ և սառաւել այս վկայքս որ վերացան ի սէր ՅԾ-ութիւնն, առ որս ՅԾ խոնարհեցաւ. և և սառաւել առին զշնորհս հոգւոյն, և լցան պարգևօք նորա։ Որք զմարմինս իւրեանց եռուն ի գանձն տէրունի, զի միւսանգամ առցեն անդրէն, նորոգել

զՀնացեալն։ Լոյս լցեալ ՅԾ-ային պատգամաւն՝ և գուն եդեալ մեծաւ ՀԱՅՆՈՒԹԻՒՆ քարոզեցին. և տեղացին 'ի ՀԵՂ զանձրև երկնաւոր շնորհացն. և փայլեցուցին 'ի ՀԵՂ զլոյս և զՀուր միանգամայն. և քան զՅԾ-ընկալ ամպն՝ ԼՍ զօգուտն 'ի ՀԵՂ հոսեցին։ Փոխանակ ամպաշուփ որոտալոյն ահագնութեան, ՅԾ որոտաց առ ՀԵՂ ԼՍ ահագնագոյնս. և կամեցաւ զՀԵՐն կենալ և զփրկութիւն։

Լոյս սոքա որ առեցին զերկիրս, և զՅԱՄ ինչ որ յերկրի է. և սիրեցին զերկինս, և զպատուիրանս թագաւորին արարչին՝ որ նասին 'ի վերայ նորա. որ ընկալաւ զնոսա և զոգիս նոցա 'ի յարկսն լուսեղէնս։ Լոյս յերկնաւոր առագաստն յամենչտակեցան նոքա, և զուարթակից երկնաւորացն եղեն որ են կենդանիք. և փոխեցան 'ի տկարութեան 'ի զօրութի, յապականութեան՝ յանապականութի, 'ի մահկանացուէս յանմահութիւն. զի յաղթեցին մարմնեղէն ցանկութեան. և հաղորդեցան ՅԾեղէն փառացն. որ նորոգեցան 'ի փառս անպատումն, և զերծան յանպիտոյեցս. և ոսկեբեր նոցա տաճար են ՅԾ-ութեան հոգւոյն. քանզի առ տէրն իւրեանց կենդանիք են. և սուրբ հոգիք նց գըգուեալ պահին կենդանիք։

Լոյսն մարմինք և ոսկեբեր նոցա տաճար են այ 'ի միջի ՀԵՐՈՒՄ. զի ոչ այլ իւիք կարէք դուք զՅԾընդ ՀԵՂ հաշտեցուցանել և մերձենալ առ նա, եթէ ոչ բարեխօսութեամբ նոցա և աղօթիւքն. և հաւանել ՀԵՂ հաւատոցն այնց՝ որով նոքայն վարեցան. և արժանի եղեն ելանել 'ի ծոցն կենդանի. և անուն հոսել 'ի ՀԵՂ զվտակս քարոզութեան ՅԾ-ՅԾ-ան պատգամաւն. և պաշտել ՀԵՂ զբաժակ արարչական սիրոյն՝ թէ ընդունել կամիցիք։ Բանզի ոչ 'ի կամս զՀԵՂ թողուցու ըստ անՅԱՄՆց կամաց գնալ. այլ թէ կամիք. և թէ ոչ. տակայն զոր ինչ ՅԾն կամի՝ զայն էք կատարելոց։

Խոնարհելն բանին ՝ յ չէրիէր՝ ի լուսաւորել զհաւատ
քոյոցդն , և ի ինչս զանհաւանսն ։

Քանզի իբրև ետես ՝ զազգս մարդկան որ կարացեալս և եղծեալս հիւանդութեամբ մեղաց։ եկն իբրև զբժիշկ բժշկել։ զի մի՝ ի հիւանդութեան մեղն մեռանիցին։ որում վկայէ մարգարէն և ասէ ։ զի թէպէտ և հիւանդացաւ՝ սակայն դու հաստատեցեր զնա ։

Լուր՝ այն գթածն և մարդասէրն՝ որ խակզբանէն էր՝ յաւիտենից , հաստիչն և արարիչն ՝ամի։ որ է նոյն ինքն բժիշկ իւրոց արարածոց։ որ երկիւղածացն ծագէ ։ որպէս ասէ մարգարէութեան։ ծագեցից ձեզ երկիւղածաց անուն իմոյ արեգակն արդարութեան։ և բժշկութիւն ՝ի թևս իւր ։

Ո՛վ իցէ արեգակն արդարութեան ։ եթէ ոչ որ խոնարհեցաւն և ծագեաց զիւր Ճառագայթսն ՝ամ հիւանդացելոցն և տխտանկելոցն մեղաց։ նոյն է որ ՝ի հօրէն ծագեաց։ զի նա միայն ինքն է՝ որ կարող է լուսաւորել զոգիս խաւարեալ մարդկան։ և զուարճացուցանել զանձինս ստուերանստաց անկելոցն ։

Լուր նա՝ ինքն է որ յայց էլ կորստեան մերոյ։ որոյ Ճառագայթիւք նորա կեան արարածք ։ նաև եղեալք , և ՝ի նմանէ ՝ամ։ Լաև զարդն երկնից , այսինքն լուսաւորքն՝ զիւրեանց զլոյսն յակնարկել Ճառագայթից նորա ՝ի մէջ արարածոց նորա ջահացուցանեն՝ առ ՝ի տալ լոյս երկրի։ և լի են լուսով նորա ՝ամ երկինք և աշխարհ ։

Լուր հոգի նորա՝ նշոյլք Ճառագայթից նորին էութեան ։ որ խոնարհեցաւ կամաք գթութեամբ իւրոյ՝ և եկն լուսաւորել զարարածս ։ զի էին խաւարեալք՝ եկն տալ և ծագել զլոյս իւր ։

Իսկ եթէ ոչ կամիցին զբանալ զաչս իւրեանց Ճառագայթից ՝ածութեան նորա , այրեսցէ մինչև իսպառ։ ոչ ասէն , թէ հուր բորբոքեցաւ ՝ի բարկութի

իմն։ այրեսցէ և ի ջրոյ մինչ ՚ի դժոխս ներբինս։ կերիցէ զերկիր՝ և զամ բոյս երկրի նց։ վառեսցին հրով՝ բորբոքեսցին հիմունք լերանց նոցա։

Օ՛ի՞, կամ ընդ էջն, կամ որպէս զհիմունսն մատուցեալ հրդեհիցէ։ այլ քանզի հիմնացեալ էին մեղն յերկրի և զօրացեալ։ Ա՛ սան այսորիկ հիմամբք և արմատովք հանդերձ զչարն կործանիցէ։ և խլեսցէ զմոլորութիւն առհասարակ յերկրէ։ զմոլորսութիւնն և զկռապաշտութիւնն ջնջել՝ և ՚ի բաց կորուսանել։ որպէս և է իսկ սկիզբն տանջանացդ՝ որ առ ձեզ տեսաւ։

Օ՛ի զծովու նմանութիւն ՚ի մէջ բերէ Հառս։ զմեղացն քամելոյ, և զյստակելոյ, և զդժնդակսն հեղձուցանել անդէն։ ըստ չէլութեանն նմանութեանն խստասրտութեանն ընդդիմասողոր բարոյիցն, և ապարատսն ապրեցանական փարաւոնեան զօրուն՝ վաշտացեալ գնդօքն, և բազմացեալ կառօքն, և սպառազէն առն և ձիոյ նիզակօք, և անթիւ երիվարօք վառելովք՝ ՚ի ջուրսն կորնչել։

Օ՛ի ՚ի չափաւոր ժամանակի՝ ոռոգմունք կարի պիտոյ են առ Ա՛մ բոյսս սերմանեալս։ իսկ յորդն և անչափն՝ նեխէ և ապականէ և կորուսանէ։ իսկ որ կարի բազմանայ՝ ողողէ անյիշատակելի ջնջէ։ Օ՛ի սոյնօրինակ լոյսն ցանկալի է յաչս մեր։ այլ յորժամ կարի ջերմակիծն առնիցէ՝ ինքս է։ ըստ հեբրայական բանակին՝ որ հակառակ կացին մովսէսի։ այրեցան ՚ի բարկութեանն տի՝ այ։

Իսկ ցամաք երկիր բնակութեան է մեր։ և Ա՛մ օգուտք և պաՀարանք կենաց մերոց ՚ի սմանէ, և ՚ի վերայ սորա, և դայեկութեան դարմանք մեզ՝ ըստ նմանութեան կաթին ՚ի մորէ։ Իսկ սոցին ՚ի սոցանէ վՀ սոցին սոյն խնամակալ մեզ երկիրս, պայթեաց՝ պատառեաց՝ եբաց զիւր թանձրութիւն։ և ելոյզ, ընկլոյզ, եկուլ միանգամայն, կենդանւոյն իսկ ՚ի դժոխս ուղարկեաց զզեռսացիսն։ որ իշխեցին յընչաց բերել, և արհամարհել զընտրեալն և զսիրելին

ՅՍ զմովսէս • յայնմ ժամանակի այս եղև իսկ։

Լ՚սաա Ֆարդասերս-Ի-Ն հրիսոսի Ի Նոչէ ՀԵՌՕՐ ՇարՀայս-Ի-Ն Էրկնէց։

Լ՚ուաքեաց արդ՝ ՅԾ զորդին իւր առ մարդիկ • որ էին շրջեցաւ ընդ երկիր • և առաքեաց զառաքեալսն իւր ընդ ՅՄ երկիր • և այս երանելիքս որ առ ՀԵՌ հասին, ոչ միայն զլոկ բանս՝ այլև զնշանս արուեստիցն ցուցին ՀԵՌ ՀԵՐՈՎ պատուհասիւքդ։

Լ՚ուդ՝ որք անգոսնեցին զԾառայն ՅՍ զմովսէս, այնպիսի պատուհասի եղեն արժանի։ Իսկ որ իշխեցին ընդդէմ ՅԾ որդւոյն խստանալ, որպիսի լինիցին արժանի պատժոց պատուհասից։

Օ՚ի նորա որ յերկրաւոր հրամանատուէն հրաժարեցին՝ այնչափ բարկուէ եղեն պատահելք։ Իսկ որք յերկնաւորէն հրաժարիցեն՝ որչափ ևս աւելագոյն տանջանացն պատահիցեն։

Զ՚անզի տեր ՅԾ որդին առաքեալ՚ի հօրէ, յորժամ զիւր առաքեալսն և զսիրելիսն առաքէր ընդ ՅՄ երկիր, այսպէս ասէաց զաւետաւորսն, և հասատատեաց • որ զՀԵՌ ընդունի՝ զիս ընդունի • և որ զիս ընդունի՝ ընդունի զՀայրն իմ։

Իսկ արդ՝ թէպէտ սպանէք դուք զնոսա • այլ նորա և այժմ կենդանի են • և յաւիտեան լինելոց են կենդանիք։ Լ՚ուդ՝ նոցին բարեխօսութիւն հաՀԵցայք ընդ ՅՍ՝ ըստ խրատու սոցին առաքելակցին ՀԵՐՈՅՍ առաքելոյ՝ մեծին պօղոսի • որ ասէին, թէ մեք հաՀԵցարուք ընդ ՅՍ՝ Ի ՀԵՌն մահու որդւոյ նորա • զի որդին ՅՍ մեռաւ և եկաց • այնպէս և վկայքն նորա սիրելիք՝ կենդանի են, և ՀԵՌ բարեխօս։

Օ՚ի որդին ՅՍ ինքնին իսկ ՀԵՌ քարոզ աւետեց • և ինքնին ՀԵՌ մատրուակ ուրախարար պատգամա-

ցին։ Նա ինքնին ձեզ հրաւիրակ յարքայութիւն։ Նա ինքնին պաշտօնեայ իւրոց քարեացն։ Ա՛յս ինքնին քաղուկս 'ի վերս հարեալ՝ 'ի մէջ գետին անցեալ պարգևատու լինի իւրոցն արժանաւորաց։ Ա՛յս ինքնին ահարկու լինի և դարձուցիչ 'ի վերայ այնոցիկ՝ զոր Ճանաչէն զնա։ Ա՛յս ինքնին գտակ՝ որ կորուսեալ լինին 'ի նորա քարեացն։ Ա՛յս ինքնին առաջնորդ լինի մոլորեալոց՝ որ մոլորեալ էն 'ի նորա Ճանապարհացն։ Ա՛յս ինքնին նաւահանգիստ լինի այնոցիկ՝ զորս ալիք ամբարշտութիւն մեղացն պատեցին իբրու զձեզդ։ Ա՛յս ինքնին դարձուցիչ լինի գերուեց՝ որ իցեն գերեալ 'ի մեղս իբրու զձեզդ։ Ա՛յս ինքնին լինի բժիշկ վիրաւորելոց՝ որ ամբարշտութիւնն են վիրաւորեալ իբրև զձեզդ։ Ա՛յս ինքնին լինի օգնական՝ որ թափեալ են յօգնութեց զնա Ճանաչելոց։ Ա՛յս ինքնին լինի լոյս յուսացելոց 'ի նա, 'ի մշանջենաւոր՝ յանկէտ՝ յանսպառ՝ յանպատուհաս, և յանվախճան արքայութիւն։

Որ նայի քաղցրութիւն յարարածս իւր։ և գթութիւն իւրով կերակրէ զչարս և զբարիս։ այլև խրատէ զամենեսին՝ զի յորդեգրութիւն կոչման ՅԾՈՒԹԻՆ մերձենալ արժանի արասցէ զմեզ։

Ա՛յլ զի ձեզ յայտ լինիցի՝ զի այս այսպէս է։ որ ՅԾ մարդասէր է, կամի՝ զի ծառանգս արասցէ զձեզ ինքեան։ այլ յայնժամ մինչ ոչն գիտէիք դուք զՅԾ, ծառայէիք այնոցիկ որք ոչն էին ՅԾ։ այլ այժմ իսկ ծանեարուք դուք զՅԾ։ մանաւանդ թէ ՅԾ իսկ ծանեաւ զձեզ։ զի եկիք դուք մոլորեալք 'ի տկար արարածս։ և 'ի մեռեալ պաշտօն, և 'ի լուծ ծառայութեան մեղացն եկիք հնազանդեալ։ այլ այժմ զատեցայք յայնմանէ յանօգուտ լծոյ ծառայութեան 'ի սարկութիւն անտի, 'ի քս յս 'ի տէր մեր յորդին ՅՅ։

Զ դ՛ոյշ կացէք՝ գուցէ հրաժարիցէք 'ի խօսելեաց աստի։ զի թէ այնք ոչ կարացին ապրել որ

յերկրաւոր հրամանատուէն իշխեցին հրաժարել։ որչափ ևս առաւել մեք եթէ յերկնաւորէն թի-
կունս դարձուցանեմք։ Որոյ ձայնն զերկիր շար-
ժեաց յայնժամ, և այժմ խոստացեալ է և ասէ։
դարձեալ միւսանգամ շարժեցից ոչ միայն զեր-
կիր, այլ և զերկինս։ այլ և զայն ևս զոր ասէն միւս
անգամ ևս։ յայտ առնէր զշարժելոցն՝ իբրև զե-
ղելոց զփոփոխումն։ զի այն հաստատուն կայցէ
որ անշարժն իցէ։

Վասն այսորիկ հաստատեցէք զսիրտս ձեր անշարժ թագաւորութեան։ և ըմբռնեսջիք զշնորհսն, որով պաշտեսցուք մատաքիւրութիւն զուարճ։ Զի ՇՏ-
հուր այրիչ է, զի այրեսցէ զմեղսն ձեր։ և սրբեսցէ զանձինս ձեր՝ իբրև ի հալոցս փորձութիւն Ճարտարութիւն արուեստիցն՝ կուանագործ արծաթարարացն, ընտրել զժանկն ի սրբոյ անտի։

Լակ որ ընտիր՝ սրբի և պատուականանայ։ և որ ոչն։ այրի և հրդեհի։ որպէս և գիտացն ասէ, թէ եղեցի լոյսն խարայելի իբրև զՀուր։ և սրբեսցէ զնա ի քոց բորբոքեալ։

Յ։ զանօրէնութիւն խոտոց նմանեցուցանէ այսպէս։ թէ վառեսցի զնովաւ, և կերիցէ զնա իբրև զխոտ։ յաւուր յայնմիկ շինջցին լերինք և բլուրք և անտառք։ և կերիցէ ի հնոյ մինչև ի մարմին։ և որ ապրէն եղեցի իբրև որ՝ զի ապրէ ի բորբոքեալ քոցոյ։ և որ մնացեալն լցեն ի նշնէ՝ թուով եղեցին ասէ։

Շ ինուրէն վաղափուլ աշխարհին, և բաժանումն
լեզուաց։

Ա։ ոդ՝ ի ժամանակն յառաջինս յետ ջրհեղեղին, իբրև բազմացան մարդիկ ի վերայ երկրի՝ վայելէին ի պարարութիւն խնամոցն Աստ։ և Ճարպոյ եկեալ զակամբ՝ յայլայլութիւն մտաքերէին, անդի-

տացեալք յիմարեցան։ Լսկեալ 'ի մի վայր՝ խորհուրդ առեալ 'ի պաշտօնս նորին նոց խորհրդոց, շինել 'ի պաշտօն խորհրդոյ, աշտարակ իմն բարձր անհարին կոթողեցին 'ի դաշտն սենաար՝ յերկրին աստրեստանեայց։

Զրդ՝ շինել շինէին 'ի պաշտօն դիոյ անձանց իմն անուն մեհենաշէն կապեալ դիւաց, առ իւրեանց որդիսն թողուլ։ Պանծացեալ հպարտացեալ՝ զան ձինս 'ի գործ կացուցեալ կաւագործութիւնն աշխատեին՝ իբրև պաշար հերշատանաց՝ չարութիւն ցաւակաց ազգաց, զինի եկեղցոյն իւրեանց թողուլ խնդրէին այն անմիտ ազգն առաջին։

Տէր ամ նայեցեալ 'ի նոցա պակասամտութիւնն, անդ խառնեաց արբոյց նց զխառնակութիւն լեզուացն բաժանման. անդէն 'ի նմին տեղւոջ զնոսա ընդ միմեանս խառնակեաց. ուստի և նոյն տեղին ըղխառնակութեան զբաբելն անուն ժառանգեաց։ Եւ նոքա ցրուեալք մեկնեցան 'ի միմեանց. չլուսել այնուհետև այր ընկերի բարբառոյ. այսպէս քակեալք 'ի միմեանց անջատեցան. և լքումն գործոյն զոր առաջի արկեալ միմեամբք տանէին։ Եւ արբեալք յիւրքանչիւր լեզու՝ ուսեալք յամենահաստատիչ արարչէն. խառնակեալք և ցրուեալք բաժանեցան 'ի միմեանց։

Եւ հուրն ահագին հողմախառն շոգի հոգւոյն ամ, որ սովոր է զմարդիկ յուղղութիւն ճանապարհն հաստատել, և 'ի զուրբաստակ ճանապարհացն խափանել, և ուղղել և հաստատել զամենեսին յուղղութիւն արդարութիւն. այն հուր անկեալ 'ի վերուստ կորեալ զաշտարակն՝ վերուստ 'ի վայր փլուզեալ հոսեաց. տապատ դաշտացն ցան և ցիր կացուցանէր։

Զրդ՝ իբրև այս նոցա նորացոյց ամբարշտութեանն խափան լիներ. ցրուեալք ընդ իւրքանչիւր վիճակս՝ ըստ կամացն ամ 'ի վր երկրի սփռեցան. եօթն նաստուն և երկու նահապետք լեզուաց կացեալք՝

բաժանեցան ընդ երկիր , հաստատեալք յիւրա-
քանչիւր սահման ։

Բայց մի ոմն 'ի հեբրայական ազգէն ոչ եմուտ 'ի
խորհուրդ շինել զվաղտփուն . և ոչ կցեցաւ յե-
րագաւերն՝ որ վասն այնր էր խորհուրդն . վասն
այնորիկ զիւր լեզուն պահեալ չնորհեաց ։ Որ նախ
արարչին Ծանօթ եղեալ զաւակօքն իւրովք . որպէս
իսկզբանն պատմեցաք . զնոր պաշտութիւն յանձն առ-
եալ՝ ժողովուրդ ձեռական անուանեցան նոյ . ուս-
տի և մարգարէքն նոր-խօսք . ուստի և քան ըստ
մարմնոյ՝ որ է 'ի վերայ նմի նոր օրհնեալ յաւի-
տեանս . ուստի և աշակերտքն աւետարանիչք՝ նո-
բասարգև կտակարանացն չնորհելոց . որք և վկայք
զօրութեան գործոց նորա՝ նշանացն և արուեստիցն
որ գործեցան 'ի նորա գալստեանն ։

Որք և մատակարարեցին իսկ զչնորհսն . որք և
զհուրն կենդանութեան հոգւոյն 'ի բերան առեալ՝
հրդեհեալ սրբեցին զաղտն տիեզերաց . որք և յա-
ղուցին 'ի գլխամանէ զանկումն նմա երկրի . որք զա-
նօրէնութիւս տիեզերաց փլուզեալ աւերեցին , մա-
շեցին ըստ օրինակի բարձրաբերձ աշտարակին ։
զորմէ և պատմեցաքն ։

Որդ՝ փոխանակ բարձրաբերձ և վաղտաւեր աշ-
տարակին՝ խաչն Ճշմարտութեան կանգնեցաւ . որոյ
զօրութիւն մշանջենաւոր է , և փառք նորա նոր . ոչ
և գիտօղն ասէ , 'ի քեզ տէր յայտնեսցի՝ և փառք
նորա զքեզ ծածկեսցէ . և գնասցեն թագաւորք
'ի լոյս քո , և հեթանոսք 'ի ծագել լուսոյ քո ։

Պնդութիւն հաստատեաց ասելբ առաքելոցն տրեսուսի, և արիոս վկայել։ և յորդոր հոգեւորելոյ ի նոյն հաստատութեան։

Զհա թագաւորեալք որք պարծեցան ի խաչելեալ փրկիչն։ որք և վկայք են նորա ճշմարտութեան։ Որք մեռան ընդ քի՝ ընդ նմին թագաւորեն։ մատնեցան ի մահ վասն անուանն այ։ զի և կենդանի քի յայտնի լինին ի մահկանացու մարմնոյն սիրելեացն քի աւադիկ։ Որք յայտնի մեռեալք և ի ծածուկ կենդանիք։ որ քարոզեն յայտնի զկենդանութիւն իւրեանց։ և տան արքուցանեն զկենդանութիւն ձեզ որ մեռեալ եք ի մեղս ձեր։

Որ ճշն իւրեանց յայտնեցաւ ձեզ յոսկերս սոցա։ վասն զի սորա առին յանձինս իւրեանց զլոյս չարչարանաց խաչին։ և նովին քի չարչարանքբ օրինակեալ զհամբերութիւն փրկչին յանձինս իւրեանց։ լուսաւորել զկաւարն՝ որ մածեալ էր յոգիս ձեր։ որպ ասեն առաքելքն, թէ խաւար ծածկեաց զերկիր։ և մառախուղ մածեալ է զհեթանոսաքբ։

Զրդարև խաւար և մառախուղ մածեալ է ըզհեթանոսութիւնբ ոգւովք ձերովք՝ անձանաչական սովորութիւնն։ որպէս և աշտարակն մոլորութիւն, որ յղացան աղգ մարդկան զանօրէնութեան պաշտամունս, անընչոց և շնչաւորաց արարածոց պաշտօն մատուցանել փոխանակ արարչին։

Զի թէպէտ յղացեալք խորհրդովք անօրէնք՝ աշտարակագործ կորուսիչ պաշտամանցն։ վասն որոյ և ցրուեցան իսկ ընդ երկիր խառնակեալ լեզուօքն, սակայն ոչ թողին զնոցն։ որպէս և ասէ գիտօղն ի նոյն սաղմոսարանի անդ, թէ ահաւասիկ երկնեցին զանօրէնութիւն։ յղացան զչաւ, և ծնան զանօրէնութիւն։

Զի յետ քակելոյ աշտարակին՝ յիւրաքանչիւր գործս անօրէնութեան գործեցին ձեռագործս,

որում և երկիր պագանէին։ որպէս և միւս գիտօղն ասէ։ փայտին ասացին՝ թէ հայր իմ ես դու։ և քարին՝ թէ քո իսկ ծնեալ է զմեզ։ և դարձուցին յիս զթիկունս՝ և ոչ երեսս իւրեանց։ ՝Ի այնոր ժամ փոխանակ փայտին որում երկիր պագանէին՝ կանգնեաց զխաչ իւր։ ուստի և զլոյս Հաւատոյ Թիցն արձակեսցէ մեզ արարածոց՝ որ նստէին ի խաւարի և ՝ի ստուերս մահու։ իսկ զանպիտանն այրեսցէ, ըստ մարգարէական բանին՝ որ ասէ։ եղիցի լոյս իսրայէլի հուր։ և սրբեսցէ զնա ՝ի բոց քորքոջեալ։

Իսկ աշտարակն յուզեաց զսրտմտութի քարկուէ արարչին՝ ցրուեալ և խառնակեալ զլեզուս նոցա։ իսկ ՝ի խաչէ անտի ողորմութիւք յուզեցան՝ ժողովել զցրումն ազգաց որդւոց ադամայ։ Լու փոխանակ քարապաշտութեն հոտոյ մնուտոյն, վիմայոյց զհաւատս իւրոց վկայիցն։ զի անշարժ լինիցին և հաստատուն։

Լու շինեսցուք մեք ձեօք հանդերձ ՝ի վերայ հաստատութեն հաւատոյն առաքելոց և մարգարէից։ ընկալցուք զհոգի շնորհացն։

Հուրն հոգին՝ որ այրեաց և փլոյց զաշտարակն մոլորութեն, նոյն շինեսցէ զմեզ հիմամբն հաստատութեն հաւատոց, և ածցէ զմեզ ՝ի միաբանութեն խաչիւն իւրով։ Լու տացէ մեզ զհուր հոգւոյն՝ որով մեղքն այրեսցին, և արդարութեն լուսաւորեսցէ ՝ի խաչին։ ուստի տերն յայտնեցաւ, և փառք նորա ծածկեցին և լցին զերկիր։ ուստի վկայքն թագաւորք՝ թագաւորեալք ընդ քեզ։ որով և հաշտիքն իսկ դուք ընդ ՝ի ձեռն մահու որդւոյ նորա։

Կատարէն երեսուն չկամս հօր՝ զերկնաւորն մարդեսային ասէր։ և որդեփեր առնէն զսուրբ առաքեալս և զձգնաչրեա հաստատեալս՝ ոչ և հօր երդում։

Վասն որոյ և ածորդին իսկ խոնարհեցաւ՝ զի առցէ զմարմին մարդկան։ և խոնարհեցի յանարգութիւն մահու՝ մինչև ի թաղումն անգամ։ զի զարժանաւորսն նմանակից արասցէ պատկերի ածութեանն մարդասիրութիւն իւրով։ Զբ և եղբարք անուանեցան վասն անբաւական սիրոյն՝ որ սիրեաց զմարդիկ։ զի լեցի ինքն անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց։ վասն որոյ մարդասիրութեն եհատ այսպէս զդատաւճիռն։ ասէ իսկ ինքն ածորդին, թէ սոքա են իմ քոյրք և եղբարք՝ որ առնեն զկամս հօր իմոյ որ յերկինս է։

Օ՛ի որդին եկեալ կատարեաց զկամս հօր իւրոյ։ և զնչ իցեն կամքն հօր, եթէ ոչ՝ զի զորդիս մարդկան զմերժեալսն ընկալցի միւսանգամ յարքայութիւն։ և զանկեալսն ի նեղբոյ մահու՝ կանգնեսցէ ի կենդանութիւն։ և զկամակատարսն հօր՝ որ ինքն բնութիւն է որդի միածին, արասցէ որդիս շնորհօք։ Վասն այնորիկ էջ ինքն տէրն զօրութիւն ի տկարութիւն մարդկութեան կարգացն։ զի նովին տկարութեանն ըմբռնեսցէ զտկարացեալսն ի զօրութիւն ածութեան կարգացն։ և տացէ արժանի լինել որդեգրութեան շնորհին։

Զ՛որդ՝ ինքն ինչեալ կամաւ՝ զի զսիրեցեալսն խառնեսցէ յածութիւն անդր։ Զբ ըստ արժանաւոր սիրոյն իցեն տպաւորեալ յածային սէրն, զնա եղբարս անուանեաց։ և զբնական սէրն իւրոյ հայրական իմաստութեանն ուսոյց նոցա։ և ի գութ խնամոցն հօր գրգռեաց՝ յորդեաց՝ ջերմոյց զնոսա։ և եւ իշխանութեան սրբոցն որդիս այ լինել՝ որք հաւատացին յանուն նորա։ Զ՛ու եցոյց նոցա հայր շնորհաց զձնօղն իւր։ և եդ բանս ի բերան՝ հայր

կոչել զնա անձանց։ և եցոյց նոցա զբարեբարութիւն հօր իւրոյ։ զի հօրաբարոյ բարեբարութիւնքն լիցին արժանի՝ Ճշմարիտ որդւոյն ՝ի եղբարքն անուանիլ։

Օ որս առեալ որդւոյ՝ առ հայր մատուցանիցէ, թէ ահաւասիկ ես և մանկունք իմ՝ զոր տուեալ ինձ հայր։ Եւ դարձեալ առ հայր խօսի և ասէ։ պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ՝ի մէջ ժողովրդոց օրհնեցից զքեզ։ Որպէս և առ աշակերտսն ասէր։ զնա՛մ զոր տուաց ինձ հայր իմ, և ես ձեզ ցուցի։ զի ես զձեզ ինձ բարեկամս գիտեմ։

Ճշմարիտ որդին ՝ի՝՝՝ Ճշմարիտ վկայս և խորհրդակիցս արար իւր զկամարարս ՝՝՝ ծառութիւնն իւրոյ, որք մատեցան ՝ի սէր նորա՝՝՝ զպատուիրանս նորա պահել։ զորս և այնչափ վերացոյց բարձրացոյց զնա՝՝՝ յիւր ՝՝՝ ծառութիւն անդր։ Ա՝՝՝ ասն որոյ և առ հայր գոչէր, թէ այսուհետև սոքա չէն յաշխարհէ աստի։ որպէս և ես չեմ յաշխարհէ։ Եւ ես աղաչեցից զհայրն, զի հոգին սուրբ զբարեխօսն առաքեսցէ առ ձեզ զառհաւատչեայն, որ խառնեսցէ զձեզ յանծուն անդր։ որ ՝ի ձեզ իսկ բնակեսցէ մինչև յաւիտեանս։ զոր ոչ տեսանէ աշխարհս, և ոչ ճանաչէ։

Ի՛ՐԴ՝՝՝

անկան ընդ կարեօք մահու մեղայ. և իբրև ոչ ոք ուրեք կարացեալ ՝ի մարդկանէ ցանգել զկրամա-տութիւն, ՝ի Ծառայատոհմ ազգաց անտի ոչ հնարեցաւ այս լինել. որ ՝ի ձեռն ադամայ յանցաւորութեանն, զօրացաւ մահ և եկեալ. որպէս և ասացաւն, թէ յադամն ամենեքին մեռան։

Ինքն որդին ՝ի սա զկերպարանն ադամայ ՝ի նմանութիւն Ծառայի. և եղև ինքն իբրև զմի ՝ի մարդկանէ. և եկն ցանգել զկրամատեալն. զի շինեսցէ զաւերեալն. որպէս ասէ մարգարէն, թէ շինեսցին աւերակքն յաւիտենից։ Զի առցէ ըզ մարմին արդարոցն՝ իւրոց կերպարանացն. և նովին մարմնովն կատարեսցէ զարդարութիւս ամ. որպէս և առ յովանէս խօսի. թէ այժմ այսպէս արժան է լինել. զի կատարեսցուք զարդարութիւս ամ։

Զան զի ինքն ՝ի ՝ի Ծառայական մարմնովն զամ արդարութիւն կատարեսցէ. զի մարմնովն զոր միացոյց և խառնեաց յաստուծութիւն իւր անդր, նովին մարմնոյն տացէ յաղթութիւն։ Զի ոչ ընդ միոյ ադամեան մարմնոյն պարտաւորեցան. ընդ միոյ տէրունեան մարմնոյն ազատեսցին ՝ի Ծառայութէ մեղացն, այնու ազատութեամբն որ ՝ի վերէ է քան զամենայն ազատութիւնս։

Զի վասն գնոսա ազատելոյ էջ ՝ի Ծառայութիւն. զի իւրով մարմնովն լցցէ կատարեսցէ զամ չափս կարգացն հանդիսի արդարութեանն. զի միանգամայն բարձցէ զկարիս տկարութեանն մարմնոյ մեղացն։ և միանգամայն ինքն յինքն քահանայասցի հօր իւրում։ Զի միանգամայն ինքեամբ հաճեսցէ մատուսցէ զինքն պատարագ հաշտութեան հօր իւրում։ և նովին պատարագաւն մատուսցէ ընդ նմին զհաւատ խոստովանութեան մերոյ։ Զի յորժամ ինքն էր որ յաղթեացն և կատարեացն. և հատ՝ ընկեց՝ զդատաւճիռն մահու, զի անշուշտ և անսուտ և անվրէպ լեցին կենաց աւետիք. զի ՝ի քո՛ յամենեքեան կենդանասցուք։

Լու զինչ այն իցէ որ ասէն , թէ կատարեաց զկամն հօր իւրոյ . եթէ ոչ՝ զի իւրով մարմնովն բարձրացուսցէ զանուն յաղթութեան կատարման արդարութեան ։ Ընդ ամ մարմնաւորաց առեալ զզ նպատակ յաղթութենն՝ բարձցէ զնախատինս յորդ ւոցն ադամայ . և թափեսցէ զթշնաս դառնութեամահու . և ջրեսցէ զխայթոցս դժոխոց . զի համարձակ լիցուք ասել , թէ ոՀրէ յաղթութիւն քո մահ . և կամ ՀՀրէ են խայթոցք քո դժոխք ։ Զի հատցէ միանգամայն զամ արտօսր յամ երեսաց . և բարձցէ զսուգն տխրական և տացէ զուրախութիւնն անտրտուամ ։

Որպէս ինքն խոնարհեցաւ 'ի բարձրութեց անտի . այնպէս բարձրացոյց զորս եգիտ արժանի իւրոյ ածութենն . և արար զնոսա գանձանակ սիրոյ՝ իւրոյ կամացն , և տաճար բնակութեան հոգւոյն սրբոյ . զի լիցին նոքա ընկղմեալ յածութիւն անդր . զի իւրովն յանգակից մարմնովն՝ ձգեաց զնոսա առ իւր նախ . իսկ նոքօք զամենեսեան ձգեսցէ 'ի նոցա ուրախութիւնն ։

Որպէս յառաջնոյս գիտող մարգարէն՝ յայտ հայեցեալ ասէր , թէ ուրախ լիցուք յուրախութիւն ազգի քոյ , և գովեսցուք մեք 'ի ժառանգութեան քում . զի ժառանգութիւն հօր՝ որդին միածինն է . իսկ ազգք ուրախակից , արդարք՝ մարմնակիցք տէրունական մարմնոյն ։

Զի զգովութիւն արդարութեան ինքն բարձրացոյց ընդ ամ մարմնոց մարդկան . որ ժառանգն էր հօր , և ժառանգ իշն ամ արարածոց ։ Իսկ զի և վկայէլքս իւր՝ ուրախակիցս իւր արար , զի տոհմակիցք էին մարմնոյ նորա . իսկ ամ տոհմակից մարդիկ լիցին ուրախակից տոհմակցաց իւրեանց վկայիցն ամ ։

Լու տէրն նախ զնոսա զատոյց յերկրէս կարգաց . և հրեշտակերան և ածխատուն կարգաւքն բարձրացոյց յերկրէս . զի ինքեանք վերացեալք

յաճուրթի իւր, զամենեսեան զտոհմակիցս իւրեանց վերացուսցեն ի նոյն սէր ճաճուրթեանն՝ յորս ինքեանք հասին։ Օ՛ի և զխորհուրդս ճաճուրեն նախնիքն արժանացան գիտեալ, և նոքօք ճամ արարածք գիտացին. զի աշխարհ ասէ՝ ոչ տեսանէ, և ոչ ճանաչէ. զի նոքա նախ զատան մեկնեցան յաշխարհէս. և ապա հասեալ սիրովն ճն իւրեանց ի զօրութիւն հոգւոյ նորա. դուք ասէ ճանաչէք, զի ի ձեզ իսկ բնակեսցէ ի յաւիտեան։

Տեսանէք զդատաւճիռն. զի ասաց թէ ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեան. զի որպէս ի կենդանութեն սոցա, այնպէս և այժմ և յաւիտեան բնակեալ է յոսկերս սոցա՝ բարեխօս հոգին, որ դեգրութեն արժանի եղելոցս. որով հաշտեցեալն իսկ դուք ընդ այ՝ մահու որդւոյ նորա։

Օ՛ի սուրբ վկայքս այսոքիկ հոգւոյն՝ որում արժանի եղեն, նովին լեցին ձեզ բարեխօս. զի և ձեզ անգիտելոց զանցուցելոց լեցի թողութի։ Օ՛ի որդին այ՝ որ ինքեամբ եցոյց զօրինակ կենդանութեան իւրոյ վկայիցն՝ սիրելեաց իւրոց, ասէ ցնա. թէ ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք, և կենդանասջիք յիս. և ես ընդ հօր. և դուք ես ի ես. և ես ընդ ձեզ։ Օ՛ի և որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս. և սիրեսցի նա ի հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս։

Ա՛ռդարև սիրեցին զտէրն առաւել քան զկար իւրեանց. քանզի տեսին զտէրն և զարարիչն՝ զի եդ զանձն իւր ի վերայ նոցա. իսկ նոքա ետուն զանձինս իւրեանց ի մահ փոխանակ մահու նորա. և խառնեցան ի սէր ճաճուրթեն նորա. և եղեն օ՛թեվան մեծուրթեան նորա։

Տեսին զտէրն՝ զի մատոյց զանձն պատարագ հօր. վասն այնորիկ և սոքա իբրև զդատինս մատնեցան ի մահ, զի լեցին պատարագ ճաճուրդւոյն։

Զի որդին ՝այ կատարեաց զկամն հօր իւրոյ. իսկ սոքա կատարեցին զկամն ՝ածորդւոյն. և ՝ածորդին ձգեաց զնոսա առ ինքն, և նոքօք զ՝ամ տիրեզերս։

Զ՝ուն նոքա հրաման ՝ի ՝ոնէ՝ արհամարհել զաշխարհս, և զ՝ամ որ ինչ աշխարհի է. զի արհամարհեսցեն զայս կեանս աշխարհի՝ զի անցաւորք են։ Զ՝ըհամարհեսցեն և զնեղութիւն որ ՝ի սմա՝ վասն արդարութեան որ գայցեն՝ զի անբեւեղք են, և սերմանիք են մշանջենաւոր բարութեաց։ Զի խոտեսցեն՝ անարգեսցեն՝ լքցեն՝ թողցեն զիւրաքանչիւր գործս ունայնութեան կարգացն. զի ապրեսցին յաւիտենից տանջանացն։

Զ՝ի երկնչիք ասէ յայնցանէ որ սպանանեն զըմարմինն, և զհոգին ոչ կարեն սպանանել. այլ երկիւղ՝ուք դուք առաւել յայնմանէ՝ որ զոգին և զըմարմինն արկանիցէ ՝ի գեհենն ՝ի հուրն։ Զի թողուլ զչարն և ընտրել զբարին լեցին. զի փափաքեցեն ընթացցին ՝ի սրբութեան և յերկնաւոր լոյսն, և զյաւիտենից փառսն ժառանգել, և ժառանգակից անմահութեան լինել՝ ՝ածային յաւիտենական փառացն։

Զ՝ՈՒՐԱԿ ասէ ընդ նեղ դուռն, զի նեղ է ասսի դուռն որ հանէ ՝ի բարիս. և անծուկ է ճանապարհն որ տանի ՝ի կեանսն յաւիտենից։ Զի նեղութեամբ և վշտաբ հասցեն յանսպառ արքայութիւն անդր՝ որ պահեալ է նոցա, յորժամ քա՝ յայանեսցի միւսանգամ յաւիտենական պարգևօքն յարութեն, և անմահութիւն բերելով, և ըստ գործոցն հատուցանելով. որպէս և անդ ևս յիւրում տեղւոջն պատմեսցուք ձեզ։

Բայց ապրուելիան քանիցս դեռ գրոց, լինել խորագիտ եմբ՝ զոյ, և գիտիս եմբ զաղանի։

Զղերուք դուք խորագիտք իբրև զօձս։ Զի զինչ իցէ խորագիտութիւն օձին. եթէ ոչ՝ իբրև զի ծերացի նա, և տեսցէ ապականեալ զմարմին իւր, զկորհուրդս խորագիտութիւն իւրոյ ի մէջ բերէ։ Զի դիմէ նա ընդ տեղի ինչ նեղածերպ վիմաց. և ընդ կրթեալն՝ կեղուէ զապականեալ զմորթն ծերացեալ մարմնոյն ի բաց մերկանայ, և միւսանգամ ի մանկութիւն դառնայ, նորոգեալ զարդարեալ զինքն։

Այնպէս և արդարացեալքն՝ զանցաւոր մարմնոյս զկոտութիւն անձանց ի բաց մերկանան. զի մոցեն ընդ նեղութիւն, և ըմբռնեսցեն զանմահ թագաւորութիւն։ Զի որք զնոսն սիրեցին՝ կենդանիք են յաւիտեան. քանզի այսպէս ասաց. որ հաւատայ յիս՝ թէպէտ և մեռանի՝ կենդանի է. զի ես իսկ եմ յարութիւն և կեանք՝ ասաց որդին այ։

Որ կամաքն հօր՝ որպէս վերագոյնն ասացաք, ձա՛ զակեաց զմահ վասն մեր. զի փրկեսցէ յապականութենէ զամ ազինս։ Իսկ այժմ՝ զի նստի ընդ աջմէ հօր, զամ ինչ պատրաստէ, և շնորհէ յուսացեալոց իւրոց։

Զղերուք ասէ միամիտք իբրև զաղաւնիս։ Մի՝ վասն զի մարդասէր է՝ և մարդընդել, և ի մարդամտի և եթ կամի կեալ աղաւնի. ոչ զի և ածուին մարդասէր է, և կամի հանապազ ի մէջ աբեց իւրոց բնակել։ Զի մի՝ զի եթէ բազումանգամ բարձցէ ոք զձու, կամ զձագս աղաւնոյն, ոչ երկմտեալ թողու զտեղի բունոյ իւրոյ երբէք։

Այն օրինակ, թէպէտ բազում և անսպառ ի ցեն չարիք մարդկան հանապազ առ արարչութիւն անդր՝ ուստի և խնամք դարմանոցն մատակարարին, որք զնա ոչ ճանաչէն՝ սակայն ոչ թողու, և ոչ հեռանայ

յարարածոց իւրոց։ այլ հանապազ յաշց ելեալ՝ խնդրէ զկորուսեալսն զի գտցէ։ և ասէ՝ թէ այսօր եթէ ձայնի իմում լուիցէք։ և կամի՝ վասն որոյ և զորդին իւր առաքեաց, զի սրասցէ ժառանգս չնոր հոգ զամենեսին։ Օ՛ի ուսցին զխորագիտութի՛ն ձին, մերկանալ զՀնութի՛ն մարդկային ագիտութե՛ն ամբարշտութեցն յանձանց։ և առցեն զվիսմանուն զանիկաս և զսուրբ աղաւնոյն, որ զբարս ՀԱՅՈՒԹԻՆ յինքեան բերէ։

Վ՛անզի և հոգին ՀԱՅ յորժամ յայտնեցաւ աշխարհի՝ զոր ՚ի վերն պատմեցաք։ ՚ի կերպարանս մարմնաւոր աղաւնոյ երևեցաւ, զի ցուցցէ զբարերարութի՛ն միամտական աղաւնոյն սիրոյ։

Օ՛ի որք կամին ասպնջական հոգւոյ ՀԱՅՈՒԹԻՆ լինել, առցեն ՚ի տեսլենէ անտի զբարսն զանիկաս և զանարկեանն աղաւնոյն։ Որպէս ասէր իսկ ՀՈՐՆ առ աշակերտսն։ Եղերուք դուք բարերարք առ յարս և առ թշնամիս։ և յամենեցուն հալածեալք վասն արդարութե՛ն։ զի հայրն ձեր բարերար է՝ ծագէ զարեգակն իւր ՚ի վերայ բարեաց և չարեաց։ և ածէ զանձրև ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց։ լիջի՛ք դուք որդիք բարերարք հօրն ձերոյ բարերարի։

Զ՛անգիերդ վերանալն արդարոյ յերկինս։ և դարձ զանան երկանութիւնն սուրբ առաքելոյ ՚ի կարարածի։

Իսկ արդ՝ որ յայսմ միամտութե՛ն արդարութենն պատուիրանի կացեալ իցեն՝ առցեն զկերպարանս արագաթևն աղաւնոյ։ և թռիցեն ՚ի թևս հոգւոյն սրբոյ, հասանել յերկինից արքայութի՛ն անդր՝ որ ուրում ցանկացեալ մնային սուրբք յերկրի։ Զոր և մարգարէն կաթողին տեսանցեալ սպասէր ասելովն, թէ տայր որ ինձ թևս իբրև զաղաւնւոյ՝ զի թռչիցի վերանայի։

Զ որ և երանելին պողոս՝ առաքելական ձերոցս առաքելոց, մեկնեաց 'ի թղթին իւրում մինիթարա-կանի, որով զթեսաղոնիկեցիսն սփոփէր. թէ մեք որ կենդանիքս եմք՝ որ մնացեալս լինիմք, հանգուցեալովքն հանդերձ յափշտակեսցուք յամպս՝ ընդ յառաջ լինել նոսա 'ի վերայ օդոց, և այսպէս յամ ժամ ընդ նոսն լինիմք, խառնեալ 'ի գունդն քրիստոսի, թռուցեալք 'ի թռիչս երագութեան 'ի լուսափեսուր և 'ի սպիտակ երամն աղաւնեաց. որք առին կերպարանեցին յանձինս զկերպարանս հոգւոյն՝ որ ելեւեցաւ նոցա. և զնոյն պատուհիրան յանձինս մատուցանել. զի բուսցէ նոցա թեւս հոգևորս՝ խառնեալ 'ի գունդ ճշմարտական։

Զ ընդարձակ զարմացեալ հարցանեն ևս վերին զօրքն լուսեղէնք՝ յորժամ տեսանիցեն զներքնագունդս սրբոցն մարմնականաց. զի առ տէրն 'ի ներքուստ թռուցեալ վերացեալ գայցեն. թէ ովքեր սոքա որ իբրև զամպս թռուցեալ են. և իբրև զաղաւնիս ձագախառն երամովքն գան առիս։

Զ պա անդէն լսիցեն 'ի նոսնէն պատասխանի. թէ սոքա են որ յիսն յուսացեալ են. տարաց զնոսա 'ի լեառն սրբութեան իմոյ. և ուրախ արարից զնոսա 'ի տաճարի իմում. և ամենեքեան որ տեսանիցեն զնա՝ ճանաչեսցեն զնա և ասասցեն, թէ սոքա են զաւակ օրհնեալ յայր, և ուրախութիւն ուրախ լիցին 'ի նոր։

Զ պա անդէն ասիցէ տէրն. եղիջիք ինձ յուսատերս և 'ի դատերս. անդ ապա և գութք խնամոց յուզիցին արարչական սիրոյն՝ ըստ բանի մարգարէին. թէ որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց իւրոց. գթասցի տէր 'ի վերայ երկիւղածաց իւրոց։

Զ ի այժմ յուսով գայս ամ իբրև ընդ հայելի տեսանեմք. բայց յայնժամ դէմ յանդիման տեսանեմք. և 'ի նոյն նորոգումն նորոգիմք 'ի փառաց 'ի փառս։ Զ իբրև զտեսաւն հոգին, որ և փորձէն, և

ընարէն զամենեսեան։ և նորոգէ բոլորովին զոր և գտանէ արժանացեալ մարդ։ որ 'ի բովն փորձուէ հալոցաց ընտրութեան հրոյ կացուցանէր զէգուս աստաբելոցն։ զի նոքաք ամ տիեզերաց ընտրութեան աստացէ ։ այնու՝ զի և տաճար ածութեան ։ և բովք երկրի ։ և օթեվանք արարչութեան եղեն ։

Որ և յառաջավաստակք մշակացն մարգարէքեն ։ զնի գալոցն դաւանեալ զայսք լինելոցս ամ ազգաց ։ նախ իւրեանց հրեական ազգին ծանուցանելովն ։ և անտի ամ ազգաց ազգ առնել նմին ։ ըստ այնմ՝ թէ ժողովել ժողովրդոց 'ի միասին ։ և թագաւորաց ծառայել տեառն ։

Լուր դարձեալ յանձինս հայեցեալք ։ և զառ յայսոյ գալոցս որդիս՝ զառաքեալսն նկատել ։ և առ 'ի տէրն գոչել իբրև զանձանցն իբրև զոգւոցն ։ որ և սիրելոց էին ընդ երկիր ։ ըստ այնմ՝ թէ փոխանակ հարց քոց եղեցին որդիք քո ։ և կացուսցես զնոսա իշխանս ընդ ամ երկիր ։ Որ և կացեալ իշխանք՝ դարձուցանել զամենեսեան ։ և միում իշխանութեան հնազանդել 'ի ծառայութեան ազատութեան անձնիշխան կամաքն ։ զի լեցին ամենեքեան ժառանգք արքայութեան ։ յինքնափորձ լաւութեամբ՝ հանդերձ իշխանաքն ։

Որպէս ինքն տէրն խօսի զհանդերձելոցն բերա նովք մարգարէիւք ։ թէ արարից իշխանս քո 'ի խաղաղութիւն ։ և զայցելուս քո յարդարութիւն ։ որով առաքեալքն արքին զբաժակն այցելութեան ։ և արբուցին միեզերաց զբաժակն խաղաղութեան ։ Զայսն որոյ և յառաջագոյն իսկ կանխել մարգարէին տեսողութեամբ զլինելոցն՝ ասէ ։ թէ այսպէս ասէ դիս տէր ։ թէ արկ դու զարծաթն 'ի բովս՝ և քննեա դու թէ սուրբ իցէ ։ ոչ և ես քննեցայ վասն նց ։ և առի զարծաթն և արկի 'ի տուն տն 'ի բովս ։

Զի զի գալոց իջանելոց էր ածորդին ։ և զնմ ազգս վերացուցանելոց էր յածութեան անդր ։ վասն

այնորիկ եղեալ քննութիւն 'ի վերայ ամ մարդկան՝ ըստ նմանութեան ծառայ պատուիրանին՝ 'ի պողոյն չձաշակելոյ զի արժանի լինիցին զանմահութիւն առնուլ շնորհել պարգևի։

Այս նոյնպէս մարմնոյն խոնարհութիւն և անարդ երևելոյին՝ փորձեալ քննեսցէ զքաջալաւատն։ որք 'ի ծածուկ կերպարանս տեսին, և լուան թէ ամ է։ թէ որպէս կամ զիարդ հաւատացին 'ի քնութիւն բարձրութիւն։ վասն այնորիկ ասէ։ որպէս ասէ։ թէ և ես քննեցայց 'ի վերայ նոցա։

Արդ՝ արարեալ զնա միանականն միաբանութիւն՝ իբրև զմի տուն երևեցուցեալ, միախորհ՝ միահաւատ ճշմարտութեանն միաբարոյ՝ յօդապատ անդամքն, մի տաճար ամ։ որով և զամ տիեզերս քննեսցէ՝ վասն իւրոյն գալստեանն հաւատալոյ։

Խորհրդածութիւն հրեղէն լեզուաւ էլիանէլոյ հոգւոյն արքոյ 'ի դասս առաքելոյ յաստուր պենտէկոստէին։

Արդ՝ քանզի եկեր հուր մեղացն, և վախճանեաց առ հասարակ զմարդկութեան քնութիւն։ զի բորբոքեալ մեղքն 'ի նմանութիւն հրոյ տոչորեցան, և բարկութիւնքն և սրտմտութիւնքն ամ։ Արդարև իսկ թուով մնացեալքն։ որպէս և ասացն՝ թէ որ մնացեալ իցեն՝ թուով լիցին։ արդ՝ և նախ ընդ թուով մտանէր՝ որ և յայտնի էր։ զի երկոտասանս հաստատեալ՝ մշակս կացուցեալ՝ ըստ աղգացն իսրայէլական տոհմին։ Որ և ըստ առաջին լեզուացն բաժանելոց ամ աղգաց, երևեցուցեալ եօթանասուն և երկուս։ որպէս վասն լեզուացն բաժանելոցն յառաջագոյն քան զայս ասացաք։ զի այնոքիւք 'ի միաբանութիւն զառաջին պատառուսն աղգացն և լեզուացն ժողովեսցէ։

Իսկ սոքա զառաջինն Թուռով մնացորդք և սա-
կաւք • վասն որոյ և եկն ինքն որդին ուսուցանել
միաբանական հաւատովքն ընտրել զմի և զնոյն ժո-
ղովն , վասն որոյ ասէ իսկ • Հունձք բազումք են
ասէ , և մշակք սակաւ • արդ՝ աղաչեցէք զտէր հնձ-
ոցս՝ զի հանցէ մշակս 'ի գործս արդեանց իւրոց •
Եւ նոյն ինքն այսու իսկ պահանջեաց 'ի նոցանէ
զսէրն առ միմեանս • և միացուցեալ զնոսա՝ առաձար
իւր հաստատեաց զնոսա յերկրի • և նոքօք փոր-
ձեաց զամենայն տիեզերս •

Եւ այս իսկ էր որ երևեցաւ հուր հոգին յա-
ւուրս պենդէկոստէին • որ եկեալ հանգեաւ 'ի լե-
զուս առաքելոցն • որ եկեալ ժողովեաց զյրոմէլն •
որ սկսան խօսել լեզուս , 'ի լեզուսն առաջինն՝ որ
ցրոմէալքն էին •

Զ՝ամն զի անկաւ սերմն անօրէնութեան յարգանդ
մնաց անմիտ մարդկանն առաջնոց • վասն այսր և
սաղմամբարշտութեան ընկալեալ՝ ձեռն զկշտաւ ալ-
կեալ յլացան , զկռապաշտութեան ծնունդ 'ի մէջ
բերեալ • Իսկ պտուղն այսորիկ՝ քակտումն էր •
այլափոխ , այլաձայն , այլ ընդ այլոյ 'ի միմեանց մո-
լորեալք • այր յեղբօրէ իւրմէ անջատեալով ցըր-
ուեցան •

Իսկ սա զմիասիրտ ժողովն՝ միասէրն խնդրել 'ի
վերայ միմեանց • Զ՝ամն այնորիկ հրամայէ , զի
նախ ինքեանք իւրեանց մտօքն առ միմեանս ժո-
ղովեսցին • զի ուսցին զամենայն ազգացն ժողով
'ի միաբանութիւն ածել •

Զ՝ի նախ զնոսա արասցէ օթեվանս պատրաս-
տեալս • և ապա առաքեսցէ առ նա զհոգին ածու-
թեան • որ զսէրն հօր և զորդւոյ առեալ՝ խաղա-
ցեալ գայր առ նոսա • զի նախ 'ի նոսա բնակեսցէ ,
և նոքօք յամարարածս • Այս և հայր իմ եկեսցուք
ասէ , և օթեվանս առ նմա կալցուք • Եւ սիրոյն
առ միմեանս զոր ուսցէ նոցա , ասէ՝ աղաչեցէք

զտեր հնձոցս՝ զի հանցէ մշակս 'ի գործս արդեանց իւրոց։

Այլ թէ ինքն ոչ կարէր առանց նոցա աղաչանացն առնել զայն, որ ակնարկէլոյն արար զամ արարածս։ այլ մի՝ վասն զի ամ ընկերսիրութի պատուական է առ ածութի անդր։ զի որպէս ածուին մարդասէր է, նոյնպէս կամի զի զմիմեանս սիրելոյն՝ արժանի լիցին ածութեն։

Օ՛ի 'ի միոջէ երկրէ հող։ և հողք, և բոյսք հողոյ 'ի միմեանց բաժանեալք՝ ծնուանդք, միոյ արարչի ստեղծուածք, սիրեացեն նախ զարարչուին, և սիրեացին 'ի նմանէ։ և նորա հաճոյութիւն կեալ կարասցեն՝ ըմբռնեալք զարբայութիւն երկնից։

Օ՛ի անձնասէրն՝ ընկերասէր ոչ լինի։ այլ ինքնասէրն ոչ է հաճոյ կամաց արարչութենն։ վասն որոյ մեղք իսկզբանն մուրն յաշխարհ։ Իսկ զի ածմարդասէր է, վասն այսորիկ իւրոց կամացն արար զնա խորհրդակիցս։ զի նոքա սիրեացեն զմիմեանս, և եղցեն հրաւիրակք տիեզերաց։ և աղաչեսցեն, հանցեն մշակս 'ի գործս արդեանց ան իւրեանց։

Լաւ ժանուն լեզուաց 'ի բաբելոնի պարաճառա ամբարշտութեան խարդեան։

Զ ամն զի յառաջին յղութիւնն անձնական մարդկանն գնալոյ, ծնաւ զպատառուումն խառնակութենէ լեզուացն։ Որպէս և վասն հրեական ժողովրդեանն, տեսանի 'ի մարգարէականացն պատմութենէ անտի։ զի ասէ, աղէ հարցէք և տեսէք։ թէ՞ երբէք լեալ է թէ արուք յղանան և ծնանին։ ձեռնարկել զընտերօք՝ և դարման խնդրեն։ Օ՛ի տեսանեմ աւասիկ զամ այր՝ և ձեռն իւր 'ի վերայ կշտի իւրոյ։ հայիմ ընդ մարդ, և երեսք ամ իջբև

'ի գոյն գալիան՝ և դեղնացեալ շրջին։

Լ՚ոդարև յղացեալ իսկ էին յամբարշտութիւն կռապաշտութեան բազնասէր բարոյին։ և ձեռն յընտրս եդեալ էր, ակն ունէին շահագաւակ գտա նել անձանց 'ի սնամատակ գործոց անտի։ Լուսի և զերդուն զգոյն ախտի գունոյն ծննդեան անձանց՝ 'ի հատուցմանէ անտի յանդիմանութեն գտեալ լի նէր նոցա, զգերութի ծնանելով՝ և զքայքայումն աւերածոյ ցրմանն։ Փոխանակ պտղոյ որովայնի՝ իբրև զմանուկ 'ի գիրկս առեալ տանէին։ և յաղգ օտարս պանդխտեալք։ Փոխանակ սիրոյ ամուս նութեան սնեկոցն՝ թափառական գտեալ լինէին։ Փոխանակ ապստամբութեն վիճակատութենն՝ զկոր ծանումն յարարչէն իւրեանց՝ 'ի մերձաւոր ոնէն ընդունէին։

Այն օրինակ և աղդն առաջինք, փոխանակ զի խլեցին 'ի բուն յիւրեանց տեառնէն զթիկունս դարձուցանել՝ որ զնոսա յոչնչէ ինչ արար։ Լ՚ 'ի խեցակոյտ՝ 'ի խեցակարկառ՝ 'ի կպրաշաղախ աշտա ռակն ապաւինեալք՝ նովին ախտիւն անօրէն պաշ տամամբքն յղացան՝ ցրուեալք պատառեալք քակ տեալք 'ի միմեանց բաժանեալք, ծնանէին ընդ երեսս երկրի։ իւրաքանչիւրոք առանձինն մի մի 'ի նոցանէ զմեղնութի չկեցութեն յանձինս իւրեանց՝ իբրև զպտուղ որովայնի, 'ի գիրկս ըստ նմանութեն մանկամօր առեալ ընդգրկեալ քերէին։

Լ՚ սկսան հայել 'ի պատուհան յառաջին ջրհեղեղն եկեալ, և գործել սկսան զաշտարակն։ իբրև ակն ունել 'ի նմին, և նովին շինուածոնն ապրել՝ յորժամ գայցէ։ Լ՚ ոչ հայեցան յարարիչն կար ձել՝ իւրեանց չար անօրէնութեցն։ և նորին հա ճել գործոնն ապրել։ և 'ի նմանէն որ ինչ կամք և լինելութի՝ թէ լեռս՝ թէ յառաջ զայն ինչ ոչ ած էին զմտաւ, որ իսկզբանէ արարիչն էր։ և միա ժողով եկեալ ամենեքեան, և ոչ ևս զգայնն 'ի

միմեանց յղութեան, որով և ծանրացեալն էին։

Ո՞ սան այնորիկ և ամենատեսն իբրև ետես զանհաճոյ կամացն իւրոց ի նոսա զիսակութեան զանհաստութիւն, արդ՝ խնդ խորհուրդ արկեալ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՆ, զյղութեանն նոցա բերել ի մէջ ցնծունդս։ Լուսաց ասէ ՀԱՅՐԱՊԵՏ, թէ եկայք ի ՀՈՒՅՍ և պղտորեսցուք զլեզուս նոցա. և ոչ ասաց՝ թէ գնացէք ի ՀՈՒՅՍ և պղտորեցէք զլեզուս նոցա. որպէս և կարգ հրամանին պատշաճէր ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵՆ. այլ եկայք ի ՀՈՒՅՍ և պղտորեսցուք ասէ. իբրև առ հաւասարութիւն գոր ծոյն յայանի առնէր՝ զպղտորեսցուքն ասելովն։

Լսորհրդաբար երեւոյն ամենասուրբ երրորդութեանն ի հնումն, և յայտնապէս ի նորումն։

Յիրաւի և առ մարդոյն արարչութեան և լեզուացն բաժանմամբ՝ օրինակեաց զայս. քանզի և զմարդկութիւն վասն մերոյ փրկութեան յանձն առնլոց էր ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵՆ. զթիւ երրորդութեանն երեսաց՝ ուսուցանել առաքելոցն. զի ըստ այնմ օրինակի աշակերտեսցեն զամ, որ ընդ ամ տիեզերս մարդկութեանն յայտնեալ է. երեք անձնականն միամտականն զորութեամբ միապաշտօն տէրութեան խոնարհեալ ծունր կրկնեսցեն։ Լսակ յղութեան նոցա՝ ծնոյց զանլուր միմեանց ձայնիցն շփոթութիւն։

Լսակ արդ՝ զինչ ասացին ազգն առաջինք ի շինել դաշտարակն. եկայք շինեսցուք դաշտարակն, զի իցէ դլուխ նորա ի վեր մինչև յերկինս։ Ո՛չ կարացին հասուցանել ի բարձրութիւն խոստացեալ անձանց պարծանաց զոր պանձացան. այլ սուերեցին՝ փլուզին՝ քակեցին զմիալեզու միաբանութեան իւրեանց շինութիւն միասնութեան։

Ո՛չ հասուցին զդաշտարակն ըստ ասելոյն յերկինս. զի յերկրի էր՝ և ասատուստ էր շինուածն. այլ անդ

ի՛ջուցին 'ի կործանումն բաժանման ցրուելոյն։ Յղա-
ցան զանօրէնութիւն՝ և ծնան զբազմաձայն լեզուացն
զբաժանումն, զի մի՛ լուիցեն այր ընկերի բարբա-
ռս։ 'ի միմեանց մեկնելով ցրուեցան։

Իսկ ՅԾՈՒԹԻՆ երևեցաւ յայնժամ խորհրդով,
և յայտնեցաւ այժմ։ Յայս ժամանակս յայտնա-
պէս մեկնեցաւ արդեամբք։ զի ծանիցեն և հաւա-
տասցեն։ Զդի՝ սերմանեաց յանձինս մարգարէ-
ից զշնորհս յառաջագիտութիւն հոգւոյն սրբոյ։
զի յղասցին զՀմարտութիւնն աւետիս ՅԾՈՒՅԻՆ գա-
լստեանն ՅՄԱՐԱՐԱԾՈՅ։ և նոքա սերմանեսցեն ընդ
ՅՄԻՏԻԵՎԵՐՍ։ Զի յղասցին զխորհուրդն կենդա-
նութիւն, ակնկալութիւն անմահութեան բերել զՀՐ-
ՆՈՒՆԴՆ։ ԶՅղասցին զՀայտն և զսէրն, նախ առ ա-
րարիչն ՅԾ, և ապա առ ընկերն, անսենգ կեղծա-
ւորութիւն հաւասար առ միմեանս պահել։

Զոր և ինքն իսկ եկեալ մեկնեաց։ թէ յայս երբ-
կուս պատուիրանս՝ ՅՄ օրէնք և մարգարէք կախ-
եալ կան։ Զնախ սիրել զՅԾ յՅՄ սրտէ՝ և յՅՄանձ-
նէ ՅՄ զօրութիւն հանդերձ։ որ սա է առաջին։ Զեր-
կրորդն սիրել զընկերն իբրև զանձն։ Իսկ երբ-
որդն լսել ՅԾՈՅՆ բանին աւետեաց առանց երկ-
մտութեան, և հաւատալ այսմիկ։

Իսկ յղացան զերագութիւն սլանալոյ՝ որով ծնա-
նին 'ի թռիչս 'ի թևս հոգւոյն, զի խառնեսցին 'ի
գունդս քի։ Յղանալ և զյայտն հաւատոց, և ծնա-
նել զարքայութիւն ըմբռնեալ։ Զոլորեալս և ընդ ՅՄ
արարածոց գոչէ մարգարէն առ հայր՝ իբրու յա-
մենեցուն բերանոյ իբրև ընդ ամենեցուն տեսել
զորդեգրութիւն շնորհին՝ զոր կատարելոց էր առ
մեզ։ ասէ իբրև զերկուսս յաղ, զի հասեալ իցեն
'ի ժամանակս ծննդեան։ և առ ցաւս իւր ՅՀՅՇԻՑԷ։

Զու զինչ իցեն երկուսքն հասեալք՝ որ զցաւսն
ՅՀՅԵԼՈՅ ստիպիցեն։ այլ զՀՅՄՆՔՆ և խոստովանութիւն
ապաշխարութեանցն յաղացեալք։ որպէս և ասէին՝ թէ

այսպէս եղաք սիրելւոյ քում։ Զ՞որովհետ սիրելւոյ արդեօք խօսիցի մարգարէն։ եթէ ոչ՝ վասն որդւոյն ոչ ասիցէ՝ որ գալոցն էր։ որով մնայր ակնկալութիւն մեր արարածոց։ որ եկն և կատարեաց ինքեամբ զամ։ որպէս և ասէն և առ նա բորբոքեալ։ թէ տէր՝ յահ և երկիւղ քո յղացաք երկնեցաք, ծնաք զոգի փրկութեան։

Հաղնապուրէն բաբէլսնէան աշտարակին ընդ դէնա բաբ խաչին դրեալոսի։

Զ՞որդ՝ փոխանակ աշտարակին ինքնին տրն կանգնեաց զխաչափայտն՝ ըստ յառաջ ասաց մարգարէութեանն որ ասաց։ թէ ահաւադիկ դնեմ նշան 'ի վերայ հեթանոսաց։ այսինքն զխաչն փրկական։ յորոյ վերայ ինքնին տէրն։ ուստի և զկենանն գործէ աշխարհի։

Բայց եկայք ասէն շինեսցուք զաշտարակն, զի ելցէ գլուխ նորա 'ի վեր մինչև յերկինս։ և այս ըստ այն ըստ նՁ կարծիսն անցեալ։ և այն ոչ այսպիսի։

Իսկ խաչ՝ աշտարակն՝ յորոյ վերայ ճՁորդին։ խաչն յերկրի՝ և մարմինն 'ի վերայ նորա։ իսկ ճՁուծին 'ի վեր քան զերկինս։ և քան զանկեան և քան զանսահման բնութիւն տարրեղէն արարածոց բովանդակեալ՝ և բևեռեալ 'ի խաչափայտին։ լցեալ և տարածեալ 'ի տարերս և յանտարերս, այնպիսին որ և 'ի սիրտս առաքելոց և ամենայն բնակեալ է հանդերձ հարբ իւրով և հոգւով։

Զ՞ու լեզուս՝ փոխանակ լեզուացն խաչնանելոցն շարժեաց։ զի յառաջին աշտարակէն ցրուումն եղև։ իսկ 'ի խաչէս՝ ժողով։ անտի մերժումն 'ի տանջանս։ և աստի մերձումն յաքայութիւն։

Հայբէրբէն առաւէլոց գանձանաց և նահատ՝ վասն ազգ քէցուսանէլոյ զնաբդէն 'ի յաւէտենական նահատանէ։

Զ՝ղացան առաքեալքն զսէրն առ մարմնակիցս իւրեանց. և ծնան զնամ արարածս՝ խառնել յածուԹի անդր։ Ա՝ռանեցին զանձինս իւրեանց. ընկերացն բողոքելով՝ զի ածացին. վասն այսորիկ իբրև զԹշնամի չարամահ եղեալ 'ի վերայ երախտեացն, չար փոխանակ ընդ քաւոյ ընդունէին հրաւիրակքն. որ եկին կոչել զամենեսեան 'ի հարսանիս ածային սիրոյն։

Ա՝հա ընկալեալ տանջանօք հանդերձ, փոխանակ ընդ դրուատեացն և պատիւ գտանելոյ 'ի նոցանէ. ոչպէս և դուք իսկ առ ձերս տարբէք. զի ագիտութեամբ արարէք. քանզի ոչ էիք հասեալ յիրաւի լուսաւորեանցն վերայ։

Ա՝ռդ՝ յառաջին աշտարակէն ցրուումն լեզուաց եղև. արդ՝ ինքն տէրն ժողովեաց զցրուեալս ազգացն. և բևեռեաց ընդ մարմնոյն իւրոյ զոր առ 'ի մէնջ՝ 'ի փայտին զորմէ կախեցաւ. զի անբակուի արասցէ 'ի մի հաւատս՝ միասնական պաշտամանն։

Լսէ նորա առին հրաման սիրել զտէրն, և զկամս նորա կատարել. զի զանձինս սոհմակցաց իւրեանց։ այսինքն ամմարդկան՝ ապրեցուսցեն 'ի յաւիտենական մահուանէն։

Օ՝ի տէրն ինքնին մեռաւ ընդ ամենեցուն. զի զամենեսեան ձգեսցէ յանմահուի անդր։ Լսէ նորա նորին կամացն քարոզ առաքեցան. զի տացեն զփրկուԹի և երախտիս ածուԹեն առնուլ 'ի միտ ամենեցուն՝ որ առ նոսայն եղև։

Ա՝սան այսորիկ յղացան առաքեալքն 'ի հոգւոյն սրբոյ. և ծնան լեզուս՝ խօսս անմահուԹեաց ամենեցուն։ Օ՝ի ինքն եկն հոգի ածուԹեն՝ փորձել և քննել զամենեսեան իբրև զարծաԹ 'ի քուվ՝

լեղուաւ առաքելոցն. որպէս և ասէն, ընդ ամենայնումն իբրև ընդ երկրի բերան առեալ, իբրև զփող նովին զօրութիւն գոչէր մարգարէն. թէ փորձեցեր զմեզ ՝ն՝ և քննեցեր՝ որպէս և քննի արծաթ։

Յ՝ետարև իսկ փորձեցան արդարքն իբրև ՝ի բովս ՝ի հոգին սուրբ. զի նախ զնոսա փորձեաց ՝ի փչել հոգւոյն զօրութիւն. փչեաց ՝ի նոսա և ասէ, առէք հոգի սուրբ։ Զի զնոսա նախ ընտրեսցէ իբրև զարծաթ՝ զի աղան այրեսցի. զի տուն ՝ն՝ ինքն ՝ն՝ ախառն մարմինն էր. որ և տիեզերաց էին բովք սրբելոց։

Յ՝ետոյ առաքելքն առաքինիք ՝ի բով անդր թու

՝ովք երկոտասանք. այրեցաւ՝ հալեցաւ՝ կորեաւ մի ՝ի նոցանէն յուդա՝ որդին կորստեան. իբրև զանագ ՝ի մէջ հրոյ ծախեալ սպառեցաւ։

Այրեցան մեռաւանքն՝ և ընտրեցան իբրև զարծաթ ՝ի բովս. և ելին անօթ ընտիր ՝ն՝ ճարտարութիւն՝ պիտոյից արարչին։ Փորձեցան պէս պէս նեղութիւք և տանջանօք՝ զոր կրեցին ՝ի մարդկանէ՝ յայնցանէ որոց զօգուտն խօսեալք, հաստատեալ սիրոյն տային մարմնակցացն։ Ընդունէին տանջանս, զի զտեառն արարչին հրամանս կատարեսցեն՝ սէր օգտի ընկերացն բերելով. համբերել նեղութեացն, զի զանցաւորս արհամարհեսցեն։

Զի յորժամ արարչին աշխարհի ՝ի միւսանգամ յայտնեսցի, նոքա ընդ նմին թագաւորեսցեն յաւիտենական մշտնջենաւորութիւնն. որպէս ասէ յիրաւի ՝ի դէմս նոցն՝ վասն սոյն երգողի մարգարէութեան՝ թէ փորձեցեր զմեզ ՝ն՝, և քննեցեր որպէս և քննի արծաթ։ Յ՝ուր թէ՝ ինչուցեր զմեզ յորոգայթ՝ եդիր զնեղութիւն ՝ի թիկունս մեր. և անցուցեր զմարդիկ ՝ի վերայ գլխոց մերոց։

Զի քննեաց զնոսա հրով հոգւոյն՝ և ՝ի ձեռս մարդկան. զի հանդիսի փորձութիւնքն՝ երևեսցին նեղութիւնքն վասն արդարութեանն. զի դուք յայտնեսցէք ՝ի ձերոցս որ ՝ի ձերում աշխարհիս առաջի

ձեր, ՝ՅԾՈՒԹԵՆ վկայք գտան՝ գիտէք զիորձ։

Օ՛ի սիրեցին զայսն խոստացեալ միւսանգամ գալստեան ՝ՅԾՈՐԴՈՒՅՆ. առին զՀուր հոգւոյն կենդանւոյ յանձինս իւրեանց. և ընկալան զվտակս բխման անմահութեան. վա՛յ այսորիկ կարացին դիմել անցանել զՀրով տանջանաց, արհամարհել և զպաղեալ սառնամանաց մեղացն։

Ա՛ռդարև արհամարհեալ զմեզ մեղաց, ընդ նմին և զնեղութիւնն բազմութեանցն եկեղեցոյն, դոհանային և զառաջողէն շնորհաց. թէ անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ ՝ի հանգիստ։

Օ՛ի նախ անցին ընդ հուրն և ընդ ջուրն և ընդ սուրն մեղաց. և արհամարհեցին զհուրն և զջուրն և զսուրն մեղաց տանջանաց փորձութեան. և ընկալան զլուսաւորիչ հուրն կենդանութեան, և զջուրն նորոգութեան, և զսուրն այսինքն՝ զբանն ՝Յոյ, որ սուր է քան զՇամսուր երկայրի և պողովատիկ. և կարող է հասանել՝ հատանել՝ թափանցանել մինչև յորոշումն ոգւոյ՝ մարմնոյ՝ և ընչից։

Ա՛ման որոյ և մարգարէն յառաջաբերեալ զի՝ նեղեցաք՝ յառաջագոյն ընծայեցուցանէր զայս, թէ սուր երկայրիք են ՝ի ձեռս նոցա. որով և կտրեսցեն հատանիցեն միանդամայն զանօրէնութիւս ամբարշտութեանցն յերկրէ։ Ա՛յս զՀնձեալսն՝ և զհատեալսն զինչ առնիցեն. ասէ՝ թէ հողմք առցեն. և ամպք բաժանեսցեն. և փոթորիկ իբրև զխուճ կուտեսցէ զնոսա։

Իսկ կուտեալքն ՝ի հուրն անշէջ մատնին. զի արդարև իսկ մշակաց Ճշմարտից գործն այն է՝ զայն տանի արդիւնսն, և զշահեկանսն ՝ի շտեմարանսն ժողովել. և զփուշն և զդժնիկն Ճարակ հրոյ տալ։

Յանիլն առաջելոյ ի՞ասածոյ փոքոյ ի՞ փարոշել փէ-
ղերաց ալբանն ի՞նաց։

Բ. Դրդ՝ սորա նախ զանձինս փորձեցին, և ապա
եղեն բովք բոլոր աշխարհի։ Ինկալան զհուրն
կենդանութեան. միւսանգամ մոին ի բովս՝ իբրև
զարծաթ զտեալ և պարզեալ. և ձուլեալք ի սէր
արարչին, գտան ի հնոցէն հալոցաց փողք կուա-
ծոյք, ի սպաս ոմն հրամանացն։

Լոչեցին լցին զսիրեալսն. փողք առ փողս գո-
ղեցին. ասեն ընկեր ցընկեր, թէ աւետարանեցէք
օր ըստ օրէ զփրկութիւն նորա. պատմեցէք ի հեթա-
նոսս զփառս նորա. յամ ժողովուրդս զաքանչելիս
նորա. զի մեծ է տէր և օրհնեալ է յոյժ. սքանչելի
է նա ի վերայ ամ կուռց։ Լու թէ՝ ամ կուռք հե-
թանոսաց ոչ ինչ են. այլ տէր զերկինս արար։

Լսկ փոխանակ պատկերացն կռելոց, առա-
քեալքն իբրև շիփորք կռածոյք անուանեցան. զի
զամ աշխարհ ընդհանուր լցցեն, որպէս և ասէ՝ թէ
ընդ ամ երկիր եկ բարբառ նոցա. մինչև ի ծագս
տիեզերաց են խօսք նոցա։

Բ. Դրդ՝ ինքեանք հնոց տիեզերաց. և հուր կեն-
դանութեան հոգւոյն ի լեզուս նոցա. այժմ և զամ
հաս փորձեսցեն։ Լու զի գոյեսցեն ևս ի՞ ոնէն զնչմա
բիտ բնութեան ածութեան յայտնուն. տեսէք տեսէք
զի ես եմ, և ոչ գոյ այլ ածք բայց յինէն. ես սպա-
նանեմ և ես կեցուցանեմ. հարկանեմ և ես բժշկեմ.
և ոչ ոք հանիցէ զձեզ ի ձեռաց իմոց։ Լու թէ՝
սրեցից իբրև զփայլակն զսուսեր իմ. և ի խնդիր
վրիժուց արձակեցից զաջ իմ. հատուցից զհա-
տուցումն թշնամեաց իմոց։

Զդաման լեզուք առաքելոցն զանչափութիւն հա-
ւատոցն իւրենց, և ծնան զլեզուս զորս ոչ գիտէ-
ին։ Լոչեցին իբրև զփողս՝ զմիահեծան ոռութեան

ֆշխանութիւն. և Ծնան զանթիւ բազմութիւն մարդկան 'ի կարգս հրեշտակաց՝ 'ի սպասաւորութիւն ճոխորդացոյն։

Զի փոխանակ հրեշտակացն անկելոց՝ որք անկան կործանեցան յանձակիր 'ի լուսեղէն սպասաւորութենէ անտի. որդիք մարդկան հրեշտակացին, կանգնեցին, և կալցեն զտեղի նոցա։ Զի թիւն կարգեալ փառաւորութեանն՝ որ էր նոցին, անխախուտ մնացեալ լիութիւնն անպակաս լեցին. զի 'ի հասարակաց գովութենէն փառք առնեցեալք զօրացին. ուստի 'ի հասարակ համբմատութենէ անտի՝ փառք 'ի բարձունս՝ այ. և յերկիր խաղաղութիւն, և 'ի մարդիկ հաճութիւն։

Լոգ բոլքիւն ծառայ և բուսոյ 'ի գաբնան էզանէլի, ծրինակ ընդ հանուր յարութենէ մարմնոյ 'ի հարութածի։

Լոգեն փողք առաքեալքն ժամատուք տիեզերացն. զի դիցեն 'ի սիրտս ամ երկրի ակնկալութիւն ժամակալութենէ, սպասել տեառնագալուստ փողոյն։ Զի նովին ձայնիւ եկեալ հասեալ 'ի ժամանակի անդ, ծանուցեալ զնոյն ձայն փողոյն, 'ի մահահանգիստ քնոյն յարուցեալք զգարնանաբեր բուսոցն իւրաքանչիւր հասելոցն երևեցին։ Զի այնուհետև յայն հասեալ գարունն. զիւրաքանչիւր սերմանեացն՝ յարմատոց անտի զտեսիլս կերպարանացն բերիցեն։

Իբրև ոմն զարմանն քաղցրահամ և գեղեցկատեսիլ. որպէս ասէն իսկ յառաջընթացայ մարգարէութիւն, թէ արդարքն ոչ զարմանէնիս ծաղկեսցին, իբրև զմայրսն լիբանանու բազումք եղիցին. և թէ՝ անկեալք եղիցին 'ի տան տն, և 'ի գաւիթս այ մերոյ ծաղկեսցին։

Այս դարձեալ՝ ինքն տէր մեր յաւէտաքէր և կենդանարար աւետարանին՝ ամենեցուն տայ զգիտութիւն յայտնապէս, եթէ ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նոր ոստքն կակղացին՝ և տերևեսցին, գիտասջիք թէ մերձ է գարունն։

Զի կարի նմանութիւք և օրինակք են ամ ծառատունկք. զիւրաքանչիւր կերպարանաց տեսիլս բերիցեն. և ոչ երբեք փոխեն զգոյնս ծաղկանցն, համոցն, և հոտոցն, և զտերևոցն. զի արմատն զիւր զտեսիլն և զգոյնն և զհամն և զարարն բերիցէ, և զբնական զարմատոյն զծնդեան բուսոց։

Այնպէս և թուզն զտեսիլս իւրոյ տերևոյն, և զարարս կեղևոյն, և զառարս մրգոյն ի նմանէ որիշ. և այլքն ի նմանէ ուրոյնք։

Զի կարմրախնձորն զիւր զօրինակն. և կարմրատանձն զիւրն. և կարմրադեղձն զիւրն. և էն նոյնք ի նորին բնութիւն՝ որ այլագոյնք էն. զի և զհոտն անգամ իւրաքանչիւրոք ի նոցանէ առանձին արձակեն։

Այնպէս և կիտրոնն. և ապա՝ բաղսամոնն. և դաբնիդն. և սերկևիլն. և ձիթենին գեղեցիկ. և մուրտն. և ընկոյզն. և նուշն. քնարուկն. և հաճարուին. և թուզն. և նուռնն. և հոյնն. և ամ ծառք մրգաբերք, և ծաղկաբերք, և տերևաբերք, և հաստակաբերք, բարձունք և ստորինք։ որպէս մայրն. և նոճն. և շոճն. և թեղջն. և սարդն. և սարոյն. ասն. և յակրին. և գին. և կաղամախն. և տոսախն։

Այնպէս և գունակ գունակ, և երփն երփն ծաղկանցն. որպէս մանրագորն. և վարդն. և շուշանն. և սապուռանն. և յասմիկն. անխարն. և կոմեակն. ներգէսն. և շամբղնտակն. և մեղրուկն. հօրուտն. և մորուտն. և մանուշակն. և այլ ամ համասփիրամ ծաղկանցն և ծառոցն բոյսք բողբոջոց գարնանայն՝ երևեսցին յետ ձմերայնոյն։

Այն օրինակ և յարութիւն մեռելոց • զի յորմէ հետէ ստեղծաւ աշխարհ, ոչ ոք ի նոցանէ յաշունն կամ ի գարունն փոխ առ յընկերէ իւրմէ անտի, և կամ զիւրն ետ՝ զկերպարանս բուսոյ ծննդեանն նմանութեանն իւրոյ։

Զ. յլ խսկզբանցն արարչութիւն ի ստեղծագործ ժամանակէ անտի՝ մինչև ի վախճանելոյ ժամանակն, թէ ստեղ ստեղ յաշունն ոմանն բոյսք աճունք, չորացեալք տերևընկեց լինին • և պարարեալք ամենասունք, սառնապատք, ձիւնաթաղք, եղեմեախալք՝ խստութիւն խարեալք, ձգին արմատք ծաղկանցն, և կամ բաղմակոյսք իմն գարաստանացն • և անտառք բարձրաբերձ վայրիցն մայրացն ամէնոցն՝ ստուերարարատ յուրացեալովքն՝ հանդերձ շառաւեղօքն։

Սակայն ի ժամանակ գարնայնոյն հասեալք, մանպաշողք՝ որոտընդոստք՝ անձրևաբախիք՝ ցօղաշհաբք՝ առատաբուխք՝ ամարասունք, ի վերբերեն զիւրաքանչիւր օրինակ բուսոց տերևոցն իւրոյ իսկ բնութիւն։ Զու գայ տեսին յիւր իսկ կերպարանն • և ոչ փոխի ի նմանէ յընկերն, կամ ընկերին ի նոր նմանութիւն • այլ ըստ հաստատեալ կարգողին՝ նոցն պէս կայ յիւրում բնութեան անխախուտ՝ անխափան։ Պատրաստեալք ըստ արարչին հրամայելն, բուսանին և փթթին։

Զ. Եւ մանրախոտքն գալարի իմն իմն, և այլև այլ՝ և որիշ ոչ նմանութիւն ի միմեանց • որպէս լօռն • և վարսակն • և կնիւնն • և որ ինչ նման է սոցա։

Զ. Եւ սերմանիքն օգտակարք մարդկան • որպէս ցորեանն • և հաճարն • և գարին • և կորեակն • և գաւարան • և ոսպն • կամ ոլոռն • որիզն • և դրկուռն • և սիսեռն • և այլ ևս բազում սերմանիք • զոր ի թիւ ոչ կարէ արկանել • ոչք իւրաքանչիւր յիւրում ժամու, ի գարունն՝ ցուցանեն զյարութիւնն, իւրեանց բուսովքն, և հոտովքն, և համովք։

բողբոջովքն, և ծաղկովքն, և ընդովքն. և տե-
ւեւազգեստ զիւրեանց մերկութիւն ը իւրաքանչ-
իւր նմանութեանն ազուցանեն։

Որպէս միսն և մորմինք մարդկան՝ ՇՇայիւն ցո-
ղունն ի մեծ գարունն պատրաստեալք՝ ի գերեզման-
նոցն բուսանիցին. զի միանգամայն կազմին զոս-
կերօքն չորացելովք՝ միսն, և ջիլքն, և ածաւքն, և
նեարդքն՝ մորթունն զգեցեալ, և մազովքն զար-
դարեալք. և իւրեանց ոգիքն ի նոսին դարձեալք՝
և իւրեանց նմանութիւնքն յինքեանս՝ զի զիւրա-
քանչիւրոցն գործոց տեսիլս ի գլուխս իւրեանց
առեալ բերիցեն։

Ի բուսոցն իբրև զմիրգս քաղցրութիւն և զա-
նուշութիւն պտուղս, համովքն, և իւղովքն, և ծաղ-
կովքն, և հոտովքն, ածեցունք՝ բազկարձակք տե-
ւեւալիցք, ջրասուն վայելչութիւնքն։ Զոր և սաղմո-
սարանն մարգարէական նուիրագեաց, թէ եղիցի նա
որպէս զծառն որ անկեալ է ի գնացս ջուրց. և թէ՝
որ զպտուղ իւր տացէ ի ժամու՝ և տերև նորա մի՛
թափեսցի. և զամ զոր ինչ արասցէ՝ աջողեսցի
նմա։ Զի դարձեալ թէ՝ ծաղկեսցին ի քաղաքի
տեառն՝ իբրև զծաղիկ երկրի. և թէ՝ եղիցին
օրհնեալ յաւիտեան։

Բուսանիցին ծաղիկանց և գլոց ի գարնան՝ իւրաքանչ
իւր յարուցեալ ինքնիւրեանց, օրինակ յարութեանն մարդոյ
և ՀՀաւուրաց իւրաքանչիւր գործովք իւրովք։

Զի արդարև իսկ գարունն բուսաբեր՝ զօրի-
նակ մարդկան յարութեան մեռելոց ուսուցանէ։
Զի ծաղիկքն և ծառատունկքն զարդարին. նաև
փուշքն իսկ բուսանին. որպէս դժնիին. և տա-
տասին. և եղէգն. և պատաղեղն. խայթաՀայր.
ժանդափուշն. տափափուշն. սրափուշն. որոմն.

կայծուն։ գաղձն դիտասակար։ և որ ինչ նման է սո-
ցա։ և սոքա ամենեքին յիւրաքանչիւր նմանութի
բնութեան բուսանին։ Իսկ օգտակարքն ծաղկիք,
կամ շառաւեղք ծառոցն դարաստանաց՝ յիւրեանց
'ի բնութեան անդր հասանեն գարնայնոյն։

Իսկ միտք մարդկան որ են առնկիք բուրաստա-
նացն, կամ ծաղկիք ծառկոցաց ոճութեան, ունին
ինքեանք յինքեանս ըստ կամաց իւրեանց բերեն ըղ
նմանութիս և զօրինակ տերևոյն ծաղկանցն, և հո-
տոցն, և մրգոցն։

Օ՛ի թէպէտ դառնաբերքք լինին, և թէպէտ
քաղցրաբերքք։ թէպէտ մրգաբերքք լինին, և թէ-
պէտ փշաբերքք։ թէպէտ արդարութիւնաբերքք լի-
նին, և թէպէտ մեղսաբերքք։ թէպէտ ծաղկիք լի-
նին, զի 'ի սկզբան պատուական թագաւորին ելս-
նիցեն։ և պսակք զարդու ուրախութեան պիտայիցն
պատրաստիցին։ Ի՛ստ ասելոյն իսկ գուշակութեա՛
հոգւոյն սրբոյ, 'ի բերանոյ խօսեցեալ Եսայեայ մար-
գարէին։ թէ յայնժամ եղիցիս դու պսակ վայել-
չութեա՛ 'ի ձեռին տո՛ն, և թագ արքայութեա՛ 'ի ձե-
ռին տայ։ և քեզ անուն՝ կոչեսցին կամք իմ։ և երկ-
րին քում շինութի՛ բնակութի՛՝

Ա՛նդ լինելոց է շինութիւն, յոճակոց կայանս՝
յանտառս՝ և յանխաւար և յանկարօտ և յանփո-
փոխ քաղաքին։ Օ՛ի այժմ ոմ բոյսք՝ յիւրեանց 'ի
բնութեանն կան կապեալք։ բայց միայն մարդա-
տունկքն կարօղ են զիւրաքանչիւր կամն գունակ
գունակ կերպարանացն շրջշրջել։

Ա՛յժմ որպէս կամին՝ զայն բոյս թաղեն յան-
ձինս իւրեանց։ և նովինքն թաղին 'ի գերեզմանս։
այսինքն է մահն՝ աշունն, ոչ խոտոցն՝ այլ մարդ-
կան որ ժողովք 'ի շտեմարանս։ իսկ գարունն՝ ոչ
խոտոցն կամ փայտից, այլ մարդկան։

Օ՛այն կերպարանս ընդ քեզ բերէ՝ զոր ընդ-
քեզ թաղեցեր 'ի թաղելն քում 'ի քում գերեզմանի

անդ. զի թէ ծաղկաձև իցէ կամ անուշահոտ՝ ա-
նուշահամ արդարութեամբ ննջիցես ի գերեզ-
մանի անդ. ընդ քեզ իսկ կանխեալ ընդ քում
բուսանիցէն՝ ի յարութեանն ընդ քեզ բուսանի-
ցին քո արդարութիւնքն։ Այս եթէ մեղօքն
թաղեցար դու ի քո անունդ՝ ի քում գերեզմանի
անդ. ընդ քեզ բուսեալք ի քո գարունն՝ փուշքն
ի քում յարութեանն շուրջ զքեզ բուսանիցին։

Զ. Սանանն անպտուղ ընդենոյն յանիծիլոյ է, օրինակ
գոպոպոպոնքն Դեղաւորաց յաւուրն գոպոպոնի։

Զի լուր մեծին յովհաննու, որպէս բողոքէ առ հրէական ազգն աբրահամեան. արարէք ձեզ ասէ պտուղ արժանի ապաշխարութեան. և մի՛ և եթ ձեռն յանձին ասէ հարկանիցէք և ասիցէք, եթէ ունիմք մեք հայր զաբրահամ. զայս ասեմ ձեզ՝ թէ կարօղ է ած ի քարանցս սատի յայսցանէ յարուցանել որդիս աբրահամու։ Զանազն ոչ եթէ զաբրահամ ինչ զնոցա ի հայրապետութեան անտի. այլ զն արժանիքն իցեն նորա որդիք, և ոչ անարժանքն։ Զորդ՝ զօգտակարն դարմանէ. իսկ վասն անշահեկան խոտոցն և փշոցն զինչ կամիցի առնել արդեօք. ցամաքեցուցանէ նախ և գօսացուցանէ՝ յորում ոչ գոցէ զպտուղն։

Զի նայեաց յառակն թզենեացն և տես. եկն ՝ուրն ասէ ի թզենին՝ զի գոցէ ի նմա զպտուղն, և ոչ եգիտ. քանզի չէր իսկ ժամանակն պտղոյն բերելոյ. անէծ զնա և ասէ՝ թէ յայսմ հետէ ոք ի քէն պտուղ մի՛ կերիցէ։

Զանազն ՝ամբուսաբերքն և տերևաբերքն և ծաղկաբերքն ժամանակաւ ունին բերել զպտուղն. իսկ սա զի՝ անիծաւ արդեօք՝ զի չէր ժամպտղոյն. զի

թէ պիտոյ ինչ էր, ոչ կարէր արդեօք՝ որ բանիւ միանգամայն բխեաց հրամայելոյն երկրի՝ բերել գծառս, և զբազմութիւն մայրեաց, կամ աշխարհի իւրաքանչիւր պտղոյն, և ամ բուսոցն երկրի՝ իւրաքանչիւր սերմամբք ըստ ազգի իւրում 'ի վերայ երկրի, պատրաստել և ծառոյն զկերակուր պիտոյից այնմ 'ի հասեալ ժամանակի։

Ընդ ոչ զրադատ ինչ գոսութիւն ծառոյն հաստաներ։ այլ կանխեաց ինքն՝ ասէ, 'ի թզենւոյ անտի ուստրուք զառակն։ Իսկ թզենին բարձեալ ունէր զօրինակ անպտուղ մարդկան։ զի զանպտուղսն արդարութիւն ցամաքեցուցեալ զփուշն։

Ընդ լուր մեծի մարգարէին և յառաջընթաց կարապետին յովաննու։ որպէս ասէն տապար առ արմատն ծառոյ կայ։ ամ ծառ որ ոչ առնիցէ պտուղս բարի՝ հատանիցեն ասէ, և 'ի նիւթ հրոյ պատրաստիցեն։ Եւ մարգարէն եսայի ասէ, թէ եղիցին մեղաւորք իբրև փուշք այրեցեալք և ընկեցեալք։

Իսկ զգալարոնն խնամարկեալ կենդանի ջրոնն յարբայութեն, այն գարունն նորոգեալ պարարիցէ։ որ տայցէն զպտուղն ընդ մոյ հարիւր, և ընդ մոյ երկերիւր, և ընդ մոյ երեքարիւր։ այսինքն ըստ վաստակոցն զհատուցմունս պարգևացն՝ իւրաքանչիւր հաւատոցն լուսաւորութեան։

Զգաղջ ներշնոյ 'ի ժամանել գարնան՝ ազդարարութիւն ջուլան գողոցն յարութեան։

Ընդ՝ 'ի գարունս բուսաբերս և ծաղկաբերս՝ և որք զնորոգումն գեղեցկութիւն գարնանայն՝ յետ հնութեն ձմերանայն բերիցեն։ և թռչնոցն հաւուցն ծանուցեալք զնուրանց ժամանակն գալստեան։ Որպէս յայս հայեցեալ երեմիաս մարգարէն ասէր՝

զեւբեանցայոցն ժամանակին դէպս 'ի նմանութիւս
օրինակաց յանդիմանութի բերէ, և զհանդերձե-
լոցն ակնարկէ յասելն՝ թէ արդարև ծիծառն, և
տատրակն, և խորդն, հաւք վայրենիք ծանեան ըզ-
ժամանակ գալստեանն իւրեանց։ Զի ժամանա-
կաւ գարնանայնոյն՝ և իւրեանց գալստեամբն ցու-
ցանեն զժամանակ վարուց կենաց ուրախութեան
մարդկան՝ 'ի ձայն առնելն, 'ի հչելն, 'ի ճռուզելն,
'ի շինել բունոցն։

Զիծառն մարդասէր է. յորժամ տեսեալ մարդ-
կան՝ նովաւ ճանաչէն զկանաչազդեստ հասակն գաբ
նայնոյն աճմանն։ Իսկ տատրակն ամուսնասէր է-
րևեալ, զկերմաձայն զքաղցրաձայն զլսելիս մարդ-
կան ընտ. 'ի գործ արկեալ զթեթևագործ, զկրկ-
տակերտ, զդուզնաքեայ փայտակերտիկն երկթև-
եան, ձըւոցն իւրոց՝ ապաւէն ծննդոցն պատ-
բաստէ։

Եւ դէս դէս խորդոց հաւուց եկեալք ընդ-
գարնանայն ժամանակ՝ երամացեալք հարօրանան։
Ելեալք թռուցեալք բարձրացեալք 'ի բարձրուն
բարձանց, օդայատակ թևացն գարշապարաց կո-
խան առնեն, զանհաստատն ճանապարհս իւրեանց
գնացս հաստատեն։ Փողք եղեալք՝ զկռչաձայնն
զաղաղակ բարձեալք՝ զգործս մշակացն աբթնուեն՝
վաստակոց՝ օգտութիւն մարդկան՝ զարթուցանեն 'ի
քնոյ, զկանուխս եղանցն ընթացուցանել։

Իսկ և թռչունքս փողք են երկրագործութիւն,
հողագործութիւն, յառաքինութիւնն յորդորելոյ.
որպէս մեղուն՝ կամ մրջիւնն՝ վատացն վարդապետ
լինին, և կամ նախատորդ կայցէ։

Այսոյն օրինակ նմանեալ և թռչունքս, մեծա-
ձայն՝ մեծագոչ փողոյն՝ տեսառնագալուստ ազգու-
մն առնելոյ ամենեցուն 'ի մեռելոցն յարութիւն.
որպէս առէն յիծապատում խմաստութիւն անդ՝ 'ի
նուագ սաղմոսնեան երգոյն, թէ զարթիցեն պահ-

պանեալքն 'ի ձայն հաւուն։

Լաւ ոչ իցեն պահպանեալքն, եթէ ոչ՝ ոգի ինքն ժողովեալ և պահպանեալ ընդ հրամանաւ արարչին։ որք զնուրեանց մարմինս իւրաքանչիւր զգենլոց են։ և ընդ գործոցն ըմբռնեալք զնուրաքանչիւր պատրաստութիւն, զնուրաքանչիւր վաստակոցն սերմանեացն զպտուղս։ որպէս 'ի վերս անդ պատմեցաք, և կամ արդ ևս պատմեսցուք։

Հիշատակութիւն հոգեւոր ընթերցողաց և գիտողաց առաքելական։ և տիեզերաւարող վարդապետութեան նոցա ըստ հանիսատացութեան մարգարէից։

Լսեկ առաքելքն փողք են պատուի իրակութեան։ զի պատրաստեսցեն ամենեցուն զամենայն լսելիս՝ ճշմարտին փողոցն գալստեան պատրաստական սպասել։ զի անխափան ամենեքեան խառնեսցին յայն գունդ թռչնոց։

Ուստի և ձայն ազդոյ փողոցն յարութեանն հարկանիցի։ զի և սոքա արժանասցին իւրեանց թեւս ստանալ։ բարձրանալ 'ի բարձունս՝ և զտէրն բարձանց առանց ամենեցուն տեսանել։ Այն տէր՝ որ 'ի հեռաստանէն ճանաչէ։ և զդնացեալսն 'ի նեղութեանէ կեցուցանէ զնոսա։ որք վասն արդարութեան զիսըստութեանցն փորձութիւնս՝ վասն սիրոյն ոչ տարան յանձինս իւրեանց։

Արդ՝ սոքա կատարեցին զկամն ոչն իւրեանց, զի սիրեցին զմիմեանս։ զի և նա սիրեաց զնոսա, այնչափ՝ զի եդ զանձն իւր 'ի վերայ բարեկամաց իւրոց։ Լսեկ նոքա առին հրաման սիրել զմիմեանս։ զի այնուհետև ընկալցին յանձինս իւրեանց զշնորհս խոստացեալս։

Ասան այնորիկ զտէր սրտին ծածկելոց՝ և կերպարանք ցուցանէին 'ի ժողովէն միոյ հաւանութեան

'ի վերնատուն անդր , ուր և եկեալ հոգին սուրբ
եգիտ զնոսա . և օթեվանս կալեալ բնակեաց 'ի նս ։
Օ՛ի զանծուկն նոցա որ առ սէրն ունէին լցեալ՝
միանգամայն իսկ կատարեսցէ զխոստացեալն . զի
ասէ , ես երթամ և զմիսիթարիչն առաքեմ առ ձեզ .
որ եկեալ միսիթարեսցէ զսիրտս ձեր . զի նա ասէ՝
զիս փառաւորէ առնէ . զի յինէն առնու՝ և պատ-
մեսցէ ձեզ ։

Ա՛ր և զերրորդութիւն սէրն միաբանութիւն 'ի նՁ
միաբանութիւն անդ լցցէ . որ 'ի ոնէն առին հրա-
ման , թէ ելէք ընդ ամ աշխարհս , աշակերտեցէք ընդ
ամ լեզուս , և մկրտեցէք զնս յանուն հօր և որդւոյ
և հոգւոյն սրբոյ . ուսուցէք պահել զոր խօսեցայ
ընդ ձեզ . և ես ընդ ձեզ եմ զամ աւուրս կենաց
ձերոց՝ մինչ 'ի վախճան աշխարհի ։

Օ՛ՁՁմարտութիւն երրորդութեն , և զմիաբան
տէրութեն երեք անձնական զօրութեն՝ ետ նոցա
զդիտութիւն . զի ըստ այնմ օրինակի աշակերտեցեն
զամենեսեան . և մկրտեցեն յանուն հօր և որդւոյ
և հոգւոյն սրբոյ ։

Ա՛ս զամ ազգ լեզուացն բաժանելոց ընկալան
զդիտութիւն 'ի յառնուլ զօրութեն հոգւոյն սրբոյ .
զի ամ աշխարհաց որ ընդ ամ տիեզերս մարդիկ ի-
ցեն , բաւական լեցին ուսուցանել զհրամանս ՁՁ-
ութեն . և զսէր արարչին առ իւր արարածս . և զիսո
նարհուն վասն մերոյ բարձրութեն . և զայսն յան-
մահութեն՝ յետ մեռելոց յարութեն ։ Ա՛ս թէ՝ սոյն
ինքն մշանջենաւորութեն զօրութեն ՁՁորդւոյն՝ վա
մերոյ փրկութեն եկն զգեցաւ զմարդկութիւն . և
մանաւանդ թէ առաւել վասն նորոգմանն ամ արա-
րածոց . զի տացեն ամենեցուն զայս գիտութիւն , որ
նոցա մեծամեծք շնորհեցան ։

Ա՛ռդ՝ կատարեցաւ յառաջասացն Հայնութիւնք
մարգարէութեանցն նոքօք , թէ յաւուր յայնմիկ

անասցեն հաղարապետին յուդայ 'ի սիրոս իւրեանց, եկայք գացուք մեզ զընակիչսն երկրի 'ի տէր ամենակալ ածն Նոցա։ Եվ նախ անդէն իւրեանց ազգին եւուն զգիտուն. և անդուստ յերուսաղէմ բաշխեցան ընդ ամ տիեզերս ածապաշտութիւն։

Իւր քանզի տէրն ամէն յազգէն յուդայի ծագեաց. վասն այսորիկ և սոքա հաղարապետք տանն յուդայ կոչին. զոր և մեկնեաց պօղոս առաքեալն. ած թափեաց ասէ՝ թէ մեք հաղարապետք եմք խորհրդոյն այ։

Այսպա յիրաւի ասէ Նոյն հոգի 'ի բերանոյ մարգարէին յառաջագրոյն. թէ յաւուր յայնմիկ ասէ տէր՝ երդից զհաղարապետս տանն յուդայ՝ իբրև զջահս վառեալս 'ի մէջ փայտից, և իբրև զղամբարս հրոյ յերեգան. և կերիցեն յաջ և յահեակ ազգս ամ ժողովուրդս շուրջանակի։ Իւր խոնարհագոյնս ևս ասէ. թէ հեղից 'ի վերայ տանդ դաւթի և 'ի վերայ երուսաղէմի զհոգի շնորհաց և գթութեան՝ և դարձցին յիս։

Որ ելն կատարեաց ինքն սուրբ հոգին՝ որ առաքեցաւ 'ի հօրէ և յորդւոյ։ Եվ որպէս որդին առաքեցաւ և ելն հարքն և հոգւոյն. այնպէս և հոգին առաքեցաւ հարքն և որդւոյն. զի երևեսցի միանակամ միաբանն զօրութիւն։

Խորհրդածուին վերայ ի ասասոյ արարչագործն աշխարհի, և ելանելոյն ասուրն հանգոստեան։

Սակայն ելն յերուսաղէմ քաղաքն՝ գտեալ ըզնոսա 'ի միասին՝ ելից զսիրոս Նոցա միով զօրութեամբ. զի կատարեացին յառաջասացութեան ասացեալքն նորին հոգւոյ 'ի բերանոյ մարգարէութեանն յովելեայ։ Իւր եղեցի յաւուրս յետինս յետ այսորիկ ասէ ած, սփռեցից ես զոգւոյ իմմէ 'ի վերայ ամ

մարմնոյ. և մարդարէացին որդիք ձեր և դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն. և ծերք ձեր յերազովք յայտնեսցին. և 'ի վերայ ծառայից իմոց՝ և 'ի վերայ աղախնեաց իմոց սիրեցից յոգւոյ իմմէ և մարգարէացին. և տայ ես նշան յերկինս 'ի վեր՝ և յերկիր 'ի խոնարհ, արիւն և հուր և մրրիկ ծխոյ. արեգակն դարձցի 'ի խաւար՝ և լուսին յարիւն՝ մինչև եկեալ իցէ օր տեառն մեծ և երևելի. և եղիցի ամ որ կարդասցէ զանուն տեառն՝ կեցցէ։

Զի զնոչ իցէ որ ասէն՝ յաւուրս յետինս. քանզի յորժամ արար ամ զարարածս, յառաջին աւուրն սկսեալ՝ 'ի վերջերորդին կատարեալ զամ ինչ, հանգեաւ յամ գործոց իւրոց, վասն ամենակար և անջան, անաշխատ և անդադար զօրութեն. իսկ զօրն ելիթներորդ կոչեաց հանգիստ։

Եբրև ետես ամ՝ սայթաքեալ կործանեալ անկեալ զմարդն 'ի պատուիրապահութենէ անտի. զի ոչ եկաց մնաց 'ի լաւութենէ անդր՝ որպէս նայն կամէր. այլ ընդ պատժօք պատուհասի անկեալ՝ յաղարութենէ դատաստանին գրաւեցաւ 'ի նեբբոյ մահու։ Զ Եբաւորեալ խոցեցաւ 'ի հոգս և 'ի ծուփս, յաշխատութիս, 'ի քրտունս ցաւոց. յանհանգիստ երերմունս տաժանմանց ընկղմեցաւ. ոչ դարձոյց զբան իւր զոր ասաց, այսինքն՝ զմահն զոր եդ 'ի վերայ. այլ զարարչութենէ ժամանակն զոր արկն ընդ վեցօրեան թուով. զի յայտ լիցի մեծութիւն իւր։

Իսկ սոյն օրինակ և կշռեաց վեց հազար ամաց ժամանակին, ցաւոց՝ քրտանց՝ հոգոց՝ աշխատութեց երկրի. մի մի հազար ամաց՝ առ օր մի կշռեալ վեց աւուրն առաջնոյ, յորում լիցին ծնունդք և սերունդք բազմացունդք լիութեն։ Յորում և փորձութիւնք հանդիսի լաւացն՝ գործիցէ զընտրութիւն հատուցմանցն, պարգևատու խոստմանցն ակնկալութեանց ժուժկալութեց արդարոցն զնեղութեց.

որև բովքն 'ի շաբաթութեանն աշխատուեց. զոր և մարդարէն ձայնեաց յամենեսեան ազգեցոյց և ասէ. հազար ամ յաչս նոն իբրև զօր մի անցանէ։

Զ. Ի յառաջնումն սկիզբն, և 'ի վեցերորդումն նորոգումն՝ զոր արար իւրով գալստեամբն. և զէջս հոգւոյն պարգևեաց. և 'ի ամին հազարի վախճանն. վասն որոյ և յետին կոչի. յորում դարձեալ միւսանգամ գալոց է. և զեօթներորդ աւուրն զխորհուրդ՝ ժամանակն առանց թուոյն՝ և զառանց չափոյն, զհանգիստն և զպարգևսն ընդ նմին բերելոց է։

Զանգի ինքն իւրոյ արարչութեան զօրն եօթներորդ՝ սուրբ և փափուկ առնել պատուիրէ. զի մի՞ որ ծանուցեալ զօրն փափկութեանն հանգստեան արարչին՝ պատուէսցեն։

Զ. Ի ընդ այսորիկ, յեօթներորդ դարուն հանգուսցէ զաշխատեալսն. որ աշխատեցան 'ի վեց դարեան իւրեանց ժամանակին, իբրև այն թէ ընդ նմա աշխատեցան յիւրեանց ժամանակի անդ. սոյնպէս և ընդ նմա հանգիցեն յայն երկայն ամին յանչափութեանն՝ և ընդ նմին ուրախ լիցին։

Հ. Եզրումն ընորհաց հոգւոյն ՅՅ 'ի մարդեկ 'ի յեթին ժամանակս՝ ըստ նախագուշակութեանն մարգարէից։

Ա. Յլ հոգին ՅՅ՝ զի 'ի վեցերորդիս երևեցաւ ընուլ զառաջաձայն զիսուսմունս իւր՝ զասացեալս բերանով մարգարէին. որ և զեղան հեղան շնորհք հոգւոյն սրբոյ՝ յետին ժամանակին սփռեցան 'ի վերբազմախումն գումարութեանն ժողովրդոցն՝ հոսեցան իբրև զյորդադեմ բազմութիւն բռնութեանն ջուրցն բազմութեանց։

Պարդարէացան զԽորհուրդն Ծածկեալս. խօսեցան յանկարծակի զամբէզուս. ամազանց եւուն առ հասարակ վերանալ յարքայութիւն. Ընկալան զյայտնութիւն տեսլեանց՝ պատմեցին ամենեցուն. յայտնեցին զխորհուրդս հարսանեաց մշանջենաւորաց ճաշորդացն. այսինքն յորդեգրութի վերանալ. և նովին որդւոյն և հոգւոյն՝ ընդ հօր ուրախ լինել.

Զոր ոչ կոչնականք կոչել զամենեսեան յաւազանս մկրտութեամբ՝ 'ի լուանալ յաղտոյն, 'ի սատանայական ծխոյն. զի զգեցցին զպատմուճանս լուսեղէնս. և մտցեն յուրախութիւն հարսանեացն, ուր փեսայն քրիստոս ուրախ լինիցի առ հարսին. այսինքն՝ առ մարմնակից արդարան. որք ընդ քրիստոսին չարչարեցան, ընդ նմին և թագաւորեսցեն.

Զոր՝ յայտնեցան հոսեցան շնորհք հոգւոյն յամենեսին. զի զամենեսին արժանիս արասցէ՝ նորապարգևն՝ նորատուրն՝ նորաբերն շնորհի ճաշուն. ուստերաց՝ և դստերաց, ծերոց՝ և երիտասարդաց, ծառայից՝ և աղախնաց, առ հասարակ շնորհեաց պարգևս հոգւոյն նոյ. Զի 'ի միջոյ 'ի բաց բարձեալ զխորոցն, զի մի՛ լիցի խոչիր. ոչ հրեի՝ և ոչ հեթանոսի, ոչ ծառայի՝ և ոչ տեառն, ոչ առն՝ և ոչ կնոջ. զի ամենեքեան միապէս արժանիք լիցին 'ի քրիստոս.

Զոր ոչ միայն այսոքա, այլև չարագործացն եբաց զդրունս թողութեան. զի մաքսաւորք և պոռնիկք և մարդասպան աւազակք, և որ իւր իսկ խաչահանուքն՝ լիցին նմա աւետարանիչք, զիրկութիւնս առնելոյ՝ և զթողութիւնս ածելոյ, և զարքայութիւնս ամենեցուն շնորհել.

Զոր՝ լցան հոսանօք զօրութեամբ հոգւոյն Աբրահամ. ելին ընդ տիեզերս՝ զի տացեն զգիտութիւն սքանչելեաց Ածուն, բազմազգեան լեզուացն առնուլ 'ի միտ, զոր եւ նշանս յերկինս 'ի վերս և յերկիր 'ի խոնարհս.

Լ։ ընկաւորացն այն նշան, զի տեսին զորդին ՝ի մարդացեալ ՝ի վերս յերկինս. ընդ նմին և զմարմնակից կամարարսն. զի իցեն ընդ նմին թագաւորեալք՝ և միահոմեալք, միագունդք ՝ի գունդս հրեշտակացն։

Իսկ յերկիր ՝ի խոնարհ այն նշան, զի մարդիկ տեսին յերկրի՝ զմին զնոյն զորդին ՝ի այս խոնարհեալ, մարդացեալ ՝ի վերայ խաչին՝ զի հեղուցուցիչ արիւնն. ուստի և հուրն վառեսցի յառաքեալսն. և գայցէ ՝ի լեզուս նոցա զամբաւք. զի զմեզս ՝ամմարդկան հալեսցեն՝ այրեսցեն, և ՝ի միջոց բարձցեն։ Զի ինքն եղև գառն. և մատեաւ հօր իւրում պատարագ հաշտութեան ՝ի վերայ խաչին. և միահաղոյն իսկ եբարձ զմեզս աշխարհի։

Հուր ասէ և արիւն և մրրիկ ծխոյ. հուր սրբեցին՝ որ սրբեաց զամենեսին հոգին սուրբ՝ և սրբեաց իսկ, արեամբն քո սրբեաց։ Իսկ որք ոչն կամին սրբեալ, զծուխն ծառացուցանեն. որ ունին զօրինակ յայտնութեան զմերկութիւն այրեցածին։ Լու զարիւն իւր՝ զոր արար նոցա փրկութիւն՝ զնոյն արիւն արացէ նոցա ՝ի կորուստ ըստ իւրեանց արժանեաց։

Լ։ որեգակն և լուսինն դարձցին իսկ ՝ի խաւար. և լուսինն յարիւն. յորժամ տեսին զտէրն ՝ի խաչին չարչարեալ։ Զի այն չէր օրն երևելի որ գալոցն էր, օրն որ դատելոցն է՝ արդարացուցանելոյն աստեղեցուն դատաստանօքն. այլ օր փրկութեան արդարացուցանելոյ զամենեսեան ՝ի շնորհաց անտի։

Զի արեգակն և լուսին իսկ եղեն քարոզք յայնմ ժամանակի. քանզի արեգակն իւրով խաւարելովն քաղաքեաց՝ ցուցանել ամենեցուն զտէրն ՝ի խաչին։ Իսկ նորա ոչ կարացեալ տեսանել զայն տեսիլ՝ խաւարեցաւ. զի ոչ կարաց տեսանել զանարգանսն։

Իսկ լուսինն ևս մեծամեծս ցուցանէր. զի ըստ նմանութեան հայելոյ զարիւնն յինքեան ՝ի վերուստ

'ի բարձանց՝ ամենեցուն արարածոց ցուցանէր ըզ փրկութիւն ամաչխարհի. որք առնիցեն ինքեան մուրք զայն արիւնն իւրեանց արքայութիւն։

Իսկ որք զայս արհամարհեցին՝ և ոչ գայցեն յայս պարգևաբաշխութիւն, լուսինն ցուցանէ զմշտաբուխ արիւնն 'ի նոցին մարմնոց. որ զհամօրէն տանջանացն վկայարանն զանմահ որդուոյն դժոխոց բխիցէ։

Զ ամն այնորիկ ասէ, տաց նշանս յերկինս 'ի վեր՝ և յերկիր 'ի խոնարհս։ Զեր 'ի խոնարհ յերկրին 'ի վերայ խաչին, իսկ լուսաւորքն 'ի բարձանց քարոզք. որ ազգէն ընդ տիեզերս ամ։ Լ՝ուրիւն և հուր և մրրիկ ծխոյ։ Լ՝ուսին ինչ իբր պաշտեցան. մինն կենաց աւետիք. և միւսն արհաւիրք սպառնալեացն պատուհասից։

Լ՝ուսինն դարձցի 'ի խաւար, և լուսինն յարիւն, մինչև եկեալ իցէ օր տեառն մեծ և երևելի. այսինքն՝ զոր գալստեանն հատուցման նշանակէ. զի նա ինքն է օր մեծ և երևելի։

Իսկ մինչև այն եկեալ որ կարդասցէ տուէ զանուն ամն՝ կեցցէ 'ի հնորհաց անտի։ Զ՝ի ամ յերկիր խոնարհեցաւ. և զմարդիկ յերկինս վերացոյց. և խառնեաց զհողեղէնս ընդ հոգեղէնսն։ Լ՝որոգեաց միանգամայն զարարածս, և մանկացոյց. եբաց զարգանդ աւազանին՝ զի նորոգեսցին. ծնցին վերստին մանկունք արքայութեան 'ի մկրտութեան անտի։

Զ՝ի առին առաքեալքն զարգանդ աւազանին՝ և ծնան զամ տիեզերս վերստին. դարձուցին յանմեղութիւն մանկութեան անխարդախ կաթինն՝ առնել զամենեսեան որդիս այ, և ժառանգաւորս փրկութեան քի. որպէս երանելին պօղոս ասաց. որդեակք իմ՝ զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև Նկարեսցի քրիստոս 'ի ձեզ։

Լ,ղանագործ զօրութիւնն առաւելոյ 'ի լուսաւորել զաթենէրս ածելէն ընդհանուր և վարդապետութիւնէ։

Լ՝ որդ՝ մանկացուցին զամ տիեզերս։ վասն այնորիկ զի առին զօրութիւն զայնորիկ՝ որ հին աւուրցն մանկացաւ։ որպէս ածախառն իմաստութիւն երգեաց յառաջագոյն և ասէ։ դարձցի թագաւորն 'ի մանկութիւն։ դարձան և տիեզերքք 'ի մանկութիւն։ զի աւետին զաերն մանկացեալ։

Լ՝նդ նոր ծնանն առաքեալքն զաշխարհս ամ 'ի ջրոյ և 'ի հոգւոյ։ յաղեցին հուրքք զամոք։ զի առին իսկ հրաման՝ թէ ամոք հուրքք յաղեսցի։ Լուսաւորեցան անքակութիւն յածութիւն անդր։ և լուսաւորեցան։ զմայլեցուցին զտիեզերս պարգևօք։

Օ՝ի որ միանգամ 'ի քո՝ մկրտեցան՝ զքո՝ զգեցան։ և զհոգի նորին լուսոյն ականն։ արքին ըզշնորհսն։ և նովին ահացոյց նշանօքն հրաղեզ զօրութիւն յաղել պնգել 'ի նեխուէ մեղացն պղծութեանէ հեթանոսութեան՝ յառողջութիւն բժշկութեան։

Լ՝ու ցողալոց առատութեն բանաւոր անձրևաւն՝ պարարեցաւ սրտից երկիրս մեղէն՝ անապատացել մարդկան։ Լ՝ու ածին իբրև զծով զդարալիր՝ զխաղաղութիւն։ իբրև զգեա յորդեգնաց՝ զփրկութիւն։ իբրև զաղբիւրս մշանջենաբուխս՝ զողջոյնս և հաւատս։ իբրև զբաժակս ուրախութեանն՝ զաերն ածային։ իբրև զհուր՝ զահ և զերկիւղանկեալ 'ի սիրտս մարդկան։

Օ՝ի զոր օրինակ Ճարտարապետն դարբնաց՝ առեալ՝ զերկաթն ընկենու 'ի բովս հրոյ։ և ջեռուցեալ հրագոյն շողացուցանէ։ Այսոր օրինակ և արդարքն մխեցան 'ի փուքս հնոցի արդարութիւն, և ներկան 'ի շողիւնս 'ի գոյնս հոգւոյն սրբոյ։ զքո՝ ինքնին գլխովին զգեցան։ իբրև զլոյս վառեցին զաերն այ յանձինս իւրեանց։ առին զօրութիւն

'ի բարձանց՝ իբրև զքաջ մշակս ընթացան, ընուլ սերմամբ ՅԾ-պաշտութիւն զամ լեզու։

Լեղեն Ճրագունք լուցեալք՝ իբրև 'ի վերայ աշտանակի. այսինքն 'ի վերայ խաչին են. նորին զօրութիւն Ճառագայթիցն լուսաւորեցին զտիեզերս. հալածեցին զմութն խաւարին յամ մարդկանէ. զի արասցեն զնոսա ընդանիս ՅԾ-ային սիրոյն։

Սիրոեցան ընդ տիեզերս՝ լինել քարոզք Ճշմարտութեան. զի ոչ դոյր արգել. ոչ է խտիր, ոչ հրէի՝ և ոչ հեթանոսի. ոչ Ծառայի՝ և ոչ տեառն, ոչ առն՝ և ոչ կնոջ. զի ամենեքեան մի են 'ի քո։

Լու բազումք 'ի հրեական ազգէն, նոքին իսկ բուն առաքեալքն՝ սիւնք հաստատունք, և բազումք 'ի հեթանոսաց՝ զնոցին օրինակն յանձինս իւրեանց բարձեալ բերին։ Լազում ազատք, և բազում Ծառայք ազատք 'ի յազատութէ, 'ի Ծառայութէ ընթացան, այնուհիկ՝ որ թագաւորն վասն նոցին խոնարհեցաւ 'ի բարձրութէն։ Լսկ Ծառայքն 'ի Ծառայութէն յազատութէն այնորիկ՝ որ զկերպարանս Ծառայի էառ, և ազատեաց զամենեսեան 'ի Ծառայութէ խաւարի։

Լսկ հրէականքն հարքն և մարգարէքն աւանդեցին իւրեանց իսկ ազգին զկորհուրդն յառաջագոյն. իբրև եկն Եհաս խոստումն աւետեացն, յայտնապէս և Ծագեաց 'ի մէջ նոցա արեգակն արդարութեան. որ է ինքն քրիստոս։

Լսկ որոց պատրաստեալ էր կեանքն յաւիտենից՝ որ հաւատացին 'ի նա, եղեն 'ի նոցանէ քարոզք և առաքեալք տիեզերաց, առաջին վկայք. և յարուցին ևս 'ի հեթանոսաց. յորդորեցին գունդս գունդս հաւատացելոց, և գումար գումար՝ դասս դասս վկայից, և զամ երկիր լցին։ Օ՛ի ոչ միայն 'ի ձեռն արանց, այլև 'ի ձեռն կանանց սրբոց քարոզեցաւ աւետարանն կենդանութէ ընդ ՅԾ տիեզերս. զի և կանայք օրհնեցան վասն կուսածին Ծննդեանն որ 'ի նոցանէն։

Լ՚ուրդ՝ բուն սիւնք առաքեալքն • ամոլքն որ խօսեցան զամ լեզուս՝ և լցին զտիեզերս • վիճակեցան, բաժանեցին զաղգս ամ • զորս առաքեացն և ետ նոցա իշխանութիւն՝ առնել նշանս և զօրութիւս արուեստից • զմեռեալս յարուցանել • զկիւանդս բժշկել • զախտաժէտս ողջացուցանել • զկաղս գնացուցանել • զկոյրս բանալ • զխուլս ի բան դարձուցանել • և տալ համբոյր խօսել • զբորոտս սրբել • և զամ ցաւս և զլեկութիւս հալածել • զդեւս թշնամիս մարդկութեան հալածել • զսատանայ պահակ մեղաց մոլորութեան կոխան առնել • զամ ոք ծանօթս կացուցանել ածպաշտութեան, և խափանել զմոլորութիւս • հաստատել զամ աղգս ի հաւատս արարչուն հրամանացն • Փառք որդւոյ ի գալստեանն իւրում • ինքնակամ հարքն՝ հանդերձ նոքա հոգւովն • ամէն •

Լարչքեպիսկոպոսն էշխանութիւն առաւէլոցն Հրէիպոսի • հայիբերութիւնի նոցա ի հալածանս հայաստանեայց •

Լ՚ուրդ՝ քանդունդ և խաչակիր առաքելոցն • որոց գլխաւորն պետրոս, և անդրէաս • յակոբոս, և յոհաննէս • փիլիպպոս, և բարդուղիմէոս • թու�մաթէոս • յակոբոս • սիմոն • թադէոս • և բարսաբաս • մարկոս • ղուկաս • պօղոս • բառնաբաս • և այլ ևս որ նմանեցին սոցին • որք և եօթանասունքն ևս • Որք առին իշխանութիւն ի տեառնէ՝ գնալ ի վերայ իժի և քարբի, և կոխել զօրութիւս թշնամւոյն • լինել լոյս երկրի • և համեմել յաղել զանկարգութի չարութեան անգիտութեան մարդկան՝ աղիւն ածութեան հոգւոյն սրբոյ •

Լ՚ուրև զքաջ ախոյեանս՝ իբրև զպատերազմասէր նահատակս զանձինս ի կիրթս առաքինութեանցն մխեին • եղեալ և զնեղուիս չարչարանացն առաջի •

զի ընդ վաստակոցն Ճգնութեցն ոչ ձրի՝ այլ վարձուցն փոխարինակ բռնութեամբ համբերութեն՝ ըմբռնեսցեն յանձինս իւրեանց զարքայութիւն այմարտիւք պատերազմաց։

Իբրև զքաջ նահատակացն զդեցեալ յանձինս իւրեանց զհաւատս և զսէր իբրև զզրահս ամրութիւն, յորում ոչ կարէն ներգործել նենգութեն նեռք բանսարկու թշնամեացն. և եղեալ զյոյսն փրկութիւն իբրև զսաղաւարտ անվթար. և դիմեալք ընդ սիեղերս՝ հրաւիրեցին զազգս ամ։

Զդեալ և զօրինակս տուեալ համբերութեցն, և այլոց և տային թղթովք՝ զառաջնոց վարսն իբրև զկաղապար արկանէին. թէ օրինակ առէք եղբարք զերկայնմտութիւն մարգարէիցն, որք խօսեցան յանուն տեառն. և թէ՝ զհամբերութիւն յոբայ լուարուք, և զկատարումն տեառն տեսէք։

Զի և տէրն զնոսայ ուսոյց նոցա զհամբերութիւն. թէ երանի է ձեզ յորժամ հալածեսցեն զձեզ, և սպանանիցեն զձեզ. ցնծացէք և ուրախ լերուք. զի վարձք ձեր բազումք են յերկինս. և զկաղապարն արկանէր՝ թէ այսպէս հալածեցին զմարգարէսն՝ որ յառաջքան զձեզն էին. և թէ՝ դուք էք աղ երկրի, և լոյս աշխարհի։ Զդ զինքն օրինակ տուեալ իւրոց. զի ինքեամբն կատարեաց զամ. որպէս նոքա այլոց ցուցանէին՝ թէ զտէրն ինքնին գլխովին տեսաք։

Ամենեն առաքելոց ընդ ամենայն երկիր աւետարանել զբանն չենոց։

Զդ ապա սիրեալ ընդ ամ աղգս՝ տալ զգիտութիւն ճշմարտանօթութեան, և կեցուցանել զամենեսեան։ Որպէս մարգարէն յառաջագոյն երգեաց իբրև ի նոցանէն յառաջ գիտութիւն՝ գուշակութիւն հոգւոյն

սրբոյ։ Թէ լուարուք զայս ամ աղգք։ ունկնդիր լերուք ամենեքեան զք բնակեալք էք յաշխարհի։ Ծնունդք երկրի և որդիք մարդկան, 'ի միասին մեծամեծք և անանկք։

Զ. այսպէս սփռեալ ընդ տիեզերս՝ բաժանեցան յամ լեզուս։ որ վկայեալ եկք հրէայքն յամ կողմանց, թէ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս։ որք ժողովեալ տեսին զառաքելոսն 'ի միում վայրի, յառաջ քան զսփռելն նոցա ընդ ամ երկիր։

Զ. որդ՝ ոմանք խակ զնւրեանց հրէակողմն առեալ վարդապետեցին։ իսկ այլքն սփռեցան ընդ տիեզերս։ զի ոմանք 'ի մարս։ և ոմանք 'ի պարթևս։ և ոմանք 'ի խուժաստան։ և ոմանք 'ի միջագետս։ ոմն 'ի կողմն գամրաց։ ոմն 'ի պոնտոս։ և ոմն յասիա։ և ոմն 'ի փռիւգիայ։ ոմն 'ի պամփիւլեա։ ոմն յեգիպտոս։ ոմն յաշխարհն հնդկաց։ ոմն 'ի կողմանս լիբէացւոց։ ոմն 'ի կողմանս կիւրենացւոց։ ոմն 'ի կողմն գաղատացւոց։ ոմն 'ի կողմն սպանիացւոց։ ոմն 'ի կողմն ազովայ։ ոմն 'ի կողմն թրակայ։ ոմն 'ի կողմն լակոնիայ։ ոմն 'ի կապադովկիայ։ ոմն 'ի բիւթանիայ։ Զ. ոչ զոք կարէ թուել, բաւել, հասու լինել։ այլ ընդ ամ երկիր եւ բարբառ նոցա։ և մինչև 'ի ծագս տիեզերաց են խօսք նոցա։

Զ. յայսպէս քարոզեցին ընդ տիեզերս՝ առ 'ի լուսաւոր առնել զամ մարդ որ գալոց է յաշխարհ։ Տալ զապաշխարութիւն փրկութեան ամենեցուն։ լուսանալ զամենեսեան։ արձակել 'ի կապանաց խաւարի մկրտութեան, և 'ի քրիստոսագունդն դրոշմել զամ ազգս։ Տալ զորդին այ բնակել 'ի սիրտս մարդկան։ միաբանել խառնել 'ի սէր ածորդւոյն։ զի 'ի արտից ամենեցուն իբրև մի աղաղակ իցէ։ և զամ աշխարհս միաբանեալ ասել աբբայ հայր։ Զի բարձցի անուն ծառայութեն, և դիցի անուն որդեգրութեն։ շնորհելումն քի զի ուտել զմարմին ածորդւոյն, և ըմպել զարիւն կենդանարար։ զի այնու մտցեն ամ աշխարհս 'ի ժառանգութիւն քի,

լինել Ժառանգ այ, և Ժառանգակից քն։

Զ.Յսպէս զօրացուցեալ զնա 'ի խորհուրդ կամաց իւրոց՝ յուսալն որ 'ի քո զոր և դուք լուարուք և հաւատասջիք Ճշմարտութեան աւետարանին փրկութեան ձերոյ. յոր հաւատասջիք, և մկրտեսջիք 'ի հոգին աւետեաց սրբութեան. որ է ինքն գրաւական Ժառանգութեան մերոյ, 'ի փրկութիւն նուաճումն 'ի գովեստ փառաց նորա։

Զ.Այս ընթացան ընդ տիեզերս ամ, մինչ 'ի ծագս երկրի լի առնել զքարոզութիւն բանին կենաց։ Զ.Նդ և զօրք հրեշտակացն հրեղինացն և հոգեղինացն առ 'ի մխիթարութեի առաքելոցն գումարել. զի և բանից ընկեր՝ և ճանապարհաց՝ և բանտատուտ կապանաց, ուստի և շնորհօքն այ կորզեալ զառաքեալսն՝ ճանաչէին։ Զ.Ս առաջնորդեալ հրամանակամ հոգւոյն աբելք քաղաքի քաղաքի, և աշխարհի աշխարհի, զհաւատոցն քի ընդհանուր ծանօթս տալով. զոր և մեք սակաւուք զառաւելագունացն Ճշմարտութեի բերիցեմք, վասն ինքնահրաման առաջնորդութեան հոգւոյն սրբոյ։

Զ.Անդի այսպէս հրաման տուեալ աշակերտել զաղգս ամ. առաքեալք ընդ տիեզերս 'ի հնազանդել հաւատոցն ամ հեթանոսաց. հրաւիրել զնոսա 'ի համարձակութի քարոզութեն առանց զանգիտելոյ։ Զ.Ս միանգամայն իսկ ընդ ամ տիեզերս առաջնորդութեաբ հոգւոյն սրբոյ համարձակեալք. զի քարոզէին զարքայութիւն այ, և ուսուցանէին վասն յի քի՝ անարգել և անխափան ամ համարձակութեաբ։

Զ.Ս յետ այսորիկ քաջագունդ առաքելոցն, շնորհակարգութեաբ հոգւոյն սրբոյ գումարելոցն ընդ ամ կողմանս 'ի ներքոյ երկնից՝ ամ նշանօք և արուեստիւք և շնորհագործ զօրութեաբ ազգ արարել ըստ իւրաքանչիւր մասին. և զբանն կենաց հնչեցուցեալ. և միանգամայն քաջածանօթս և զյարութիւնն

յուսոյն ծաղկեցուցեալ. քանզի ի նոցուն իսկ ի
ինորհազարդ բանից և ի գործոց՝ յայտնի է իւրա-
քանչիւր սահմանադրութիւն հրամանաւ հոգւոյն
սրբոյ վերնակել։ Զոր և պօղոսի իսկ նշանակեալ,
թէ յերուսաղէմ մինչև ի լիւրիկիա ինձ եհաս լի-
առնել զաւետարանն այ. և դարձեալ՝ թէ որ
կարգեաց զպետրոս ի թլփատութիւն, զօրացոյց և
զիս ի հեթանոսս։

Որոց և ածադիր ժամանակն մերձեալ կայր առ
ամուրեք քաստուր փրկութիւն հասելոյ. որպէս և պօ-
ղոս յաթէնս պատասխանատու եղեալ, թէ զժա-
մանակն անգիտութիւն անտես արարեալ այ. արդ
զայս պատուիրէ մարդկան՝ ամենեքեան ապաշխա-
րել։ Հանգոյն սմա նշանակեալ և պետրոս ի կա-
թուղիկեան թղթին իւրում. թէ քաւական է ան-
ցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց. արդ
այսուհետև ըստ կամացն այ կեցցեն։

Բայց ոչ անդէն և անդ յանկարծութեան ըստ
զօրութիւն հոգւոյն՝ զնորընծայսն յանընդելական
մեծամեծս ձկտեցուցանէին. այլ նախ թեթևա-
գոյն ըստ աշխարհակիր կարգացն առակաբանեալ
և արուեստախօսեալ։ Զ այն որոյ և պօղոսի իսկ
յայտ արարեալ, թէ կաթն ջամբեցի իսկ ձեզ ի քա-
ւական։ Որպէս և յառաջագոյն իսկ կարգեալ ա-
մենիմաստն այ՝ մովսիսաբեր օրինօքն. նախ զոհ-
իւքն, և շաբաթուքն, և տօնահրաման կարգօքն։

Յորոց յետ այնորիկ հրաժարեալ՝ մարգարէիւքն
յարուցելովք զառաւելագոյնն հայցէ. որով ասէրն,
թէ յագեալ եմ արդ զոհիւք ձերովք. և թէ՝ ոչ
վասն պատարագաց քոց կշտամբեմ զքեզ. այլ մա-
տոյ այ պատարագ օրհնութիւն։ Լաւ թէ՝ ով մարդ՝
զինչ խնդրէ ի քէն տէր, բայց առնել իրա-
ւունս և արդարութիւն, և պաշտաստել երթալոյ
զինի տեառն։

Այն կանոն և առաքելական պաշտեցաւ. քանզի մեզ այ օրէնք և օրինադատութիւն՝ առաջին և երկրորդն ճանաչէր։ Որ իւր իսկ ոն յայտ արարեալ ասելովն, թէ յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի այլ է որ սերմանէ, և այլ է որ հնձէ. ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր դուք ոչ վաստակեցէք. այլք վաստակեցին, և դուք 'ի վաստակս նոցա մտէք. զի որ սերմանէն, և որ հնձէն՝ հասարակ ցնծասցեն։

Այլ նոքա տեղեկացեալ իսկ էին արուեստիւ քարոզուէն յամենափրկչէն քրիստոսէ, զոր սկսաւ առնել և ուսուցանել։ Զանգի և ինքն քո ոչ անդէն իսկզբանն զբարձրագոյնսն և զանհասականսն որոտաց. այլ նախ խոնարհագոյն և առակախօս բանիւք, և ախտահալած բժշկութիւք մերձաւորս արարեալ և իմաստանացուցեալ. յորս և ասէր իսկ՝ թէ զերկրաւորս ասացի ձեզ, և դուք ոչ հաւատայք. զիարդ եթէ զերկնաւորսն ասացից ձեզ՝ հաւատայցէք։

Զայս յետ այնորիկ իբրև կատարեցոյ՝ համարձակ և բարձրագոյն զշմարիտն վարդապետեալ. նովին կանոնաւ և առաքեալքն 'ի բարբարոսական կողմանսն գործեցին։

Զատն որոյ և սիւնհոդոսական հրամանաւ առաքելոցն, նախածանօթս մատուցելոցն հեթանոսաց զթեթևագոյնսն աւանդել. և որոշել նախ 'ի կերակրոյ կռոցն, և 'ի պոռնկութիւնէ, և 'ի մեռելոտուց, և յարենէ։

Իսկ յորժամ առաջի եդեալ ամուսնոյն, և վկայեալ հոգւոյն սրբով հրեից և հեթանոսաց՝ վասն յուսոյ հաւատոցն որ 'ի տէր յս. որպէս և պատրոս իսկ յառաջագոյն ասէր հրեիցն, թէ և մեք եմք նորա վկայք. և հոգին սուրբ զոր ետ հնազանդելոց իւրոց։

Իսկ պօղոսի ասացին զգուշութիւն ի մէջ լսոցս՝ առաջի համարձակութեանց ժողովելոցն ուշ տրտրել զաւանդելոց զհրամանս և ուխտեալ՝ թէ ոչ զանգիտեցի յօգտակարացն հրապարակաւ և առանին՝ տալ վկայութիւն հրէից և հեթանոսաց, զապաշխարութիւն որ առ Աստուած՝ և զհաւատացն որ ի տէր յիսուս։ Որ և վճիռ իսկ առնեալ, թէ վկայութիւն դնեմ ձեզ յաւուրս յայսմիկ, զի եթէ եմ ես յարենէ անցուն ձերոյ. զի ոչ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զամենայն ոյ։

Գրաւոր առանձնութեան աւետարանական քարոզութեան պէտքն հոգւոյն սրբոյ։

Զան այնուհետև երանութիւն հասեալք ի խորհրդանոց հոգւոյն նոր, և զանձ անխօս զանձ ապատում զաւետապարդև վարդապետութիւն միածնին Աստուծոյ, զի գրով հաստատեալ կարդիցեն համազգաց, և յաւիտեանց եկեղեցոյն ի նեղբոյ երկնից, առ ի լուսաւոր առնելոյ զամմարդ որ գալոց է յաշխարհս։ Ասանդ թէ ազդեցութիւն հոգւոյն շարժեալք՝ յառաջի եղեալսն յաջողեցան։ վասն որոյ և յուսուցանեն իսկ նշանակեաց աշակերտացն սրբոց՝ ամենեցուն փրկիչն ասելով։ Թէ եւ բազում ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ։ յորժամ եկեսցէ հոգին Ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամ Ճշմարտութիւն։

Ակնարկեաց և վասն կենդանատուր աւետարանին իւրոյ, թէ քարոզեսցի աւետարանս արքայութեանն ընդ ամ երկիր, ի վկայութիւն ամ հեթանոսաց։ և ապա եկեսցէ կատարած։ Բանզի և առաքելոցն իսկ նորին վկայիցն Ճշմարտութիւն, առեալ ի սուրբ աւետարանէն և ի մարգարէական գրոց թուղթս հոգեպատում և ածախօսս ծաղկեցուցեալ։ զի կանոնք մշանջենակարգք աշակերտելոցն լինիցին։

մանաւանդ հայեցեալք և ՚ի կատարումն եկեղեց-
եացն՝ յաճախէին այնուհետև զյաճախագոյնսն
բարբառելով։ Որպէս և պօղոսի յայտ արարեալ
ասէ. զմնաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զն-
մաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ, և ոչ զիշխանաց
աշխարհիս այսորիկ զխափանելեացս. այլ խօսիմք
զայն իմաստութիւն ծածուկ խորհրդով. զոր յառաջ
քան զյաւիտեանս սահմանեաց ՅԱԾ ՚ի փառս մեր.
զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ.
զի թէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զտէրն փառաց
՚ի խաչ հանէին։ Իմաստութիւն լուսաւորեալ և
զարդարեալք էին. ասելովն, թէ մեք ոչ զոգի աշ-
խարհիս այսորիկ առաք, այլ զհոգին որ յայն է. զի
նովաւ ծանիցուք զայն որ յայնմ շնորհեցաւ մեզ։

Այս արդ՝ առեալ հոգելից և հոգէմուխ ՅԱԾ-
տեսացն զՅԱԾատուր աւետիսն, և գրով հաստատեալ.
և զմի աւանդուին չորս աւետարանս սահմանեալ.
ոչ օտարագոյն ՚ի միմեանց արուեստախօսեալս, այլ
ամենագետ հոգւովն այ զմիաւոր Ճշմարտութիւն
հրամանացն քրիստոսի պատմեալ. զոր յառաջա-
կարգ մարգարէն է տեսանել։

Օ ի զոր մեծին մովսէսի յառաջագոյն շնորհօք
հոգւոյն զլինելոցն առակախօսեալ. զնոյն հոգէ-
պատում բարբառովն և զկնի եկելոց մարգարէ-
ին երկրորդեալ. որովք երևեալ ամենապարգև
հոգւոյն զօրութիւն։

Դէպ ՚ի առաւելոց զնոանաչան սուրբ երրորդութիւնն՝
և զՅԱԾութիւնն ՚ի յոյսոնութիւն հոգւոյն ՅՈ։

Համբարձեալ այնուհետև թևօք հոգւոյն ա-
ւետարանագիր արանցն քրիստիրաց. և անցեալ ընդ
երկինս, և բարձրացեալ ՚ի վերս խորանացն երկնից։

անդ 'ի վերս յաճախական յաթոռն։ և տեղեկացեալ հոգւոյն սրբոյ խորոցն այ։ և ծանուցեալ զմիա-ծին որդին անդէն 'ի ծոց հօր իւրոյ։ և այնպէս ճշմարտագոյնս հաստատեալ նորին գիտութիւն, որպէս և գիտէ հայր զմիածինն իւր։ Որով լուսաւորեալ և առեալ զանպատումն 'ի պատմել։ թէ իսկզբանէ էր բանն։ և բանն էր առ աստ։ և աստ էր բանն։ նա էր իսկզբանէ առ աստ։ ամ ինչ նովաւ եղև։ առանց նորա եղև՝ և ոչ ինչ։

Յեսանեն զի չեթող ինչ 'ի միջի զաստագէտ ի-մաստուն պայման։ այլ միանգամայն զբովանդակն բերէ՝ ասելովն։ թէ էր իսկզբանէ։ և առ աստ էր։ և աստ էր։ և ամ ինչ նովաւ եղև։ առ ժամայն իսկ ծանօթ եղեալ էականն անծին որդւոյ, և միաբուն և աստակից պատուի՝ և ամենակալ զօրութեանն։

Բանզի յառաջագոյն իսկ աստագէտս յարդարեաց բիւրապատիկ սքանչելեօք՝ ամենատէրն քն ըզ սիրելի աշակերտսն իւր։ զի և գեղոյ և կերպարանոց՝ և միտանկոն բնութեանն երից անձանցն կատարելոց՝ մերձաւոր և ծանօթք ցեղն։ Զի ոչ եթէ իւրեանց կարճահաս իմաստութեն հասեալք չքնաղ գիտութեանն այ։ այլ նորին իսկ մարդասիրին այ յայտ արարեալ յերկնից։ թէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ, դմա լուիջիք։

Զոր և պետրոսի իսկ վկայեալ 'ի կաթուղիկէ ինն իւրում։ թէ ոչ պանծանեալ ինչ առասպելեաց ըզ-հետ երթեալ՝ ցուցաք ձեզ զտեառն մերոյ յի-քն զզօրութի և զգալուստ։ այլ մեզէն եղեալ ականատես և սպասաւոր նորա մեծութեան։ Բանզի առեալ յայ հօրէ զփառս և զպատիւ, եկեալ այնպիսի բարբառով 'ի մեծ վայելչութեանէ փառաց անտի, թէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ։ և զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա իսկ էաք 'ի սուրբ լերինն։

Որպէս և որդին Եկեալ մատուցանէ առ Հօրն զիտութիւն. թէ Եկի ոչ զիմ կամն կատարել, այլ զկամն Հօր իմոյ որ առաքեացն զիս։ Որ յորդագոյն նշանակելոյն 'ի վարդապետելն իւրում, զփառս Հօր բարձրացուցանէ. յայտ արարեալ զմիտանական կամացն. թէ զբանն զոր ես խօսիմ ընդ ձեզ՝ ոչ ես կամեալ՝ նա գործէ զգործս։

Զոյնպէս և վասն Հոգւոյն սրբոյ ասէ. թէ Հոգին Ճշմարտութիւն առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութիւն. զի ոչ Եթէ յանձնէ ինչ խօսի. այլ զոր լսիցէ՝ խօսիցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ. նա զիս փառաւորեսցէ՝ զի յիմէ առնուցու, և պատմեսցէ ձեզ. զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի՝ թէ յիմէ առնուցու, և պատմեսցէ ձեզ։

Տես զմիաբանութիւն զմիակամութիւն միայնաւորական ճշմարտութիւնն. և տես զնաիրդ լուսաւորութեաց զգոյութիւն երից անձանցն հաւասար՝ և ասէ. թէ ոչ յանձնէ ինչ խօսիցի Հոգին սուրբ. քանզի յիմէ առնուցու, և պատմեսցէ ձեզ. զի զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է։ Տես զի Հայրն կատարեալ, և զորդին ճշմարիտ, և զՀոգին հաստիչ։

Զանակեաց և զանորոշական զմիաբուն ոճային զօրութիւնն պայման ասելոյն. Եկի 'ի Հօրէ, և Եկի յաշխարհ։ Զոյնպէս և վասն ճշմարիտ Հոգւոյն. թէ Հոգին ճշմարտութիւն որ 'ի Հօրէ ելանէ։

Տայ վճիռ և վասն միանական միաւորութեան երրորդութիւնն ասելոյն, թէ Հոգիկ ոճ. ցուցանել վասն իւր՝ և վասն ճշմարիտ Հոգւոյն՝ անմերժական 'ի Հօրէ, թէպէտ և առաքեալք անուանեցան յառաջչէն Հօրէ, այլ ընդ նմին միաբուն և առանց մեկնելոյ զմիանական գործն կատարեցին՝

ասելովն ։ թէ ոչ ոք էլ յերկինս՝ եթէ ոչ որ էջն յերկնից որդի մարդոյ՝ որ էն յերկինս։ Տեսանեա զի և իջեալ է յերկիր ։ և է՛ յերկինս։ Յորոյ վերայ և աւետարանիչն յոհաննէս տեսեալ վկայեաց ։ թէ զնոյն ոչ ոք ետես երբէք ։ բայց միածինն որ է ՚ի ծոց հօր՝ նա պատմեաց։

Լ՚ուարդ՝ դու ՚ի միտ առ զոր ասէն ։ թէ որ է՚ն ՚ի ծոց հօր՝ նա պատմեաց ։ զի զոր առ իւրեանն տեսանէին ։ ՚ի ծոց հօր զնոյն տեսանէին։ Ա՚վ զարմանալի պարգևելոցն ։ և ահագէտ վիճակելոցն ։ ոՀրպիսուամ վայելչութեանն առ ժամայն հասին։

Հանաչեալ-Լիւնն առաւելոց ՚ի վարդապետութիւնս հաւատոց ։ ՚ի նշանակ առնելոյ նոցա զպարգևս ընդհոյց զ և նոցն հոգւոյ։

Այնպէս և վասն ճշմարիտ հոգւոյն է իմանալ յասելոյն ։ թէ որ ՚ի հօրէ ելանէ ։ ելանէ և ոչ բաժանի ։ բղխէ և ոչ սպառի ։ և միանգամայն իսկ ըզ ճշմարտապէս և զմիագոյն և զմիակշռեան ասէ ։ թէ ես ՚ի հայր ։ և հայր յիս ։ և որ ետես զիս՝ ետես զհայր իմ։

Զանգի ոչ եթէ սահմանք ինչ զածականն բռ՚ վանդակեցին ։ թէ հայրն յերկինս ։ և միածին որ՚ դին՝ և ճշմարիտ հոգին յերկիրի ։ որով լինի ամ ։ և է յամենայնի ։ և ՚ի վերայ ամի։ Ա՚սան այսր ամի ահագնասքանչ և վարդապետական աշակերտացն իւրոց՝ հրաւիրեալ յառաջնորդութիւն հոգւոյն սրբոյ՝ յորս և ասէրն իսկ ։ թէ և՛ս բազում ինչ ունիմ ասել ձեզ ։ այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ ։ բայց յորժամ եկեսցէ հոգին ճշմարտութիւն՝ յիշեցուսցէ ձեզ ։ և առաջնորդեսցէ ձեզ ամ ճշմարտութիւն։ Ա՚ն որոյ և պետրոս իսկ նշանակեաց առաքալ զհոգին սուրբ ։ թէ յիշեցի զբանն տեառն՝ զոր ասէր ։ յովհաննէս

մկրտեաց ջրով։ բայց դուք մկրտիցիք հոգւովն սրբով։ և ոչ միայն նոցա, այլ և մատուցելոց նոքօք առ ՚ի՚ն։

Որպէս և երանելոյն իսկ զուկաս՝ ՚ի սկզբան աւետարանին յայտ արարեալ։ թէ բազումք յօժարեցին վերատին կարգել զպատմութիւն վասն իրացն հաստատելոց ՚ի մեզ։ որպէս աւանդեցին մեզ՝ որ իսկզբանէ ականատես և սպասաւորք եղեն բանին։ յորոց և զաւետարանն տեառն կարգեաց։

Իսկ պօղոսի՝ ևս սքանչելագոյն և ահաւորագոյն ազդեցութիւն երևեալ։ վասն որոյ և ինքն իսկ զարմացեալ պատմէ ասելով։ թէ մարմնով և թէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ։ բայց համբարձեալ յերրորդ մասն երկնից՝ և ՚ի դրախտն, և լուեալ բանս անձնականս՝ գիտեմ։ Վասն որոյ և ասէն իսկ։ թէ ոչ ՚ի մարդոյ առի էս, կամ ուսայ յումեքէ։ այլ ՚ի յայտնութէ՝ ոն մերոյ յի՚ քէ։ զոր և ականատես եղեալ պարծի՝ թէ զտէր յիսուս աչօք իմովք տեսի։

Բայց թէպէտ և այնպէս բարձրագոյնի և պայծառանշան առաքեցաւ ՚ի՚ն՝ տայ հնազանդութի՚ և երկոտասանիցն։ գրեալ կորնթացւոցն, զի էս ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր և ես ընկալայ։

Դ,ոյնպէս և եբրայականացն, թէ մեք զնմանդ ապրեացուք հեղգացեալքս յայնպիսի փրկութէ՝ որ սկիզբն առ խօսելոյ ՚ի ՚ն՝ և ՚ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ ՚ի մեզ հաստատեցաւ։ Որոյ յայտնի իսկ է՝ թէ մոյ զօրութէն շնորհք զամենեսեան լուսաւորեալ՝ առ ՚ի վկայութի մի ճշմարտութէն զարթուցանէին։ քանզի և ասէ իսկ պօղոս, թէ ամենեքին մեք զմի հոգի արբաք։

Որով բարձրագոյնս և երկնաբերձագոյնս սկսան հաչակեցուցանել զպատուի իսկական փառաց միածնին՝ հանդերձ կանխատաց մարգարէական բարբառովքն։ զոր ասաց իսկ ՚ի՚ն՝ թէ իսկզբանէ էր բանն։ և առ ՚ի՚ն էր։ և ՚ի՚ն էր։

և ամ ինչ նոմա եղև։ Լսէ և զուկաս զառաքելոցն, թէ իսկզբանէ ականատեսք և սպասաւորք էին բանին։

Զարձեալ և զսոյն և յոհաննէս ասէ՝ ի կաթուղիկէին իւրում. թէ որ էրն իսկզբանէ, ընդոր հայեցաքն. և ձեռք մեր շօշափեցին՝ ի վերայ բանին կենաց. և առ ամ էր ասէ բանն. վկայեաց տեառն ասացելոյն՝ թէ հայր տուր ինձ զփառսն՝ զոր ունէի յառաջ քան զաշխարհս։

Լուերէ զսոյն և պօղոս, թէ ոչ յապիշտակութի համարեցաւ զէանալն հաւասար ամ։ Այսպէս և յոհաննէս յառաքելականին իւրում, թէ որ էր առ հօր՝ և երևեցաւ մեզ. և թէ՝ ամ էր ասէ բանն։ Արդէս և քա իսկ ասաց. թէ զոր ունի հայր՝ ունիմ և ես։ Զարձեալ՝ և յոհաննէս՝ ի թղթին իւրում ասէ. թէ նա է ճշմարիտ ամ։ Այսպէս և պօղոս, թէ յերևել փառաց մեծին ամ փրկչին մերոյ յի քի՝ որ եդ զանձն իւր վասն մեր։

Արդ՝ միով միաբանութիւն, և ինքնայօժար մերովք իսկ կամաք հաստատեաք հաւատոց գիտութեան որդւոյն ամ՝ յայր կատարեալ՝ ի չափ հասակի կատարմանն քի։ Զանզի և առաքեալ վարդապետին քի՝ առ՝ի բազմաց ունկնդրութի հայի. որով հրամանաւ զամ ազգս երկրի՝ ընդ անզղջական վարդապետութիւն նուիրեաց ասելով. թէ երթայք ընդ ամ հեթանոսս՝ և աշակերտեցէք. մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Զուաւել առ բազմաց ամենակալութի՝ կամի երևեցուցանել զփառաւոր գալուստն իւր. որպէս թէ վասն երկայնմտութե համբերողացն՝ և յուսալից ըսպասելոցն գայցէ երևիլ։ Զյսպիսի ինչ է իմանալ և առաջին գալուստն քի, և զէջս ամ ծեղէն հոգւոյն՝ ի տասներորդ աւուրն՝ ի պենդակոստէից տօնին։

Զանզի ոչ եթէ օթեվանք պիտոյ էին ծախել միածնի որդւոյն ամ յերս բարձրութենն երկնից, և

կամ սուրբ Հոգւոյն ի Զեղոյ 'ի Ժողովս առաքելոցն. որով երկինք և երկիր լի է. այլ այնպէս կամեցաւ մարդասէրն Ամ, որպէս զի տան աւուրց ակնկալութիւն առաքելոցն 'ի վերնատունն, կոչեսցէ զզ պարգևաբեր Հոգին՝ զմխիթարիչն ամենեցուն։

Այս Ամ ուրեք պատճառս ինչ 'ի մարդիկ հարկանէ զիւրոյ բարեգործութիւնն. զի վասն փոքր պատճառանաց ասասի 'ի վեր ընծայելոց, անչափ բարեաց պարտական գտանիցի հատուցանօղն։ Այս զինչ իսկ արդարև անչափ և անհասական քան զայն կայցէ. յորժամ երթեալ՝ յերկնից փառաւք հօր գայցէ. և առաջի Ամ հրեշտակագունդ զօրուն զձեռանէ առեալ զիւրոցն սիրելեաց՝ առ ինքն հանեալ տանիցի. յիւրում իսկ Ամ ծնեղէն բնութիւնն, զանզուգական զկեանն միանական վայելեցուցանէ։

Զանազի և ապէնիաղն Ամ՝ վայրակեաց բնակութիւնն, և կայանաւոր սահմանացն բնակութիւնն Ամ ամուսն սքանչելի՝ վասն իւրոցն սիրելեաց զարքայութիւն յարդարէ. յորում միակեաց վայելչուն՝ Ամ արժանաւոր բանաւորաց, Հոգեղինաց և մարմնաւորաց, առ ինքն պատրաստեալ զետեղեսցէ։

Ո՞ան որոյ և ամենափրկիչն տայր աւետիս աշակերտացն և քաջալերէր. թէ ուր եմն եմ, և դուք անդ իցէք. և յամ ժամ զնմ փառն տեսանիցէք։ Զայց միւս ևս բարձրագոյն. յայնմ աւուր ծանիջիք ասէ՝ թէ ես 'ի Հայր, և դուք 'ի յիս, և ես 'ի ձեզ։ Այն իսկ առնուլ պատեհագոյն է զասացեալն. զոր ակն ոչ տեսս, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ պատրաստեաց Ամ սիրելեաց իւրոց. ասել և ընդ պօղոսի, թէ ընտրեցք քի, 'ի վերայ անպատում պարգևաց նորա։

Կատարեցաւ վարդապետութիւն սրբոյն գրիգորի մեր լուսաւորչին, 'ի փառս քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն։

հիրդեսրուն սրբոյն Գրիգորի ի շինել զվանայարանս սրբոց հրեշտակաց։

Լուրդ՝ եկայք ելցարք զօգուտն վասն հասարակացն շինութիւն փութասցուք. զի և ի ձենջ պատուհասդ վերասցին. և լեցի ի խռովութիւնդ՝ վաղ վաղակի խաղաղութիւն, և ի գերեալ մոլորութենցդ՝ դարձ փրկութիւն։ Լուլ ես զամ ածութիւն պատգամն կարդեցի՝ և եդի ի լսելիս ձեր զամառս հասարակ. ոչ թագուցեալ զօգուտն իսկզբանցն մինչև վասն վախճանին. զամ պատմեցայք ձեզ։

Լուրդ՝ եկայք ամիսփեսցուք զգանձս ածային զնչխարս սոցա. զի յայսմ՝ետեղ պարգևեսցի ձեզ բժշկութիւն ամենեցուն։ Ասասցուք զսոսա ի հանդիսատ. և շինեսցուք վիայարանս ի վերայ սոցա՝ տաճար աղօթից միաբանութեան. հանապազորդ խնդրել յայր նսա զհաշտութիւն և զխաղաղութիւն աշխարհի, և զոլորմութիւն հաւատովք և սիրով, ընդ նմին զկենսս և զարբայութիւն այս։

Օ՛ի և դուք ուղատեսցիք ի ծառայութիւն անձնական գործոցն խաւարի. և զփառս լուսեղէնս ածային ըմբռնեսցիք, աղօթիւք և բարեխօսութեամբ սոցա առ ածն. զի և սոքա հանգուցեն զանձինս ձեր ի տանջանաց պատուհասիցդ եկելոց ի վերայ ձեր. և սոքօք հաշտեսցիք ընդ այս։

Օ՛ի ածութիւն որ բնակեալն է ի սոսա, գթասցի ի ձեզ՝ ձերովդ ապաշխարութիւն, խոստովանութեամբ, խոնարհութիւն, հնազանդութիւն հաւատոց. կրօնաւորել ձեզ պահօք, և տնկել ի սիրտս և առնուլ ի միտ. սիրել զկամացն զխորհուրդս, և արժանի լինել լուսացման մկրտութիւն սրբութիւն. և սրբոցդ մասին ժառանգութեան լուսոյ վիճակին հասանել, և պարծանաց խաչին՝ որ կորուսելոցն է յիմարութիւն, և ձեզ որ գտայքդ՝ իմաստութիւն և փրկութիւն և զօրութիւն այս է։

Որ յորդեգրութիւն ածութեան արժանի արասցէ զձեզ, ընդել զմեզս ձեր, և թողուլ զպարտիս ձեր, և ընդունել զմանն պատկի սրբոցս որ առ ձեզս են։ Եւ զի և դուք լիջիք փառաւորիչք ածութեան, դասուց փառաւորչացն հաղորդեալք 'ի կցորդութիւն օրհնութեան հոգւոյն սրբոյ. և արժանի լիջիք դուք զխորհուրդն ածային առնուլ։

Եւ լուացեալ իցէք դուք յաղտոյն 'ի սատանայէ. և նա ձերոց ոտից գարշապարաց կոխան լինի։ Եւ դուք մտանիցէք ուրախութիւն 'ի հարսանիսն ածային, ուտել զմիս Ճշմարիտ գառնին որդւոյն աստ, և ըմպել զարիւն նորա։ Եւ կցորդ իցիք յարչարանաց նորա, և փառացն հաղորդելոց իցէք. և լինիցիք մի ոգի 'ի նա. կցորդ իցիք մարմնով և արեամբ նորա։

Եւ վկայքս լինիցին ձեզ ողորմութիւն նոր բերդամուր, և աշտարակ հզօր, և վերակացուք բարեխօսութեան. հեղմամբ արեան նահատակութեան իւրեանց քաջացեալք, զձեզ առ ածմատուցանեն. որ շահեալ զձեզ իւրեանց՝ զիւրեանց նահատակութեամբ մարտին ցուցին ձեզ զյաղթութիւն։

Եւ այժմ օրս ընդ երեկս է, անցեալ երթայք 'ի հանգիստ քնոյ՝ խաղաղութեամբ ննջեցէք. և 'ի վաղուէն հետէ՝ փոյթ լինիցի ձեզ շինել զյարկս հանգստի ոգւոյ։ Եւ զի և սոքա ձեզ՝ փոխարէն ընդհողեղէն յարկացս զոր ասատ շինեցէք, պատրաստեսցեն ձեզ յարկս լուսեղէնս յաջբայութեանն երկնից. որում ունիմք հասանել բարեխօսութեամբ սրբոցս, 'ի նոյն ժողով միաբանութեան յաջբայութիւնքն։ Եւ զի նորա են փառք և զօրութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

«Հաւատքն ոչ էր էրէ գործ զաւուրս վերնոսն և հինգ, սա 'ի հաստատել զիրողս-դրն 'ի հաստատս։

Եւ զայս ասացեալ՝ արձակեաց զամբոխն. բայց Թագաւորն և մեծամեծքն ոչ երբեք մեկնէին 'ի նմանէ, զի հարուածեալք էին, և ահեալք. այլ զցայգ և զցերեկ օթեւանք նոցա առ նմա լինէին 'ի մէջ այգւոյն՝ առ դուրս հնձանին. զգեցեալ քուրձ, և նստեալ 'ի վերայ մոխրոյ, և պահեալ լինէին պահս՝ աւուրս վաթսուն։

Եւ այնպէս երանելին Գրիգորիոս՝ անհանգիստ և անդադար զցայգ և զցերեկ ոչ դադարէր աւուրս վաթսուն և հինգ խօսել՝ խրատել՝ ուսուցանել՝ և հաստատել. իբրև զլմաստուն բժիշկ՝ գբանել ջնայր զդէղն օգտակարութեան։ Զի նոքա մատուցին զանձինս առ նա իբրև զհիւանդացեալս. և նա իբրև զՀմարտարբ բժիշկ՝ բժշկեացէ զանձինս նոցա աւետարանաւն քրիստոսի։

Համօրէն տեղեկացուցեալ խելամտեցուցանէր. ոչ եթէ ծայրաքաղ ինչ արարեալ օդաբանս կամ սրամարս խօսեցաւ, այլ յատակապատում արարեալ ուսուցանէր ամենեցուն. 'ի սկզբանց անտի սկիզբն արարեալ, յաշխարհապատում արարչութեանց անտի մինչև 'ի բուն՝ սրբոց պատգամախօսաց ՝՝, ամենեցուն իւրաքանչիւր գործոց առաքինութեան, և հոգէպատում պատգամացն ընդելս և ծանօթս կացուցանէր։

Եւ զարանց ՝՝ծամսիրաց՝ ըստ քՀաւանդ հրամանգելոց ՝՝ճշմարտութեանն, զայր իւրաքանչիւր ՝՝ծամուխ կենաց՝ և վաստակասէր հոգևորական վարձուք իւրովք հանդերձ վկայութիւնք, զմի մի ոք 'ի նոցանէ առ անձին յականէ յանուանէ ծանուցանէր. և նոցին յայ ասացելովք կարգեալս և յարմարեալս ընծայեցուցանէր զնմա ասացեալսն. զպատգամն հոգւոյն սրբոյ, և 'ի նմին զմեկնութիւն նորին

հանդերձել գրեաց նորին զօրութեամբն։

Իսկ նոքա ժողովեալք կուտեալք հասեալք անթիւ բազմութիւք մարդկանն, զմիմեանսիք գոհեալք՝ խնձոյս կացուցանէին ունկնդրութիւն վարդապետութեանն մատուցանել զլսելիս. բազմութիւքն անհունք անչափութիւք անհնարին շատութիւք ժողովեալ՝ ի հուչակէն՝ տեսանել և լսել զանպայման աքանչելիս ածութեանն։

Ժողովեալք յիւրաքանչիւր գաւառացն աքք և կանայք և մանկտի, ահաբեկեալ յահէ անտի զօրութեաց արարչութեանն լինէին հնազանդեալք, և ընդունէին զհաւատս. ձեպէին առ ցուցեալ սքանչելեացն. մտերմութիւք հասեալք լինէին՝ օգտակար խրատուն կենսաբեր քարոզութեան բանին կենաց աւետեաց աւետարանին։ Ամենայն յանձն առեալ թագաւորն և իշխանքն՝ փութային առնել զինչ և հրամայեսցէ։

Ա. զանձն Ներսեհ թագաւորին գրգռեալ և նախարարացն առաւորին դրդեալ՝ բծշնչել զհարուածելոն ի դէսբարեր պատուհանն։

Ա. ՐԴ՝ ի ինուլ վաթսուն և վեց աւուրն՝ ընդայդոյն առաւօտանալն, մատուցեալ իշխանքն նախարարքն և թագաւորաւն՝ հանդերձ ամ խառնիճաղանձ ամբոխին իւրեանց. նաև կանանցն ժողովեալ մատաղ մանկտով անմեղօք, երամ երամ և դաս դաս լեալք՝ անկանէին առաջի սրբոյն գրիգորի. անկանէին աղաչէին խնդրէին գտանել ըզբժշկութիւն հարուածոց պատուհասին հասելոյ. քանզի հարեալք էին բարկութիւք գաւազանաւն յարդար դատաւորէն։

Ա՝անաւանդ թագաւորն, զի էր փոխեալ նա ի կերպարանս աղքատայոյզն խոզաց. քանզի թաւացեալ

էր առ հասարակ ամմարմինն. և ընդ անդամս ոսկէ
բացն բուսեալ էր խոզանաստև՝ իբրև զմեծամեծ
վայրենեաց վարազաց. և ըղընդունք ծայրից մա-
տանցն ոտիցն և ձեռացն՝ կնճղակացեալք էին իբրև
զդեանաբիր և զարմատակերն կնճթաց։

Լաև պատկեր երեսաց դիմացն շրջեալ էր 'ի
պատկեր և 'ի կնճիթ գոճանաց յեղեգան բնակելոյ՝
իբրև իւրոյ 'ի գազանամիտ բարուցն բնութիւն և 'ի
վարուց, 'ի թագաւորութիւնն շքոյ սաստկութիւն ան-
կեալ. շրջեալ 'ի տեսիլ նմանութիւն անասուն խոտա-
կեր գազանաց. և շրջէր 'ի մէջ գազանացն 'ի ներ-
քոյ եղեգան՝ կորուսեալ 'ի միջոյ մարդկանէ։

Իբրև եկն եհաս ելեալ 'ի բանտէ վիրապին խոս
տովանօղն քրիստոս, հասանէր 'ի տեղի վկայե
ցելոցն. իբրև 'ի տեսչութիւն այ՝ ամենեքեան 'ի մի
վայր ժողովեալ էին. այսահարեալք ամենեքեան, 'ի
տեղին հասեալք յայսնեցան։ Իւ թագաւորն խո-
զացեալ մեծամամբ ձչել կանչէալ, խանչեալ, բոհ-
բոխելով փրփրացեալ. դիզեալ զկնճթակերսին ե-
ռեսաք, լեալ 'ի նմանութիւն չոքբոտանոյ, ընթացեալ
յեղեգնաբնակ երամին գազանացն միջոյ՝ հասա-
նէր յայն տեղին։

Ոսկ երանելին գրիգորիոս յաղօթս կացեալ,
խնդրեաց յամենապարգևն այ առ մի նուազն՝ ոչ
զկերպարանացն հարուածելոց զաւուղութիւն, այլ
զմտացն զունկնդրութիւն վարդապետութենն զզգաս-
տութիւն, առնուլ 'ի միտ զաստուծոյն այ պատգա-
մացն։ Իւ լեալ բժշկութիւն նոցա՝ այսչափ միայն՝
քաջ լսել, և 'ի միտ առնուլ, և համարձակ խօսել։

Մինչև 'ի վաթսուն և վեց օր զաւուրս վարդա-
պետութենն՝ 'ի նոյն կերպարանս խոզի կայր. այլ
ձորձապատեալ կայր պատատեալ, 'ի բազմամբոխ
աշխարհաժողով հրապարակաց կուտելոց մարդկան
'ի միջի։

Իբրև սկսան թաւալել՝ անկանել առաջի նորա
և խնդրել բժշկուի. քանզի թագաւորին զատեալ

կերպարանն 'ի մարդկային բնութիւն ձաղաձանակ տեսլեամբն, բայց միայն 'ի բանիմաստ խօսարանացն և 'ի լեռլոյն։

Իսկ նա յետ աղաչանացն՝ տուեալ նոցա պատասխանի ասէ. թէ և ես ընդ ձեզ իբրու զմի 'ի ձէնջ՝ խնդրեցից զձեր օգուտն. և դուք սրտի մտօք խնդրեցէք զձեր բժշկութիւն. մարդասէր ՅԱԾՈՒԹԻՆ ողորմելոց է ձեզ։ Այլ միայն փութացուք չինել զվկայարանն. զի հանգուսցուք զվկայսս Այ. զի և սոքա զձեզ հանգուցեն 'ի տանջանաց պատուհասիցդ. և ապրեսջիք յահագին և դառն 'ի հանդերձեալ և 'ի պատրաստեալ խոստացեալ դատաստանացն. և արժանի լիջիք արքայութեանն քրիստոսի։ Իսկ նոցա փութով խնդրեալ, եթէ զինչ հրամայեսցէ՝ որպէս կամի և զինչ կամի առնել։ Իսկ նորա տեսիլ պատմեաց նոցա։

Տեսիլ սրբոյն Գրիգորի։

Ա. ԸՆԴ՝ եկայք պատմեցից ձեզ Եղբարք զյայտնի սէր արարչին առ ձեզ, որ ինձ երևեցաւ ահաւորութիւն տեսլեանն. ՅԱԾՈՒԹԻՆ խոնարհեալ առաբվկայքս իւր, և սոցա զանհամեմատն բարձրութիւն յանպատումն վերացեալ անզուգականութիւն արքայութեանն երկնից։

Ա. ԸՆԴ՝ զլինելոցս ընդ ձեզ կենսաբեր տուչքն ՅՈՒՆ հնորհելոյ. և երևեալ ինձ տեսիլ անպատում սքանչելի ՅԱԾակերպ, զորոյ փոքր 'ի շատէ առի զհանգամանն։

Ա. ԸՆԴ՝ 'ի հասարակել գիշերիս այսմիկ, զի խոնջեալ դուք 'ի քուն լեալ էիք 'ի ծանրութիւն աշխատութեան՝ 'ի տրնութիւն այսր. և ես դեռ 'ի զարթման էի հարեալ՝ մտախորհ կայի, վՅ յանկարծահաս

դիպելոյ անքննին սքանչելեաց ողորմութիւն ճաճուէ այց առնել ձեզ, արկանել զձեզ 'ի բովս խրատու հանձարագիտութիւն ճաճային վարդապետութենն։ Զ մտաւ ածէի և զսէր վկայիցս առ սիրեցեալ արարչութիւն. և զփոխարէն դարձուածն անպատում պատրաստեալ նոցա, թէ որպիսիք են։

Յանկարծակի եղև ձայն սաստկութեամբ, բոմբիւն որոտման, ահաւոր թնդիւն, իբրև զձայն եռանդեան կուտակելոյ՝ խռովութեան ալեաց ծովու։ Լացաւ խորանաշէն յարկն հաստատութիւն երկնից. և ինքեալ այր մի 'ի նմանութիւն լուսոյ, կոչեաց զանուն իմ և ասէ՝ գրիգորիոս. և իմ նայեցեալ տեսի զկերպարանս նոր. և զարհուրեալ դողացեալ յերկիր կործանեցայ։ Եւ ասէ ցիս. նայեաց դու 'ի վեր, և տես զբանչելիսս զոր ցուցանեմ քեզ։

Եւ իմ նայեցեալ տեսի՝ բացեալ զհաստատուն երկնից, և զՇուրան որ 'ի վերայ նորա՝ ըստ հաստատութեան պատառելոյ. զի ըստ նմանութեան ձորոց իբրև զկատարս լերանց՝ յայսկոյս և յայնկոյս բաժանեալ դիզեալ կային անբաւութիւնքն, անկշռելիսն ասեն տեսանելեաց։ Եւ լոյսն հոսեալ վերուստ 'ի վայր մինչև յերկիր հասանէր. և ընդ լուսոյն՝ զօրք անչափ լուսեղինաց երկնեալանք՝ 'ի տեսիլ մարդկան. և թեքն իբրև զհուր։

Եւ ըստ նմանութեան մանրամասն փոշւոյն հիւղէի, որ 'ի ժամանակս արեգակնակեզ գարնանային՝ ընդ պատուհանացն կամ ընդ լուսանցեալ երդոցն 'ի շողսն խաղայցէ մանրամասն փոշին։ Այնպէս և զօրքն ընդ լուսոյն՝ լցին զառատորեաւն համ. և յառաջն ցուկեալ յառաջ եկեալ լուսոյն՝ և զօրքն ընդ նմին։

Եւ մի տեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ՝ որ զառաջնոն ունէր և զեջնոն 'ի վերուստ մինչ 'ի խոնարհ առաջապահ յառաջեալ. և 'ի ձեռին իւրում ունն մի մեծ ոսկի. և այն համարձակեալ նոր խաղացեալ գայր։ Եւ ինքն խոյացեալ սլացեալ գայր՝ ըստ

արագաթև նմանութեամբ արծուոյ. և էին էջ եհաս մինչև մօտ 'ի յատակս երկրիս 'ի շինամէջ քաղաքիս. և բախեաց զթանձրութիւն լայնատարած գետնոյս. և մեծ և անչափ թնդիւնք հնչէին 'ի սանդարամետս անդնդոց. և ամ երկիր յերևելիս ական տեսանելեաց քաւականի հարթ հաւասար՝ դաշտաձև յատակեցաւ։

ԼՀ. տեսանեմ 'ի մէջ քաղաքիս, մուտ յապարանս արքունի՝ խարըսխաձև ճախարակաձև խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրև զմեծ մի բլուր, և բարձր մինչև յոյժ. 'ի վերայ նորա սիւն մի հրեղէն, և 'ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ, և խաչ լուսոյ 'ի վերայ նորա։

ԼՀ. նայեցայ՝ և տեսանեմ այլ խարիսխս երիս. մի 'ի տեղւոջ ուր վկայեաց սբն գայիանէ երկու ընկերօքն. և մի 'ի տեղւոջն ուր վկայեաց սուրբն հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն. և մի 'ի տեղւոջ հնձանին։ ԼՀ. այն խարիսխք կարմիրք էին 'ի գոյն արեան. և սիւնք ամպեղէնք, և խոյակք հրեղէնք. և 'ի վերայ սեանցն երից՝ խաչք լուսեղէնք ըստ նմանութեամբ ոնանման խաչին. և այսց սեանց խաչն հաւասարք էին այնր լուսեղէն սեանցն թագաւորաղ. զի նա բարձր էր քան զնոսա։ ԼՀ. 'ի չորեցուանց սեանց 'ի վերայ խաչիցն կամարք զարմանատեսք 'ի միմեանս կապեցան. և 'ի վերայ նորին տեսիլ գմբաձև, խորանարկ, ամպեղէն, շինուածաձև-ակերտ զարմանալի։

ԼՀ. 'ի ներքոյ խորանին 'ի վերայ կամարացն տեսի զսուրբ վկայս զայսոսիկ զերեսուն և զեօթն՝ իբրև 'ի լուսաւոր կերպարանս սպիտակութեամբ հանդերձիւք, զոր ոչ բաւեմ պատմել։

ԼՀ. 'ի կատար շինուածոյն տեսանէի աթոռս զարմանալի ձաձակերտ սքանչելի հրեղէն, և զխաչն տերունական 'ի վերայ նորա. զոր ով փարեալ լայն

համատարած՝ և խառնեցաւ ընդ Հառագայթս խաչին, և մածեալ՝ ի նոյն միացաւ. և սիւն դորձեաց լոյսն շողացեալ, և ծագեաց՝ ի մէջ ներքին սեանցն խարսխաց։

Եւ բղխեաց աղբիւր յորդաբուխ. և հոսեցաւ ծաւալեցաւ ընդ դաշտն ամ. և ելից առ հասարակ, որչափ ակն բաւեաց։ Եւ եղև ծով լի կապուտագոյն, և երկնագոյն երևեցան դաշտքն առ հասարակ։ Եւ տեսի զբազմութիւն հրեղէն սեղանոցն այնչափ բազմութիւն. և սիւն մի առ սեղանն, և խաչ մի՝ ի վերայ նորա. և իբրև զաստեղս բազմութիւն այնպիսի երևեալ՝ անչափ փայլեալք։

Եւ տեսի հօտս այծեաց՝ ի գոյն սևութիւն՝ անթիւս, որք անցեալ ընդ ջուրսն, յօդիս դարձան. և զգոյն իւրեանց՝ ի կերպարանս սպիտակութիւն շրջեցին. և լուսակիզ ասին փայլէր առ հասարակ՝ մինչև Հառագայթ հատանէին՝ ի նոցանէ։

Եւ մինչ դեռ նայի՛ էս, յանկարծակի ծնան հօտքն և բազմացան և լցին զվայրն. և ծնեալ գառինքն ամ լուսակիզն էին։ Իսկ յանկարծ այլ ծը նուադք յաճախեցին բազմացան. և կէսքն անգեալ եանէին յայնկոյս ջրոյն. և գառինքն դայլք եղեն թուխք. և յարձակեցան ելին՝ ի մէջ հօտիցն, և սկսան կոտորել. և եղեն արեան Հապաղիք։

Եւ մինչ դեռ նայէի, տեսանէի զի բուսան թևք հօտիցն, և եղեն թևաւորք. և վերացան խառնեցան՝ ի զօրս լուսեղէնս։ Եւ յարեաւ հեղեղ հրեղէն, և արկեալ տարաւ զգայլսն։

Եւ էս նայեցեալ զարմացեալ կայի։ Եւ այրն որ յառաջնումն կարդայր ինձ, ցուցանէր և ասէր. թէ այր դու զի՞ կաս զարմացեալ, և ո՛չ՝ ի միտ առնուս դու զմեծամեծս այ։ Եւ ասեմ էս. թէ ո՞րպէ՞ որ։

Եւ ասէ ցիս. տեսիլ ցուցաւ քեզ այս՝ զի՝ ի միտ առցես. զի բացեալ են աւադիկ երկինք, գլուխ

զի բացեալ են դրունք մարդասիրութեան քի առ իւր արարածս։ Լու ձայն բարբառոյ որոտման, գիտեա՛ զի իշանէ անձրև ողորմութեան այ։

Բացեալ են դրունք երկնից՝ բացան և ջուրքն որ 'ի վերայ նորա, զի մի՛ արգել լեցի այսմ աշխարհի մարդկան ելանել 'ի վեր. զի սուրբ վկայքս այս որ վկայեցին աստ՝ հիւսիսական կողմանցս ճանապարհ գործեցին. զի ինքեանք ելին՝ և այլոց շաւեղս ուղղեցին։

Բասիկ լոյս զի ելից զվայրս, այս քարողութիւն աւետարանին է, որ և զկողմն հիւսիսոյ ընու. և զօրք լուսեղէնք ցանկացեալք փափաքէին իջանել 'ի հոս անոյշ ծաղկաձև վարդագոյն արեան վկայիցս. այսուհետև խառնելոցն են ընդ մարդկան 'ի բնակութիւն բազմութիւք հրեշտակաց։

Իսկ այրս ահաւոր և շքեղաւոր՝ որ զառաջն ունի զլուսոյն, և զուռն ոսկի 'ի ձեռին իւրում. և բախեաց զսանդարամետս. այս տեսչութիւնն այ է, որ հայի յերկիր, և տայ դողալ. մերձի 'ի լերինս, և ծխին։ Բ. յն ահ ահաւորութեան հարթեաց կործանեաց ընկէց զմոլորուի յերկիր։ Բ. յն զի հնչեաց երկիր՝ զձայն հնազանդութեան ծառայուն բարբառեցաւ։

Որոյ սեան խարիսխն ոսկի էր՝ և նորին սիւնն հրեղէն, և թակաղաղն ամպեայ, և խաչ լուսեղէն 'ի վերայ նորա։ Ոսկի խարիսխն՝ վէմն հաստատուն անշարժութիւն է. և սիւնն հրեղէն՝ կաթուղիկէ եկեղեցի է, որ ժողովք զամ ժողովուրդս 'ի միաբանութիւն հաւատոյ 'ի ներքոյ թևոց իւրոց։ Լու թակաղաղն ամպեայ, որ ընդունելոց է զարդարսն՝ յորժամ թռիցեն ընդ առաջ վերանալ տեառն դալստեանն։

Իսկ խաչն մեծ լուսաւոր 'ի նմա, ինքն մեծ քահանայապետութիւն է 'ի մէջ ժողովրդոց. օրինակ քի պատկերին մարմնացելոյ քահանայապետութեան օծութեան ճաճորդացն։ Լու տեղին այն լեցի տաճարք

ՅՍ՝ և տուն աղօթից խնդրուածոց ամ հաւատա-
ցելոց, և աթոռ քահանայապետութեան։

Եւ խարիսխքն երեք որ կարմիր էին 'ի գոյն արե-
եան՝ վա՛ յ չարչարանացն եկեղեց նեղութեց մնհուն
համբերութեան • զի զմահն իւրեանց արարին խա-
րիսխս Յիմարտութեան՝ հաւատոցն հաստատութիւն
արեամբն իւրեանց։ Եւ սիւնքն ամպեղէնք • վասն
զի ամպն ունի զԲԵԹԼԵՀԵՄԻ երագութեան յարուցեալ՝
յերկինս վերանալոյ։ Եւ Թակաղաղն հրեղէն • զի
բնակութեան նՅ լինելոց է 'ի հուր ՅԱԾուն լուսոյն։

Եւ խաչն ունի զչարչարանս վկայիցն • որք նմա-
նեցին ՅՈՆ չարչարանացն, և մեռան փոխանակ նո՛ր,
զի ՅԱՎ կեցին • և ընդ քի՛ խաչեցան՝ կենդանի է քա՛
յոսկերս նոցա, ցուցանել ամենեցուն զկենդանուն
նոցա • յայտնի առնել զհոտ անուշութեան գիտութեան
իւրոյ 'ի նոցանէ • և հոչակել զառաքինութիւն նՅ
ընդ տիեզերս։ Ի սպանին նոքա զմարմինս երկ-
բաւորս, և կախեցան զտէրունական խաչէն, և ե-
զեն տեառն չարչարակիցք • նոյնպէս փառացն և
զօրութեան լինելոց են հաղորդք։

Ա՛յլ առաջին խաչն որ ցուցաւ քեզ, ունի ըզ
պարծանս քահանայապետութեան պատուին՝ պան-
ծացեալ 'ի խաչն քի։ Իսկ երեքն և ս, ունին զտեղի
հանգստի վկայարանաց սրբոցն • զի 'ի տեղւոջ պը-
տակմանն իւրեանց հեղոյ արեանն իւրեանց՝ շինեա
ցին հանգիստք վկայարանք ոսկերաց իւրեանց։

Իսկ զի բարձր է սիւնն առաջին • զի մեծ և
բարձր է պատիւ կաթուղիկէ եկեղեցւոյ քան զամ
բարձրութիւս սրբոց։ Իսկ կամարքն որ 'ի սեանց
անտի 'ի միմեանս կապեցան • այսինքն է հաւատա-
րութի միաբանութեան կաթուղիկէ եկեղեցւոյ։ Իսկ
խորանն 'ի վերայ, ունի զօրինակ վերնոյ քաղաքին՝
Ժողովարան միաբանութեան արքայութեան երկնից։

Եւ զի երևին քեզ վկայքն • գիտեա՛ զի մնա
ժամանակեան է ասէ, և կենդանութի՛ նՅ յաւիտե-

նախան՝ փառաւորեալ ՝ի փառս ՅԾորդեանն . վասն այնորիկ և զերինակ խաչի նորա՝ տպաւորեալ յանձինս նոցա ։

Եւ ՝ի վերայ կատարոյ շինուածոյն զոր տեսանես , նոյն ինքն աթոռ ամենաղօր բնութեան ՅԾուութեանն՝ բարձրութեան ինքնութեան . զի նա ինքն է գլուխ եկեղեցւոյ սրբոյ , և կատարիչ համբարութեան . և ՝ի նմա համշինուած պատշգամի , և ՅԾուն զաձուն ՅՅ . յորում համմարմին յօդիւք և խաղալեօք հաստատեալ և կազմեալ է ։

Եւ լոյսն զի փարի ասէ զխաչէն . այսինքն հոգին ՅԾութեան՝ որ զորդին փառաւոր առնէ ։ Եւ զի խառնեցաւ ընդ Ճառագայթս նորա . այսինքն է՝ զի յորդոյն առնու և պատմէ սիրելեաց իւրոց ։ Եւ զի միայաւ ՝ի նոյն . զի մի է բնութեան ՅԾուութեան ։

Եւ զի ծագեաց լոյս ՝ի մէջ սեանցն չորեցունց . և բղխեցոյց զաղբիւրն յորդաբուխ . զի ՝ի կաթուղիկէ եկեղեցւոյ՝ շնորհք հոգւոյն ՝ի մէջ վկայանոցն՝ և ՝ի մէջ քահանայապետութեանն բղխեսցէ աղբիւրն մկրտութեան . լուսանալ զաղտս ոգւոց մարմնովքն հանդերձ ։ Եւ այն զի յորդեաց և եղից բազում վայրս . զի լինելոց է փրկութեան բազում ժողովրդոց՝ մկրտութեանն ։ Եւ զի երկնագոյն է երևեցան դաշտքն համ . այսինքն է՝ զի երկիրս երկին լինելոց է՝ խառնուրդք հրեշտակաց և մարդկան ։

Եւ հրեղէն սեղանացն բազմութիւնք որ քեզզ երևին . Ճշմարտիւ խակ լինելոց են սեղանք ՅՅ , որ զբաւութեան բաշխեն ամենեցուն ։ Եւ հրեղէն յայն սակս երևեցաւ , զի պաշտօն հոգւոյն եղիցի փառօք ։ Եւ սիւնն մի մի առ սեղանն . պաշտօն աղօթից քահանայութեան ։ Եւ խաչքն որ ՝ի վրա նորա . այսինքն անուանն քի փառաւոր եղիցի ընդ համ տեղս ։ Եւ զի բազումէին իբրև զաստեղս . զի պաշտամունք սրբութեանն բազմասցին իբրև զաստեղս ։

Եւ հօտը բազմութեան այծեացն սեւութեան, որք յիմանեն 'ի ջուրս՝ յօդիս դարձեալք սպիտակութեամբ. աւադիկ այնն ճաճութեան ընորհացն 'ի ձեռն քահանայութեան հասանելոց է. յորոյ ձեռն բղխեցէ աղբիւր մկրտութեան՝ 'ի թողութիւն բաւութեան բազում մեղաւորաց։ Եւ որ լուսակիսն ասին նոցա սպիտակափայլն պայծառացեալ էր. այսինքն մկրտեալքն զլոյսն զգենլոց են։ Եւ ծնան հօտքն և բազմացան և լցին զվայրսն. այսինքն բազում ժամանակս աճէցուցանէ քարոզութիւնն. և ծնանի նոր ծնունդ նորոգութեամբ, և բազմացուցանէ մկրտուելն։

Եւ զի կէսքն եղեալ անգեալ էին կէս հօտքն ընդ ջուրսն. 'ի նոյն կողմն ուստի անցեալ էին. այսինքն է՝ յետին ժամանակս անօրինելոց են՝ անկեալք 'ի ճշմարտութենէն. և յետս ընկենլոց են ըստ դրոշմ ուխտի սրբութեան ճաճութենն. և բազումք թողուն զուխտն սրբութեան։

Եւ 'ի գառանցն լինելոց են գայլք՝ որ կոտորեն զսուրբ գառինսն. այսինքն որ գնան 'ի ճշմարտութենէ անտի. և յուխտէ քահանայիցն լինիցին գայլք. և հանեն ճապաղիս արեան 'ի գառանցն, այսինքն ուխտին և քահանայութենն, և խռովութիւն ժողովրդոց։ Եւ որ համբերեն միամտութեամբ 'ի գառանցն 'ի ժողովրդոց կամ 'ի քահանայից, թեւս առնուցուն, և յարքայութիւն քան վերանան։ Եւ որ զմիտս գայլոցն կամ զգործս յափշտակութեան նոցա ունիցին, 'ի հուրն անշէջ մատնեսցին։

Եւ դու քաջ լեր ասէ, պինտ կաց, զգոյշ լեր. զի գործ 'ի ձեռն եկեալ հասեալ է քեզ. զի քեզ բարութեան դիւրեաւ է լինելոց. զի և դու ընդ ճշմարիտ մշակսն մտեալ՝ վարձս առցես զանապական պարգևացն քրիստոսի։

Լ. ԵՐԴ՝ զգայլ լեր աւադիկ որ քեզ աւանդեցաւ 'ի ոնկ յոեկ քոեկ. շինեսցիր զտաճար անուանն ՅՍ՝ 'ի տեղւոջն որ քեզ ցուցաւ, որ սիւնն հրեղէն ունէր ոսկի խարիսխ. և զվկայարանս սրբոցն՝ 'ի տեղիս ուր զենան ինքեանք 'ի կենդանութեանն՝ յուսոցին որ առ ՅՍ. զի բժշկեսցին հարուածեալքդ. և քարոզութիւնն աջողուած յառաջադէմ լեսցի հանապազորդութիւն օր ըստ օրէ՝ հասանելաւ մինեցուն 'ի չափ հասակի կատարմանն քի։ Լ. զայս ասացեալ՝ շարժուցին եղեալ. և ընդ առաւօտանաւն ծածկեցաւ տեսիլն։

Շ ԷՆՈՒԹԻՒՆ ՎԿԱՅԱՐԱՆԱՅ ՍՐԲՈՅ ՀՈՒԹԽՈՒՆԱՆՅ՝ ԸՍՊ ՕՐԻՆԱՅԻՆ ՈՐ ՅՈՒՅՑ ԱԲՅՈՅ ԵՐԵՔՈՐԻ 'Ի ՊԵՏՈՒՆ ԱՏԱՆԷԼԻ։

Լ. ԵՐԴ՝ ամենակալն, ամենաստեղծն, ամենահաստատիչն, ամենիմաստն, ամենատեսն, ամենակարն, ամենագիտն, ամենաբժիշկն՝ խրատեաց զձեզ. զի ՅՍ՝ զիւրոյ զձեզ մերձաւորս արասցէ. վասն այսորիկ ցուցեալ ձեզ մեօք զկենաց ճանապարհ, և զփրկութիւն հանգամանս. և զթողութիւն միանգամայն ածել հասուցանել 'ի վերայ. վասն այսորիկ և և զտեսիլ հանդերձելոցն եցոյց ինձ՝ պատմել ձեզ, և զառ ժամանակիս զիւր կամն առ ձեզ կատարելոյ։

Լ. ԵՐԴ՝ և դուք զասացեալսն հրամանացն փութացարուք. այժմ եկայք շինեսցուք զվկայարանս, փոխել զվկայքս 'ի հանգիստ. զի և սոքա փոխեսցեն զձեզ 'ի նորոգութիւն։

Լ. զայս ասացեալ հրամայեաց՝ զի զնիւթ շինուածոցն վաղվաղակի պատրաստեսցեն։ Լ. ՅՍ՝ բազմութիւն մարդկանն լուսեալ զայն, իւրաքանչիւր ընթացան պատրաստել զնիւթսն՝ 'Ի հրամայեալ տեղիսն կուտէին. ոմն վէմ, ոմն քար, ոմն աղիւս, ոմն

զմայր փայտ պատրաստէին խնդալից փուԹով՝ և մեծաւ երկիւղիւ։

Եւ ինքն սուրբն Գրիգորիոս՝ զլար Ճարտարուեստ շինողաց ՚ի ձեռն առեալ՝ զերանելեացն վկայարանս հանգստարանացն հիմունս յօրինէր. և մէն մի իւրաքանչիւր ամ բազմութեն, սատարութի ՚ի ձեռն առեալ՝ ըստ գեղեցկադիր յարմարելոյ հիմն արկին, ՚ի կատարումն շինուածոցն կանգնեցին։

Եւ ամ ոք ձեռն արկեալ ՚ի գործս. և կանանոցն անգամ սատարեալք ըստ իւրեանց տկարութեան կանացի ուժոցն։ Եւ այսպէս առ հասարակ գործէին զգործն հաւատով և մեծաւ երկիւղիւ, զի մի ոք ամենևին անմասն եղեալ ՚ի փրկութենն հնորհացն, ՚ի բժշկութենն զրկիցի։

Եւ կանգնեալ երիս վկայարանս. մի ՚ի հիւսիսոյ յարևելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանտ-կանն հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն։ Եւ զմիւսն շինեցին ՚ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեաց սուրբն գայիանէ նորուն մնուցիչ երկու ընկերօք։ Եւ միւսն մօտ ՚ի հնձանն ՚ի մէջ այգւոյն, ուր էին վանք նոցա։

Շինեցին կազմեցին զտեղիսն. և զարդարեցին ոսկի և արծաթի կանթեղօք լուցելովք, և լապտերօք վառելովք, և աշտանակօք բորբոքելովք։

Զ Էաեղուն Նշխարաց սրբոց հռիփսիմեանց յիւրաքանչիւր տանչիւր սրկէղ հանդերձեալ։

Եւ հրամայեաց մէն մի իւրաքանչիւր արկղագործ, տախտակամած, մայրափայտեայ, բևեռապինդ, հաստահեղուս, երկաթագամ՝ տապան գործել։ Եւ ամ ըստ ասացելոց պատուիրանին արարեալ, հանդերձեալ կազմեալ պատրաստեցին՝ ըստ

եդեալ հրամանին տուէլոց. բերին զարկեցին արար-
եալ առ դուրս հնձանին՝ առաջի սրբոյն գրիգորի։
Իսկ նա առեալ ինքն միայն 'ի նեցքս մնանէր.
և ոչ թողոյր զայլոսն ամենեին 'ի նեցքս մնանել.
ասէ՝ ոչ է ձեզ պարտ հուպ լինել և մերձենալ առ
սոսա, որ չեմ էք բժշկեալ՝ և չեմ էք սրբեալ
մկրտութեամբ։

Լ. Յլ ինքն միայն առանձնացեալ, զմի մի իւրա-
քանչիւր առեալ 'ի սրբոցն՝ յիւրաքանչիւր արկեր
դնէր. իւրաքանչիւր հանդերձումն և իւրեանց լոկ
կաղմութիւնն պատէր, և կնքէր քառանշան կնքովն։

Իսկ թագաւորն՝ և արքաղուհին ամ, և մեծա-
մեծքն, և նախարարքն, և աղատքն, և զօրքն ամ՝ իւ-
րաքանչիւր բերեին զիւրս անուշահոտս, և խունդս
ազնիւս, և զգոյնագոյն նարօտս պատանաց, զմե-
տաքսառէջս և զոսկեթելս կերպասուցն։

Լ. Եւ կին թագաւորին, և օրիորդք թագաւորա-
զունք, և կանայք պատուականացն, և մեծամե-
ծացն դաստերքն՝ բերեին ծիրանիս, և զոսկեհուռ,
և զդիպակ, և զերկնագոյն, սպիտակ իբրև զձիւն
հանդերձանս սրբոցն։ Նոյնպէս և զոսկին, և
զարծաթն, և զկտաւն փութով կուտեին առ դուրս
հնձանին։

Լ. Զդ՝ եղեալ տեսանէր սուրբն գրիգորիոս, զի
շեղջք շեղջք կուտեալ կային առ դուրս հնձանին։
Իսկ նա ոչ առնոյր յանձն զնոցա ինչսն առ նոսա
մատուցանել. ասէ՝ թէ ոչ վաղ իսկ ասացի ձեզ՝
եթէ ոչ է պատշաճ զձեր ինչ՝ որ չեմ էք սրբեալ
մկրտութիւն՝ առ նա մատուցանել. այլ յօժարութիւն
ձեր բարւոք է վասն ձերոյ փրկութեան։

Լ. Յլ այս ամ յաքաչական գանձուն պահեալ
կայցէ՝ մինչև հովիւ և վարդապետ 'ի տուչութիւն
սրբարարուն ոյ երևեսցին ձեզ. առաջնորդք, քա-
հանայապետք, տեսուչք, եպիսկոպոսք՝ երիցամբք.

եկեղեցական կարգ լուսաւորուէ սիրոյն ՅՍ. և այդ ՅՍՄ երթիցէ 'ի սպաս պաշտաման փառաւորընկալ սեղանոյն ՅՍ՝ 'ի ձեռն քահանայապետին կացուցեալ։ Ա.յլ այժմ եկայք զսոսա յիւրաքանչիւր հանգիստ մատուսցուք։

Ա.ԺՇԿՈՒԹԻՆ ՅԵՌԱՑ Ա ՈՏԻՑ ԲԱՓԱՒՈՐԻՆ ՊՐԴԱՊԱՅ՝ ԱՋԻԹԻՒ ԱՐՔՈՅՆ ԵՐԵԷՈՐԵ։

Լսեալ Թագաւորն տրդատ յայնժամ դեռ ևս էր 'ի կերպարանս խոզի, բայց միայն 'ի մարդապէսն խօսելոյ. և կՀղակք ձեռացն և ոտիցն իբրև զխոզ. և դէմք երեսացն կնՀթացեալ. և ժանիք մեծամեծք իբրև զմեծամեծ վարազաց. և խոզանասեն թաւացեալ զՅՍՄարմնոյն։ Ա.յլ կայր պատեալ զերեսն գլխոյն՝ հանդերձ արկեալ քուրձ զնուրբաւ. և կայր երևայթ տեսլեամբ 'ի մէջ ժողովրդոց։

Ա.յրդ՝ մատուցեալ աղաչէր զՅՍն գրիգորիոս, ասէ՝ գունեա՛ ձեռացն և ոտիցն հնար լեցի բժշկութեան. զի 'ի գործ շինուածոց սրբոցն արժանի արասցէ՝ գէթ սակաւ ինչ մանաւորել զնա։

Լսեալ երանելին գրիգորիոս՝ երթեալ ծունր կոչկ նեալ ամենատեսն բարեբարին ՅՍ. երթեալ զՅՍ ՅՍ ընկալ արկեղջն երանելի մարմնոյն՝ քահանան վերկայիցն՝ մատուցանել պաղատանս. համբարձեալ զբազուկսն հանապազատարած յերկինս, ՅՍՄ ժողովելոյն՝ և թագաւորին զբժշկութիւն հայցէր։

Ա.պա դարձաւ առ թագաւորն շնորհելոյն քի՝ զձեռանն և զոտանն բժշկել. զի թափեցան կՀղակք ձեռացն և ոտիցն. զի առ մի նուազ հաղորդեալ լեցի 'ի գործ սրբոցն՝ իւրոց ձեռացն վաստակելով։

Լսեալ նորա հարցեալ զգրիգորիոս՝ թէ զինչ հրամայեսցէ նմա. և նա տայր նմա չափ զարկեղաց

սրբոցն, զի հատեալ զտեղիսն իւրաքանչիւր բնակութիւն՝ յօրինեսցէ ի նեղբս մաքսիրոսական յարկի հանգստեան տեառն։

Իսկ նորա տաղաչեալ զգրիգորիոս՝ զի հրաման տացէ, մի՝ վասն կնոջ իւրոյ աշխէն տիկնոջ, և միւս ևս՝ վասն քեռն իւրոյ հարազատի՝ որում ա՜նուն էր խոսրովիդուխտ, զի իշխեսցեն և նոքա հաւասարել գործոյն։ Այլ նորա տուեալ հրաման։ և նոցա ընդ նմա երթեալ օգնել գործոյն։ և առեալ զչափ տապանացն՝ փոսել փորել զտեղիսն հանգստի սրբոցն՝ ի նեղբս ի տաճարս հանգստարանացն։

Այ՛ժիոխուն նշխարաց սրբոց հռիփսիմեանց իւրաքանչիւր արիւնքն։ ի վկայարանս իւրեանց։

Այդ՝ առեալ թագաւորին զահ և փայտատ՝ հատանել զդիրս հանգստարանաց սրբոցն իւրաքանչիւր ըստ չափարանի արկեղացն։ Այսպէս և ինքեանք երկոքին՝ աշխէն տիկին և քոյր թագաւորին խոսրովիդուխտ՝ ըստ քրել քրողին ի հանդերձանս իւրեանց ընկալեալ զհողն արտաքս պեղէին։

Այ՛ այսպէս կարգի յառաջակողմն պատրաստեցին զդիրս սրբոցն հռիփսիմեայ։ և զկնի նոքա զերեսուն և երկուցն ի տեղւոջն յայնմիկ՝ ուր հեղան արիւնք վկայականք երանութեանն նոցա, ի տեղւոջ հանգստեան պատրաստելոց սուրբ և փառաւորեալ սեղանոյն քրիստոսի։

Այսպէս ի վկայարանին որ ի հարաւակոյս քաղաքին էր՝ պատրաստեաց, և զայն տեղիս փոսէր է բանելոյն գայիանեայ՝ և երկու ընկերացն, ինքն թագաւորն տրդատ՝ քրիստերքն խոսրովիդուխտաւ՝ և աշխէն տիկնաւ հանդերձ։ զդիրս սրբոցն յիւրաքանչիւր բնակութեանն յօրինէին ինքեանց ձեռօք։

Լ՝ուս եկն Թագաւորն՝ խնդրեաց հրաժեշտ 'ի սրբոյն գրիգորէ եւ թնօրեայ ճանապարհ կալեալ 'ի վեր՝ 'ի բարձր լեառն մասիս. և անտի 'ի գլխոյ լեառնէն առեալ վէմս արասատոյս՝ անտաշս, անկոփս, յաղթս, ծանուցս, երկայնս, ատուռարս, և մեծամեծս, որ զմի մի ոչ ումեք լինէր հնար՝ թէ և դիպելոց բազմութեն մարդկան զայն շարժել։

Լ՝ուրդ առեալ հսկազօրն, և հայկաբար զուրթ արձանն 'ի վեր ուսոց թիկանց իւրոց դնէր զայն. ատանձնել բերէր 'ի վկայարանս տաճարացն։ Ա՝ինչ չորս արձանս սեամն կանգնէր՝ իբրու փոխարէն անմիտ մարտին՝ զոր ընդ սրբոյն պատերազմեալ յիւրումսեռնեկին. որ ամենապահ շնորհացն յաղթեալ՝ այսչափ զարմանալիս գործեաց։ Լ՝ուս սա պսակ յաղթութեն զևրոյ ձեռագործութեն զվաստակսն մատուցանէր, արարեալ կազմեալ շինեալ զսուրբ վերկայարանսն զերեսին. հանդերձեցին զարդարեցին՝ և օրինօք յարդարեցին. և ապա առեալ զիւրաքանչիւր ոք յիւրաքանչիւր տեղիս վկայութեանն մատուցանէին։

Ո՝ՆԵՆ գայիանէ 'ի կողմն հարաւոյ՝ իւրոյ մարտիրոսքն երկու ընկերօքն դնէր 'ի վկայարանի տաճարին։ Ա՝յնպէս և զերանելին հաւիսիմէ երեսուն երկու ընկերօքն 'ի կողմն արևելից կողմն տաճարին մատուցանէին։ Լ՝ուս մինաւորն որ 'ի հնձանին սպանաւ, սորա տաճարն 'ի կողմանէ քաղաքին 'ի հիւսիսոյ կուսէ. և զՇամ սուրբն 'ի միասին գումարեալ զնաչական վկայսն քի՝ յիւրաքանչիւր հանգիստս մարտիրոսական բնակութեան շինուածոցն փոխեցին, ըստ երևելոյ հրամանի տեսչեանն յաւաջագոյն գրիգորի. այսպէս կատարեցաւ։

Որոշումն պէտքոյ լուսանկար պաճարէ արքոյ էջնիածնի շրջապատ գրով։

Լոյս ի նեղբսագոյն խորանացն՝ ի վերայ հանգստարանացն կենդանադիր գերեզմանացն՝ ի տեղիս սեղանոցն յերեսին վկայարանն՝ մէն մի կանգնեաց զսուրբ նշան տերունական խաչին. զի միայն ասէ առաջի այդր ամենակեցոյց նշանիդ՝ երկիր պագանիցեն՝ ոն՝ այ արարչին ՀԷՐՈՒՄ։

Ի՛հա սիւնք հաստատուն՝ կանգնեցան ՀԷՐՈՒՄ խարխուլ շինուածոցդ. այս այն սիւնքն են ասէ, որ ունին զբեռն ծանրութեան ՀԷՐՈՅ շինուածոցն փրկութեանն. ահա երեք սիւնք, և չորրորդ սիւնն կենդանութեան՝ որ զՀԷՐ առնէ վերացուցանէ։

Լուկայք զնկատեալ տեղին տերունական տանն՝ և մեղ հրամայեալ, ի մեջ առեալ ի պատիւ փակեցուք։ Լուագաւորաւն և ամ ժողովրդովքն հանդերձ՝ երթեալ հասանէր ի ցուցեալ տեղին հրեղէն սեանն ոսկիակալ խարսխին. և անդէն բարձք քաղաքորմով փակեալ զտեղին ի պատիւ, դրամիքք և դանփակօք ամրացուցեալ. և կանգնեալ և անդ գնշան տերունական խաչին. զի առ հասարակ հաստեալ ամոք յայն տեղի՝ ամենազօր արարչին այ երկրպագեալ ծունր կրկնեսցեն։

Լոյս այսպէս լուսաւորեալ զսիրտս և զհոգիս ժողովրդոցն քարոզութիւն՝ աղուն ՀԱՅՈՒԹԵՆ յաղեալ համեմեալ. թողեալ զպաշտօն ունայնութեանն մնոտեաց ՀԷՌԱԳՈՐԾ կռոցն արարելոց, և ի պաշտօն դարձեալ մարդասիրին այ։ Լոյս յայնմ հիւսեալ և անդր կանխէին անձնակամ կամաք՝ ի պահս և յաղօթս, և ի յերկիւղ և ի սէր, և յունկնդրութիւն ՀԱՅԱՅԻՆ վարդապետութեանն փութացեալք։

Լ.ԺԵՂ ՀԵՂ պրդապաց 'ի խոսքաբեսել ՀԵՐպաբանացն ։ և Բաշխուբեան ՀարդԵանն՝ ՀԵՐաչանչԵՐ ախոռեց Ե 'ի հարուածոց ։

Լ.ՈՐԴ՝ ԻԲՐև ԺողովԵալք միահամուռ 'ի պաշտօնարան տեղոյն յարկի տանն ՀայԵ կային ։ Լսօսել սկսաւ Երանելին գրիգորիոս և ասէ . դՈՒք ԺուՆք ամենեքին , զի արասցէ տէր բԺշկութիւն հարուածոցդ ։ Լ.ու եդեալ ամենեցուն ԺուՆք առ ՀԱԾ . և Երանելին գրիգորիոս մեծաւ աղօթիւք և ուԺգին խնդրուածովք և պաղատանօք՝ խնդրեալ ՀգնուԵ և արասասուՀօք վասն թադաւորին բԺշկութեան ։

Լ.ու թադաւորն մինչ դեռ կայր 'ի ԿԵրպարանս խոզի ընդ Ժողովրդեանն , յանկարծակի հարաւ զդողման . և զխորին խոզի արտաքս մարմնոյն իւրոյ 'ի բաց ընկենոյր . ԺանդատեսԵին ԺանեԵք՝ և կընՀ թակերպ երեսօքն հանդերձ . խոզանացեալ մազովն թաւութԵ՝ զխորխացեալ կալին 'ի բաց ընկենոյր ։ Լ.ու դեՀք երեսացն դարձան յիւր իսկ կերպարանն . և մարմինն փափկացեալ մատաղացեալ լինէր իբրև զառաջոյ մանկան ԺնեԵոյ . և ողջանդամ մարմնովքն ամենևին բԺշկեցաւ ։

Այնպէս և ՀամՀ մարդկան որ Էին բազմութիւք կուռտեալք՝ յիւրաքանչիւր ախտից թաթափեալք . ոմանք բորոտք , և ոմանք անդամալոյծք , և գօսացեալք , և ջրգողեալք որովայնիւ , և դիւահարք , և գունՁացեալք , և պատագրոսք ։

Լ.ու այսպէս բացեալ մարդասէր շնորհացն քրիստոսի , զիւր ամենակարն բԺշկարան՝ բԺշկեալ զամենեսին 'ի Հեռն սրբոյն գրիգորի , ախտացեալքն թաթափեին յիւրաքանչիւր հիւանդութեանց ։ Այնպէս բացեալ լինէր աղբիւր գիտութեանն քրիստոսի , ըզլսելիս ամենեցուն ընուլ ՀՁմարտապատում վարդապետութեանցն ՀայՀ ։

Ընդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն, և անկանվայել տեսիլ հայեցելոցն։ Վասնզի և երկիր որ և համբաւոյն անգամ անտեղեակ էր կողմանցն այնոցիկ, յորում ամ ամ ածային սքանչելագործութիւնն եղէն, առ ժամայն վաղվաղակի իրացն եղելոց խելամուտք լինէին. ոչ միայն ժամանակաւ պաշտելոցն, այլև յառաջակարդ յաւիտեանցն, և յապա եկելոցն, սկզբանն և կատարածի, և ամ ածատուր աւանդութեանն։

Իսկ իբրև զչափ առեալ իրացն հաստատութիւն, համարձակ և առաւել բարձրագոյն զաշակերտուն նորագիւտ վարդապետութենն խմբէին ուսանել թէբէլ՝ պատրաստական քարոզութեանն ածագիտմարդկանն յօրինեալ։ Որոց և ոմանց իսկ 'ի կողմանց կողմանց՝ և 'ի գաւառաց գաւառաց հայաստան աշխարհին՝ յորդեալք և դրդեալք հասանէին 'ի բացեալ աղբիւր շնորհացն քի։ Վասնզի յայրարատեան գաւառին 'ի Թագաւորանիստ կայանն բխեցին շնորհք քարոզութիւն աւետարանին՝ հայոց տանն Թորգոմայ։

Լ. Երրորդն Երաշխոյն Դիտենին. Ե գանձոսպ, Ե պարգևալն դիւ։

Լ. Պա այնուհետև առնուլ խորհուրդ հաւանութիւն ընդ Թագաւորին և ընդ իշխանան, նախապարօքն և զօրօքն հանդերձ, վասն հաստարակաց խաղաղութիւն. քակել, կործանել, բառնալ զգայթագղութիւս 'ի միջոյ 'ի բաց կորուսանել. զի մի՛ ուստիք խէթ և խոտի այնուհետև ընդ ոտս անկանել, խաւան առնել յաղտութիւնն վերին։ Զ 'ի քաջալերելոյ ամենեքեան հաստատեցեն 'ի բարեաց կատարումն, 'ի նշանակեալ նպատակ երանելոյն պօղոսի,

թէ մեռեալն հասանէլ 'ի չափ հասակին քի, որոյ ա-
զատուին յերկինս է. ակն ունէլ փրկչին մեծին ՅՍ,
և պարծանք 'ի խաչն, և գովութիւն 'ի փառս ՅՍ։

Լսկոյն անդէն վաղվաղակի Թագաւորն ինքնիշ-
խան հրամանաւ՝ և ամենեցուն հաւանութեամբ,
ձեռն 'ի գործ տայր երանելոյն գրիգորի. զի յա-
ւաջագոյն զՀայրենական նահինեացն, և զիւր կար-
գեալ աստուածանն՝ չջնջս անուանել, անյիշատակ
առնել, և ջնջել 'ի միջոյ։

Լ՚պա և ինքն իսկ Թագաւորն, խաղայր գնայր
ամ՚ղօրօք հանդերձ 'ի վաղարշապատ քաղաքէ՝ եր-
թալ յարտաշատ քաղաք, աւերել անդ զբագին
անահտական դիցն. և որ երազմոյն տեղին անուա-
նեալ կարդայր։ Լ՚ախադիպեալ 'ի ճանապարհի ե-
բազացոյց. երազընդհան պաշտամանտրի դից դպրի
գիտութիւն քրմաց՝ անուանեալ դիւան գրչի որմնդի
ուամանն ճարտարութեամբ մեհեան. նախ 'ի նա ձեռն
արկեալ՝ քակեալ, այրեցեալ, աւերեալ քանդէին։

Լուր և երևեալ կերպարանեալ դիւացն՝ 'ի նմա-
նութիւն առնձիոյ բազմութեամբ և գնդի կազմութեամբ,
և հեռեակազօր մինդաւորքք և սունաւորքք առաջի
ընթացեալք 'ի կերպարանս նմանութեամբ մարդկան,
նիզակօք և նշանօք՝ 'ի ձեռն և 'ի զարդ վառելովք,
մեծաւ գոչմամբ զաղաղակ բարձեալ. հարեալ՝
փախստեայք յանահտական մեհեանն անկանէին։
Լաստի ընդ հասեալսն մարտ եղեալ կռուէին.
նեռս անուժս, և քարավէժս, թանձրատարափս,
'ի վերուստ 'ի շինուածոցն՝ 'ի խոնարհ զմարդկաւն
ցնդէին. զորս և սակաւ մի փոքր զարհուրեցու-
ցին զնորահաւատս մարդկանն։

Լուրծանուն անահտական մեհենին նշանաւ խաչին, և աղաղակ և փախուստ դիւոց ի հոգւոյն հովանաւ։

Լսակ գրիգորիոս իբրև զայն տեսեալ, զնշան տերունական խաչին առնէր, և դիմեալ ի դուռն մեհենին. և ամ շինուածք մեհենին ի հիմունցն դղրդեալ տապալեցան. և լուցեալ յանկարծ օրէն փայտակերտն հրդեհեցաւ ի տերունական նշանին զօրութենէ. և ծուխն ծառացեալ յերկինս հասանէր։

Լաւ ամ դևքն ի փախուստ դարձեալ առաջի մարդկան՝ երևեցան զոձիս արկեալ, և զմկատա հարեալ, և զմիչ քարձեալ մեծագոչ լալեան՝ ասելով, վայ մեզ. վայ մեզ. վայ մեզ. զի յամ երկրիս փախստական արար զմեզ յա որդին մարիամու դատերն մարդկան. և ասա ևս ի ձեռն կապելոյս՝ և մուռելոցս, ետաս մեզ փախստական լինել։ Լ.ՐԴ-յն դեմ եղեալ փախցուք, զի փառք նորա լցին զտիեզերս. այլ երթամք մեք ի բնակիչս լերինն կամկա՝ և ի կողմանս հիւսիսոյ, թերևս անդ հնար լիցի, և ապրել մարթասցուք. զի առանց հանգստեան զօդս կոծեալք, անջատ զմեզ ի բնակութենէ մարդկան, կատարել զանկութեն կամաց մերոց նոքօք։

Լաւ զայս ասացեալ առաջի ամենեցուն. զի մարդիկն որ լուան՝ առաւել ևս ի հաւատս հաստատեցան ամենեքեան։ Լսակ սևագունդք դիւացն ապենևայթք եղեալ, չքոտեալք ի տեղւոյն՝ իբրև զծուխս պակասեցան։

Լսակ մարդկանն հասելոց անդէն քանդեալ զհիմունս մնացեալս աւերեին. և զգանձս մրթերեալս՝ աղքատաց և տառապելոց, որոց և ապրեաց և չքաւորաց՝ ի գանձից մեհենիցն մասն առնէին։ Լաւ զդաստակերտսն և զպաստաւորսն քրմաքն հանդերձ, և նոցունց գեանսքն և սահմանքն ի ծառայութենէ սպասաւորութենէ եկեղեցւոյ նուիրեին։

Լու առ հասարակ ամենեցուն սերմանեալ զնծ-
պաշուութիւն բանն. և զամենեսեան ի ճանապարհս
տեսուն կացուցանէր՝ գիտուն առնել պատուիրա-
նացն արարչութեան։ Լու յամ քաղաքս հայոց ի
գէօղս, և յաւանս, և յագարակս՝ երևեցուցանէր
զտեղիս տան ոչ։ Հայց ոչ առնէր յայտ հիմնար-
կութիւն հետ. և ոչ սեղան ուղղէր ուրեք յանուն
նոն. զի չունէր զպատուիր քահանայութեան. միայն լոկ
պարապէր քաղաքորմով զտեղիսն, և կանգնէր զնշան
տերունական խաչին։ Այնպէս զելս և զմուտ
ճանապարհաց ի փողոցս և ի հրապարակս և ի ճա-
նապարհակիցս՝ պատկաման և ապաւէն զնշան նշան
կանգնէր։

Ունայր այնուհետև՝ ի զարշակունեացն տոհմի
որեարս, ի վարժս վարդապետութեան պարապեցու-
ցանէր. որոյ առաջնոյն տրդատ անուն, որ և թա-
գաւորն իսկ էր, ամ տասն իւրով։ Այնպէս և զամ
ոգի ջանայր յերկիւրել դարձուցանել ի գիտութեան
ճշմարտութեան. և այնպէս լի առնէր ընդ ամ տեղիս
զսուրբ աւետարանն նոն. և ամենեցուն զգուշացու-
ցեալ զճանապարհս կենացն վարելոյ։ Այպա ամենե-
ցուն զայն դնել ի մոի, զի նոն այ իւրեանց միայն
երկիրպագանիցեն. և նմա միայն սպաս տալցեն։

Այ-էրուն Դ-հ-ենի ապիտապատա-դէյն Բարշանենայ.
և գախուսոդն գէնոց ի նոշնանս խաղտեայ։

Այպա յանձն արարեալ զնոսա ամենապահ հնոր-
հացն այ, և ինքն առեալ զթագաւորն խաղայր
գնացեալ երթայր. զի և յայլ կողմանս սահմանաց
հայաստանն աշխարհին սերմանեացեն զբանն կե-
նաց։ Այրթեալ հասանէր ի դարանաղեաց գաւա-
ռն, զի և անդ զանուանելոց սուտ ազգոց զբա-
ռն,

գինն կործանեացին, որ էր 'ի գեօղն Թորդան՝ մեհեանն անուանեալ սպիտակափառ. դիցն բարշամինայ։ Այսր գնա կործանէին՝ և զպատկեր նոցա փշրէին. և զգանձն ամ ոսկւոյն և արծաթոյն աւար հարկանէին, և աղքատաց բաժանեալ բաշխէին. և զգեօղն ամ դատակերտօքն և գեանօք խրովք հանդերձ՝ յանուն եկեղեցւոյ նուիրեալ. և զամենամփրկիչ նշանին օրինակ և անդ կանգնէին։

Իսկ երանելին Գրիգորիոս վաղվաղակի զաւետս բանական արբուեան 'ի մէջ առնոյր. ձեռնարկեալ զգաւառաւն, հանդերձ միամիտ սատարութեամբ Թագաւորին՝ գերել զամենեսեան 'ի հայրենեացն ազանդէլոյ. 'ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ 'ի հնազանդութիւն ծառայութեան քրիստոսի մատուցանէր. և յորժամ 'ի նոսա զբանն կենաց սերմանէր. և զամենեսեան յիսծապաշտութիւն կրթէր։ Որ և յայանի իսկ բնակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երևեալ. կերպակերպ նմանութիւնք դիւացն փախստական լինէին՝ անկանել 'ի կողմանս խաղտեաց։

Կործանուն բագնին արամազդայ հօրն աստուծոյ. պաշտէրպալին դիւոյ. և խորգանուն ոսկի պատկերոյ անհոգական դիոյ։

Այս իբրև զնա էս հասատաեր, ապա երթեալ հասանէր յամուրս տեղին յանի՝ 'ի թագաւորաքնակ կայանսն, հանգստանոցաց գերեզմանաց թագաւորացն հայոց. և անդ կործանեացին զբագինս դիցն արամազդայ՝ հօրն անուանեալ դիցն ամենայնի։ Այս անդ կանգնեացին զտէրունական նշանն. և զաւանն ամրականաւն հանդերձ 'ի ծառայութիւն եկեղեցւոյ նուիրեին։

Լ։ ապա յետ այնորիկ ՝ի սահմանակից գաւառն յեկեղեաց ելանէր ։ և անդ երևեալ դիւացն ՝ի մեծ և ՝ի բուն մեհենեացն հայոց Թագաւորացն ։ ՝ի տեղիս պաշտամանց յանահտական մեհենին ։ յեբրէական ։ որ ՝ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարանչէին ։ և մեծագոչ բարբաւով զլերինս հնչեցուցանէին ։ Որ և փախստականք եղեալ ։ և ընդ փախչելն նոցա բարձրաբերձ պարիսպքն հարթեցան կործանեցան ։ Լ։ որք դիւեալ հասեալ էին զգաստացեալ զօրաք՝ աբն գրիգոր Թագաւորաւն հանդերձ՝ փշրեին զոսկի պատկերսն անահտական դիցն ։ և ամենևին զտեղիսն քանդեալ վանեին ։ և զոսկին և զարծաթն նուիրեալ ։

Լ։արքունն բագնեայ ՝ի բազում տեղեաց ։ աւերսունն նոնեական դիհենի դոռերն աբուաղդայ ։ և երկանն դիհենի որդոյն աբուաղդայ ։

Լ։ անտի ընդ գեան գայլ յայնկոյս անցանեին ։ քանդեին զնանական մեհենին դռոերն ամրամազդայ՝ ՝ի թիլն աւանի ։ և զդանձս երկու մեհենիցն աւար ժողովեալ՝ ՝ի նուէրս սպասու եկեղեցւոյն ՝այ Թողին՝ տեղեաքն հանդերձ ։

Լ։ այսպէս ՝ի բազումտեղաց բառնային զգայթակղեցուցիչս անմաւնչս ։ ձուլեալս ։ կռեալս ։ կոփեալս ։ քանդակեալս ։ անպիտանս ։ անօգուտս ։ վնասակարս ։ արարեալս յանմտուի ցնորելոց մարդկան։ դարձեալ սրտի մտաք ՝ի հաւատս հաստատեին ։

Լ։ ընդայն մեծասաստ իշխանութիւն տայր հրամանն՝ սատանայակուր և դիւամոլ ազգացն այնոցիկ թափել և ջերծանել յունայնավար հնացելոցն՝ անոտիագործ պաշտամանցն ։ և հնազանդել ամենահեշտ լծոյ ծառայութեան քրիստոսի ։

Լու յորժամանդ և՛ս զայս արարեալ հաւասա-
րութիւն ամենեցուն՝ առ հասարակ լցեալ զպիտոյս
քարոզութեան . ոչ ինչ ապաստան լինէր յահ և 'ի
սատա թագաւորին՝ հաւանեցուցանել զամենեսին.
և ոչ լոկ բանիւք միայն , այլ նշանօք և արուեստ-
իւք , և ազգի ազգի բժշկութիւք փառաւոր լինէր
սուրբ անունն քի . այս ամ գործեցաւ կամաւք մար-
դասիրին այ 'ի ձեռն գրիգորի ։

Լու տեղիս հասեալ՝ ինքն թագաւորն լինէր քա-
րոզ՝ խոստովանելով զիւր մեպարշտութիւն . և պատ-
մէր զամ արարեալ սքանչելիսն այ՝ որ անցեալ է էին
ընդ նա . և զողորմութիւն բժշկութեանն , և զայն ցու-
ցանէր բարձրաձայն աղաղակաւ՝ յայտ յանդ իսան
առաջի ամենեցուն ։

Լ'պա փութացեալ հասանէր 'ի գաւառն դեր-
ջան . զի և անդ յառաջոցի ընուլ զառաքելական
քարոզութեան զարուեստս մշակութեան . և զերծու-
ցանել զնոսա 'ի դարշելի 'ի դիւցական սատանայա-
կիր բարուցն ձիւաղութեան ։ Ի խուժադուժ կող
մանսն աշակերտեալ , զնոշորագոյն և զխեցբեկագոյն
զբարս հեթանոսութեանն շրջել 'ի զգաստութիւն ամ-
ուսոյց իմաստութեանն , ծանօթս աստուածաբանական
աստեսացն յարդարեալ՝ ընդելս կացուցանէր ։

Զայր հասանէր 'ի մրհական մեհեանն անուա-
նեալ՝ որդւոյն արամազդայ , 'ի գիւղն զոր բա-
գայաւիճն կոչեն՝ 'ի պարթևաբէն լեզուէն . և
զայն 'ի հիմանց բրեալ , և զգանձս մեթերեալս ա-
ւար հարկանէին՝ և աղքատաց բաշխէին . և զտե-
ղեան նուիրեին եկեղեցեաց . և զանակիչս աշխարհին
հաստատէր 'ի գիտութիւն ճշմարտութեան ։ Լու յայնմ
հետէ փոյթ 'ի վերայ ունել զառընթերակաց որ-
քունիս հանդերձ մեծամեծ աւագանովն , և ամ
ազատագունդ բանակաւն , ծածեղէն իմաստութիւնն
վարդապետէր ։

Լսորհուրդ Ներգաւորին որդաթայ և Ղեծամեծացն՝ վասն չահանայապետութեանն արքային Գրիգորի։ Հրաժարութիւն նորա, և յանձնառութեանն յաջորդին։

Իսկ Թագաւորն տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով աշխէն տիկնաւ, և իւրով քրէերքն խոսրովիդխտով, հրաման եւ 'ի ժողով կոչել միաբանութիւն՝ ամ զօրաց իւրոց։ և վարվապետի հասանէին 'ի ժամադիրն ըստ հրամանին՝ 'ի կողմանս այրարատեան գաւառին՝ 'ի վաղարշապատ քաղաք։

Մանզի Թագաւորն չու արարեալ անդր հասանէր։ և կուտեցան զօրք ամ։ մեծամեծք։ կուսակալք։ գաւառակալք, և սպասաւորք։ զօրագլուխք զօրք։ պետք, և իշխանք։ նախարարք, և ազատք։ դատաւորք, և պատուականք՝ հասեալ կային առաջի Թագաւորին։

Լսորհուրդ 'ի մեջ առեալ Թագաւորն ընդ ամենեսին՝ փութալ հասանել բարեաց գործոցն լինել ժառանգաւոր։ Լ'կայք ասէ՝ Ձեզ պատուցուք զայս առաջնորդ կենաց մերոց՝ տուեալ մեզ այ, զգրիգոր հովիւ կացուցանել մեզ։ զի լուսաւորեսցէ զմեզ մկրտութիւն։ և նորոգեսցէ զմեզ օրէնսուսցց խորհրդով արարչին մերոյ այ։

Իսկ գրիգոր ոչ անայր առնուլ յանձն զմեծ պատիւ քահանայութեան։ ասէ՝ ոչ կարեմ հանդարտել բաւել՝ վասն մնջափակալ բարձրութեան զօրել։ զի անպատեհ է այն պատիւ քաստուր փառացն առաջնորդութեան՝ միջնորդ կալ ընդ ամ, և ընդ մարդիկ։ այլ զարժանին խնդրեալ գտցեն։

Իսկ անդէն վաղվաղակի տեսիլ սքանչելի երևեալ յայ Թագաւորին։ տեսանէր զՀրեշտակ այ՝ զի խօսէր ընդ նմա և ասէր։ պարտ է ձեզ զգրիգոր վիճակեցուցանել առանց յապաղելոյ 'ի քահանայա-

պետութիւն։ զի լուսաւորեսցէ զձեզ միկրտութիւն։
Լիզինպէս երևեալ և գրիգորի՝ տեսիլ հրեշտակի
այ։ զի մի՛ ինչ իշխեսցէ պնդել յամառել վասն այնր,
զի ի քանէ է այդ քեզ հրամայեալ։ իսկ նա վաղվաղա
կի բարբառեալ ասէր, թէ կամք այ կատարեսցին։

Պարսիսն նախարարաց և էշէանաց տանէլ զքէն
